

ԺՅՈՒԼ ՎԵՌՆ

ՅԵՐԿՐԻՑ  
ԴԵՊՐ ԼՈՒՍԻՆ

845.

4. 46

50p

971-8

14p

6 NOV 2011

3240  
4-46

ԺՅՈՒՆ ՎԵՌՆ

սյ.

# ՅԵՐԿՐԻՑ ԴԵՊՈՒ ԼՈՒՍԻՆ

Պ Ե Տ Ն Ր Ա Տ  
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1 9 3 8

# ԺՅՈՒԼ ՎԵՌՆ

(1828-1905)

Ֆրանսիացի հռչակալուր վիպասան ժյուլ Վեռնը ծնվել է Նանտ քաղաքում 1828 թվին:

Մանուկ հասակից նա սիրել է ծովը և ճանապարհորդությունը: Սակայն հայրն ուղում էր նրան իրավարան դարձնել: Այդ նպատակով նրան ուղարկում են ֆարիզ, վորտեղ նա ծանոթանում է արկածային վեպերի հեղինակ հռչակալուր Ալեքսանդր Դյումայի հետ: Նրա ազդեցության տակ ժյուլ Վեռնն իրեն նվիրում է գրական ասպարեզին: 1863 թվին լույս է տեսնում նրա առաջին վեպը—«Հինդ շաբաթ ողապարիկով»,— վորը մեծ հաջողություն է գտնում: Ժյուլ Վեռնի համբավն սկսում է տարածվել: Այնուհետև նա իրար հետևից հրատարակում է բազմաթիվ վեպեր— գիտական-արկածային, ճանապարհորդական,— վորոնք թարգմանվում են բոլոր կուլտուրական լեզուներով: Այդ վեպերից նշանավորներն են «80,000 կիլոմետր ջրի տակ», «Կապիտան Գրանտի վորդիները», «Յերկրից դեպի Լուսին», «Լուսնի շուրջը», «Սորհրդավոր կղզին», «Ալխարհի շուրջը ութսուն օրվա մեջ», «15-ամյա կապիտանը» և այլն:

Առանձին հռչակ են վայելում ժյուլ Վեռնի «Յերկրից դեպի Լուսին» և «Լուսնի շուրջը» վեպերը, վորոնց մեջ նա առաջին անգամը շոշափեց մինչև այժմ չլուծված մի խնդիր— միջմոլորակային հաղորդակցության հարցը:

Սուգանալը և ողապարիկը ընդհանրապես մեծ դեր են խաղում ժյուլ Վեռնի վեպերում: Գծրախտաբար նա չապրեց մինչև ավիացիայի լայն զարգացումը: Ռայթ յեղբայրների առաջին ավառնակն իր թռիչքն սկսեց միայն նրա մահվանից մի տարի հետո: Ժյուլ Վեռնը իր «մղանավ» վեպում նախատեսել էր ավիա-



387  
45

ցեալի զարգացումը: Ժյուլ Վեռնը կատարել է գիտական իսկա-  
կան գուշակութուններ, վորոնք իրագործվել են Ֆրանս հետա-  
գայում: «Լողացող քաղաք» վեպում նա տվել է ապագա հսկա  
չողենավերի նախատիպը, «Մորթիներ յերկիրը» վեպում Ժյուլ  
Վեռնը նկարագրել է մեր որերում խիստ այժմեյական մի յերե-  
վույթ— ճանապարհորդութուն դրեյֆոդ սառույցի վրա:

Ժյուլ Վեռնի աշխարհագրական գիտելիքները հսկայական են:  
Նա գրել է «Նշանաւոր ուղեւորութունների պատմութունը»,  
վորը հանրամատչելի կերպով տալիս է աշխարհագրական մեծ  
գյուտերի և ճանապարհորդութունների պատմութունը:

Ժյուլ Վեռնը գիտական-ժողովրդական վեպի իսկական հիմ-  
նադիրն է, նա մեծ արվեստագետ է և հանճարեղ պատմող: Նրան  
գնահատել է Լ. Տոլստոյը և սիրով կարդացել նրա վեպերը:  
Ժյուլ Վեռնի հերոսներն ուժեղ կամքի տեր, յեռանդուն, անձնվեր  
մարդիկ են, վորոնք պատրաստ են զոհելու իրենց կյանքը գիտու-  
թյան և առաջադիմության համար:

Ժյուլ Վեռնի համակրութունը յեղել է ժողովրդի դեմոկրա-  
տական խավերի կողմը:

Ահա ինչ է գրում Սորհրդային Միության Հերոս Մ. Վորո-  
պյանովը Ժյուլ Վեռնի վեպերի մասին:

«Մեզ, խորհրդային մարդկանց— և՛ չափահասներին, և՛ փոք-  
րահասակներին— հատկապես հասկանալի և մոտիկ է Ժյուլ  
Վեռնը— այդ համարձակ յերագողը և գիտության յերգիչը, վորն  
իր ընթերցողների մեջ դաստիարակում է սքանչելի գգացմունքներ  
ջերմ ձգտում հաղթահարելու բնության կույր տարերքը, հաւա-  
տը դեպի մարդկային բանականության ուժը, նպատակաւացու-  
թյունը, ընկերական մտեւթութունը և համերաշխութունը:  
Ժյուլ Վեռնի յերկերը վողեչնչում են հանդուգն գյուտերի հա-  
մար, մարդու գիտակցության մեջ արթնացնում են հերոսական  
մեծ մտահզացումներ: Յես դեռ այսօր ել հիշում եմ այն տպավու-  
րությունը, վոր գործել են ինձ վրա Ժյուլ Վեռնի գրքերը: Նրա  
յերկերն ամեն մի յերիտասարդի մեջ ձգտում են առաջ բերում  
տիրապետլու մարդկության կուտակած գիտելիքներին և փոր-  
ձին»:

«Յերկրից դեպի Լուսին» վեպը, ինչպես նշվեց, Ժյուլ Վեռնի  
ամենանշանաւոր վեպերից մեկն է, վորի շարունակութունն է

«Լուսնի շուրջը» վեպը: Այս վեպերում նկարագրված է թնդանո-  
թի արկի միջոցով դեպի Լուսին կատարված յերեակայական ճա-  
նապարհորդութունը: Հեղինակի պատմած դեպքերը կատարվում  
են Ամերիկայի Միացյալ Նահանգներում անցյալ դարի 60-ական  
թվականներին: Վեպը գրված է այն շրջանում, յերբ նոր եր վեր-  
ջացել Ամերիկայում մղվող քաղաքացիական պատերազմը հյուսի-  
սային և հարավային նահանգների միջև (1861-1865 թ. թ.): Այդ  
պատերազմի ընթացքում մեծ չափով զարգացել եր հրետանային  
գիտությունը, հսկայական թնդանոթներ եյին ձուլվում, վորոնք  
խտում եյին մեծ տարածութունների վրա: Ինչպես հայտնի յե,  
հյուսիսային նահանգները կողմնակից եյին սեպտորթնեջի (նեգ-  
րերի) ստրկության վերացման, իսկ հարավային նահանգները  
կողմնակից եյին նեգրերի ստրկությունը պահպանելուն: Ահա այս  
պատերազմի մասին է խոսվում վեպում, վորի հերոսներից մի  
քանիսը հաշմանդամ եյին դարձել նույն այդ պատերազմում:  
Պատերազմը վերջացավ հյուսիսի հաղթությամբ:

Պետհրատը լույս է ընծայել Ժյուլ Վեռնի վեպերից «Նավա-  
պետ Գրանտի վորդինները», «Ութսուն հազար կիլոմետր ջրի  
տակ», և «Սորհրդային կղզին»: «Յերկրից դեպի Լուսին» վեպից  
հետո լույս կտանի «Լուսնի շուրջը», վորի մեջ ընթերցողները  
Վգտնեն իրենց ծանոթ հերոսներին և նրանց ճանապարհորդու-  
թյան վերջավորութունը: Տպագրության համար պատրաստ-  
վում է Ժյուլ Վեռնի «Աշխարհի շուրջը ութսուն օրում» վեպը:

## ՅՆԴԱՆՈՅԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի ժամանակ Մերիլենդ նահանգի Բալտիմոր քաղաքում հիմնվեց նոր, շատ ազդեցիկ մի աղումբ: Բոլորին հայտնի չէ, թե ինչ մեծ չափով զարգացավ ռադիական վոզին ամերիկացիների՝ նավաշինարարների, առևտրական ու մեքենագործների այդ ժողովրդի մեջ: Իրենց առևտրով զբաղվող հասարակ առևտրականները թողին իրենց խանութները և դարձան կապիտաններ, գնդապետներ, գեներալներ՝ առանց նախապես ռադիական կրթության ստանալու: Այդ մարդիկ շուտով «պատերազմի արվեստի» մեջ հավասարվեցին հին աշխարհի իրենց պաշտոնակիցներին և նրանց նման սովորեցին հաղթություններ տանել շնորհիվ այն բանի, վոր չխնայեցին վոչ գնդակներ, վոչ վառոդ, վոչ ել մարդկանց:

Բայց ամենից ավելի հրետանու արվեստի մեջ է, վոր նրանք գարմանալի կերպով գերազանցեցին յեվրոպացիներին: Չնայած վոր նրանց թնդանոթներն ավելի բարձր աստիճանի չէյին կատարելագործված, սակայն նրանց մեծությունը հասնում էր անսովոր չափերի, այդ պատճառով ել նրանց արկերը հասնում էյին մինչ այդ չտեսնված հեռավորության: Մնչլիացիների, Փրանսիացիների և գերմանացիների հրանոթներն ատրճանակներ եյին թվում համեմատած ամերիկյան հրետանու ահուկ գեներերի հետ:

Այս բանը սակայն բոլորովին գարմանալի ել չի. յանկիները (ամերիկացիները) — աշխարհի այս առաջին մեքենագետները — ինժեներներ են, ինչպես իտալացիները՝ յերաժիչաներ: Ուրեմն շատ բնական է, վոր ամերիկացիները ռաբաճգության արվեստի

մէջ ևս հայտարերեցին իրենց հանդուզն հնարամտությունը: Դրա հետևանք են այն հսկա թնդանոթները— շատ ավելի նվազ ոգտակար, քան կարի մեքենաները, բայց նույնքան զարմանալի ու ավելի հիանալի: Այս տեսակետով նշանավոր են Պարոտի, Դալգրենի, Ռոզմենի հնարած հրաշալիքները: Յեվրոպայի Արմատոններին, Պալիդերներին ու Տրետոյ դե Բոլիոներին մնում է միայն իրենց գլուխը խոնարհել անդրծովյան իրենց մրցակիցների առաջ:

Հյուսիսայինների և հարավայինների արյունահեղ պայքարի ժամանակ հրետավորները մեծ հարգանք եյին վայելում: Ամերիկայի թերթերը մեծ խանդավառությամբ հիշատակում եյին նրանց գյուտերը, նույնիսկ ամենից աննշան առևտրականը, միամիտ պատարկապորտն որ ու գիշեր գլուխ եյին ջարդում նոր թնդանոթի գյուտեր անելու համար:

Յերբ ամերիկացին մի միտք է հղանում, նա մի յերկրորդ ամերիկացու յե փնտոում, նրան իր մտքին հաղորդակից անելու համար:

Յեթե յերեքով են, ընտրում են մի նախագահ, յերկու քարտուղար: Չորսով՝ մի գործավար են նշանակում և «բյուրոն» սկսում է գործել: Հնգով՝ ընդհանուր ժողով են գումարում ու ակումբը կազմված է:

Այդպես էլ յեղավ Բալտիմորում: Առաջին մարդը, վոր մի նոր թնդանոթ հնարեց, միացավ նրան, ով այդ թնդանոթը ձուլեց, և յերրորդին, վոր թնդանոթի փողը ծակեց: Այսպես էլ կազմվեց թնդանոթային ակումբի կորիզը:

Կազմվելու որից մեկ ամիս հետո նա բռներ հազար ութ հարյուր յերեսուն յերեք իսկական անգամ, յերեսուն հազար հինգ հարյուր տասնհինգ թղթակից—անդամներ:

Այդ միության մեջ մտնել ցանկացողներին առաջարկվում էր մի անհրաժեշտ պայման, այն է՝ հնարել կամ առնվազն կատարելագործել մի թնդանոթ կամ մի վորեւ հրազեն: Բայց, ճիշտն ասած, տասնհինգ հարվածանի ատրճանակների, առանցքավոր կարճ հրացանների կամ սուսերավոր ատրճանակների հնարողները մեծ հեղինակություն չեյին վայելում: Թնդանոթաձիգները ամեն անգ մեծ առաջնություն ունեյին:

— Այն հարգանքը, վոր նրանք վայելում են,— ասում էր մի

որ թնդանոթային ակումբի շատ գիտուն հոետորներից մեկը,— ուղիղ հարաբերական է նրանց թնդանոթի «ծավալին» ու նրանց արձակած արկի հասած հեռավորությանը:

Հեշտ է յերևակայել, թե թնդանոթային ակումբի հիմնալուց հետո ինչպիսի լայն չափով զարգացավ ամերիկացիներին հնարագիտությունը: Ռազմական հրանոթները վիթխարի չափերի հասան, և արկերը թույլատրված սահմաններից անցնելով, սկսեցին ջարդել անմեղ անցորդներին, նրանց մեջտեղից կիսելով: Այս բոլոր գյուտերն իրենց հետևը թողին յեվրոպական հրետանու համետ գործիքները. այդ կարելի յեր դատել հտեյալ թվերից: Հին լավ ժամանակներում յերեսունվեցանի մի արկ յերեք հարյուր վոտնաչափ հեռավորության վրա ծակում—անցնում էր կողք—կողքի կանգնած յերեսունվեց ձի և վաթսուներթ մարդ: Սա դեռևս գործի մանկությունն էր, այդ ժամանակից հետո արկերն էլ ավելի առաջ գնացին:

Ռոզմենի թնդանոթը, վոր կես տոնն կշռոյ մի արկ նետում էր յոթ մղոն<sup>1)</sup> հեռավորության վրա, հեշտությամբ կտապալեր հարյուր հիսուն ձի և յերեք հարյուր մարդ: Թնդանոթային ակումբում նույնիսկ հարց հարուցվեց կտապել նրա հանդիսավոր փորձը: Բայց յեթե ձիերը համաձայնեցին յենթարկվել այդ փորձերին, դժբախտաբար մարդիկ չհամաձայնեցին:

Համենայն դեպս այդ թնդանոթները շատ անվրեպ եյին, և նրանց ամեն մի հարվածին զինվորներն ընկնում եյին գերանդիով հնձված հասկերի նման:

Ի՞նչ նշանակություն ունեւ այդ արկերի հետ համեմատած այն հռչակավոր արկը, վոր 1587 թվին Գուդրասում քսան հինգ մարդ կտորեց, կամ մի ուրիշը, վոր 1758 թվին Յորդորֆում սպանեց քառասուն հետևակ զինվոր, կամ 1742 թվին Կեսելստորֆի ավետրիական թնդանոթը, վորի յուրաքանչյուր հարված յոթանասուն թշնամու գետին է տապալում: Ի՞նչ եյին Յենայի ու Աուստերլիցի հռչակավոր ճակատամարտերի հրանոթային կրակները, վորոնք կովի բախան եյին վորոշում: Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակ ավելի սարսափելիները հայտնվեցին: Գետաբուրգի ճակատամարտում դժավոր թնդանո-

1) Ծովային մղոնը հավասար է 1609 մետր 31 սանտիմետրի:

Թից արձակված կոնսաճել մի արկ տապալեց հարյուր յոթանասուն յերեք հարավցի զինվորների, իսկ Պոտոմակ գետն անցնելիս մոզմենի մի արկ վոչնչացրեց յերկու հարյուր տասնհինգ զինվոր:

Պետք է հիշտակել նաև Թնդանոթային ահուճի ահանավոր անդամ և մշտական քարտուղար Ջ. Տ. Մաստոնի հնարած մի ահագին հրասանդը, վորն ե՛լ ավլի մահարեր յեղավ. նրա առաջին իսկ փորձական կրակոցի հետևանքով սպանվեց յերեք հարյուր յերեսուն յոթ հոգի— ճիշտ ե՛ վոչ թե արկով, այլ հենց Թնդանոթի պայթելու հետևանքով: Ել ի՞նչ այլելացնել այս ինքնըստինքյան այնքան պերճախոս փաստերին: Վոչինչ: Ուրեմն, առանց առարկության պետք և ընդունել հետևյալ հաշիվը, վոր կատարել է Պիտկերն վիճակագրերը: Այդ պատերազմի ժամանակ թընդանոթային կրակի զոհերի թիվը բաժանելով Թնդանոթային ահուճի անդամների վրա, նա գտավ, վոր ահուճի ամեն մի անդամ սպանել էր «միջին» հաշվով յերկու հազար յերեք հարյուր յոթանասուն հինգ մարդ:

Նկատի ունենալով այս թիվը, ակներեմ է, վոր այդ զիտակյան հիմնարկության միակ զբաղմունքը յեղել է մարդկության վոչնչացումը մարդասիրական նպատակներով և ռազմական գործիքների կատարելագործումը, վորպես քաղաքակրթության գործիքներ...

Պետք է ավելացնել, սակայն, վոր այդ ամերիկացիները միմիայն Փորմուլաներով և հաշվումներով չսահմանափակվեցին: Նրանք գոհեցին և իրենց կյանքը: Ահուճի անդամների մեջ կային սպաներ բոլոր աստիճանների, տեղակալներից սկսած մինչև գեներալները, բոլոր հասակների զինվորականներ, այնպիսիները, վորոնք նոր էյին մտնում ռազմական ասպարեզ և այնպիսիները, վորոնք ծերացել էյին այդ ասպարեզում:

Նրանցից շատերն ընկան ռազմադաշտում և նրանց անուններն արձանագրվեցին Թնդանոթային ահուճի պատվո գրքի մեջ: Իսկ նրանք, ովքեր վերադարձել էյին, մեծ մասամբ կրում էյին իրենց անվահեղուկյան անջնջելի նշանը:

Հենակներ, փայտե վուրքեր, հողակապ արհեստական թևեր, ճանկավոր ձեռքեր, ռետինե ծնոտներ, արծաթե գանգեր, պլատինե քթեր— այս կոլեկցիային վոչինչ չէր պակասում. վերոհի-

չյալ Պիտկերնը հաշվել էր նույնպես, վոր Թնդանոթային ահուճի չորս անձին հաղիվ մեկ թև և վեց հոգուն միայն յերկու վուրք էր ընկնում:

Սակայն այդ քաջ Թնդանոթաճիգները դրան այնքան ել կարեւորություն չեյին տալիս և իրավամբ իրենց հպարտ էյին զգում, յերբ վորեւե մի նոր ճակատամարտի տեղեկագիր ցույց էր տալիս, վոր զոհերի թիվն արձակված արկերի քանակից տասն անգամ ավելի յեր:

Մի որ, սակայն, ահուճի անդամների համար տխուր ու վողբալի մի որ, պատերազմից վողջ մնացողները հաշտություն վնքեցին, հրազենի պայթյունները դադարեցին, հրանոթները լռեցին, Թնդանոթները գլխահարկ մտան զինարաններ, արկերը դիպվեցին պահեստներում, արյունոտ հիշատակները ջնջվեցին, առատորեն պարարտացված դաշտերում հրաշալի աճեց բամբակենին, սգո հագուստները մաշվեցին, վիշտը ամոքվեց և Թնդանոթային ահուճը թաղվեց խորն անգործության մեջ:

Մի քանի համառ գյուտարարներ դեռ ևս շարունակում էյին ուրաճգման մասին հաշիվներ անել և միշտ յերազում էյին արտակարգ մեծությամբ ուժերի և արկերի մասին:

Սակայն առանց գործնականի ի՞նչ արժեք ունեյին այդ ունայն թեորիաները: Այդպիսով ահուճի դահլիճները դատարկվում էյին, սպասավորները ննջում էյին նախասենյակներում, թերթերը խուճանում էյին սեղանների վրա, մութ անկյուններից լսվում էյին տխուր խոսքեր:

Թնդանոթային ահուճի անդամները, վորոնք անցյալում այնքան ազմկարր էյին, այժմ լուրթյան մատնված՝ մրափում էյին ճանճրույթից:

— Ի՞նչ տխուր է,— ասաց մի յերեկո Թոմ Հընտըրը Թնդանոթային ահուճի նախասենյակում, յերբ փայտե վոտներէ ծայրերը աննկատելիորեն խանձվում էյին բուխարիկի կրակից:— Վոչինչ չկա անելու, վոչինչ չկա հուսալու: Ի՞նչ ճանճրալի կյանք: Ո՞ւր է այն ժամանակը, յերբ Թնդանոթը ամեն առավոտ մեզ զարթեցնում էր ուրախ թնդյուններով:

— Այդ ժամանակն անցավ,— պատասխանեց կայտառ Բիլբրին, մեքենայորեն փորձելով յերկարել իր բացակայող թևերը: Ա՛հ, ինչ հաճույք էր այն ժամանակ: Մարդ հնարում էր իր



Թնդանոթը ու հենց վոր նրա ձուլումը վերջանում էր, խսկույն շտապում էյինք այն փորձելու թշնամու դեմ, ապա վերադառնում էյինք բանակատեղ՝ լսելու հրամանատարի քաջալերական վի խոսքը, կամ արժանանալու նրա ձեռքի սեղմումին: Բայց այսոր գեներալները վերադարձել են իրենց առևտրական գրասենյակները և արկերի փոխարեն անվնաս բամբակի հակեր են ուղարկում: Ա՛հ, յերգվում եմ, վոր հրետանու ապագան կորած է Սմերիկայում:

— Այո՛, Բիլսբի, — բացականչեց գնդապետ Բլոմսբերին, — դառն հուսախարությունն է այս: Մի գեղեցիկ որ մարդ թողնում է իր խաղաղ սովորությունները, ուղղմական վարժություններ է անում, հեռանում է Բալտիմորից և մեկնում ուղղմաբար, հեռուսական գործեր է կատարում ու յերկու կամ յերեք տարի հետո ստիպված է լինում կորցնել այնքան ջանքերի պտուղը, թմրել և արդարապես անգործության մեջ, ու ձեռքերը դնել գրպանը:

Չնայած իր խոսքերին՝ քաջարի գնդապետը շատ սխալ դժվարանար իր անգործությունն այդ ձևով արտահայտել: Ճիշտ է, նա գրպաններ ուներ, բայց ձեռքերը պակասում էյին:

— Պատերազմի վոչ մի հեռանկար, — ասաց համբավվորը Չ. Տ. Մաստոնը, իր յերկաթե ճանկով դուտապերչի գանգը քորելով: — Վոչ մի ամպ քաղաքական հորիզոնում, և այդ այնպիսի մի ժամանակ, յերբ Թնդանոթաձուլության դիտության մեջ դեռ ևս այնքան անելիքներ կան: Յես, վոր ձեզ հետ խոսում եմ, այս առավոտ Թնդանոթի մի նոր նախագիծ եմ կազմել, պլանով ու եսքիզով, մի Թնդանոթ, վորը կարող է նույնիսկ պատերազմի որենքները փոխել:

— Ճշմարիտ, — բացականչեց Թոմ Հընտըրը, ահամա մտածելով հարգարժան Չ. Տ. Մաստոնի վերջին անհաջող փորձի մասին:

— Ճշմարիտ, — պատասխանեց Չ. Տ. Մաստոնը: Բայց ի՞նչ ոգուտ հաջողությամբ վերջացած այդ ուսումնասիրություններից, հաղթահարված դժվարություններից: Մի՞թե իրուր աշխատանք չէ: Նոր Աշխարհի ժողովուրդները կարծես խոսքը մեկ են արել խաղաղ ապրելու և մեր մարտական «Տրիբունը»<sup>1)</sup> այն-

<sup>1)</sup> Միացյալ Նահանգներում ստրկության վերացման համար պայքարող թերթերից մեկը:

անդ է հասել, վոր բնակչության հսկայական աճումից առաջանալիք ապագա աղետն է գուշակում:

— Սակայն, Մաստոն, — հարեց գնդապետ Բլոմսբերին, — Յեզրոպայում շարունակում են պայքարել ազգության սկզբունքը պաշտպանելու համար:

— Ուրե՞մն:

— Ուրեմն արժե գուցե մի բան փորձել այնտեղ և յեթե մեր աջակցությունն ընդունեն...

— Ի՞նչ է, գու միտք ունես մեր Թնդանոթաձուլության արվեստն ոգտագործել ոտարները՞ ոգտին, — բացականչեց Բիլսբին:

— Այդպես ավելի լավ է, քան թե վոչինչ չանել, — պատասխանեց գնդապետը:

— Անկասկած, — ասաց Չ. Տ. Մաստոնը, — այդպես ավելի լավ է, բայց այդ գործի մասին նույնիսկ չպետք է մտածել:

— Իսկ ինչո՞ւ, — հարցրեց մայրը:

— Վորովհետև հին աշխարհում գինձորական ասպարեզի մեջ առաջադիմելու մասին այնպիսի հասկացողություններ կան, վորոնք բոլորովին հակառակ են մեր ամերիկյան սովորություններին: Այդ մարդիկ չեն կարող յերեակայել, թե կարելի չէ գեներալ դառնալ առանց նախապես իրրե փոխ-տեղակալ ծառայած լինելու, ինչ վոր միեևնույն է, յեթե ասենք, վոր իբր թե չի կարելի լավ Թնդանոթաձուլ լինել, առանց անձամբ Թնդանոթ ձուլած լինելու: Մինչդեռ դա պարզապես...

— Անհեթեթ է, — հարեց Թոմ Հընտըրը, լայնաբերան դառնալով բազկաթոռի թեփերը տաշելով, — և քանի վոր գործերն այդ դրության մեջ են, մեզ մնում է ծխախոտ մշակել, կամ կետածրկան յուղ գտել:

— Ինչպե՞ս, — բացականչեց Չ. Տ. Մաստոնը վորոտաձայն, — մեր կյանքի այս վերջին տարիները մենք չպե՞տք է նվիրարեքները հրագեներ կատարելագործելուն: Մի նոր առիթ չի՞ ներկայանալու՞ մեր արկերի հասողության ուժը փորձելու համար: Մթնուրաբ չի՞ բոցավառվելու մեր Թնդանոթների կրակի լույսից: Միջազգային մի դժվարություն չի՞ ծագելու, վորպեսզի մենք կարողանանք պատերազմ հայտարարել անգրովիխանոսյան մի պետության: Ֆրանսիացիները մեր նավերից վոչ մեկը չէ՞ն խորտակելու, անգլիացիները չէ՞ն կախելու — արհամարհելով

մարդկային իրավունքները— մեր յերկրացիներէց յերեքին կամ շորսին:

— Վո՛չ, Մատտոն, — պատասխանեց դնդապետ Բլոմսթրեմը: — մենք այդ բախտը չենք ունենալու: Վո՛չ, այդ դեպքերէց վոչ մեկը չի լինելու, և յեթե լինի եւ, մենք նրանից չենք սղաղկելու: Ամերիկայան դժուրագոյնութիւնն որեցոր անհետանում է, և մենք թուրամորթ ենք դառնում:

— Այո, մենք մեզ ստորացնում ենք, — ասաց Բիլսթրեմը:

— Այդ բոլորը ճշմարտութիւնն է, — ավելացրեց Չ. Տ. Մատտոնը, մի նոր վոզելփորութեամբ, — մեր շուրջը հազար տեսակ պատճառներ կան պատերազմելու, բայց մենք չենք պատերազմում:

Մարդիկ խնայում են բազուկները ու սրունքներն ի նպաստ աշխարհի մարդկանց, վորոնք չգիտեն ինչ անեն նրանցով: Դե՛, տեսե՛ք, շատ հեռուն չպետք ե գնալ, պատերազմի պատճառ դռնելու համար: Հյուսիսային Ամերիկան մի՞թե մի ժամանակ Անգլիային չի պատկանել:

— Անկասկած, — պատասխանեց Քոմ Հընսըրը, հենակի ծայրովը կատաղորեն կրակն արծածելով:

— Կա՛մ ուրեմն, — շարունակեց Չ. Տ. Մատտոնը, — հապաինչո՞ւ համար այսօր Անգլիան իր հերթին աճերիկացիների սեփականութիւնը չիլինի:

— Այդ մի արդար բան կլինե՛ր, — հարեց դնդապետ Բլոմսթրեմը:

— Գնացե՛ք այդ առաջարկն արեք Միացյալ Նահանգների նախագահին, — բացտկանչեց Չ. Տ. Մատտոնը, — և կտեսնենք, թե ձեզ ինչպէս կընդունի:

— Կասկած չկա, վոր շատ վատ կընդունի, — չչնշաց Բիլսթրեմը չորս առամների արանքից, վորոնք հազիվ կարողացել էր աշատել պատերազմի ժամանակ:

— Յերդվում եմ, — բացտկանչեց Չ. Տ. Մատտոնը, — առաջիկա ընտրութիւններին նա ի՞նչ ձայնը չի ստանա:

— Վոչ ել մերը, — միաձայն պատասխանեցին մյուս մարտնչող հաշմանդամները:

— Մինչ այդ, — ասաց Չ. Տ. Մատտոնը վորպէս յեղրտկացութիւն, — յեթե ինձ հնարավորութիւն չտան վորձելու իմ նոր

հրանոթը իսկական ուղմագաշտում, յես կհրաժարվեմ Թնդանոթային ակումբի անդամի կոչումից, կգնամ թողվելու Արկանզասի տափաստաններում:

— Մենք կհետեւենք քեզ, — պատասխանեցին ուղմատենչ Չ. Տ. Մատտոնի խոսակիցները:

Գործերն աշխարհի դրութեան մեջ եյին, մտքերը հետզհետեւ աքաղանում էին ու ակումբին սպառնում էր մոտակա քայքայումը, յերբ մի անսպասելի դեպք յեկավ կանխելու այս ցավալի պետք:

Այս խոսակցութեան հաջորդ որն իսկ ակումբի յուրաքանչյուր անդամ ստացավ հետեւյալ բովանդակութեամբ մի շրջաբերական:

«Քալիֆորնի, 3 հոկտեմբերի

Թնդանոթային ակումբի նախագահը պատիվ ունի հայտնել իր պաշտոնակիցներին, վոր ամսի 5-ին գումարվելիք նիստում չափազանց հետաքրքիր մի հարցում պիտի անի: Հետապէս նա խնդրում է բոլորին, ամեն դորձ մի կողմը թողած, հերկա լինել այդ ժողովին, վորին հրավիրվում էք դուք սույն հրավիրատումսով:

Մրտադին բարեներով

Ձեր իմպի Բարրիկեն, նախագահ թ. Ա.»

ԳԼՈՒԽ II

ՆԱԽԱԳԱՆ ԲԱՐՐԻԿԵՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՍԸ


Հոկտեմբերի 5-ին, յերեկոյան ժամը 8-ին մի հոծ բողմութիւն խոնված էր Ունիոն-Սիվեր փողոց № 21, Թնդանոթային ակումբի դահլիճներում: Ակումբի այն բոլոր անդամները, վորոնք ապրում էին Բալտիմորում, անձամբ ներկայացել էին նախագահի հրավերին: Իսկ թղթակից անդամները հարյուրներով դալիս էին ճեպընթացներով: Ինչքան ել մեծ լինել նիստերի դահլիճը, այս դիտական աշխարհը չէր տեղավորվում այնտեղ, նրանք խոնվում էին հարակից սրահներում, միջանցքներում և նույնիսկ բակերի մեջ: Այնտեղ կային և «կողմնակի» մարդիկ,

սյարդ քաղաքացիներ, վորոնք իրենց հերթին հավաքվել էյին՝ դահլիճի դռների մոտ, ջանալով անցնել առաջին շարքերը, անհամբեր սպասելով այն կարևոր հայտարարութեանը, վորը պիտի սներ նախադահ Բարբիկները: Քաղաքացիները հրհրում էյին իրար, ճեղքում էյին խիստ շարքերը, վորպեսզի առաջ անցնեն:

Այդ յերեկո Բալտիմորում դռնվող մի ոտարական նույնիսկ վոսկու գնով չէր կարող մուտք գործել մեծ դահլիճը, վորը բացառապես հատկացված էր իսկական և թղթակից անդամներին. ուրիշ վոչ վոք իրավունք չունէր այնտեղ մտնելու, և քաղաքի անվանի մարդիկ, քաղաքապետութեան անդամները ստիպված էյին խառնովել իրենց կառավարած բազմութեանը, ներսի նորութեաններէից թուուցիկ լուրեր ստանալու համար:

Ընդարձակ դահլիճը հետաքրքիր տեսարան էր ներկայացնում: Այդ մեծ դահլիճը հրաշալի կերպով հարմարեցված էր իբ նպատակին: Միմյանց վրա դարսված թնդանոթներից կազմված բարձր սյուներ, վորոնց վորպես հիմք ծառայում էյին խոշոշ հրասանդները, սրահում էյին կամարակապ թեթև առաստաղը՝ մետաղյա ժանյակների նման հյուսված զարդերով: Տեսակ-տեսակ հրացաններ, ատրճանակներ և հին ու նոր հրազեններ պատերի վրա խաչաձևվում էյին գեղանկար ձևերով: Ողային դադի բոցավառ լուսն ստատորեն թափվում էր ջահերի ձևով խմբված հաղարավոր ատրճանակներից, մինչդեռ ատրճանակների ու հրացանների ուրիշ վինջեր, աշտանակներ ու ճրագներ կազմելով, լրացնում էյին այս հրաշագեղ լուսավորութունը: Թնդանոթների մոդելներ, բրոնզե նմուշներ, գնդակներից ծակոտված նշանատախտակներ, ակումբի անդամների թնդանոթների արկերից խորտակված մետաղյա տախտակ-դրահներ, թնդանոթի խճկաններ ու մաքրոցներ, զանազան տեսակի ուումբերից շինված համբիչներ, մանյակներ, մի խոսքով՝ հրետանու բոլոր տեսակի մասերը աչք էյին շլացնում իրենց զարմանալի դասավորութեամբ. թվում էր, թէ այդ բոլորը ստեղծված էր վոչ թէ մահ սպիտակու, այլ զարդարանքի համար:

Պատվո տեղը, շքեղ մի ազակադիկի տակ, ցուցադրված էր վառողի ուժով խորտակված ու դալարված թնդանոթի մի կտոր, վորը Ջ. Տ. Մաստոնի հնարած թնդանոթի թանգազին բեկորն էր: Դահլիճի ծայրին, մի լայն ամբիոնի վրա բազմել էր նախու-



Իմպի Բարբիկեն

գահը իր հոգը զարտուղարների հետ: Նրա աթոռը դրված էր քանդակներով ծածկված մի թնդանոթասայլի վրա, և իր ամբողջութեան մեջ ներկայացնում էր 32 մատնաչափ տրամագծով մի հսկա հրաստնուղի ձևը: Այդ աթոռը, դրված 92 աստիճան անկյունով ու կախված առանցքների վրա, նախադասին հնարավորութուն էր տալիս շարժել նրան ինչպես մի որորոց-աթոռ, հաճելի ձոձումներով, ինչ վոր չստիպանց դուրեկան էր շատ սուր սրերին:

Գրասեղանը վեց կարճ թնդանոթների վրա հաստաււած յերկաթե մի լայն տախտակ էր, վորի վրա դրված էր հրաշալի դեղեցիկութեամբ մի թանաքաման՝ պատրաստված ձուլածո մի ուղեքից, իսկ նախադասի զանգակը հարկ յեղած դեղքում տրաքում էր ստրճանակի նման: Ամենատաք վիճարանությունների ժամանակ այս նոր ձևի զանգը հաղիվ էր կարողանում ծածկել տաքարյուն թնդանոթաձիգներին լեղեանի ձայնը:

Նախադասութեան սեղանի առաջ դիպ-դազ ձևով շարված էյին նստարանները՝ շերտավոր պատեղների և խրամատների նման, դրանց վրա նստում էյին թնդանոթային ակումբի բոլոր անդամները և այդ յերեկո կարելի յեր ասել, թե «ամբողջ պորիստները պաշտպանված էյին»: Շատ լավ ծանոթ լինելով նախադասի բնավորութեանը, բոլորը հասկացել էյին, վոր առանց ամենալուրջ պատճառի նա իր պաշտոնակիցներին անհանդիստ չէր անի:

Իմպի Բարրիկենը մոտ 40 տարեկան մի մարդ էր, հանդարտ, սառնարյուն, խստարարտ, խորապես լուրջ ու կենտրոնացած, խրճուճեարի նման ճշտապահ, աննկուն բնավորութեամբ. ասպետական հսկումներ քիչ ուներ, բայց սիրում էր արկածներ, իր գործնական վազմն զննելով նույնիսկ ամենահանդուրդն ձեռնարկներին մեջ: Նա սնհաշտ թշնամի յեր հարավի ճորտատերերին:

Բարրիկենը մեծ հարստութուն էր դիպել փայտի առևտրից: Պատերազմի ժամանակ հրետանու դիրեկտոր նշանակվելով, նա հայտնի դարձավ իր գյուտերով: Նա մեծապես նպաստեց հրանոթների կատարելագործմանը և փորձնական աշխատանքներին լայն թափ տվեց:

Բարրիկենը միջհասակ էր, և, վորպես բացառություն թընդանոթային ակումբի անդամների մեջ, նրա մարմնի բոլոր անդամները անփնա էյին: Նրա շեշտված դիմադճերը կարծես ան-

կյունաչափով էյին դժված և յեթե ճիշտ է, վոր մարդու բնավորութունը դուշակելու համար նրան պետք է դիտել կողքից, ապա Բարրիկենի պրոֆիլը ցույց է տալիս նրա եներգիան, հանդուրժյունն ու սառնարյունությունը:

Այդ պահին նա անշարժ նստել էր բազկաթոռի մեջ, լուսխոհուն, ինքնափոփ հայացքը պատասպարած բարձրադիր, դրանաձև մետաքոյա սև դլխարկի տակ, վորը կարծես պտուտակով ամրացված էր ամերիկացու դանդի վրա:

Նրա պաշտոնակիցները խոսում էյին իր շուրջը, առանց նրա ուշադրությունը դրավելու: Նրանք միմյանց հարցեր էյին տալիս, գանադան յենթադրություններ անում, իրենց նախադասին դիտում և իզուր աշխատում էյին նրա անվրդով դիմադճերից նրա միտքը գուշակել:

Յերբ մեծ դահլիճի վորոտաձայն ժամացույցը ժամի 8-ը լսվեց, Բարրիկենը կարծես զսպանակից ցնցվելով, հանկարծ վտռեց կանդեսը. ընդհանուր լուրթուն տիրեց, և դեկուցոզը Կի քիչ վերամբարձ տոնով սկսեց իր դեկուցումը:

— Հարգելի՛ պաշտոնակիցներ, շատ յերկար ժամանակից ի վեր, մի ամուլ խաղաղություն ցավալի անգործութեան է մատնել թնդանոթային ակումբի անդամներին: Մի քանի արկածայից տարիներից հետո հարկ յեղավ լքել մեր աշխատանքները և կանգ առնել առաջադիմութեան ճանապարհին: Յես չեմ վախենում հայտարարել, վոր ամեն մի պատերազմ, վոր մեր ձեռքը գեք կտա, մեզ համար ցանկալի յե...

— Այո՛, պատերազմ, — բացականչեց կրակոտ Ջ. Տ. Մաստոնը:

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, — ընդմիջեցին ամեն կողմից:

— Սակայն պատերազմը, — շարունակեց Բարրիկենը, — անհնարին է ներկա պայմաններում, և ինչքան ել զանկանա իմ հարգելի ընդմիջողը, դեռևս յերկար տարիներ պետք է անցնեն, մինչև վոր թնդանոթները կրկին վորոտան: Ուղեպաշտերի վրա: Ուրեմն պետք է այլ ասպարեց փորձենք մեզ լավույ յեռնողին յիւզ գանելու համար:

Հասարակությունը զգաց, վոր նախադասը հասել է դեկուցման ամենանուրբ կետին և ուշադրությունը կրկնապատկեց:

— Հարգելի՛ պաշտոնակիցներ, մի քանի ամիսներից ի վեր — շարունակեց Բարրիկենը, — յես ինձ հարց էյի տալիս, թե շարու-

նակերևի մնալ մեր մասնագիտութեան մեջ, մի՞թե չեյինք կարող  
19-րդ դարին արժանի այնպիսի մի փորձ ձեռնարկել, վորի հա-  
ջողութեանը կարողանար նպաստել հրետանային գիտութեանը:  
Այդ նպատակով յես յերկար վորոնեցի, աշխատեցի, հաջիեցի,  
և այն յեզրակացութեան հասա, վոր մենք հաջողութեան  
կղանենք այնպիսի մի ձեռնարկութեան մեջ, վորն ամեն մի ու-  
րիչ յերկրի համար անիրազործելի պիտի թվար: Այդ դործի նա-  
խագիծը յես մշակել եմ բոլոր մանրամասնութեաններով և ահա  
դա այս յերեկո իմ գեղուցման նյութն է լինելու: Այդ ծրագիրն  
արժանի յե ձեզ, արժանի Թնդանութեային ակումբի անցյալին և  
անկասկած աղմուկ պիտի բարձրացնի ամբողջ աշխարհում:

— Մե՞ծ աղմուկ, — բացականչեց մի ուրիշը, վորդեմ չեմ:

— Մեծ աղմուկ, բառի բովանդակ նշանակութեամբ, — պա-  
տասխանեց Բարբիկենը:

— Մի՛ ընդմիջեք, — բացականչեցին բազմաթիվ ձայներ:

— Ուրեմն խնդրում եմ, հարգելի՛ պաշտոնակիցներ, — շա-  
բուրունակեց նախագահը, — ձեր բոլոր ուշադրութեանը նվիրեք  
ինձ:

Մի սարսուռ անցավ ներկաների մեջ: Բարբիկենը մի արագ  
չարժումով գլխարկը գլխին ամրացնելով՝ հանդարտ ձայնով  
չարունակեց իր ճառը:

— Ձեզանից մեկը չկա, հարգելի՛ պաշտոնակիցներ, վորը տե-  
սած չլինի Լուսինը կամ նրա մասին լսած չլինի: Ձգարմանաք,  
վոր խոսում եմ գիշերային գլխավոր լուսատուի մասին: Թերևս  
մեզ վիճակված է այդ անձանութ աշխարհի Կոլումբոսը լինել:  
Հասկացեք ինձ և ոգնեցեք ինձ ձեր բոլոր կարողութեամբ: Յես  
ձեզ կառաջնորդեմ արագակտելու այդ նոր աշխարհին ու նրա  
անունը կմիանա այն 36 նահանգների անվան, վորոնք Հյուսիսա-  
յին Ամերիկայի Միութեան այս մեծ յերկիրն են կազմում:

— Կեցցե՛ Լուսինը, — բացականչեց Թնդանութեային ակումբը  
միաձայն:

— Լուսինը շատ է ուսումնասիրված, — շարունակեց Բարբի-  
կենը, — նրա գանգիվածը, խոտութեանը, ծանրութեանը, ծավալը,  
կազմը, շարժումները, հեռավորութեանն ու դերն արեղակնային  
սիստեմի մեջ կատարելապես ճշտված են: Կազմված են լուսնա-  
դրական քարտեզներ այնպիսի կատարելագործութեամբ, վորոնք  
հավասարվում են, յեթե վոչ գերազանցում, աշխարհագրական

քարտեզներին: Լուսնակարը մեր արբանյակի սքանչելի նկարները  
այլեց: Մի խոսքով՝ Լուսնի մասին դիտենք այն ամենը, ինչ վոր  
կարող են մեզ տալ մաթեմատիկան, աստղագիտութեանը, յերկ-  
բարանութեանը և Ֆիզիկան: Սակայն մինչև որս ուղիղ հա-  
ջողակցութեան չի հաստատավել նրա հետ:

Այս խոսքերը հետաքրքրութեան և դարմանքի բուռն շար-  
ժում առաջացրին:

— Թույլ տվեք ինձ, — շարունակեց նախագահը, — մի քանի  
խոսքով ձեզ հիշեցնել, թե ինչպես մի շարք խանդավառ մտքի տեր  
մարդիկ, յերևակայական ուղեվորութեաններ ձեռնարկելով,  
կարծում էյին, թե թափանցել էյին մեր արբանյակի գաղտնիք-  
ների մեջ: XVII դարում վոմն Դավիթ Ֆարբիցուս պարծենում  
էր, թե իր աչքերով տեսել է Լուսնի բնակիչներին: 1649 թ. մի  
Ֆրանսիացի՝ Ժան Բոդուան հրատարակեց հետևյալ գիրքը—  
«Իսպանացի արկածախնդիր Դոմինիկ Գոնչալեսի կատարած ուղե-  
վորութեանը ղեպի Լուսին»: Նույն դարաշրջանում, Սիբանո-դը-  
Բերթերակը հրատարակեց այն հուշակալվոր արշավանքի նկարա-  
գրութեանը, վորն այնքան հաջողութեան ունեցավ Ֆրանսիա-  
յում: Ավելի ուշ, մի ուրիշ Ֆրանսիացի— այդ մարդիկ շատ են  
գրադվում Լուսնով— Ֆոնտենել անունով, գրեց «Աշխարհների  
բազմավորութեանը», վոր իր ժամանակի գլուխ գործոցն էր: Սա-  
կայն գիտութեանը առաջադիմելով Չախճախում և նույնիսկ  
գլուխ գործոցները: 1835 թ. «Նյու-Յորք Ամերիկեն» հանդիսից  
Ֆրանսերենի թարգմանված մի բրոշյուր պատմում էր, թե Սըր  
Ճոն Հերշելը ազարկված լինելով Բարեհուսո հրվանդանը՝ աստ-  
շագիտական ուսումնասիրութեաններ կատարելու, «ներքին լու-  
սավորութեամբ» կատարելագործված մի հեռադիտակով Լու-  
սինը մտակեց էր մինչև 80 յարգ<sup>1)</sup> հեռավորութեան վրա:  
Այդպիսով նա Լուսնի մեջ վորոշակի տեսել էր քարայրեր, վո-  
րանց մեջ գետաձիեր էյին ապրում, տեսել էր կանաչադարձ լեռ-  
ներ, վորոսկրյա յեղջուրներով վոջխարներ, սպիտակ այժյամ-  
ներ, չլլիկների նման թաղանթավոր թևերով բնակիչներ: Այդ  
բրոշյուրը, վոր Լոք անունով մի ամերիկացի յե գրել, մեծ հաջո-  
ղութեան ունեցավ: Սակայն շուտով սլարդիկեց, վոր դա գիտա-

1) Յարը հազար է մոտավորապես 91 սանտիմետրի:

կան մի խաղ եր, և Փրանսիացիք առաջինը ծիծաղեցին նրա վրա:

— Միծաղել մի ամերիկացու վրա՞, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը, — ահա մի Casus Belli<sup>1)</sup>

— Հանգստացե՛ք, հարգելի բարեկամ: Փրանսիացիները ծիծաղելուց առաջ կատարելապես խորվել էյին մեր հայրենակցից: Այս կարճ պատմականը վերջացնելու համար կավելացնեմ, թե Խոտտերդամցի մի վոմն, Հանս Պֆալ, աղոտից սքտորաստված և ջրածնից 37 անգամ թեթե զազով լեցուն մի ուղապարհիով Լուսնին հասավ 19 որում: Այս ճամբորդութունն էլ նախկին փորձերի նման պարզապես յերեակոյտական եր, վորը հորինել եր Ամերիկայի ամենասիրված դրողներից մեկը, տարորինակ և խոլաղևս մի հանձար՝ Եղգար Պոն:

— Կեցցե՛ք Եղգար պոն, — բացականչեց հասարակութունը նախագահի խոսքերից երկարականացած:

— Յես վերջացրի, — շարունակեց Բարրիկենը, — այս փորձերի թվարկումը, վորոնց յես դուս դրական և գեղարվեստական պիտի անվանեմ, և վորոնք կատարելապես անբավարար են Լուսնի հետ լուրջ հարաբերութուն հաստատելու համար: Սակայն պետք է ավելացնեմ, վոր գործնական մտքի տեր մարդիկ փորձել են լուրջ հաղորդակցութուն ունենալ նրա հետ: Որինակ, մի քանի արտի առաջ մի գերմանացի յերկրաչափ առաջարկեց դիտական մի հանձնաժողով ուղարկել Միրիբի տափաստանները: Այնտեղ, այդ ընդարձակ ստեպներում, լուսավոր ցոլացուցիչների միջոցով հսկա յերկրաչափական ձեվեր պիտի հաստատեյին, վորոնց թվում նաև հիպոտենուզի քառակուսին, վորը Փրանսիացիները «եչերի կամուրջ» են անվանում: «Յուրաքանչյուր խելացի մարդ — ասում եր յերկրաչափը — պետք է հասկանա այս ձևերի դիտական նշանակութունը: Լուսնի բնակիչները, յեթե իրոք գոյութուն ունեն, պիտի պատասխանեն նմանորինակ յերկրաչափական ձևերով: Այդպիսով հաղորդակցութունը միանգամ հաստատելուց հետո հեշտ կլինի մի այբուրեն հնարել, վորը հնարափորձյուն կտա խոսակցել Լուսնի բնակիչներին հետ»: Այդպես եր ստում գերմանացի յերկրաչափը, սակայն նրա ծրագիրը չիրականացվեց, և միջև այսօր վոչ մի ուղիղ կապ չկա Յերկրի ու նրա արբանյակի միջև: Սակայն ամերիկացիների դործ-

նական հանձարին և վերապահված հարաբերության մեջ մանկ պատգային աշխարհի հետ: Լուսնին հասնելու միջոցը պարզ է, հեշտ, վստահ, անվրեպ: Ահա այդ է իմ առաջարկի նյութը:

Այս խոսքերն ընդունվեցին փոթորկալի բացականչութուններով ու ծափահարություններով: Ներկաների մեջ չկար մեկը, վոր չտարվեր, չոգելուրվեր ու չվերանար հետադարձ այդ խոսքերից:

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, լուսթյո՛ւն, — բացականչեցին ամեն կողմից:

Յերբ հուզումը հանդարտեց, Բարրիկենը, ավելի լուրջ և ծանրակշիռ, շարունակեց ընդհատված ձայրը:

— Դուք գիտեք, թե ինչ մեծ առաջադիմութուն է արել բալլիստիկան այս վերջին տարիների ընթացքում և ինչ աստիճանի կատարելագործության պիտի հասնեյին հրազեններն, յեթե պատերազմը շարունակվեր: Չեզ անձանոթ չէ նաև այն, վոր, ընդհանուր առմամբ, թնդանոթների դիմադրական ուժն ու վառուղի տարածական զորութունն անսահման և: Ուրեմն՝ յեղներով այդ սկզբունքից, յես ինձ հարց տվի, արդյոք դիմադրական վորոշ պայմաններով ոժտված, բնվարար մեծությամբ մի հրանոթի միջոցով հնարավոր չե՞ր մի արկ ուղարկել դեպի Լուսին:

Այս խոսքերի վրա հաղարավոր ներկաների հեվացող կրծքերից դարձացական մի «ո՞հ» դուրս թուավ, ապա մի վայրկյան լուսթյուն աիրեց, ինչպես լինում է ամպերի վորոտումից առաջ: Ընդ այդպես էլ յեղավ, վորոտումը պայթեց, սակայն ծափահարությունների, դոտում-դոչումի, բացականչությունների մի վորում, վորոնք դղրդացրին նիստերի դահլիճը: Նախագահն ուղում եր խոսել, բայց չեր կարողանում: Միայն տասը բուպե հետո նա կարողացավ իր ձայնը լսելի դարձնել:

— Թույլ տվեք ինձ վերջացնել, — շարունակեց նա ստուսիրտ, — յես խնդիրը քննարկել եմ բոլոր կողմերով, սուսմանաթել՝ հիմնված անվիճելի հաշիվների վրա, վորտեղից հետևում է, վոր մի վայրկյանում 11 կիլոմետր սկզբնական արագություն ունեցող մի արկ, ճշտորեն ուղղվելով դեպի Լուսին, անվրեպ նրան պիտի հասնի: Ուստի պատիվ ունեմ առաջարկել ձեզ հարգելի պաշտոնակիցներ, կատարել այդ փորձի վորձը:

1) Casus Belli — պատերազմի դրդապատճառ (ծի. Թարգման չէ):

ԲԱՐԲԻԿԵՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Անհնար է նկարագրել պատվարժան նախադահի այդ վերջին փուլերի ազդեցութիւնը: Ի՛նչ աղաղակներ, ի՛նչ բացականքութիւններ, կեցցեններ, «հիպ, հիպ, հիպ, ուուա»-ներ և նման կանչեր, վորոնցով այնքան հարուստ է ամերիկյան լեզուն: Մի աննկարագրելի իրարանցում, աղմուկ էր տիրում: Բերանները աղաղակում էին, ձեռքերը ծափահարում, վրտները դահլիճի տախտակամածը գզրդացնում: Ակումբի բոլոր հրանոթները յեթե միանգամից պայթէին, չէին կարող ավելի ուժեղ սասանել ողբ: Յեզ գարմանալի չէ այս. թնդանոթածիղներ կան, վորոնք գրեթէ նույնքան աղմկարար են, վորքան իրենց թնդանոթները:

Բարբիկենը մնում էր անվրդով այս խանդավառ ժխորի մեջ: Գուցե նա ցանկանում էր մի քանի խոսք ել ուղղել իր պաշտօնակիցներին, վորովհետև նրա շարժումները լուծյուն էին պահանջում և պայթուցիկ դանդաղ սպառվեց բուն վորոտումներից, սակայն վոչ վոր նրան չլսեց: Շուտով նրան իր բաղկաթուռից քաշեցին և հաղթականորեն բարձրացրին նախ նրա հովասարիմ ընկերները, հետո նրանց ձեռքերից անցավ վոչ նվաղ վոչ-զեվորված բազմութեան թեւերի մեջ:

Վոչինչ չի կարող դարձացնել ամերիկացուն: Շատ անգամներ ասել են, վոր «անհնար» բառը գոյութիւն չունի Ֆրանսերենում, անկասկած սխալվել են այս խնդրում: Ամերիկայում միայն ամեն ինչ հեշտ է թվում և պարզ: Բարբիկենի նախազճի և նրա իրազօրծման միջև վոչ մի ճշմարիտ յանկի իրեն թույլ չէր տա գծվարութեան նշույն իսկ տեսնելու: Ասաց և յեղավ:

Նախադահի հաղթական յերթը շարունակվեց ամբողջ գիշերը: Այդ մի իսկական ջահերի թափոր էր: Իռլանդացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ, շոտլանդացիներ, Մերիլենդի ամբողջ այլացեղ հպարակութիւնն աղաղակում էր, յուրաքանչյուրն իր մայրենի լեզվով, և «վիվաներ»-ը, «ուուաներ»-ն ու «բրաւոներ»-ը միմյանց էին խառնվում մի անասելի խանդավառութեան մեջ:

Այդ պահին հենց Լուսինը կարծես հասկանալով, վոր խըն-

դիրն իր մասին էր, վայում էր պայծառ շքեղութեամբ, իբր ճառագայթներով նսեմացնելով շրջակա լույսերը: Բոլորի հայացքն ուղղված էր նրա շողշողուն սկավառակին, վրոնք ձեռքով վողջուում էին, ուրիշներն ամենափաղաքական անուններ էին տալիս նրան, վրոնք կարծես հայացքով չափում էին նրան, ուրիշները բուռնցքով սպանում:

Ժամի ծից մինչև կես գիշեր, Չոնա Ֆոլ-սորիտ փողոցի մի ակնոցավաճառ մեծ փող աշխատեց դիտակ վաճառելով: Գիշերվրա լուսատուին դիտում էին այնպես, ինչպես դիտում են բարձր դասին պատկանող մի տիկնոջ: Շատերն արդեն անավարի կերպով նրան համարում էին իրենց սեփականութիւնը, կամ առնվազն Միացյալ Նահանգների սեփականութիւն, նրա տերիտորիայի մի մասը:

Մինչդեռ առայժմ հարցը վերաբերում էր դեպի նա մի թնդանոթաուժր ուղարկելուն— Յերկրի արբանյակի հետ հարաբերութեան մեջ մտնելու բավական կոպիտ մի ձև, բայց չափազանց տարածված քաղաքակիրթ պետութիւններում: ✓

Կես գիշերը հնչեց, սակայն խանդավառութիւնը չէր նվազում և հախտարտպես շարունակվում էր ժողովրդի բոլոր խավերի մեջ: Գիտնականները, դատավորները, խոշոր վաճառականները, բեռնակիրները, կրթված թե անուսում պարզամիտ մարդիկ ցնցված էին մինչև իրենց հոգու խորքը: Չէ՞ վոչ խնդիրն ազգային համաժողովրդական մի ձեռնարկի մասին էր: Այդ պատճառով էլ քաղաքի թե բարձր և թե «ցածր» թաղամասերում, դետափին, նախահանդստում կանգնած նավերի վրա, մարդկանց բազմութիւնը հարբած էր ուրախութիւնից, ջինով<sup>1)</sup> և վիսկիով<sup>2)</sup>: Նրանցից յուրաքանչյուրը խոսում, ճառում, վիճարանում, հաստատում, ծափահարում ևր, սկսած բառ-ուժի շքեղ դիվանների վրա թիկն տված և շերթի— կորլերի<sup>3)</sup> բաժակն առաջը դրած ջնետմենից մինչև նախաստիները, վորոնք Ֆիլա-Պոյնտի մոայլ դիմետների մեջ հարբում էին «կուրծք-ջախջախող» սոսկալի խմիչքով:

Մական առավոտյան ժամը 2-ին մոտ հուզումը հանդարտվեց: Նախադահ Բարբիկենը կարողացավ տուն վերադառնալ:


1) 2) 3) Ամերիկյան խմիչքներ:

նա հողնած եր, շարդված, արորված: Նույնիսկ Հերկուլեսը չէր կարող դիմանալ այդպիսի խանդավառութեան:

Ամբոխը հետզհետե հեռացավ հրապարակներից ու վողոցներից: Ոհայտի, Սուսկիհանայի, Ֆիլադելֆիայի և Վաշինգտոնի չորս յերկաթեղծերը, վորոնք պալիս միանում էին Բայտիմորում, դրոնց յեկած Ժողովուրդը վերադարձրին Միացյալ Նահանգների չորս կողմերը, և քաղաքը համեմատաբար խաղաղվեց:

Միայլ կլինեի կարծել, թե այս հիշատակելի յերեկոյան միմիայն Բայտիմորն եր հուզման մեջ: Միացյալ Նահանգների մեծ քաղաքները— Նյու-Յորք, Բոստոն, Այրանի, Վաշինգտոն, Ռիչմոնդ, Կրեչենա-Միտի, Չարլստոն, Մորիլ, Տեխասից մինչև Մասաչուսեթ, Միչիգանից մինչև Յուրթիզա, բոլորը մասնակցում էին այդ վողեռութեանը: Արդարև, Թնդանութային ակումբի 30.000 թղթակից անդամներին հայտնի յեր նախադասի նամակի բովանդակութեանը ու բոլորն ել միաստեակ անհամբուրթյամբ սպասում էին հոկտեմբերի 5-ի հոչակավոր զեկուցմանը: Այդպիսով նույն զիչերն իսկ նախադասի բերանից դուրս յեկած խոսքերը հետզհետե հեռազրաթելերի վրայից սահելով սուբում էին Միացյալ Նահանգներով, մի բողեյում 248.400 մղոն արարութեամբ: Ուրեմն առանց սխալվելու կարելի յե ասել, վոր նույն բողեյում Ամերիկայի Միացյալ Նահանգներում— վոր Փրանսիայից տաան անդամ ավելի մեծ ե— միաձայն էի «ոնոս» դոռացին, և 25 միլիոն սրտեր, հպարտութեանից ուռած, միևնույն զարկով բարախեցին:

Հետևյալ որր 1500 սրտիթերթեր, շարաթաթերթեր, կլիսամսայաթերթեր և ամսաթերթեր հարցը քննութեան առան և ուսումնասիրեցին զանազան կողմերով— Ֆիլիդիական, ողերեվութարանական, տնտեսական և բարոյական, պետական քաղաքականութեան և քաղաքակրթութեան տեսակետներից: Քննում էին մի շարք հարցեր—արդյո՞ք Լուսինը մի լրացած աշխարհ ե և այլևս վրչ մի փոփոխութեան յենթակա չե: Նմանում ե արդյո՞ք այն դարաշրջանի Յերկրին, յերբ դեռ Յերկիրը դուրկ եր մթալորաից: Ի՞նչ պատկեր ե ներկայացնում այն մասը, վոր անտեսանելի յե յերկրագնդին: Թեև ստայժմ ինդիքը վերաբերում եր դեպի Լուսին թնդանութի մի արկ նետելու նախադիին, սակայն բոլորը դրա մեջ տեսնում էին արդեն մի շարք կարևոր փորձերի



Թնդանութային ակումբի նիստը.



յեղակեալ: Բոլորը հույս ունեցին, վոր մի որ Ամերիկան պիտի թափանցի այդ խորհրդավոր սովառնակի դադանիքները, վո- մանք ել նույնիսկ յերկյուզ եյին կրում, վոր Լուսնի նվաճումը կարող է խանգարել յեվրոպական հավասարակշռությունը:

Նախագծի քննարկման ընթացքում վոչ մի թերթ չէր կա- կածում նրա իրազորման մասին: Գիտական, դրական և նույ- նիսկ կրոնական ընկերությունների կողմից հրատարակված ժո- դովածուները, բրոշուրները, հանդեսները զբվատում էյին նա- խագծի առավելությունները: Բոստոնի «Բնական պատմության» ընկերությունը, Ալբանիի «Գիտությունների ու արվեստների ա- մերիկյան» ընկերությունը, Նյու-Յորքի «Աշխարհագրական և վիճակագրական» ընկերությունը, Ֆիլադելֆիայի «Փիլիսոփա- յական ամերիկյան» ընկերությունը, Վաշինգտոնի «Մտխմտո- նյան» Ինստիտուտը հազարավոր նամակներով իրենց շնորհավո- րանքը հայտնեցին Թնդանոթային ակումբին, անմիջապես առա- ջարկելով իրենց աջակցությունն ու գրամական ոգնությունը:

Այսպիսով, կարելի չէ ասել, յերբեք մի առաջարկ այդքան մեծ թվով կողմնակիցներ չէր գտել: Վարանման, կասկածի, կամ մտահոգության նշույն իսկ չէր յերևում: Իսկ յերդիմանքը, ծաղրանկարներն ու ծաղրական յերգերը, վորոնցով Յեյրոպա- յում և մասնավորապես Պրանսիայում կարող եյին միայն հեղ- նանքով ընդունել զեպի Լուսնի թնդանոթի արկ նետելու միտ- քը, չափազանց վնասակար պիտի լինեյին իրենց իսկ հեղինակնե- րի համար: Ամերիկայում նրանց վոչինչ չէր կարող պաշտպանել ընդհանուր գայրույթից: Բաներ կան, վորոնց վրա չի կարելի ծիծաղել Նոր աշխարհում: Ուստի Իմպի Բարբիկենը այդ որվա- նից դարձավ Միացյալ Նահանգների ամենամեծ քաղաքացինե- րից մեկը:

Ահավասիկ նրա ժողովրդականության բազմաթիվ որինաչ- ներից մեկը:

Թնդանոթային ակումբի հոչակավոր նիստից մի քանի որ հե- տո մի անգլիական դրամատիկական խմբի ղեկնկոտը հայտա- բարեց, թե Բալտիմորի թատրոնում պիտի ներկայացվեր Շեքս- պիրի «Շատ արմուկ վոչնչի համար» կոմեդիան: Սակայն Բալ- տիմորի հասարակությունը այդ հայտարարության մեջ նախա- դաս Բարբիկենի առաջարկի դեմ մի վիրավորիչ տկնարկ նկա-

տելով՝ ներս խուժեց թատրոնի դահլիճը, նստարանները ջարդեց և դժբախտ ղեկնկոտրին ստիպեց հայտարարությունը վոխել: Նա ել, վորպես խելոք մարդ, հասարակական կարծիքի առաջ խոնարհվելով, այդ ձախող կատակերգությունը վոխեց և նրա սեղ ներկայացրեց Շեքսպիրի «Ինչպես ձեզ հաճելի չէ» կոմե- դիան, վորը մի քանի շաբաթ անընդհատ բեմադրվելով, հսկա- յական մուսք ունեցավ:

#### ԳԼՈՒԽ IV

### ԿԵՄԲՐԻՋԻ ԴԻՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Սակայն նախագահ Բարբիկենն իր պատվին արված ովացիա- ների մեջ վոչ մի բույե չկորցրեց: Նրա առաջին գործը յեղավ պաշտոնակիցներին հրավիրել Թնդանոթային ակումբի բյուրոյի նիստին: Այնտեղ գործն ըստ եյության քննելուց հետո վորոչվեց ձեռնարկի աստղադիտական մասի վերաբերմամբ դիմել աստ- ղագետներին: Նրանց պատասխանն ստանալուց հետո յեր, վոր քննության պիտի առնվեր գործի տեխնիկական կողմը. այդ մեծ գործի հաջողությունն սպահովելու համար վոչ մի բանի առաջ կանգ չպիտի առնեյին:

Մասնադիտական հարցեր պարունակող մի գրություն պատ- բասովեց և ուղարկվեց Մասաչուսետ նահանգի Կեմբրիջ քաղաքի աստղադիտարանին: Այդ քաղաքը, վորտեղ հիմնվել է Միացյալ Նահանգների առաջին համալսարանը, հոչակավոր է աստղադի- տական դիտարանով: Այնտեղ աշխատում էյին Ամերիկայի ամե- նից ականավոր գիտնականները, այնտեղ է գտնվում այն հզոր դիտակը, վորի միջոցով Բոնդը հնարավորություն ունեցավ Անդրոմեդայի «միզամածությունը» հայտաբերելու, իսկ Կլարկը նրանով գտավ Սիրիուսի արբանյակը: Այդ հոչակավոր հիմնա- կությունը իրավամբ վայելում էր Թնդանոթային ակումբի պատահությունը:

Յերկու որ հետո այնքան անհամբերությամբ սպասված դիտարանի պատասխանը հասավ նախագահ Բարբիկենին: Ահա նրա բովանդակությունը.

«Կեմբրիջի  
Դիտարանի դիրեկտոր  
Կեմբրիջ, 7 հոկտեմբերի

Բալտիմորի Թեոսոփայի  
ակումբի նախագահին:

«Ստանալով ձեր ամսիս 6 թվակիր նամակը, վոր Բալտիմորի  
Թեոսոփային ակումբի անդամների կողմից ուղղված եր Կեմբրի-  
ջի դիտարանին, մեր բյուրոն խսկույն ժողով գումարեց և վորո-  
շեց Ձեզ ուղարկել հետևյալ պատասխանը.

«Մեզ առաջարկված հարցերն են.

«1. Հնարավոր ե թեոսոփի արկը հասցնել մինչև Լուսին:

«2. Ի՞նչքան ե Յերկրի և իր արբանյակի միջև յեղած հեռա-  
վորության ճշգրիտ չափը:

«3. Ի՞նչքան ժամանակից Լուսինն կարող ե հասնել մի արկ,  
վորին պետք ե տրվի սկզբնական բավարար արագութուն. հե-  
տևվապես արկն ի՞նչ ժամանակ պետք ե արձակել, վորպեսզի  
Լուսինն հանդիպի վորոշ կետի վրա:

«4. Ի՞նչ ժամանակ Լուսինը ամենանպաստավոր դերքի վրա  
կլինի, վորպեսզի արկն այդ միջոցին նրան հանդիպի:

«5. Յերկնակամարի վո՞ր կետին պետք ե ուղղել արկն ար-  
ձակող Թեոսոփի:

«6. Արկի արձակման միջոցին Լուսինը յերկնակամարի վո՞ր  
կետի վրա պետք ե գտնվի:

«Պատասխանում ենք հարցերին առանձին-առանձին:

«Առաջին հարց— հնարավոր ե Թեոսոփի արկը հասցնել:

«Երկրորդ հարց—

«Պատասխան— Այո, հնարավոր ե թեոսոփի արկը հասցնել  
մինչև Լուսին, յեթե կարելի լինի այդ արկին տալ մի վայրկյա-  
նում 11.000 կիլոմետր սկզբնական արագութուն: Մեր հաշիվ-  
ները ցույց են տալիս, վոր այդ արագութունը բավարար ե: Քա-  
նի Յերկրից հեռանում ենք, Յերկրի ձգողական ուժը պակասում  
ե տարածության քառակուսիի հակառակ համեմատությամբ,  
այսինքն յերեք անգամ ավելի տարածության համար այդ ուժն  
ինն անգամ ավելի քիչ ե: Հետևաբար արկի ծանրութունն արա-  
գորեն պիտի նվազի և վերջապես բոլորովին պիտի չքանա, յերբ  
Լուսնի ձգողութունը պիտի հավասարվի յերկրի ձգողության,

այսինքն ճանապարհի 47—52-րդ մասում: Այդ ժամանակ արկն  
այլևս ծանրութուն չի ունենալու և յեթե այդ կետն անցնի, պի-  
տե ընկնի Լուսնի վրա Լուսնի ձգողական ուժի ազդեցությամբ  
միայն: Փորձի տեսական հնարավորութունը ուրեմն միանգա-  
ժայն արագացված ե. դալով նրա դործնական հաջողությանը,  
զա կախված ե միայն թեոսոփի ուժից:

«Յերկրորդ հարց— Ի՞նչքան ե Յերկրի և իր արբանյակի միջև  
յեղած հեռավորության ճշգրիտ չափը:

«Պատասխան— Լուսինը Յերկրի շուրջը պտտվելիս անում ե  
վոչ թե կրո շրջան, այլ ձվաձև մի շրջանակ, վորի կենտրոննե-  
րից մեկը գրավում ե Յերկիրը: Դրա հետևանքն ե այն, վոր Լու-  
սինը յերբեմն Յերկրին ավելի մոտ ե լինում, յերբեմն ավելի  
հեռու, կամ աստղադիտական լեզվով՝ յերբեմն հեռակետի, յեր-  
բեմն մերձակետի վրա: Յեկ վորովհետև անջրպետի մեջ առավե-  
լազույն և նվազագույն հեռավորության տարբերութունը բա-  
վականաչափ մեծ ե, չի կարելի այդ պարագան ուշադրության  
չառնել: Լուսինն իր հեռակետի վրա Յերկրից հեռու յե չորս  
հարյուր յոթ հազար կիլոմետր, իսկ իր մերձակետի վրա՝ յերեք  
հարյուր հիսուն վեց հազար կիլոմետր, այսպիսով ստացվում ե  
հիսուն մեկ հազար կիլոմետրի տարբերութուն, կամ ամբողջ  
ճանապարհի մեկ յններորդից ավելի մի մասը: Ուրեմն՝ վորպես  
հաշիվի հիմք պետք ե ընդունել Լուսնի մերձակետի հեռավորու-  
թյունը:

«Յերրորդ հարց— Բավարար սկզբնական արագութունն ու-  
նեցող մի արկ ի՞նչքան ժամանակից կարող ե Լուսնին հասնել,  
հետևապես ի՞նչ ժամանակ պիտի ե արկն արձակել, վորպեսզի  
Լուսնին հասնի վորոշ կետի վրա:

«Պատասխան— Յեթե ուղեւորն անվերջ ընթանալ սկզբնական  
արագությամբ, այն ե՝ մի վայրկյանում տասնմեկ հազար կիլո-  
մետր, մոտավորապես իննը ժամում տեղ կհասնենք, սակայն վո-  
րովհետև այդ սկզբնական արագութունը շարունակաբար պիտի  
նվազի, արված բոլոր հաշիվներից յերևում ե, վոր արկը յերեք  
հազար վայրկյանում, այսինքն՝ 83 Ժ. 20 րոպեյում պիտի հասնի  
այն կետին, ուր Յերկրի ու Լուսնի ձգողական ուժերը հավա-  
սարակչում են և, սկսած այս կետից՝ արկը Լուսնի վրա պետք  
ե ընկնի հիսուն հազար վայրկյանից կամ 13 Ժ. 53 ր. և 20 վայր-  
կյանում: Ուրեմն նպատակահարմար ե արկն արձակել Լուսնի

նշանակված տեղը հասնելուց 97 Ժամ 13 րոպե 20 վայրկյան առաջ:

«Չորրորդ հարց— Ճիշտ ի՞նչ ժամանակ Լուսինը լինելու յե տեճնից ավելի նպաստավոր դիրքում, վորպեսզի արկն այդ դիրքում նրան դիպչի:

Պատասխան—Վերև ասվածի համաձայն, նախ պետք է ընտրել այն մոմենտը, յերբ Լուսինն իր մերձակետի վրա յե, նույնպես այն մոմենտը, յերբ նա անցնում է գենիթից, այդպիսով ճանապարհը եյի կկրճատվի Յերկրի շառավիղի յերկարութան չափով, այսինքն վեց հազար յերեք հարյուր յոթանասուն ութ կիլոմետրով, այդպիսով ճանապարհի վերջնական յերկարությունը կլինի յերեք հարյուր հիսուն վեց հազար վեց հարյուր կիլոմետր: Բայց յեթե յուրաքանչյուր ամիս Լուսինն անցնում է իր մերձակետից, այդ ժամանակ նա միշտ էլ գենիթում չի լինում: Միաժամանակ այդ յերկու կետերում լինում է մեծ ընդմիջումներով: Պետք է ուրեմն սպասել մերձակետի ու գենիթից անցնելու գուգադիպության:

«Մի բարեբախտ դիպվածով առաջիկա տարվա դեկտեմբերի 4-ին Լուսինը կգտնվի այդ յերկու պայմանների մեջ— կես գիշերին նա կլինի իր մերձակետին, այսինքն Յերկրից ամենակարճ հեռավորության վրա, և միաժամանակ նա կանցի գենիթից:

«Հինգերորդ հարց— Յերկնքի վո՞ր կետին պետք է ուղղել արկն արձակող քնդանոթի փողը:

«Պատասխան— Նախընթաց դիտողություններն ընդունելուց հետո պարզ է, վոր թնդանոթը պետք է ուղղել գենիթին<sup>1)</sup>, այդպիսով ոմբաձողությունը կլինի ուղղահայաց հորիզոնի մակարդակին և արկն ավելի արագ կազատվի Յերկրի ձողափանջ ուժի ազդեցությունից: Բայց վորպեսզի Լուսինը կարողանա բարձրանալ մի վորևէ վայրի գենիթը, անհրաժեշտ է, վոր այդ վայրը չլինի Լուսնի հակման կետից ավելի բարձր աստիճանի վրա, ուրիշ խոսքով՝ այդ վայրը պետք է լինի հյուսիսային կամ հարավային լայնության 0 աստիճանի և 28 աստիճանի միջև<sup>2)</sup>:

1) Չենիթը յերկնքի այն կետն է, վոր գտնվում է դիտողի գլխի վերև ուղղահայաց կերպով:

2) Յերկրագնդի հասարակածի և քսաներորդ դուգահեռականի մեջ գտնված շրջաններն են միայն, ուր Լուսինը դադարձակետին հասնելուց հետո

Մերքէ մի վորևէ տեղից կատարված թնդանոթաձողությունն անխուսափելիորեն շեղակի պետք է լինի, մի բան, վոր կլնասեր գործի հաջողությանը:

«Վեցերորդ հարց— Լուսինը Յերկնքի վո՞ր կետի վրա պետք է գտնվի արկի արձակման միջոցին:

«Պատասխան— Այն մոմենտին, յերբ արկը պիտի արձակվի տարածության մեջ, Լուսինը, վոր ամեն որ առաջանում է 13 աստիճան 10 րոպե և 35 վայրկյան, գենիթային կետից հեռացած կլինի այդ թվի քառասպատիկ անգամ, այսինքն 52 աստիճան 40 րոպե և 20 վայրկյանով, մի տարածություն, վոր համապատասխան է այն ճանապարհին, վորը նա պիտի կտրի արկի ուղևորության ժամանակ: Բայց վորովհետև պետք է հաշվի առնել այն խոտորումը (շեղումը), վորին պետք է յենթարկվի արկը Յերկրի շարժման հետևանքով, և վորովհետև արկը Լուսնին պետք է հասնի յերկրային 16 աստիճանի հավասար տարածության խոտորումից հետո, մի տարածություն, վորը հաշվելով Լուսնի որբիտի վրա, անում է մոտավորապես տասնմեկ աստիճան: Այս տասնմեկ աստիճանները պետք է ավելացնել այն աստիճաններն Վրա, վորոնք հայտնում են Լուսնի արդեն հիշված ուշացումը, այսինքն կլոր թվով վաթսուն չորս աստիճան: Այդպիսով, թնդանոթաձողության պահին դեպի Լուսին ուղղված տեսողական մի շառավիղ տեղի ուղղահայացի հետ 64 աստիճանի մի անկյուն պետք է կազմի:

«Մրանք են թնդանոթային ակումբի կողմից կեմբրիջի դիտագրանին ուղղված հարցերի պատասխանները:

Յեզրակացություն.

«1. Թնդանոթը պետք է դետեղել հյուսիսային կամ հարավային լայնության 0 աստիճանի և 28 աստիճանի միջև գտնվող մի յերկրում:

«2. Թնդանոթը պետք է ուղղվի դեպի տվյալ վայրի գենիթը:

«3. Արկի սկզբնական արագությունը մի վայրկյանում պետք է լինի տասնմեկ հազար մետր:

«Վում և շեղի գենիթ, 28 աստիճանից հետո Լուսինն այնքան ավելի քիչ է մտանում գենիթին, ինչքան ավելի յենք մոտենում քեռային:

«4. Արկը պետք է արձակվի առաջիկա տարի **դեկտեմբերի** 1-ի ժամը 11-ին սրահա 13 ընդ 20 վայրկյան:

«5. Ռուսերը Լուսինն պետք է հասնի մեկնումից չորս ու հետո՝ դեկտեմբերի չորսին, ուղիղ կես գիշերին, այն միջոցին, յերբ Լուսինը պետք է անցնի դենիթից:

«Թնդանոթային ակումբի անդամները պարտավոր են ուրեմն անհասպող սկսել այսպիսի մի ձեռնարկի համար պահանջված աշխատանքները և պատրաստ լինեն վորոշված ժամանակին դործի անցնելու համար, հակառակ դեպքում, այսինքն, յթե դեկտեմբերի չորսն անցնի, Լուսինը նույն մերձակետի և դենիթի վրա պիտի չինի մեկ ել տասնութ տարի տասնմեկ ու հետո:

«Կեմբրիջի դիտարանի բյուրոն իրեն լիովին դնում է Թնդանոթային ակումբի տրամադրության տակ, տեսական աստղագիտության հարցերը լուծելու համար և սրանով իր շնորհավորանքները միացնում է բովանդակ Ամերիկայի շնորհավորանքներին:

«Բյուրոյի կողմից՝  
Չ. Մ. ԲԵԼՅԱՍՏ

Կեմբրիջի դիտարանի գիրեկտոր»

ԳԼՈՒԽ V

ԻՆՉ ՎՈՐ ԶԵՐ ԿԱՐԵԼԻ ԶԳԻՏԵՆԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Բարրիկենի առաջարկությունն այն անմիջական հետևանքն ունեցավ, վոր Լուսինն վերաբերող աստղագիտական բոլոր յերեվույթներն որվա խնդիր դարձան: Ամեն մարդ սկսեց յեռանդով նրան ուսումնասիրել: Թվում էր, թե Լուսինն առաջին անգամ է յերևացել հորիզոնի վրա և դեռևս վոչ վոք նրան չէր տեսել յերկնքում: Լուսինը այսպես ասած մոդայի կարգն անցավ, նա դարձավ որվա հերոսը, առանց իր համեստությունը կորցնելու, և սեզոնային «աստղերի» շարքը մտալ, առանց դրանով հարատանալու: Թերթերը վերհիշեցին այն հին անեկդոտները, վորոնց մեջ «զայլերի արևը» մի վորևե դեր էր խաղում. հի-

չեցրին նախնական դարերի ազիտություն կողմից նրան վերագրած ազդեցությունները: Լուսինն յերգեցին ամեն յեղանակով և ձևով. մի խոսքով ամբողջ Ամերիկան վարակվել էր լուսնամոլությունով:

Իրենց կողմից դիտական հանդեսները զբաղվեցին հատկապես Թնդանոթային ակումբի ձեռնարկի հետ կապված հարցերով: Կեմբրիջի դիտարանի նամակը հրատարակվեց, քննարկվեց և անվերապահորեն հավանություն դտավ մամուլի կողմից: Մի խոսքով այլևս ներելի չէր, նույնիսկ կիսագրագետ մի ամերիկացու համար, չգիտենալ Յերկրի արբանյակին վերաբերող բոլոր յերեվույթները, նույնիսկ ամենասահմանափակ մտքի տեր պառակտիկներն այլևս չէին հավատում Լուսնի մասին յեղած նախատիկներն: Գիտությունը նրանց հասնում էր գանազան ձևով, բոլոր կողմերից, աչքերի և ականջների միջոցով, նա մտքերի մեջ էր թափանցում, այլևս անհնար էր ավանակ մնալ... աստղագիտության մեջ:

Մինչև այդ, շատերը չգիտեցին, թե ինչպես կարելի յեր չափել Լուսնի և Յերկրի միջև յեղած տարածությունը: Թերթերը և ժուռնալներն իսկույն բացատրեցին, վոր այդ տարածության չափումը կարելի յե կատարել Լուսնի պարալալկը չափելով: Յեթե պարալալկս բառը նրանց զարմացնում էր, լուսաբանում էին, վոր այդ այն անկյունն է, վոր ստացվում է Յերկրի շառավիղի յերկու ծայրերից մինչև Լուսին ձգված յերկու ուղիղ դժերից: Յեթե այս մեթոդի կատարելության մասին կասկած էր հայտնվում, իսկույն նրանց ապացուցվում էր, վոր այդ միջև հեռավորությունը 384,000 կիլոմետր է և տարբերությունը կարող է լինել ամենաչատր հարյուր կիլոմետր:

Նրանց համար, ովքեր Լուսնի շարժումների մասին պարզ գաղափար չունեցին, թերթերն ամեն ուր ապացուցում էին, վոր Լուսինը յերկու տարբեր շարժում ունի, առաջինը կատարվում է առանցքի շուրջը, յերկրորդը կատարվում է Յերկրի շուրջը: Այս յերկու շարժումներն էլ կատարվում են հավասար տեվողությամբ, այն է՝ քսան յոթ և մի յերրորդական ուրում:

Առանցքի շուրջը պտտվելու հետևանքով է, վոր Լուսնի մակերեվույթի վրա գիշեր և ցերեկ է առաջանում, միայն թե Լուսնային ամիսը մի ցերեկ և մի գիշեր ունի և նրանցից յուրա-

քանչյուրը տևում է յերեք հարյուր հիսուն չորս և մի յերրորդ ժամ: Բայց, բարեբախտաբար լուսնի համար, յերկրագնդի կողմը դարձած յերեսը վերջինից լուսավորվում է տասչորս Լուսնի լուսնի հավասար լուսավորութեամբ: Մյուս յերեսը, վոր միշտ անտեսանելի յէ, բնականաբար յերեք հարյուր հիսուն չորս ժամ կատարյալ խավարի մեջ է, և լուսավորված է միայն աստղերից ընկած աղոտ լույսով:

Մի քանի մի քիչ կամակոր մարդիկ սկզբում չէին ըմբռնում, վոր յեթէ Լուսինը Յերկրի շուրջը պտտվելիս անփոփոխ միևնույն յերեսն է ցույց տալիս Յերկրին, այդ նրանից է, վոր նույն ժամանակամիջոցում նա պտույտ է գործում ինքն իր առանցքի շուրջը: Այդպիսիներին ասում էին. «գնացեք ձեր սեղանատունը և պտտվեցեք կլոր սեղանի շուրջը, այն ձևով, վոր շարունակ նրա կենտրոնին նայեք. յերբ ձեր պտույտը վերջանա, դուք պտույտ գործած կլինեք նաև ձեր շուրջը, վորովհետև ձեր հայացքը հետզհետե սենյակի բոլոր կետերը ընդգրկած կլինի: Այդ սենյակը յերկինքն է, սեղանը՝ յերկիրը, իսկ լուսինը դուք ինքներդ եք»: Լսողները հիանում էին այս պարզ համեմատութեանից:

Այսպես ուրեմն, Լուսինն անդադար միևնույն յերեսն է ցույց տալիս Յերկրին, սակայն, ճշգրիտ լինելու համար, պետք է ավելացնել, վոր հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք տեղի ունեցող մի տատանման հետևանքով, վորը կոչվում է «ճոճում», Լուսինը իր սկավառակի կետից մի քիչ ավելին է ցույց տալիս, այն է՝ մոտավորապես հիսունյոթ հարյուրերորդական:

Յերբ առաջվա անուսները Լուսնի շարժման մասին այնքան բան իմացան, ինչքան Կեմբրիջի դիտարանի դիրեկտորը, նրանք չափազանց հետաքրքրվեցին նաև Յերկրի շուրջը կատարած նրա պտույտով. դիտական հանդեսները շուտով նրանց համար լուսաբանեցին նաև այդ հարցը: Նրանց համար պարզվեց, վոր յերկնակամարն իր անհամար աստղերով կարելի յէ ընդունել վորպես մի մեծ ժամացույցի սկավառակ, վորի վրա Լուսինը շրջում է, Յերկրի բնակիչներին ցույց տալով ճիշտ ժամը. նրանց բացատրեցին, վոր Լուսնի այդ շարժումից են առաջանում նրա փուլերը (Փագերը), այսինքն նրա տարբեր տեսքերը, վոր լիալուսինը մենք տեսնում ենք այն ժամանակ, յերբ Յերկիրը պտտվում է հենց

Արևի և Լուսնի միջև, վոր նորալուսինը յերևում է այն ժամանակ, յերբ Լուսինը գտնվում է Արևի և Յերկրի միջև. և, վերջապես, վոր Լուսինը իր առաջին կամ վերջին քառորդի մեջ է, յերբ Արևի և Յերկրի հետ կազմում է մի ուղիղ անկյուն, վորի գագաթը ինքն է գրավում:

Մի քանի ուշիմ յանկիներ այս բոլորից յեզրակացնում էին, վոր խավարումները կարող են պատահել միայն այն ժամանակ, յերբ Լուսինը Արևի նկատմամբ գտնվում է «միացման» կամ «հակադրման» մեջ. և պետք է ասել, վոր լավ էին դատում: Արեվի և Լուսնի «միացման» պահին Լուսինը կարող է խավարեցնել արևին, մինչդեռ «հակադրութեան» ժամանակ Յերկիրն է, վոր իր հերթին կարող է Լուսնին խավարեցնել. և յեթէ այս խավարումները յուրաքանչյուր լուսնամսում յերկու անգամ չեն պատահում, պատճառն այն է, վոր այն ճանապարհի մակարդակը, վորի համեմատ շարժվում է Լուսինը, մի փոքր թեքված է գեպի այն ուղու մակարդակը, վորի համեմատ շարժվում է Յերկիրը:

Գալով այն հարցին, թե Լուսինը ինչ բարձրութեան կարող է հասնել հորիզոնի վրա, Կեմբրիջի դիտարանը այդ հարցին պատասխանել է լիովին: Ամեն վոք գիտեր, վոր այդ բարձրութեանը կախված է այն վայրի լայնութեան աստիճանից, վորտեղից կատարվում է դիտումը: Սակայն յերկրագնդի այն գոտիները, վորոնց համար Լուսինը հասնում է գեներթին, այսինքն կանգնում է դիտողների ուղիղ գլխի վրա, հանդիսանում են հյուսիսային լայնութեան 28 աստիճանի և հարավային լայնութեան 28 աստիճանի միջև գտնվող շրջանները: Այդ պատճառով ել Կեմբրիջի դիտարանն արել է այն կարևոր հանձնարարութեանը, թե փորձը պետք է կատարել յերկրագնդի այդ մասի մի վորևէ կետից, վորպեսզի հնարավոր լիներ արկին արձակել ուղղահայաց կերպով, այդպիսով ավելի շուտ ազատվելու համար ձգողական ուժի ազդեցութեանից: Չեռնարկի հաջողութեան համար դա մի էյական պայման է, և հասարակական կարծիքը չափազանց մտահոգված էր դրանով:

Ինչ վերաբերում է այն գծին, վորին հետևում է Լուսինը Յերկրի շուրջը պտտվելիս, Կեմբրիջի դիտարանի նամակն արդեն բացատրել էր, վոր այդ գիծը մի ելլիսպ է, վոր թե շրջանակ,

այլ մի ձևով թերատ, վորի Փոկուսներից (կիզակետ) մեկն է Յերկիրը: Այս ձևով որբիտները հատուկ են բոլոր մոլորակներին և արբանյակներին, ու տեսական մեխանիկան հիմնովին ապացուցում է, վոր այլ կերպ լինել չի կարող: շատ բնական է, վոր Լուսինն իր հեռակետում ավելի հեռու, իսկ մերձակետում ավելի մոտ է գտնվում Յերկիրն:

Ահա այն ամենը, ինչ վոր ամեն մի ամերիկացի գիտեր, կամա թե ակամա, ինչ վոր վորևէ մեկի համար ամոթ պիտի լիներ չգիտենալ: Բայց յեթե այս ճշմարիտ սկզբունքներն արագորեն ժողովրդականացան, մի շարք սխալներ, զանազան ցնորական յերկյուզներ ավելի դժվար յեղավ արձատախիլ անել: Որինակ՝ մի քանի բարեմիտ մարդիկ պնդում էին, թե Լուսինը մի նախկին գիտավոր էր, վոր անցնելով Արևի շուրջը, իր յերկարափուն շավիղը Յերկրի մոտից անցավ ու նրա ձգողական շրջանակի մեջ մնաց բռնված: Սալոնի այդ աստղագետները այդպիսով կարծում էին բացատրել Լուսնի այրված յերևույթը, մի անդամանելի դժբախտություն, վորի համար Արևին էին մեղադրում: Բայց յերբ նրանց առարկվում էր, թե գիտավորները շրջապատված են մթնոլորտով, մինչդեռ Լուսինը նրանից դուրի էր, կամ յեթե ուներ, չափազանց քիչ, նրանք դժվարանում էին պատասխանել:

Ուրիշները կասկածամիտների ցեղին պատկանելով՝ Լուսնի վերաբերմամբ վորոշ վախեր հայտնում էին: Նրանք լսել էին, վոր խալիֆաների ժամանակ յեղած դիտողություններից ի վեր Լուսնի շրջելու արագությունը վորոշ համեմատությամբ ավելանում էր: դրանից յեղրակացնում էին, վոր— պետք է խոստովանել վոր շատ տեղին էր— վոր շարժման արագացման հետևանքով, յերկու աստղերի միջև յեղած տարածությունը պիտի նվազեր ու այս կրկնակի յերևույթն անվերջ շարունակվելու դեպքում մի ուր Լուսինը պիտի ընկներ Յերկրի վրա: Սակայն այդ վախիկոտները ապահովեցին ու ապագա սերունդների համար այլևս յերկյուղ չունեցան, յերբ տեղեկացան, վոր Փրանսիացի հռչակավոր մաթեմատիկոս Լապլասի հաշիվների համաձայն՝ շարժման այդ արագացումը չափազանց սահմանափակված է, և թե մի համեմատական նվազում չպիտի ուշանար նրան հաջորդել: Այդպիսով արեգակնային աշխարհի հավասարակշռությունը չէր կարող խանգարվել ապագա դարերի մեջ:

Մնում էր տգետ սնտիապաշտների խումբը: Նրանք չեն բավարարվում իրենց տգիտությամբ... գիտեն այն, ինչ վոր չկա ու Լուսնի մասին շատ բան գիտեն, վոր գոյություն չունի: Նրանցից վոմանք Լուսնի սկավառակը մի հայելի էին համարում, ցից վոմանք Լուսնի սկավառակը մի հայելի էին համարում, վորի միջոցով Յերկրի զանազան կողմերից կարելի յեր միմյանց տեսնել ու մտքերը հաղորդել միմյանց: Ուրիշները պնդում էին, վոր Լուսնի վրա ուսումնասիրված հազար նորություններից իննհարյուր հիսունը զգալի փոփոխություններ է բերել, ինչպես՝ հեղաշրջություն, յերկրաշարժ, ջրհեղեղ և այլն: Հետևապես նրանք հավատում էին գիշերային աստղի խորհրդավոր ազդեցության՝ մարդկային ճակատագրի վրա և նրան ընդունում էին ցուցյան՝ մարդկային ճակատագրի վրա և նրան ընդունում էին վորպես կյանքի «ճշմարիտ հակաչիռ»: Նրանք կարծում էին, վոր ամեն մի լուսնարնակ յերկրի յուրաքանչյուր բնակչի հետ կապված է մի համակրական կապով ու դոկտոր Միդլի հետ պընդում էին, վոր կենսական գրությունը ամբողջապես նրան է հղատակվում, հայտարարելով,—առանց սակայն ապացուցելու,— վոր տղաները ծնվում են հատկապես նոր Լուսնի միջոցին, աղջիկները՝ վերջին քառորդին և այլն և այլն: Բայց ի վերջո պետք յեղավ հրաժարվել այս գոհհիկ սխալներից, վերադառնալ միակ ճշմարտության, ու յեթե Լուսինն իր կարծեցյալ ազդեցություններից փետրատվելով, մի քանի շաղակրատների մտքի վրա ունեցած հեղինակությունը կորցրեց, խոշոր մեծամասնությունը նրան թեր յեղավ: Իսկ յանկիներն ուրիշ փառասիրություն չունեցան, յեթե վոչ տիրապետել այդ նոր աշխարհին ու նրա ամենաբարձր գագաթին տարգել Միացյալ Նահանգների աստղագարդ գրոշակը:

ԳԼՈՒԽ VI

ԱՐԿԻ ԳՈՎՔԸ

Կեմբրիջի դիտարանը իր հոկտեմբերի 7-ի նամակով հարցը քննարկել էր աստղագիտական տեսակետից, մնում էր հարցը լուծել նաև տեխնիկական տեսակետից: Ահա այդ ժամանակ է, վոր

Ճագեցին գործնական դժվարությունները, վորոնք անհաղթելի պիտի թվային Ամերիկայից բացի ուրիշ վորեւէ մի յերկրի համար: Բայց այստեղ գրանք խաղի նման բան չեղան:

Նախագահ Բարրիկենը առանց ժամանակ կորցնելու Թնդանոթային ակումբի անդամներից մի Գործադիր Կոմիտե կազմեց: Այդ Կոմիտեն յերեք նիստով պետք է պարզեր Թնդանոթի, արկի և վառողի յերեք հիմնական հարցերը: Կոմիտեն կազմված երայց նյութերի մասին խորը հմտություն ունեցող չորս անձերից, վորոնք էյին՝ Բարրիկենը, վոր ձայների հավասար բաժանման ղեկավար ղերակչույ ձայն պիտի ունենար վորպես նախագահ, ղեներալ Մորգանը, մայոր Ելֆրիտոնը, վերջապես անխուսափելի Ջ. Տ. Մաստոնը, վորին հանձնվեց քարտուղար-ղեկուցողի պաշտոնը:

Հոկտեմբերի 8-ին Կոմիտեն հավաքվեց նախագահ Բարրիկենի մոտ, Հանրապետության փող. № 3 տանը: Յեղ վորովհետև կարևոր եր, վոր ստամոքսը իր պահանջներով չխանդարեր այդպիսի լուրջ մի խորհրդակցություն, Թնդանոթային ակումբի չորս անդամները նստեցին բուտերբրոդներով և խոշոր թեյամաններով ծածկված մի սեղանի շուրջ: Իսկույն Ջ. Տ. Մաստոնը զբիշը պտուտակով իր յերկաթե ճանկին ամրացրեց և ժողովը գործի անցավ:

Բարրիկենը նիստը բացեց հետևյալ խոսքերով.

— Միբելի՛ պաշտոնակիցներ, մենք պետք է լուծենք Թնդանոթաձգության ամենակարևոր հարցերից մեկը, հատկապես այն գիտությունը, վորը զբաղվում է արկերի շարժումով, այսինքն այն մարմինների, վորոնք վորեւէ մի ուժի մղումով արձակվում են տարածության մեջ և սլանում են ահադին արագությամբ:

— Ո՛ր, արկաձգություն, արկաձգություն, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը հուզված ձայնով:

— Գուցե ավելի արամարնական էլլիներ, — շարունակեց Բարրիկենը, — այս առաջին նիստը նվիրել Թնդանոթի հարցին:

— Համաձայն ենք, — պատասխանեց ղեներալ Մորգանը:

— Սակայն, — շարունակեց Բարրիկենը, — յերկար խորհրդակցություններից հետո ինձ թվաց, վոր արկի հարցը պետք է առաջին տեղը զբաղի, քանի վոր Թնդանոթի մեծության չափը կախված պետք է լինի արկի մեծությունից:



Բարրիկենը բացեց նիստը

— Զայն եմ խնդրում,— բացականչեց Մաստոնը:

Իսկույն նրան ձայն տրվեց, նկատի ունենալով նրա փառա-  
վոր անցյալը:

— Միրելի՛ բարեկամներ,— բացականչեց Ջ. Տ. Մաստոնը  
ներչնչված,— մեր նախագահը իջավուճեց ունի արկի հարցին նա-  
խապատվութուն տալու մյուս բոլոր հարցերից առաջ: Այն ար-  
կը, վոր մենք պիտի արձակենք դեպի Լուսին, մեր սուրհանդակն  
է, մեր դեսպանը: Յեւ յես խոնարհաբար խնդրում եմ այդ հար-  
ցի վրա նայել հասարակական, բարոյական տեսակետով:

Թնդանոթի արկը քննարկելու այս նոր տեսակետը չափազանց  
զրգուցեց Կոմիտեյի անդամների հետաքրքրութիւնը, ուստի և  
նրանք կրկնապատկված ուշադրութեամբ լսում էին Ջ. Տ. Մաս-  
տոնի խոսքերը:

— Միրելի՛ պաշտոնակիցներ,— շարունակեց Մաստոնը,— յես  
կարճ պետք է խոսեմ, մի կողմ եմ թողնում Փիլիպական արկը,  
այսինքն այն արկը, վորը սպանում է: Յես կխոսեմ միայն  
մաթեմատիկական արկի, բարոյական արկի մասին: Ինձ համար  
արկը մարդկային հզորութեան ամենափայլուն արտահայտու-  
թիւնն է: Նրա մեջն է, վոր կենտրոնացած և մարմնացած է այդ  
հզորութիւնը:

— Շատ լավ,— ասաց մայրը Ելֆիստոնը:

— Իրո՞ք,— բացականչեց Ջ. Տ. Մաստոնը,— ասողերին ու  
մոլորակներին մարդը ավելացրեց արկը, յերկրային արագու-  
թեան այդ ցուցանիշը, անհունութեան մեջ թափառող աստղերի  
մանրանկարը, աստղեր, վորոնք հսկայական արկեր են կարծես:  
Բնութեանն են պատկանում ելեկտրականութեան արագութիւ-  
նը, լույսի արագութիւնը, աստղերի արագութիւնը, գիտավոր-  
ների արագութիւնը, ձայնի արագութիւնը, քամու արագու-  
թիւնը: Բայց մերն է արկի արագութիւնը, վորը հարյուր ան-  
գամ ավելի յե գնացքների և ամենարագավազ ձիերի արագու-  
թիւնից:

Ջ. Տ. Մաստոնը վողեւորված եր արկի այս գովքը յերգելիս,  
նրա ձայնը լիբիկական շեշտ եր ստացել:

— Թվե՞ր եք ուզում— շարունակեց նա— ահալասիկ ձեզ  
պերճախոս թվեր:— Վերցրեք, թեկուզ 2A ֆնտանոց համեստ  
արկը. յեթե նա ելեկտրականութիւնից ութ հարյուր հազար,

չույսից վեց հարյուր քառասուն, Յերկրի՛ Սրբի շուրջը կատարած  
չարժումից յոթանասուն վեց անգամ պակաս արագութեամբ է  
ընթանում, սակայն թնդանոթի բերանից դուրս դալու բոպեյին  
ձայնից ավելի արագ է թռչում: Այդ արկը մի վայրկյանում  
թռչում է չորս հարյուր մետր. չորս հազար մետր՝ տասը վայր-  
կյանում, քսան չորս կիլոմետր՝ մի բոպեյում, հազար չորս հա-  
զար կիլոմետր՝ մի ժամում, յերեսուն չորս հազար չորս հա-  
զար վայրկյանում կիլոմետր մի որում. այսինքն, այդ փոքր արկը  
թռչում է յերկրադնդի պտտվելու ժամանակ հասարակածի կե-  
տերի ունեցած արագութեամբ, ավելի քան տասներկու և մեկ  
յերորդական միլիոն կիլոմետր՝ մի տարում: Ուրեմն նա տասն-  
մեկ որում կհասնի Լուսին, տասներկու տարում՝ արեգակին,  
յերեք հարյուր վայրկյանում տարում՝ Նեպտունին<sup>1)</sup>, այսինքն ար-  
եգակնային սիստեմի սահմանին: Ահա թե ինչ կարող է անել  
մեր ձեռքով շինված այդ համեստ արկը: Ի՞նչ պիտի լինի ուրեմն,  
յերբ նրա արագութիւնը քսան անգամ ավելացնելով հասցենք  
մի վայրկյանում ութ կիլոմետրի: Ա՛հ, հրաշալի, սքանչելի  
արկ: Յես համոզված եմ, վոր այնտեղ՝ Լուսնի վրա քեզ կընդու-  
նեն Յերկրի դեսպանին վայել պատիվներով:

Այս ճառի վերջարանն ընդունվեց ուռաներով, և Ջ. Տ.  
Մաստոնը խիստ հուզված նստեց՝ ընդունելով իր պաշտոնակից-  
ների ջերմ շնորհավորանքները:

— Իսկ հիմա,— ասաց Բարբիկենը,— յերբ բավական մեծ տեղ  
ովինք բանաստեղծութեան, անցնենք բուն խնդրին:

— Պատրաստ ենք,— պատասխանեցին Կոմիտեյի անդամները,  
յուրաքանչյուրը կես դյուստին բուտերբրոդ կուլ տալով:

— Ձեզ հայտնի յե, թե վորն է հիմնական խնդիրը,— շարու-  
նակեց նախագահը:— Անհրաժեշտ է արկին մի վայրկյանում  
տասնմեկ հազար մետր սկզբնական արագութիւն տալ: Յես  
կարծում եմ, վոր մեզ կհաջողվի այդ անել: Բայց այժմ քննենք  
մինչև այսոր ձեռք բերված արագութիւնները: Գեներալ Մոր-  
գանը այդ մասին մեզ կարող է տալ անհրաժեշտ ծանոթութիւն-  
ներ:

1) Այդ ժամանակ Նեպտունը համարվում եր արեգակնային սիստեմի  
ամենահեռավոր մոլորակը: Այժմ հայտնի յե ավելի հեռավոր մի մոլորակ—  
Պլուտոնը: Ծանոթ. խմբագր.:



— Շատ հեշտ է,— պատասխանեց զենեքալը,— վորովհետև պատերազմի ժամանակ յես փորձարկման հանձնաժողովի անդամ էյի: Նախ կարող եմ ասել, վոր Ռալգրենի թնդանոթները, վորոնց արկերը հասնում էյին մինչև հինգ կիլոմետր հեռավորության, հարյուր ֆնտանոց արկն արձակում էյին մի վայրկյանում չորս հարյուր հիսուն հինգ մետր սկզբնական արագությամբ:

— Լավ, իսկ Ռոդմենի Կոլումբրիա<sup>1)</sup> զըլ,— հարցրեց նախագահը:

— Ռոդմենի Կոլումբրիա զըլ փորձի յենթարկվելով Նյու-Յորքի մոտ Համիլտոն ամրոցում՝ կես տոնն կշռող արկը հասցրեց տասը կիլոմետր հեռավորության, ունենալով մի վայրկյանում յոթ հարյուր յերեսուն մետր արագություն: Այս արագության չկարողացան հասնել Արմատոնդն ու Պալիզերն՝ Անգլիայում:

— Ա՛հ, այդ անգլիացիները...— բացականչեց Ջ. Տ. Մաստոնը, իր յերկաթե ճանկը զեպի արեվելը, Անգլիայի կողմն ուղղելով:

— Ուրեմն,— հարցրեց Բարրիկենը,— այդ յոթ հարյուր յերեսուն մետրը մինչև որս ձեռք բերված ամենամեծ արագությունն է:

— Այո,— պատասխանեց Մորգանը:

— Թույլ տվեք ասել,— ընդմիջեց Ջ. Տ. Մաստոնը,— վոր յեթև իմ հրասանդը չպայթեր...

— Այո, բայց նա պայթեց,— պատասխանեց Բարրիկենը բարեսիրտ շարժումով:— Ուրեմն վորպես հիմք ընդունենք այդ յոթ հարյուր յերեսուն մետրի արագությունը: Պետք է դա քսանապատկել, ուստի մի ուրիշ նիստի թողնելով այդ արագությունը ստանալու միջոցների ֆենարիումը, այժմ ձեր ուշադրությունն եմ հրավիրում, սիրելի պաշտոնակիցներ, արկի անհրաժեշտ ծավալի վրա: Հասկանալի յե, վոր այստեղ հարցը կես տոնն ծանրություն ունեցող արկի մասին չէ:

— Ինչո՞ւ համար վոչ,— հարցրեց մայորը:

1) Կոլումբրիա գ էյին կոչվում այդ ժամանակվա ամենազոր թշե թնդանոթները:

— Վորովհետև այդ արկը,— պատասխանեց իսկույն Ջ. Տ. Մաստոնը,— բավականաչափ մեծ պետք է լինի զբավելու համար Լուսնի բնակիչների ուշադրությունը, յեթե իհարկե այդպիսիք գոյություն ունեն:

— Այո,— պատասխանեց Բարրիկենը,— բայց կա մի ուրիշ՝ ավելի կարևոր պատճառ:

— Ի՞նչ էք ուզում ասել դրանով, Բարրիկեն՝,— հարցրեց մայորը:

— Ուզում եմ ասել, վոր բավական չէ միայն արկն արձակել և այլևս նրանով չզբաղվել, պետք է վոր մենք հետևենք նրա թռիչքին, մինչև տեղ հասնելը:

— Ի՞նչ,— բացականչեցին զենեքալը և մայորը, այդ առաջարկից մի քիչ դարձացած:

— Անշուշտ,— շարունակեց Բարրիկենը ինքնավստահ ձայնով— անշուշտ, հակառակ դեպքում մեր փորձը կլիներ անողուստ:

— Ուրեմն,— հարցրեց մայորը,— դուք ուզում եք, վոր այդ արկն ունենա հսկայական ծավալ:

— Վո՛չ. հաճեցեք լսել ինձ: Ձեզ հայտնի յե, վոր տեսողության գործիքները չափազանց կատարելագործված են: Մի շարք հեռադիտակներ արդեն իրերը վեց հազար անգամ մեծացնում են, այսինքն Լուսինը մոտեցնում մեզ մինչև 64 կիլոմետր տարածության վրա: Այդ հեռավորության վրա քսան մետր տրամագիծ ունեցող իրերը լիովին տեսանելի յեն դառնում: Յեթե հեռադիտակների տեսողության գորությունը ավելի հեռուն չի տարվել, պատճառն այն է, վոր այդ ուժեղացումը կլիներ ի վնաս նրա հստակատեսության, և Լուսինը, վոր ցոլացող մի հայելի յե, բավականաչափ ուժեղ լույս չի ուղարկում, վորպեսզի կարելի լիներ խոչորացումը այդ սահմանից դենը տանել:

— Լավ ուրեմն, ի՞նչ էք ուզում ասել,— հարցրեց զենեքալը: Չլինի՞ ուզում եք քսան մետրանոց մի արկ կառուցել:

— Վոչ յերբեք:

— Ուրեմն մտադիր եք Լուսինն ավելի պայծառ դարձնել:

— Ճիշտ այդպես:

— Ահա մի հիանալի գործ,— բացականչեց Ջ. Տ. Մաստոնը:

— Այո, չափազանց պարզ,— պատասխանեց Բարրիկենը:— Արդարև, յեթե ինձ հաջողվի նվազեցնել մթնոլորտի թանձրու-

թյունը, վորի միջով անցնում է Լուսնի լույսը, մի՞թե այդ լույսն ավելի պայծառ չէր դառնա:

— Անտարակույս:

— Ուրեմն, այդ արդյունքը ստանալու համար բավական է հեռադիտակը հաստատել բարձր լեռան վրա. այդպես ել պիտի անենք:

— Համաձայն եմ, համաձայն եմ, — պատասխանեց մայրը: — Դուք դիտեք ամեն ինչ պարզել զարմանալի ձևով... Յեվ այդպիսով ի՞նչ մեծություն հույս ունեք ստանալ:

— Քառասուն ութ հազար անդամ մեծացում, վորը Լուսինը մեզ պիտի մտանցնի մինչև ութ կիլոմետր, և տեսանելի լինելու համար բավական է, վոր իրերը միայն յերեք մետր տրամադիծ ունենան:

— Հրաշալի՜, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը, — մեր արկը պիտի ունենա ուրեմն յերեք մետր տրամադիծ:

— Ճիշտ այդպես:

— Թույլ ավելք սակայն նկատել, — հարեց մայրը Ելֆիստոնը, — վոր այդ դեպքում արկն այնպիսի ծանրություն պիտի ունենա, վոր...

— Ո՛հ, մայր, — պատասխանեց Բարբիկենը, — ծանրության մասին վիճելուց առաջ թույլ ավելք ինձ առել, վոր մեր հայրերն այդ տեսակետից հրաշքներ եյին գործում: Յեւ հեռու յիմ այն մտքից, թե թնդանոթաձուլթյան արվեստը չի առաջադիմել, բայց դիտե՞ք արդյոք, վոր միջին դարերում իսկ զարմանալի արդյունքներ եյին ստանում թնդանոթաձուլթյան բնադավառում. համարձակվում եմ ասել՝ ավելի զարմանալի, քան մեր հաջողությունները:

— Ի՞նչ էք ասում, — ընդմիջեց Մորզանը:

— Հաստատեցեք ձեր խոսքերը, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը:

— Դրանից հեշտ բան չկա, — պատասխանեց Բարբիկենը: Իմ ասածի պաշտպանության համար փաստեր ունեմ: Այսպես, 1543 թվին Մահմեդ յերկրորդի կողմից Պոլսի պաշարման ժամանակ հազար ինն հարյուր Փունտ կշռով քարե արկեր եյին նետում. հասկանո՞ւմ էք, թե ի՞նչ հսկայական մեծություն պիտի ունենային դրանք:

— Ո՛հ, ո՛հ, — բացականչեց մայրը, — հազար ինն հարյուր Փունտ, դա պատկառելի կշիռ է:

— Մալթայում ասպետների ժամանակ Սենտ-Ելմա բերդի մի թնդանոթը յերկու հազար ութ հարյուր Փունտ ծանրության արկեր եր արձակում:

— Ձի կարող պատահել:

— Վերջապես, մի Ֆրանսիացի պատմաբանի դրածի համաձայն, Լյուդովիկոս XI իշխանության ժամանակ, մի հրասանդ հինգ հարյուր Փունտ ծանրության արկ եր արձակում, բայց այդ արկը արձակվելով Բաստիլից<sup>1)</sup> — վորտեղ խենթերը խելոքներին եյին բանտարկում — հասնում եր մինչև Շարանտոն<sup>2)</sup> — մի վայր, վորտեղ խելոքները խենթերին եյին բանտարկում:

— Լավ է ասված, — հարեց Մաստոնը:

— Այդ թվականներից հետո ի՞նչ ենք տեսնում: Արմատրոնգի թնդանոթները արձակում են հինգ հարյուր Փունտ ծանրության արկեր, իսկ Ռոդմենի կոլումբիադները՝ կես տոննանոց արկեր: Ուրեմն յեթե արկերի արձակման հեռավորությունը ավելացել է, ապա նրանց ծանրությունը պակասել է: Յեթե մենք մեր ջանքերը դործադրենք այդ ուղղությամբ, դիտության առաջադիմության շնորհիվ կարող ենք տասնապատկել Մահմեդ յերկրորդի և Մալթայի ասպետների արկերի ծանրությունը:

— Պարզ է, — պատասխանեց մայրը, — բայց արկի պատրաստման համար ի՞նչ տեսակ մետաղ էք ուզում դործադրել:

— Պարզապես չուզուն, — պատասխանեց գեներալ Մորզանը:

— Բա՛հ, չուզո՞ւն, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը արհամարհանքով, — դեպի Լուսին թռչելու հատկացված արկի համար այդ շատ հասարակ մետաղ է:

— Չչափազանցենք, պատվական բարեկամս, — ասաց Մորզանը, — չուզունն էլ բավական է:

1) Բաստիլը Փարիզում նախկին մի ամրոց եր, վոր քաղաքական կալանավորների մի բանտ եր: 1789 թ. հուլիսի 14-ին ասպատակ ժողովուրդը Բաստիլը դրավեց և հիմնահատակ կործանեց: Ծան. թարգմ.:

2) Շարանտոնը Փարիզի մտ մի փոքր քաղաք է, նշանավոր էր դե՛ փառնորդ: Ծան. թարգմ.:

— Դե լա՛վ, —ասաց մայրը ելֆիստոնը, — քանի վոր ծանրութիւնը համեմատական է ծալալին, յերեք մետր տրամագծով ձուլածո մի արկ չափազանց ծանր կլինի:

— Այո, յեթե լիքը լինի. վոչ, յեթե դատարկ, —ասաց Բարբիկենը:

— Դատարկ. ուրեմն ուումբի նման պիտի լինի:

— Վորի մեջ կարող ենք դնել նամակներ, փաստաթղթեր, Լուսնին ուղղված հեռագրեր, — պատասխանեց Մաստոնը, — մեր Յերկրի արտադրանքներից նմուշներ:

— Այո, դա ուումբի նման կլինի, — ասաց Բարբիկենը, — այդ անհրաժեշտ է: Յերեք մետր տրամագիծ ունեցող լիքը միաձուլ արկը յերկու հարյուր հազար Փնտից ավելի կքաշի, իսկ այդ չափազանց մեծ ծանրութիւնն է, բայց վորովհետև դրան անհրաժեշտ է բավարար դիմացկունութիւն տալ, յես առաջարկում եմ հինգ հազար Փունտ ծանրութիւն:

— Իսկ ի՞նչ հաստութիւն պետք է ունենան նրա պատերը, — հարցրեց մայրը:

— Յեթե հետեւեք սահմանված Փորմուլային, —ասաց Մորգանը, — ապա յերեք մետր տրամագծին անհրաժեշտ է ամուլաղն կես մետր հաստութեան պատեր:

— Այդ չափազանց շատ է, — պատասխանեց Բարբիկենը, — լավ նկատի ունեցեք, մեր նպատակը չե յերկաթե տախտակներ ծաղկելու համար սահմանված արկ պատրաստել: Բալական է, վոր արկի պատերը կարողանան դիմանալ վառուղի դադի ճնշմանը: Խնդիրն ուրեմն հետևյալն է — ի՞նչ հաստութիւն պետք է ունենա չուգունից պատրաստված մի սնամեջ ուումբ, վորպեսպի հինգ հազար Փնտից ավելի ծանրութիւն չունենա: Մեր հմուտ մաթեմատիկոս պատվարժան Մաստոնը անմիջապես կհայտնի այդ մասին:

— Ավելի հեշտ բան չկա, — պատասխանեց Կոմիտեյի հարդելի քարաուղարը:

Այդ ասելով՝ նա թղթի վրա գրեց հանրահաշվային մի քանի Փորմուլաներ, նրա գրչի տակից դուրս յեկան յերկրորդ աստիճանի բարձրացած π-եր և X-եր: Նույնիսկ թիւաց, թե մի խորանարդ արմատ հանեց և ասաց:

— Պատերի հաստութիւնը մոտ հիսուն միլիմետր պետք է լինի:

— Այդքանը բավալա՞ն է, — հարցրեց մայրը կասկածանքով:  
— Վոչ, — պատասխանեց նախագահ Բարբիկենը, — անշուշտ վոչ:

— Լավ, ուրեմն ի՞նչ պետք է անել, — ասաց ելֆիստոնը չվարած դեմքով:

— Չուգունի տեղ մի ուրիշ մետաղ դործածել:

— Պղինձ, — հարցրեց Մորգանը:

— Վոչ, պղինձն էլ շատ ծանր է, յես նրանից ավելի լավը պիտի առաջարկեմ:

— Որինակ, ի՞նչ, — հարցրեց Մայրը:

— Ալյումին — պատասխանեց Բարբիկենը:

— Ալյումին, — բացականչեցին Կոմիտեյի յերեք անդամները:

— Այո, բարեկամներս: Ձեզ հայտնի է, վոր մի նշանավոր Փրանսիացի զինկոս Հանրի Սենտ-Կլեր-Դըվիլիեն հաջողվեց 1854 թ. ստանալ ալյումին հոծ դանդվածով: Այս թանգազին մետաղն ունի արծաթի սպիտակութիւնը, վոսկու անաղարատութիւնը, յերկաթի տոկոսնութիւնը, պղնձի դյուրահալութիւնը և ազակու թեթևութիւնը: Նա հեշտ է մշակվում. բնութեան մեջ չափազանց տարածված է, վորովհետև ալյումինը ապուստաների մեծամասնութեան հիմքն է կազմում. յերկաթից յերեք անգամ ավելի թեթև է և կարծես հատկապես ստեղծված է մեր արկին նյութ մատակարարելու համար:

— Կեցցե՛ք ալյումինը, — բացականչեց Կոմիտեյի քարտուղարն՝ իր խանդավառութեան մեջ միշտ ազմկարար:

— Բայց, սիրելի նախագահ, — ասաց մայրը, — մի՞թե ալյումինի ինքնարժեքը չափազանց թանգ չէ:

— Այդպես եր, — պատասխանեց Բարբիկենը, — նոր գտնված ժամանակ ալյումինի մեկ Փունտն արժեք յերկու հարյուր վաթսուների մինչև յերկու հարյուր ութսուն դոլլար, հետո իջավ մինչև քսան յոթ դոլլարի, վերջապես այսօր արժե ինն դոլլար:

— Բայց Փունտն ինն դոլլար դեռևս շատ բարձր գին է, — պատասխանեց մայրը, վոր հեշտութեամբ զինաթափ չէր լինում:

— Անշուշտ, սիրելի մայր, բայց վոչ անմատչելի:

— Ուրեմն ի՞նչ ծանրութեան կլինի արկը, — հարցրեց Մորգանը:

ՅԵՂԻԱՆՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

— Ահա իմ հաշիվների արդյունքը, — պատասխանեց Բարբրիկենը, — յերեք մետր տրամագծով և յերեսուն մետր հաստությամբ մի արկի ծանրությունը՝ յեթե չուզունից լինե՞ր՝ կկշռե՞ր յոթանասուն յոթ հազար չորս հարյուր Փունտ, իսկ յեթե ալյուսմինի ձուլվածքից լինի, նրա ծանրությունը կիջնի մինչև քսան հազար յերկու հարյուր հիսուն Փունտի:

— Հրաշալի՛, — բացականչեց Մաստոնը, — հենց այդ էլ պահանջում ե մեր ծրագիրը:

— Հրաշալի՛, հրաշալի՛, — ընդմիջեց մայրը, — բայց չե՞ք մտածում, վոր Փունտը ինն դոլլարով հաշված այդ արկը կարժենա...

— Հարյուր ութսուն յերկու հազար յերկու հարյուր հիսուն դոլլար, այդ ինձ լավ հայտնի յե, բայց մի՛ վախենաք բարեկամներ, դրամից չենք նեղվի, ձեզ վստահացնում եմ:

— Դրամը մեր դրամարկիդների մեջ կհոսի առատորեն, — ավելացրեց Ջ. Տ. Մաստոնը:

— Լավ ուրեմն, ի՞նչ ե ձեր կարծիքն ալյումինի մասին, — հարցրեց նախագահը:

— Ընդունում ենք, — պատասխանեցին Կոմիտեյի յերեք անդամները:

— Գալով արկի ձեվին, — շարունակեց Բարբրիկենը, — այդ այնքան էլ կարևոր չե, քանի վոր մի անգամ միջնորդան անցնելուց հետո արկը թուջելու յե դատարկ տարածության մեջ. յես առաջարկում եմ կլոր ձեվը, թող ինքն իր առանցքի շուրջը պտտվի, վորքան ուզում ե:

Այդպիսով վերջացավ Կոմիտեյի առաջին նիստը: Արկի հարցը վերջնականապես լուծված եր: Ջ. Տ. Մաստոնը չափազանց ուրախ եր լուսնաբնակներին ալյումինից պատրաստված մի ուսմբ ուղարկելու վորոշումից. «այդ ուսմբով նրանք պտտած գաղտփար կկազմեն Յերկրի մասին»:

Այդ նիստում ընդունված վորոշումները մեծ տպավորություն դործեցին դրսի աշխարհի վրա: Մի քանի յերկչոտ ժարդիկ մի ջեջ վախենում էյին, մտածելով տարածության մեջ մտախնայ յինն տոնն ծանրությամբ մի ուսմբ արձակելու մասին: Նրանք հարց էյին տալիս, թե ինչ մեծությամբ թնդանոթ պիտի լինի, հարց էյին տալիս, թե ինչ մեծությամբ արագուվոր կարողանա նետել այդպիսի մի արկ և այդպիսի արագությամբ: Կոմիտեյի յերկրորդ նիստի արձանագրությունը հաղթականորեն պատասխանում եր այդ հարցերին:

Հաջորդ յերեկո թնդանոթային ակումբի չորս անդամները բուտերբրոդի լեռնակույտի և թեյի իսկական ովկիանոսի առաջ սեղան նստան: Վիճարանությունն իսկույն սկսվեց, այս անգամ առանց առաջաբանի:

— Սիրելի՛ սրաշտոնակիցներ, — ասաց Բարբրիկենը, — այսոր մենք պետք ե դրադվենք թնդանոթի հարցով, վորոշենք նրա յերկարությունը, ձեվը, նյութը և ծանրությունը: Հավանական ե, վոր մեզ պետք կլինի նրան վիթխարի մեծություն տալ, սակայն ինչքան էլ մեծ լինեն դժվարությունները, մեր ամերիկյան տեխնիկան հեշտությամբ կհաղթահարի նրանց: Հաճեցե՞ք ուրեմն ինձ լսել և մի՛ խնայեք ձեր ամենաուժեղ առարկությունները, յես դրանցից վախեցողը չեմ:

Հավանության բացականչություններով ընդունվեց այս հայտարարությունը:

— Չմոռանանք, — շարունակեց Բարբրիկենը, — թե յերեկ վիճարանությունը մեզ վո՞ր կետին հասցրեց: Խնդիրն հետևյալ կերպ ե ներկայանում — մի վայրկյանում տասնըմեկ հազար մետր արագություն տալ յերեք մետր տրամագծով և ինն տոնն ծանրությամբ մի ուսմբի:

— Իսկապես այդ խնդիրը, — պատասխանեց մայրը Ելֆրիտոնը:

— Շարունակում եմ, — ասաց Բարբրիկենը: — Յերբ տարածության մեջ մի ուսմբ և արձակվում ե յերեք յերարից անկախ ուժերի սզդեցության. 1) միջավայրի դիմա-

դրությունը, 2) յերկրի ձգողական ուժը և 3) ուումբին տրված մղման ուժը: Քննենք այդ յերեք ուժերը:


Միջավայրի դիմադրությունը, այսինքն ուղի դիմադրությունը համարյա նշանակութուն չունի, վորովհետև Յերկրի մթնոլորտը չի անցնում 60—70 կիլոմետրից: Մինչդեռ տասնմեկ հազար մետր արագություն ունեցող արկը հինգ վայրկյանում կանցնի այդ տարածությունը, այդ ժամանակն այնքան կարճ է, վոր միջավայրի դիմադրությունը կարելի չէ աննշան համարել: Անցնենք յերկրի ձգողությանը, այսինքն ուումբի ծանրությանը. մեզ հայտնի չէ, վոր այդ ծանրությունը պիտի նվազի տարածության քառակուսիի հակառակ համեմատությամբ, այդ մասին մենք Ֆիզիկայից դիտենք, վոր յեթե մի մարմին ինքն իրեն թողնվելով ընկնում է յերկրի վրա, նրա անկումը հինգ մետր և առաջին վայրկյանում, իսկ յեթե այդ միևնույն մարմինը ընկներ մոտավորապես յերեք հարյուր ութսուն հազար կիլոմետր հեռավորությունից, այսինքն լուսնից մինչև Յերկիր, ապա առաջին վայրկյանում կանցներ ընդամենը 1<sup>1</sup>/<sub>3</sub> կիլոմետր: Դա համարյա անչարժություն է: Ուրեմն աստիճանաբար պետք է հաղթահարել այդ ձգողական ուժը: Ի՞նչպես կարող ենք այդ անել— մղման ուժի միջոցով, այսինքն վառողային զազերի ճնշման ուժով:

— Այդ է դժվարությունը,— ասաց մայրը:

— ձիշտ է,— պատասխանեց նախագահը,— բայց մենք կհաղթահարենք այդ դժվարությունը, վորովհետև մեզ պետք չեղած ճնշման ուժը կախված է թնդանոթի յերկարությունից և դործածվելիք վառողի քանակից, վորը կախված է թնդանոթի պատերի դիմադրական ուժից: Ուրեմն այսոր մենք կղրադվենք թնդանոթի մեծության հարցով: Ակնհայտ է, վոր մենք թնդանոթի պատերի դիմադրական ուժը կարող ենք հասցնել հսկայական, համարյա անսահման մեծության, քանի վոր նա պիտի լինի անչարժ:

— Այդ բոլորը պարզ է,— ասաց գեներալը:

— Մինչև այսոր,— շարունակեց Բարբիկենը,— ամենայնպես կար թնդանոթները, մեր ամերիկյան կոլումբիադները, հինգ մետրից ավելի յերկարութուն չեն ունեցել. մարդիկ շատ պիտի



Մասունի յերկակայած քնդանոթը

զարմանան այն չափերի վրա, վոր պիտի ունենա մեր թնդանոթը:

— Ե՛հ, անշուշտ, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը, — իմ կարծիքն այն է, վոր մեր թնդանոթը պետք է ունենա առնվազն կես մղոն յերկարություն:

— Կես մղո՞ն — բացականչեցին մայրն ու գեներալը:

— Այո կես մղոն և դեռ այդ էլ քիչ է:

— Դե՛, Մաստոն, — ասաց Մորզանը, — դուք արդեն չափազանցում եք:

— Բնավ յերբեք, — պատասխանեց կրակոտ քարաուղարը, — և չեմ հասկանում, թե ինչո՞ւ համար ինձ մեղադրում եք չափազանցութեան մեջ:

— Վորովհետև շատ հեռու յեք գնում:

— Լավ իմացեք, պարոն, — պատասխանեց Ջ. Տ. Մաստոնը փրփելով, — լավ իմացեք, վոր թնդանոթաձիգը ուղմբի յե նմանում, նա յերբեք չափից դուրս հեռու չի գնում...

Վիճաբանությունը սուր կերպարանք եր ստանում, սակայն նախազահը միջամտեց:

— Հանգստացեք, բարեկամներ, լրջորեն քննենք այդ հարցը. կասկած չկա, վոր թնդանոթը շատ մեծ պիտի լինի, վորովհետև հրանոթի յերկարությունն ավելացնում է վառողի բոցավառման ժամանակ առաջացած գազերի ճնշման տեւողությունը: Սակայն անոգուտ է վորոչ սահմաններին անցնելը:

— Շատ ճիշտ է, — ասաց մայրը:

— Նման դեպքերում ի՞նչպիսի փոխհարաբերություններ են սահմանվում: Սովորաբար թնդանոթի յերկարությունը 20—25 անգամ ավելի յե լինում ուղմբի տրամագծից և նրանից 250—260 անգամ ավելի ծանր է լինում:

— Այդ բավական չէ, — պատասխանեց Ջ. Տ. Մաստոնը:

— Ընդունում եմ, հարգելի բարեկամ, — պատասխանեց Բարբիկենը: — Ճիշտ է, վոր այդ համեմատութեանը հետևելով՝ յերեք մետր տրամագծով և ինն տոնն ծանրութեամբ մի արկի համար թնդանոթը պետք է ունենա միայն յոթանասուն հինգ մետր յերկարություն:

— Ծիծաղելի յե, — կրկին ընդհատեց Ջ. Տ. Մաստոնը, — ավելի լավ է մի ատրճանակ վերցնել:

— Յես էլ եմ կարծում, վոր այդ քիչ է, — պատասխանեց

Բարբիկենը, — այդ պատճառով ել մտածում եմ քառապատկել այդ յերկարությունը և կառուցել յերեք հարյուր մետր յերկարութեամբ մի թնդանոթ:

Գեներալն ու մայրը մի քանի դիտողություններ արին, սակայն նախազահի առաջարկը թնդանոթային ակումբի քարաուղարի կողմից ուժեղ պաշտպանություն գտնելով՝ վերջնականապես ընդունվեց:

— Այժմ անցնենք այն հարցին, — ասաց Ելֆրիտոնը, — թե ինչ հաստություն պետք է ունենան պատերը:

— Բայց վոչ գործնական, — պատասխանեց Բարբիկենը: —

— Իհարկե չեք մտածում այդպիսի վիթխարի զանգված բարձրացնել թնդանոթի սայլի վրա:

— Սակայն փառավոր բան կլինեք այդ, — ասաց Ջ. Տ. Մաստոնը:

— Բայց վոչ գործնական, — պատասխանեց Բարբիկենը: — Վո՛չ, յես մտածում եմ այդ թնդանոթը ձուլել հենց հողի մեջ. ամբողջ կողմից յերկաթե ողակներով և վերջապես չրջապատել քարաչեն հաստ պատերով, վորպեսզի չրջապատի հողն ել մասնակցի վառողի դազերի ճնշմանը դիմադրելուն: Այդպիսով վառողի պայթուցիկ ամբողջ ուժը կոզտադործվի արկը դուրս մղելու համար:

— Ուռա՛, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը, — թնդանոթն արդեն պատրաստ է:

— Դեռ վոչ, — պատասխանեց Բարբիկենը, ձեռքով հանդուտացնելով իր անհամբեր բարեկամին:

— Իսկ ինչո՞ւ համար:

— Վորովհետև մենք դեռևս նրա ձևի մասին չխոսեցինք: Մեր նպատակն ի՞նչ է. պատրաստել թնդանոթ, ոմբարձա՞կ, թե՛ հրասանդ:

— Թնդանոթ, — ընդմիջեց Մորզանը:

— Ռմբարձակ, — հարեց մայրը:

— Հրասանդ, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը:

Մի նոր վիճաբանություն պիտի սկսվեր, սակայն նախազահը կանգնեցրեց վիճողներին:

— Բարեկամներ, — ասաց նա, — հիմա յես ձեզ կհաշտեցնեմ: Մեր կողմբիադը կազմված է լինելու այդ յերեք ձևվերից:

Թնդանոթ պիտի լինի, վորովհետև վառողի ընդունարանն ունե- նալու յե փողի տրամագիծը. ումբարձակ պիտի լինի, վորովհետև ումբը և արձակելու, վերջապես հրասանդ պիտի լինի, վո- րովհետև ուղղված պիտի լինի իննսուն աստիճան անկյունով:

— Ընդունված և, ընդունված և, — պատասխանեցին Կոմիտե- յի անդամները:

— Մի պարզ դիտողութուն, — ասաց Ելֆրիտոնը, — այդ թըն- դանոթ— ումբարձակ— հրասանդը դժավո՞ր և լինելու:

— Վո՛չ, — պատասխանեց Բարբիկենը, — վո՛չ. մեզ սկզբնա- կան ահագին արագութուն և պետք և դուք լավ դիտեք, վոր ումբը դժավոր թնդանոթներէից ավելի դանդաղ կարձակվի, քան թե վողորկափող թնդանոթներէից:

— Ճիշտ և:

— Վերջապես, այս անգամ պատրաստ և, — կրկնեց Մաստոնը:

— Դեռ վոչ բոլորովին, — պատասխանեց նախագահը:

— Իսկ ինչո՞ւ համար:

— Վորովհետև դեռևս չգիտենք, թե թնդանոթը ինչ մետա- ղից պետք և լինի:

— Յեկեք վորոշենք իսկույն և եթ:

— Յես ել այդ եյի ցանկանում առաջարկել:

Կոմիտեյի չորս անդամները կլանեցին յուրաքանչյուրը մի տասնյակ բուտերբրոդ, խմեցին համապատասխան քանակու- թյամբ թեյ, և վիճարանութունը վերսկսվեց:

— Հարգելի պաշտոնակիցներ, — ասաց Բարբիկենը, — մեք թնդանոթը պետք և լինի չափազանց դիմացկուն, չափազանց կարծր, տաքութունից չհալչող, անլուծելի և թթուների ազ- դեցութեան չենթարկվող:

— Այդ մասին յերկու կարծիք չկա, — պատասխանեց մայո- րը, — և վորովհետև մեզ անհրաժեշտ և մեծ քանակութեամբ մե- տաղ, ընտրութուն կատարելը դժվար չէ:

— Ուրեմն, ասաց Մորգանը, — կողմբիադի համար յես ա- ռաջարկում եմ մինչև որս մեզ հայտնի յեղածների մեջ լավա- դույն բաղադրութունը, վորը կազմված և վեց հարյուր մասս պղնձից, տասներկու մաս անագից և վեց մաս արույրից (դեղին պղինձ):

— Բարեկամներ՛ր, — պատասխանեց Բարբիկենը, — խոստովա-

նում եմ, վոր այդ բաղադրութունը հիանալի արդյունք և ավել, սակայն դժբախտաբար շատ թանգ արժե և գործածութունն էլ դժվար և. այդ պատճառով ել մտածում եմ, վոր պետք և ըն- գունել մի ուրիշ հրաշալի և եժան նյութ, ինչպիսին և չուգունը (թուջ): Կարծում եմ, վոր դուք ել համաձայն եք ինձ հետ, մայո՛ր:

— Միանգամայն, — պատասխանեց Ելֆրիտոնը:

— Յեկ իրոք, — շարունակեց Բարբիկենը, — չուգունը բրոնզից սոսան անգամ ավելի եժան և, շատ լավ և ձուլվում, հեշտու- թյամբ հոսում և ավագե կաղապարների մեջ և հեշտ և մշակվում: Այդպիսով թե դրամի և թե ժամանակի խնայողութուն և լի- նում: Առհասարակ դա հիանալի նյութ և: Յես հիշում եմ, վոր Ստյանտիայի պաշարման ժամանակ չուգունե թնդանոթները կրակում եյին քսան բոպեն մեկ անգամ, տալով յուրաքանչյուրը հազար հարված, առանց փչանալու:

— Սակայն չուգունը շատ բեկուն և, — ասաց Մորգանը:

— Այո, բայց նաև դիմացկուն և, և վստահացնում եմ ձեզ, վոր մեր թնդանոթը չի տրաքի:

— Իսկ յեթե նույնիսկ սրաքի, այդ անպատվութունն չի գյուտարարի համար, — հարցրեց լրջորեն Ջ. Տ. Մաստոնը:

— Անկասկած, — ասաց Բարբիկենը, — ուրեմն ինդրում եմ պատվարժան քարտուղարին՝ հաշվել յերեք հարյուր մետր յեր- կարութեամբ, յերեք մետր ներքին տրամագծով և յերկու մետր հաստութեամբ պատերով չուգունից պատրաստված մի թնդանո- թի ծանրութունը:

— Այս բոպեյիս, — պատասխանեց Ջ. Տ. Մաստոնը:

Յեկ ինչպես նախորդ ուրը, նա ֆորմուլաները շարեց զարմա- նալի արագութեամբ և մի բոպե հետո ասաց.

— Այդ թնդանոթի ծանրութունը կլինի վաթսու և ութ հա- ղար քառասուն տոնն:

— Իսկ չուգունի ֆունտը յերկու ցենտ հաշվելով, թնջ կարժենա ամբողջը:

— Յերկու միլիոն հինգ հարյուր տաս հազար յոթ հարյուր մեկ դոլլար:

Ջ. Տ. Մաստոնը, մայո՛րն ու գեներալը Բարբիկենին նայեցին մտտանջութեամբ:

— Սիրելի՛ ընկերներ,— պատասխանեց նախագահը,— յես կրկնում եմ այն, ինչ վոր յերեկ ասացի, ապահով յեղեք. մի-  
լիոնները չեն պակասի:

Նախագահի այս սրտապնդող խոսքերով նիստը փակվեց,  
յերրորդ նիստը նշանակելով հաջորդ օրը:

ԳԼՈՒԽ VIII

Վ Ա Ռ Ո Պ Ի Յ Ա Ր Յ Ը

Մնում էր քննել վառողի հարցը: Հասարակութունն ան-  
համբեր սպասում էր այս վերջին խնդրի լուծմանը: Ռուսքի  
մեծութունը և թնդանոթի յերկարութունը վորոշելուց հետո,  
մնում էր պարզել, թե կրակելու համար վառողի քանակը ի՞նչ-  
քան պետք է լիներ: Այդ սարսափելի պայթուցիկ նյութը, վորքի  
զորութունը մարդիկ կարողացել էյին դսպել, այս անգամ կոչ-  
ված էր իր դերը կատարել անսովոր չափերով:

Ընդհանրապես հայտնի յե և շարունակ կրկնում են, վոր վա-  
ռողը հնարվել է 14-րդ դարում և նրա հնարիչը յեղել է արքա  
Շվարցը, վորն այդ մեծ դյուռն արեց իր կյանքի գնով: Սակայն  
այժմ համարյա ապացուցված է, վոր այդ պատմութունը պետք  
է դասել միջնադարյան առաստիճանների շարքը: Վառողը վորչ վորք  
չի հնարել, նա ուղղակի առաջացել է «հունական կրակից» և  
բաղկացած է նրա նման բորակից: Միայն թե սկզբում այդ խոս-  
նուրդը այրվող էր, հետագայում վերածվեց պայթուցիկ խոս-  
նուրդի:

Բայց յեթե պատմագիրները շատ լավ ծանոթ են վառողի  
կեղծ պատմությանը, քչերը գաղափար ունեն նրա մեքենական  
ուժի մասին. սակայն անհրաժեշտ է ծանոթանալ նրան, հասկա-  
նալու համար Կոմիտեյի առաջ դրված խնդրի կարելիութունը:

Այսպես՝ մեկ լիտր վառողը, վոր կշռում է մոտավորապես  
յերկու ֆունտ (մոտ 900 գրամ) վառվելու դեպքում արտա-  
դրում է չորս հարյուր լիտր դազ, այդ դազերը ազատ ար-  
ձակվելով և յենթարկվելով յերկու հազար չորս հարյուր աստի-

ճան. ջերմության ազդեցության, դրախում են չորս հազար լիտր  
տարածութուն: Ուրեմն վառողի ծավալը վառվելու դեպքում  
արտադրած գազի հետ այնպես է համեմատվում, ինչպես մեկը՝  
չորս հազարին: Կարելի յե յերեակայել, թե մղման ինչ ուժ կըս-  
տանան այդ դազերը, յեթե նրանք սեղմված լինեն չորս հազար  
անգամ նեղ տարածության մեջ:

Այս մասին շատ լավ տեղյակ էյին Կոմիտեյի անդամները,  
յերբ հաջորդ օրը նիստի յեկան: Բարբիկենը խոսք տվեց մայրը  
Ելֆիտտոնին, վորը վառողարանների ղերեկտոր էր յեղել պա-  
տերազմի ժամանակ:

— Սիրելի՛ ընկերներ,— ասաց այս ակնասվոր քիմիկոսը,—  
յես կսկսեմ անժխտելի թվերից, վորոնք մեզ վորպես հիմք կծա-  
ռայեն: Քսանչորս ֆնտանոց ուումբը, վորի մասին անցած օրը  
խոսում էր պատվարժան Ջ. Տ. Մաստոնը այնքան բանաստեղ-  
ծական վոճով, հրանոթի բերանից դուրս է մղվում տասնվեց  
ֆունտ վառողով:

— Վստա՞հ էք այդ թվի մասին,— հարցրեց Բարբիկենը:

— Բացարձակապես վստահ,— պատասխանեց մայրը:—  
Արմստրոնգի թնդանոթը յոթանասուն հինգ ֆունտ վառող է  
դործածում ութ հարյուր ֆունտ քաշով ուումբի համար, իսկ  
Ռոզմենի կոլումբիադը հարյուր վաթսուն ֆունտ վառող է ծախ-  
սում կես տոննանոց ուումբը վեց մղոն հեռավորության վրա ար-  
ձակելու համար: Այս թվերը կասկածի տակ դնել չի կարելի, յես  
ինքս անձամբ եմ հավաքել հրետանային Կոմիտեյի արձանագրու-  
թյուններից:

— Շատ ճիշտ է,— պատասխանեց գեներալը:

— Ուրեմն,— շարունակեց մայրը,— այս թվերից պետք է  
դալ այն յեզրակացության, վոր վառողի քանակը չի ավելանում  
արկի մեծության հետ, և իրոք, յեթե քսանչորսանոց արկի  
համար անհրաժեշտ է տասնվեց ֆունտ վառող, ուրիշ խոսքով՝  
յեթե սովորական թնդանոթի համար դործածվում է արկի ծան-  
րության յերկու յերրորդական մասով վառող, այդ համեմա-  
տությունը անփոփոխ չի: Հաշվեցեք և կտեսնենք, վոր կես տոն-  
նանոց ուումբի համար փոխանակ յերեք հարյուր յերեսուն յերեք  
ֆունտ վառողի, այդ քանակը կըձատվում է մինչև հարյուր  
վաթսուն ֆունտի:



— Ի՞նչ է ձեր յեղրակացութիւնը, — հարցրեց նախագահը:

— Յեթե ձեր թեորիան մինչև վերջը առաջ տանեք, սիրելի մայր, — ասաց Ջ. Տ. Մաստոնը, — կհասնեք այն բանին, վոր յեթե արկը չստիպանց մեծ լինի, այլևս վառողի կարիք չէ լինի...

— Ի՞մ բարեկամ Մաստոնը կատակասեր է նույնիսկ ամենալուրջ հարցերում, — պատասխանեց մայրը, — սակայն թող վատահ լինի, յես վառողի այնպիսի քանակութիւնն եմ առաջարկելու, վոր նրա ինքնասիրութիւնը միանգամայն կբավարարի: Սակայն յես ուզում եմ հաստատել, վոր մեր պատերազմի ժամանակ, նույնիսկ ամենամեծ թնդանոթների համար, մի շարք փորձերից հետո, վառողի քանակը կրճատուից արկի ծանրութեան մեկ տասերորդականով:

— Շատ ճիշտ է, — ասաց Մորգանը, — սակայն մղումն առաջացնող վառողի քանակը վորոշելուց առաջ, կարծում եմ, վոր լավ կլինեք նախ վորոշել վառողի տեսակը:

— Պետք է գործածել մեծահատիկ վառող, — պատասխանեց մայրը, — նրա բոցավառումն ավելի արագ է, քան թե վորոշի վառողին:

— Անկասկած, — ասաց Մորգանը, — բայց նա շուտ մաշվող է և հետո կարող է թնդանոթի փողը փչացնել:

— Այո, այդ թերութիւնը կարող է նշանակութիւն ունենալ հաճախակի կրակող թնդանոթի համար, և վոչ թե մեր կոլումբիադի համար: Մեր թնդանոթի համար պայթելու վոչ մի վտանգ չկա, մեզ անհրաժեշտ է, վոր վառողը բոցավառվի բոցապես, վորպեսզի նրա մեքենական ազդեցութիւնը կատարյալ լինի:

— Գուցե հնարավոր է, — ասաց Ջ. Տ. Մաստոնը, — թնդանոթի վրա բազմաթիվ վառողանցքեր բաց անել, միանգամից մի քանի տեղից կրակ տալու համար:

— Անշուշտ, — պատասխանեց Ելֆիստոնը, — սակայն այդ չափազանց կոթվարացնի թնդանոթի գործածութիւնը: Ուրեմն, յես կրկին առաջարկում եմ մեծահատիկ վառողը, վորը վերացնում է այդ դժվարութիւնները:

— Թող այդպես լինի, — ասաց գէներալը:

— Իր կոլումբիադը լցնելու համար, — շարունակեց մայրը, —

Ռոդմենը գործածում էր շագանակի մեծութեամբ հատիկներով վառող, վորը պատրաստված է պարզապես ձուլածո կաթնային մեջ այրված ուղեղու ածխով. այդ վառողը կարծր ու փայլուն էր, ձեռքի վրա վոչ մի հետք չէր թողնում, մեծ չափերով ջրածին ու թթվածին էր պարունակում, իսկույն բռնկվում էր և չնայած վոր շատ մաշիչ էր, սակայն հրագեները զգալի կերպով չէր փչացնում:

— Լավ ուրեմն, ինձ թվում է, — պատասխանեց Ջ. Տ. Մաստոնը, — վոր վարանելու պատճառ չկա. մեր ընտրութիւնը կատարված է:

— Յեթե յերբեք վոսկեփողին չնախընտրենք, — առարկեց մայրը ծիծաղելով, — վորից իր դուրազաց բարեկամը, սրտատելով, ճանկով սպառնալից մի շարժում արեց:

Մինչ այդ Բարբիկենը վիճաբանութեանը չէր մասնակցում: Նա թողել էր, վոր խոսեն մյուսները, լսում էր միայն: Ահնեք էր, վոր մի միտք զբաղեցնում էր նրան, դրա համար էլ նա միայն հարցրեց.

— Իսկ այժմ, բարեկամներ, ի՞նչ քանակութեան վառող եք առաջարկում:

Թնդանոթային ակումբի անդամները մի պահ իրար նայեցին:

— Յերկու հարյուր հազար ֆունտ, — ասաց Մորգանը:

— Հինգ հարյուր հազար, — առարկեց մայրը:

— Ութ հարյուր հազար ֆունտ, — բացականչեց Ջ. Տ. Մաստոնը:

Այո անգամ Ելֆիստոնը պատճառ չունէր իր պաշտանակցին չափազանցութեան մեջ մեղադրելու, վորովհետև ինդիքը քան հազար ֆունտ ծանրութեամբ և մի վայրկյանում տասն մեկ հազար մետր սկզբնական արագութիւն ունեցող մի արկ դեպք լուսին ուղարկելն էր: Մի պահ լռութիւն տիրեց:

Վերջապես նախագահ Բարբիկենը խզեց լռութիւնը:

— Թանգադին ընկերներ, — ասաց նա հանգիստ ձայնով, — յես յեղում եմ այն սկզբունքից, վոր մեր ցանկացած պայմաններում կառուցված թնդանոթի դիմադրութեան ուժն անսահման է: Ուստի պիտի դարմայնեմ պատվարժան Ջ. Տ. Մաստոնին՝ ասե-

լով, վոր նա իր հաշիվներն մեջ համեստ յեղալ, և յես պիտի առաջարկեմ կրկնապատկել նրա ութ հարյուր հազար Փունտը:

— Մեկ միլիոն վեց հարյուր հազար, — հարցրեց Ջ. Տ. Մասսոնը, վեր ցատկելով դարմանքից:

— Այո՛, այդքան:

— Բայց այդ դեպքում պետք է ընդունել իմ առաջարկած կես միլոն յերկարությամբ թնդանոթը:

— Պարզ է, — ասաց մայորը:

— Մեկ միլիոն վեց հարյուր հազար Փունտ վառողը, — շարունակեց Կոմիտեյի քարտուղարը, — պիտի դրավե մոտավորապես ութ հարյուր խորանարդ մետր տարածություն. յերեք հարյուր մետր յերկարությամբ թնդանոթը մոտ յերկու հազար խորանարդ մետր տարողություն ունի և վառողով կլցվի համարյա մինչև կեսը, իսկ փողը բավականաչափ յերկարություն չպիտի ունենա, վորպեսզի դազի ծավալումը կարողանա բավարար մըղում տալ ուսմբին:

Վոչինչ չէր կարելի առարկել. Ջ. Տ. Մասսոնը ճիշտ էր ասում:

Սմենքը Բարբիկենին նայեցին:

— Սակայն, — ասաց նախագահը, — յես պնդում եմ վառողի այդ քանակի վրա: Մտածեցեք, վոր մեկ միլիոն վեց հարյուր հազար Փունտ վառողը պիտի արտադրի վեց միլիարդ լիար դազ: Վե՛ց միլիարդ, լսո՛ւմ եք:

— Բայց այդ դեպքում, ի՞նչ անել, — հարցրեց դեներալը:

— Շատ պարզ է. պետք է այդ հսկայական քանակությամբ վառողը կրճատել, պահելով նրա մեքենական ուժը:

— Լավ, բայց ի՞նչ միջոցով:

— Ասեմ, — պատասխանեց պարզապես Բարբիկենը:

Պոստիցներն անհամբեր նրան ելին նայում:

— Շտոն հեշտ է, — շարունակեց նախագահը, — վառողի այդ ծավալը կրճատել չորս անգամ: Ձեզ բոլորիդ հայտնի յես այն նյութը, վորը կազմում է բույսերի հյուսվածքը և կոչվում է խորշաթաղանթ:

— Ա՛հ, — բացականչեց մայորը, — յես ձեզ հասկանում եմ, սիրելի Բարբիկեն:

— Այդ նյութը, — շարունակեց նախագահը, — բոլորովին մա-

քուր վիճակի մեջ ստացվում է գանազան մարմիններից, հատկապես բամբակից, վորը բամբակենու սերմի մազմզուկն է: Այդ բամբակը միանալով ազոտաթթվի հետ սառը վիճակում, վերածվում է չափազանց անլուծելի մի նյութի, խիստ պայթուցիկ և հեշտ բռնկվող: 1832 թ. Բրակոնա անունով մի Փրանսիացի քիմիկոս գտավ այդ նյութը և անվանեց քսիլոյդին: 1838 թ. մի ուրիշ Փրանսիացի՝ Պրյուզը ուսումնասիրեց այդ նյութի զանազան հատկությունները, և վերջապես 1840 թ. Բազել քաղաքի քիմիայի պրոֆեսոր Շենրեյնը առաջարկեց այդ նյութը գործածել վորպես ռազմական վառող: Այդ վառողը ազոտական բամբակն է:

— Կամ ուրիշ բանով՝ պիրոկսիլին, — ասաց Ելֆիտտոնը:

— Կամ հրաբամբակ, — ավելացրեց Մորզանը:

— Պիրոկսիլինի հատկությունները, — շարունակեց Բարբիկենը, — առանձնապես արժեքավոր են մեզ համար: Նա պատրաստվում է չափազանց հեշտությամբ — բամբակը թաթախել ծխացող ազոտաթթվի մեջ տասնհինգ րոպե, ապա առատ ջրով լվանալ և չորացնել. ահա բոլորը:

— Ծիշտ վոր չափազանց պարզ է, — ասաց Մորզանը:

— Բացի այդ, պիրոկսիլինը խոնավությունից չի փչանում, ևս մի չափազանց կարևոր հատկություն է, վորովհետև թնդանոթը լցնելու համար մի քանի օր է անհրաժեշտ: Նրա բռնկումը տեղի յե ունենում հարյուր յոթանասուն աստիճանի մեջ, փոխանակ յերկու հարյուր քառասունի, և նրա բոցավառումն այնքան արտոգ է կատարվում, վոր այն կարելի յե հասարակ վառողի վրա դնել և պիրոկսիլինը ամբողջովին կայրվի նախքան վառողի բռնկվելը:

— Հրաշալի յե, — ասաց մայորը:

— Միայն ավելի թանգ արժե, — նկատեց դեներալը:

— Վնաս չունի — պատասխանեց Ջ. Տ. Մասսոնը:

— Վերջապես պիրոկսիլինը վառողից չորս անգամ ավելի արտոգություն կհաղորդի արկին: Ավելացնեմ, վոր յեթե նրան շառնիլի կալիոնի բորակ, նրա ուժը կավելանա ել ավելի մեծ չափով:

— Մի՞թե այդ անհրաժեշտ է, — հարցրեց մայորը:

— Ձեմ կարծում, — պատասխանեց Բարբիկենը: — Այսպես,

ուրեմն, փոխանակ մեկ միլիոն վեց հարյուր հազար Փունտ սո-  
վերական վառուղի, մենք պիտի գործածենք չորս հարյուր հազար  
Փունտ հրաբամբակ, և վորովհետև կարող ենք առանց վտանգի  
ինն խորանարդ մետր տարածության մեջ տեղավորել հինգ հար-  
յուր Փունտ հրաբամբակ, այդ ամբողջ լիցքը կոլումբիադէի մեջ  
կզրավի յվախտուն մետրի չափ տեղ: Այդպիսով արկը վեց միլ-  
լիարդ լիտր դազի ճնշման ազդեցութիւնը կկրի մնացած տարա-  
ծության մեջ, դեպի Լուսին թռչելուց առաջ:

Այստեղ Ձ. Տ. Մաստոնը չկարողանալով զսպել իր հուզումը  
նետովեց բարեկամի թևերի մեջ ուժմբի ուժգնությամբ և ան-  
պայման կջարդեր նրան, յեթե Բարբիկենը կառուցված չլիներ  
այնպիսի նյութից, վոր դիմանում է նույնիսկ ուժմբի հարված-  
ներին:

Կոմիտեյի յերրորդ նիստը վերջացավ այս միջադեպով:  
Բարբիկենը և իր համարձակ ընկերները, վորոնց համար անկա-  
րելի բան չկար, լուծեցին ուժմբի, թնդանոթի և վառուղի այն-  
քան բարդ խնդիրները: Նախադիժը պատրաստ եր, մնում եր  
լրագործել:

— Դե, այդ արդեն մանրամասնութիւնն է, չնչին բան, — ա-  
սաց թնդանոթային ակումբի քարտուղար Ձ. Տ. Մաստոնը:

ԳԼՈՒԽ IX

ՍԵԿ ԹՇՆԱՍԻՒՄ՝ ՔՍԱՆՇԻՆԳ ՄԻԼԻՈՆ ԲԱՐԵԿԱՍԻՆ

Ամերիկայի հասարակութիւնը չափազանց շահագրգռված  
եր թնդանոթային ակումբի ձեռնարկի ամենափոքր մանրամաս-  
նութիւններով: Ընթերցող հասարակութիւնը որը որին հետե-  
վում եր Կոմիտեյի վիճարանութիւններին: Այդ մեծ փորձի  
նախապատրաստութիւնները, հարուցված թվային խնդիրները,  
մեքենական բոլոր գծավարութիւնները, մի խոսքով, գործի ամ-  
բողջ ընթացքը չափազանց հետաքրքրում եր ամբողջ հասարա-  
կությանը:

Մի տարուց ավելի ժամանակ պիտի անցներ աշխա-  
տանքները սկսելու և վերջանալու միջև, բայց այդքան ժամա-  
նակը առանց հուզմունքի չէր անցնելու: Թնդանոթի ձուլման  
վայրի ընտրութիւնը, կաղապարի պատրաստումը, կոլումբիա-  
դէի ձուլելը, լցնելու չափազանց վտանգավոր գործը, — այս բո-  
լորը բավական էյին վառ պահելու համար հասարակության հե-  
տաքրքրութիւնը և ուշադրութիւնը:

Արձակվելուց հետո արկը մի վայրկյանի մի տասներորդա-  
կանի ընթացքում պիտի չքանար աչքի տեսողութիւնից. նրա-  
նից հետո ի՞նչ պիտի լիներ տարածության մեջ, ի՞նչպես պիտի  
թռչեր, ի՞նչ ձևով պիտի հասներ Լուսնին, — այդ բոլորը սա-  
կավաթիվ անձեր միայն պիտի տեսնեյին իրենց սեփական աչքե-  
րով: Այդ պատճառով ել փորձի նախապատրաստումները, կաղ-  
մակերպման ճշգրիտ մանրամասնութիւնները չափազանց հե-  
տաքրքրական էյին դառնում:

Սակայն ձեռնարկի գուտ գիտական հրասույրը հանկարծ  
ավելի ուժեղացավ մի անսպասելի միջադեպի հետևանքով:

Մենք դիտենք արդեն, թե Բարբիկենի նախադիժն ինչ հիաց-  
մունքով ընդունվեց մեծամասնության կողմից: Սակայն ինչ-  
քան ել պատվավոր, ինչքան ել արտասովոր լինել այդ մե-  
ծամասնութիւնը, այնուամենայնիվ համատարած չեր: Գտնվեց  
մի մարդ, միակը ամբողջ Միացյալ Նահանգներում, վորը բո-  
ղոքեց թնդանոթային ակումբի փորձի դեմ. նա ամեն առիթ ոգ-  
տազործեց հարձակվելու համար Բարբիկենի նախադիժի վրա:  
Փսկ մարդկային ընտրութիւնն այնպես և, վոր Բարբիկենը  
ավելի ազդվեց այդ մեկ մարդու ընդդիմութիւնից, քան թե  
ժյուս բոլորի ծափահարութիւններից:

Սակայն նա լավ դիտեր այդ մարդու թշնամության պատ-  
ճառը — վորտեղից եր ծագել այդ թշնամութիւնը, ինչո՞ւ յեր  
անձնական բնույթ ստացել, յերբվանից եր սկսվել, լինելով ինք-  
նասիրության և նախանձի արդյունք:

Այդ համառ թշնամուն թնդանոթային ակումբի նախագահը  
յերբեք չեր տեսել: Այդ մի բարբախտութիւնն եր, վորովհետև  
այս յերկու մարդկանց հանդիպումը անկասկած ցավալի յերե-  
վոյթներին կհասցներ: Այդ հակառակորդը մի գիտնական եր  
Բարբիկենի նման, հպարտ, համարձակ, համոզված, կրակոտ,

խոհական մի յանկի: Նրան անվանում էյին կապիտան Նիկոլ»  
ապրում էր Ֆիլադելֆիայում:

Շատերը հալանաբար հիշում են այն հետաքրքիր պայքարը՝  
վոր տեղի ունեցավ քաղաքացիական պատերազմի ժամանակ  
Թնդանոթային արկի և ռազմանավերի զրահի միջև: Մեկի նպա-  
տակն էր մյուսը ծակել, իսկ վերջինը վորոշել էր չծակվել:  
Դրանից առաջացավ Ամերիկայի և Յեվրոպայի պետութայնների  
ծովային ուժերի արմատական փոփոխությունը: Ռուսն ու մե-  
տաղյա տախտակը (զրահը) պայքարեցին անորինակ մոլեզնու-  
թյամբ: Հսկա մարտիկներով գինված նավերը կրակի դեմ էյին  
գնում իրենց անխոցելի պատյաններով: Ամերիկացիների հայտ-  
նի ռազմանավերը «Մերիմակը», «Մոնիտորը», «Ռեմ-Թենիսը»,  
«Ուլիկհաուզենը» — հսկայական ուժեր էյին արձակում՝ նա-  
խապես ուրիշների հարձակման դեմ զրահապատվելով:

Յեթե Բարբիկենը մեծ ուժերը ձուլելու վարպետ էր, Նի-  
կոլը մետաղե ամուր զրահներ կող էր: Մեկը Բալտիմորում որ  
ու գիշեր ձուլում էր, մյուսը Ֆիլադելֆիայում որ ու գիշեր  
կուում էր: Նրանցից յուրաքանչյուրը հետևում էր միմյանց բոլոր-  
ովին հակադիր գաղափարների:

Հենց վոր Բարբիկենը մի նոր արկ էր հնարում, Նիկոլը մի  
նոր մետաղե զրահ էր պատրաստում: Թնդանոթային ակումբի  
նախագահը իր կյանքի նպատակն էր դարձրել ծակելը, իսկ կա-  
պիտան Նիկոլը՝ զրահով պաշտպանվելը: Դրանից էր առաջանում  
նրանց մշտական հակառակությունը, վորը շուտով փոխվեց անձ +  
նականի: Նիկոլը Բարբիկենին յերազներ մեջ ներկայանում էր  
անխոցելի զրահի ձևով, վորին դիպչելով նա խորտակվում էր,  
իսկ Բարբիկենը Նիկոլի յերազների մեջ ներկայանում էր վոր-  
պես մի արկ, վորը նրան ծակում-անցնում էր:

Սակայն չնայած, վոր յերկու գիտնականները յերկու անջատ  
գծերի էյին հետևում, նրանք կարող էյին մի որ միմյանց պա-  
տահել, հակառակ յերկրաչափական բոլոր ակտիվաներին, սա-  
կայն այդ հանդիպումը միայն մենամարտի դաշտում կարող էր  
լինել: Բարբախտաբար իրենց յերկրին այնքան ողտալար այս  
յերկու քաղաքացիները միմյանցից բաժանված էյին 50—60 մղոն  
հեռավորությամբ և նրանց բարեկամները ճանապարհն այնպիսի  
արգելքներով էյին ծածկել, վոր նրանք յերբեք միմյանց չհան-  
դիպեցին:

Այն հարցը, թե այդ յերկու գյուտարարներից վոր մեկն  
էր մյուսին դերազանցել, դեռևս պարզված չէր, վորովհետև  
ստացված արդյունքներից դժվար էր ճիշտ գնահատություն  
կատարել: Սակայն թվում էր, թե զրահը տեղի պիտի տար  
ուժերին: Համենայն դեպս ձեռնհաս մարդիկ տարակուսում էյին  
Վերջին փորձերին Բարբիկենի գլանա-կոնաձև արկերը գնդա-  
տեղների նման ցցվեցին Նիկոլի զրահապատ տախտակների վրա  
և չկարողացան ծակել: Այդ որը Ֆիլադելֆիայի դարբինը իրեն  
հաղթող համարելով, բավականաչափ արհամարհեց իր հակա-  
ռակորդին, բայց յերբ այս վերջինը ավելի հետո կոնաձև ուժ-  
երը փոխարինեց վեց հարյուր Փնտանոց հասարակ ուժերով,  
կապիտան Նիկոլի հպարտությունը իջավ: Յեվ իրոք, այդ ուժ-  
երը, չնայած նվազ արագություն ունեյին, բայց լավագույն  
մետաղից պատրաստված տախտակները ծակեցին և ջարդ ու  
վիշուր արին:

Գործերը այս վիճակի մեջ էյին. թվում էր, թե հաղթու-  
թյունը ուժերի կողմն էր, բայց պատերազմը վերջացավ հենց  
այն որն իսկ, յերբ Նիկոլը պողպատի ձուլվածքից մի նոր զրահ  
էր պատրաստել, վորը իր տեսակի մեջ դուրս գործոց էր և աչ-  
խարհի բոլոր զրահներից գերազանց: Կապիտան Նիկոլը այդ  
զրահը տեղափոխեց Վաշինգտոնի Պոլիգոնը և Թնդանոթային ա-  
կումբի նախագահին առաջարկեց խորտակել այն: Սակայն խա-  
ղաղությունը կնքված լինելու պատճառով Բարբիկենը չցանկա-  
ցավ փորձի ձեռնարկել:

Նիկոլը կատաղած առաջարկեց իր զրահատախտակը փորձել  
բոլոր տեսակի արտակարգ արկերով, լիքը, դատարկ, կլսր կամ  
կոնաձև: Նախագահը կրկին մերժեց, չցանկանալով վերջին հա-  
ջողությունը վատադի յենթարկել:

Նիկոլն այս համառությունից ել ավելի դրդուված՝ ցանկա-  
ցավ Բարբիկենին հրապուրել, հաջողության համար նրան առ-  
լով մի շարք առավելություններ: Նա առաջարկեց մետաղի զրա-  
հատախտակը դնել Թնդանոթից յերկու հարյուր մետր հեռավո-  
րության վրա: Բարբիկենը համառեց իր մերժման մեջ: Իսկ  
յեթե հարյուր մետր: Վոչ իսկ յոթանասուն հինգ:

«Այն ժամանակ հիսուն, — բացականչեց կապիտանը թերթե-

րի միջոցով, — և յես ինքս ել կկանգնեմ զրահատախտակի հե-  
տեովը»:

Բարբրիկենի պատասխանն այն յեղավ, թե յեթե նույնիսկ կա-  
պիտան Նիկոլը կանգնեի տախտակի առաջը, դարձյալ չպիտի  
համաձայնեի կրակելու:

Նիկոլն այս պատասխանից հետո այլևս չկարողացավ ինք-  
նիւրն զսպել, խնդիրը վերածեց անձնականի և ասաց, թե յերկչո-  
տությունը Բարբրիկենից անբաժանելի յե, այն մարդը, վոր մեր-  
ժում ե թնդանութ արձակել, վախենում ե, թե առհասարակ ժա-  
մանակակից թնդանութածիղները, վորոնք այժմ կրակում են ի-  
րար վրա տասը կիլոմետր հեռավորությունից, խոհեմությամբ  
անհատական քաջությունը փոխարինել են մաթեմատիկական  
Փորձուլաներով, թե վերջապես պակաս քաջություն չի զրահա-  
տախտակի հետևը հանդիստ կանգնած մնալով ուղմբին սպասել,  
քան թե այդ ուղմբն արձակել արվեստի բոլոր կանոնների հա-  
մաձայն: Այս բոլոր վիրավորական խոսքերին Բարբրիկենը վոչինչ  
չպատասխանեց, գուցե և չիմացավ ել նրանց մասին, վորովհետև  
այդ ժամանակ նա ամբողջովին տարված էր մեծ ձեռնարկի հա-  
շիվներով:

Յերբ Բարբրիկենն իր հռչակավոր գեկուցումը արեց Թնդա-  
նութային ակումբում, Նիկոլի բարկությունը դադաթնակետին  
հասավ: Այդ գայրույթին խառն էր նաև սաստիկ նախանձը և  
բացարձակ անգորության զգացումը: Ի՞նչպես հնարել այդ յերեք  
հարյուր մետր յերկարությամբ կոլումբիադից լավագույն մի  
բան: Ի՞նչպիսի զրահ կարող էր դիմանալ յերեսուն հազար  
Փնտանոց մի ուղմբի: Նիկոլը նախ իրեն զգաց ընկճված, Չախ-  
Չախված, վոչնչացած այդ «թնդանութի հարվածից»: Սակայն  
չուտով ուշքի յեկավ և վորոչեց Բարբրիկենի առաջարկը ՉախՉա-  
խել իր փաստաբեկումների ծանրությամբ:

Այդ նպատակով նա մոլեզնությամբ հարձակվեց Թնդանո-  
թային ակումբի աշխատանքների վրա: Գրեց բազմաթիվ բաց  
նամակներ, վորոնք մամուլում հրատարակվեցին. այդ նամակ-  
ներով նա աշխատում էր դիտականորեն ՉախՉախել Բարբրիկենի  
ձեռնարկը: Մի անգամ վոր պայքարը սկսվեց, նա իրեն ոգնու-  
թյան կանչեց բոլոր տեսակի փաստերը, ճիշտ ե, շատ անգամ  
նույնիսկ անհիմն և չինձու:

Նախ Նիկոլը հարձակվեց Բարբրիկենի թվանշանների վրա և  
Չանաց A+B -ով ապացուցել նրա Փորձուլաների անճշտու-  
թյունը. նրան մեղադրեց թնդանութածիղության տարրական  
սկզբունքները չհասկանալու մեջ: Ուրիշ սխալների հետ միասին  
Նիկոլը ամենից առաջ նշեց, վոր միանգամայն անհնար ե վորևե  
մի մարմնի մի վայրկյանում տասնմեկ հազար մետր արագու-  
թյուն տալ. հանրահաշիվի փաստերով նա պնդում էր, վոր նույ-  
նիսկ այդ արագությամբ ուղմբը չէր կարող անցնել յերկրի  
մթնոլորտի սահմաններից և հազիվ կարող ե թռչել յերեսուն յեր-  
կու կիլոմետր: Բացի դրանից, յեթե նույնիսկ ունենար այդ  
արագությունը, նպատակին չէր հասնի, վորովհետև չպիտի կա-  
րողնար դիմանալ մեկ միլիոն վեց հարյուր հազար Փունտ վա-  
ռողի բռնկումից առաջացած գազերի ճնշման. յեթե դիմանար  
իսկ այդ ճնշման, չպիտի դիմանար Չերմության բարձր աստի-  
ճանին: Կորումբիադից դուրս թռչելիս ուղմբը պիտի հարչեր և  
յեռացող մետաղյա անձրևի նման պիտի թափվեր անխնայ հան-  
դիսականների դիտի վրա:

Բարբրիկենը այդ հարվածներից չվրդովվեց և շարունակեց իր  
գործը:

Այդ ժամանակ Նիկոլը հարցն ուրիշ կերպ դրեց: Նա հայտա-  
բարեց, վոր Բարբրիկենի ձեռնարկը վոչ միայն անողուտ ե և  
աննպատակ բոլոր տեսակետներից, այլև չափազանց վտանգավոր  
ե թե՛ այն քաղաքացիների համար, վորոնք իրենց ներկայությամբ  
պիտի հարգելին այդպիսի մի դատապարտելի տեսարան, և թե՛  
այդ ձախորդ թնդանութի շրջակա քաղաքների համար: Նա նշեց  
նույնպես, վոր յեթե ուղմբն իր նպատակին չհասնի — ինչ վոր  
բացարձակապես անհնար էր — անկասկած պիտի ընկներ Յերկրի  
վրա. այդպիսի մի դանդաղածի անկումը բազմապատկված իր  
արագության քառակուսիով, հսկայական վնաս կհասցնի յերկ-  
րագնդի մի վորևե կետի: Դրա համար ել նման դեպքերում, ա-  
ռանց ազատ քաղաքացիների իրավունքները ժխտելու, կառավա-  
րության միջամտությունն անհրաժեշտ էր, վորովհետև չէր կա-  
րելի մեծամասնության ապահովությունը վտանգել մեկ հոգու  
քմահաճույքի համար:

Պարզ ե, թե ինչպիսի չափազանցության մեջ էր ընկնում  
կապիտան Նիկոլը: Սակայն նա մենակ մնաց իր կարծիքի մեջ և

վոչ վոք ուշադրութիւն չդարձրեց նրա չարագուշակ խոսքերի վրա: Թող դուռուցար, ինչքան ուզում եր, մինչև շնչասպառ լինելը, յեթե այդ նրան հաճելի յեր: Նա պաշտպանում եր նախապես տանուլ տված մի դատ, նրա ձայնը լսում էյին, բայց ականջ չէյին դնում. այդպիսով նրան չհաջողվեց Թնդանութային ակումբի նախագահի հիացողներից և վոչ մեկին նրանից բաժանել: Իսկ ինքը նախագահը նույնիսկ հարկ չհամարեց հակառակորդի փաստարկումները հերքել:

Նիկոլը քաջվեց վերջին դիրքերը. չկարողանալով անձամբ պաշտպանել իր դատը, նա վորոշեց գործել դրամի ուժով: Այդ նպատակով Ռիչմոնդի «Հետազոտիչ» թերթում նա հրատարակեց դրագի մի շարք պայմաններ՝ գումարի համեմատական հավելումով: Գրագի պայմանները հետևյալներն էյին.

1. Թնդանութային ակումբի ձեռնարկի համար անհրաժեշտ գումարը հնարավոր չէ հավաքել... 1000 դոլլար
2. Յերեք հարյուր մետր յերկարությամբ թնդանութի ձուլումն անիրագործելի յէ . . . . . 2000 դոլլար
3. Անհնար է այդքան մեծ քանակությամբ վառողով լցնել կոլումբիադը, վորովհետև պիրոկսիլինը ինքն իրեն պիտի բռնկվեր ուումբի ճնշման ազդեցության տակ . . . . . 3000 դոլլար
4. Կոլումբիադը պիտի պայթի առաջին հարվածից 4000 դոլլար
5. Ռումբը չի կարող թռչել նույնիսկ վեց մղոն և արձակվելուց մի քանի բուպե հետո պիտի ընկնի Յերկրի վրա . . . . . 5000 դոլլար

Ինչպես տեսնում ենք, կապիտանն իր անընկճելի համառությամբ մի խոշոր գումար եր վտանգում: Գրագի գումարը հասնում եր 15.000 դոլլարի:

Չնայած դրագի գումարի լրջությանը, հոկտեմբերի 19-ին Նիկոլը ստացավ հետևյալ հիանալի հակրիճ բովանդակությամբ հեռագիրը.

«Բարտիմոր 18 հոկտեմբերի

«Ընդունում եմ:  
Բարբրիկեն»

ՖԼՈՐԻԴԱ ՅԵՎ ՏԵԽԱՍ

Մի հարց սակայն դեռ ևս մնում եր չլուծված, այն է՝ փորձը կատարելու համար վայրի ընտրութիւնը: Կեմբրիջի դիտարանի հանձնարարության համաձայն՝ ուումբը պետք եր արձակել հորիզոնի մակերեսի ուղղահայաց դժով, այսինքն դեպի գենիթ: Իսկ Լուսինը գենիթի վրա բարձրանում է լայնության 0 և 28 աստիճանի միջև, ուրիշ խոսքով՝ նրա խոտորումը միայն 28 աստիճան է: Ուրեմն պետք է ճշտիվ վորոշել յերկրադնդի այն տեղը, վորտեղ պիտի գետեղվի հսկա կոլումբիադը:

Հոկտեմբերի 20-ին Թնդանութային ակումբը ընդհանուր ժողով գումարեց, և Բարբրիկենը նխտին բերեց Միացյալ Նահանգների հրաշալի քարտեզը: Սակայն Ջ. Տ. Մաստոնը առանց նրան ժամանակ տալու, վոր քարտեզը բաց անի, սովորական վողեությամբ խոսք խնդրեց և ասաց.

— Հարգելի պաշտոնակիցներ, այն հարցը, վոր մենք այսօր պիտի քննենք, ազգային խոշոր նշանակութիւն ունի և հնարավորութիւն կտա մեզ կատարելու հայրենասիրական մի մեծ գործ:

Թնդանութային ակումբի անդամները միմյանց նայեցին առանց հասկանալու, թե ինչ եր ուզում ասել ճառախոսը:

— Ձեզանից վոչ վոք, — շարունակեց Մաստոնը, — չի մտածում հրաժարվել իր յերկրի փառքից և յեթե կա մի իրավունք, վորը պատկանում է Միացյալ Նահանգներին, դա Թնդանութային ակումբի հսկայական թնդանութն իր սահմանների մեջ պահելն է: Ուրեմն ներկա պայմաններում...

— Աղնիվ Մաստոն... — ասաց նախագահը:

— Թույլ տվեք բացատրել իմ միտքը, — շարունակեց ճառախոսը: — Ներկա պայմաններում մենք հարկադրված ենք հասարակածին բավականաչափ մոտ մի տեղ ընտրել, վորպեսզի փորձը լավ պայմանների մեջ կատարվի:

— Յեթե ուզում եք, վոր... — ընդմիջեց Բարբրիկենը:

— Յես պահանջում եմ մտքերի ազատ փոխանակութիւն, — ասաց Մաստոնը հուզված, — յես պնդում եմ, վոր այն հողամասը,

վորակերից մեր վառարանն ուսմբը պիտի աւճակիլի, պետք է պատկանի Միացյալ Նահանգներին:

— Անկասկած, — պատասխանեցին մի քանի անդամներ:

— Բայց քանի վոր մեր սահմանները բավականաչափ ընդարձակ չեն, քանի վոր հարաջում ուղիկանունն է մի անանցանելի պատվար կազմում մեր դեմ, քանի վոր Միացյալ Նահանգներից դուրս և սահմանակից մի յերկրում մենք պիտի փնտռենք այդ 28-րդ զուգահեռականը, այդ արդեն մի որինական առիթ է պատերազմի, ուստի և յես պահանջում եմ պատերազմ հայտարարել Մեկսիկային:

— Ինչո՞ւ, կարիք չկա, վո՛ւչ, վո՛ւչ, — բացականչեցին ամեն կողմից:

— Վո՛ւչ, — դռչեց Մաստոնը, — ահավասիկ մի բառ, վորը զարմանալի յե լսել Թնդանոթային ահումբի անդամներից:

— Բայց լսեցեք խիար...

— Յերբեք, յերբեք, — բացականչեց հրաբորբոք ճառախոսը, — վաղ թե ուշ այդ պատերազմը պիտի լինի, և յես պահանջում եմ, վոր այսօր խի պայթի:

— Մաստոն, — ասաց Բարբրիկենը զանգակը աղմկալից հնչեցնելով, — ձեզ խոսքից զրկում եմ:

Մաստոնն ուզեց բողոքել, սակայն աշխատակիցներից մի քանիսը նրան զսպեցին:

— Յես ընդունում եմ, — ասաց Բարբրիկենը, — վոր փորձը պետք է կատարել միմիայն Միացյալ Նահանգների հողի վրա, բայց յեթե իմ անհամբեր բարեկամը թույլ տար ինձ խոսելու, յեթե նա գոնե մի անգամ նայեր քարտեզին, կտեսներ, վոր բոլորովին այլերորդ է պատերազմ հայտարարել մեր հարեվաններին, վորովհետև Միացյալ Նահանգների մի քանի սահմանները տարածվում են 28-րդ զուգահեռականից այն կողմը: Տեսեք ահա, մեր տրամադրության տակ ունենք Տեխասի և Ֆլորիդայի ամբողջ հարավային մասը:

Մեջադեպը հետևանք չունեցալ, սակայն Չ. Տ. Մաստոնը արտի մեծ կրիծով համաձայնեց նախագահի առաջարկին: Ուրեմն վորոշվեց, վոր կոչումբիազը պիտի ձուլվեր Տեխասի կամ Ֆլորիդայի շրջաններից մեկին ու մեկում: Բայց այս վորոշումը

տարրրինակ մրցակցություն պիտի առաջացներ այդ յերկու նահանգների միջև:

28-րդ զուգահեռականը, Ամերիկյան ցամաքամասին դիպչելով, անցնում է Ֆլորիդայի թերակղզով, նրան բաժանելով գրեթե յերկու հավասար մասերի: Այդ մտնելով Մեկսիկայի ծովախորշը, կարում է Ալյարամայի, Միսիսիպի և Լուիզիանայի կազմած աղեղը, հետո անցնում է Տեխասով և կտրելով նրա մի անկյունը, ձգվում է Մեկսիկայի միջով, անցնում է Սոնյորան, Հին Կալիֆորնիան և այնուհետև կորչում Խաղաղականի ջրերում: Ուրեմն այդ զուգահեռականի տակ ընկնող Տեխասի և Ֆլորիդայի այդ մասերն ելին միայն, վոր Կեմբրիջի դիտարանի հանձնարարած լայնության աստիճանի տակ ելին լինում:

Ֆլորիդան իր հարավային մասում կարևոր քաղաքներ չունի: Այնտեղ կան միայն թափառաշրջիկ հնդիկների դեմ կառուցված բազմաթիվ բերդեր: Միայն մի քաղաք՝ Տամպան կարող է իսկական քաղաք համարվել և հարմար վայր լինել փորձը կատարելու համար:

Տեխասում ընդհակառակը քաղաքները բազմաթիվ ելին և ալեկի կարևոր, ինչպես Կորպուս-Քրիստի Նյուսեքսի կոմսության մեջ և մի շարք քաղաքներ՝ Ռիո-Բրավոյի վրա, — Լարեդո, Կոմալիտես, Սան-Իգնասիո, Ռոմա, Ռիո-Գրանդե-Միսի, Եդինբուրգ, Սանտա-Ռիտա, Ել-Պանդո և Դրուսավիլ: Դրանք խոշոր և վառագավոր մրցակիցներ ելին Ֆլորիդայի համար:

Հենց վոր Թնդանոթային ահումբի վորոշումը հրապարակվեց, Տեխասի և Ֆլորիդայի պատգամավորները շտապ Բալտիմոր հասան և այդ ժամանակից սկսած նախագահ Բարբրիկենը և Թնդանոթային ահումբի անդամները շարունակ ստանում ելին մեծամեծ պահանջներ: Յեթե հին Հունաստանի քաղաքներից յոթը վիճում ելին Հոմերոսի ծննդավայրը լինելու պատիվն ստանալու համար, Միացյալ Նահանգների այս յերկու նահանգները միմյանց սպառնում ելին մի թնդանոթի պատճառով իրար դեմ դուրս գալ:

Այսպիսով Բալտիմորում հայտնվեցին «կատաղի յեղբայրները», վորոնք զինված շրջում ելին փողոցներում: Ամեն անգամ, յերբ նրանք միմյանց ելին հանդիպում, վեճը անխուսափելի յեր լինում, մի վեճ, վորը կարող եր ալեկի բարդ հետևանքներ ունենալ: Բարերախտարար նախագահ Բարբրիկենի խոհեմությունը և

ճարտիկութիւնը վտանգի առաջն առան: Անհատական վեճերն յեւթ դասն նաև զանազան նահանգների թերթերի մեջ, որինակ՝ «Նյու-Յորք Հերալդը» և «Տրիբունը» Տեխասի կողմն էյին, մինչդեռ «Քայմը» և «Ամերիկեն Ռեվյուն» Ֆլորիդայի պատգամավորների դասն էյին պաշտպանում: Թնդանութային ակումբի անդամները չգիտեյին, թե ում լսեն:

Տեխասը հարտութեամբ ներկայանում էր իր քսանվեց շրջաններով, սակայն Ֆլորիդան պատասխանում էր, թե վեց անգամ ավելի փոքր մի նահանգի տասներկու շրջաններն ավելի արժեյին, քան թե Տեխասի քսանվեց շրջանները:

Տեխասը խիստ պարծենում էր իր յերեք հարյուր յերեսունհարկար բնակիչներով, սակայն Ֆլորիդան թեև նվազ ընդարձակ, ասում էր, թե ավելի բազմամարդ էր իր հիսուն հարկար բնակիչներով: Բացի այդ, Ֆլորիդան Տեխասին մեղադրում էր ճահճային տեղի բուն լինելու մեջ, վորի պատճառով ամեն տարի այնտեղ կոտորվում էյին հազարավոր մարդիկ. մի բան, վոր ճիշտ էր:

Իր հերթին Տեխասը պատասխանում էր, թե Ֆլորիդան ջերմախտի տեսակետից իրենից լավ դրութեան մեջ չէր, թե առնվազն անխոհեմութիւն էր ուրիշի նահանգները վատառողջ համարել, յերբ իր մեջ «սև փոխուք» կոչված խրոնիկական բնույթ կրող հիվանդութիւնն այնքան տարածված է. մի բան, վոր նույնպես ճիշտ էր:

— Համենայն դեպս, — ավելացնում էյին տեսասցիները «Նյու-Յորք Հերալդ» թերթի միջոցով, — Տեխասն ունի այն առավելութիւնը, վոր այնտեղ աճում է Ամերիկայի լավագույն բամբակը, արտադրում է նավահառուցման համար ամենաընտիր կանաչ-կաղնին, ունի հրաշալի քարածուխ և յերկաթահանք հիսուն տոկոսային մաքուր մետաղով:

Դրան ի պատասխան «Ամերիկեն Ռեվյուն» գրում էր, թե Ֆլորիդայի հողը, առանց այդքան հարուստ լինելու, լավագույն պայմաններն ունի կոլումբիադի կաղապարման և ձուլման համար, վորովհետև կազմված է ավազի և կավի խառնուրդից:

Բայց, — առարկում էյին տեսասցիք, — նախքան մի յերկրում գործէ մի բան ձուլելը, պետք է գնալ այդ յերկիրը, իսկ Ֆլորիդայի հետ հարողակացութիւնը դժվար է, մինչդեռ Տեխասի ծովեզերքը ունի Գալվեստոնի ծովախորշը՝ տասնչորս մղոն

չըջապատով և կարող է ընդունել ամբողջ աշխարհի բոլոր նավերը:

— Լավ, — պատասխանում էյին Ֆլորիդայի պաշտպան թերթերը, — մեզ մի խաբեք Գալվեստոնի ծովածոցով. դա ավելի բարձր է գտնվում քսանութերորդ գուգահեռականից, մինչդեռ մեր Եսպիրիտո-Սանտո ծովախորշը հենց լայնութեան 28-րդ աստիճանի վրա յէ և նրա միջոցով նավերն ուղղակի Տամպա-Տաուն քաղաքն են հասնում:

— Այդ ի՞նչ ծովախորշ է, — պատասխանում էր Տեխասը, — վոր կիսով չափ լիքն է ավազով:

— Ավազով լիքը դուք եք, — բացականչում էր Ֆլորիդան: — Քիչ է մնում ասեք, թե Ֆլորիդան վայրենի մի յերկիր է:

— Ո՞վ չգիտէ, վոր Սեմինոլները<sup>1)</sup> դեռևս վստում են ձեր տախտաններում:

— Չլինի՞ ձեր ապաշներն<sup>2)</sup> ու կոմանչները<sup>3)</sup> արդեն քաղաքակրթված են:

Վեճն այսպես շարունակվում էր մի քանի օր, յերբ Ֆլորիդան փորձեց հակառակորդին քարշ տալ մի ուրիշ հողի վրա և մի աւալոտ «Քայմը» հայտարարեց, թե ձեռնարկը «գուտ Ամերիկական» լինելով, փորձը պետք է կատարել «իսկական Ամերիկյան հողի» վրա:

Այդ խոսքերը ցնցեցին Տեխասը: «Ամերիկայն», — բացականչեց նա, — ձեզանից պակաս ամերիկացի յենք: Տեխասն ու Ֆլորիդան մի՞թէ միաժամանակ չմտան Միացյալ Նահանգների մեջ 1845 թ.:

— Ճիշտ է, պատասխանեց «Քայմը», — բայց Ֆլորիդան ամերիկացիներին պատկանում է 1820 թվից:

— Ինչպե՞ս չէ, — առարկեց «Տրիբունը», — յերկու հարյուր տարի իսպանացի և անգլիացի լինելուց հետո, ձեզ Միացյալ Նահանգներին ծախեցին հինգ միլիոն դոլլարով:

— Հետո՞ ինչ, — պատասխանեցին Ֆլորիդացիները, — ամաչելու բան է այդ: Մի՞թէ 1803 թ. Լուիզիանա նահանգը Նապոլեոնից չգնվեց տասնվեց միլիոն դոլլարով:

— Ի՞նչ նախատինք, — բացականչեցին Տեխասի պատգամավորները: — Ֆլորիդայի նման մի խղճալի հողամաս հանդգնում

1) 2) 3) Ամերիկայի բնիկ վայրենի ցեղեր:



և համեմատվել Տեխասի հետ, վորը փոխանակ վաճառվելու, ինքն իրեն ազատագրեց, մեկսիկացիներին դուրս վռնելուց 1836 թ., ինքն իրեն Ֆեդերատիվ հանրապետութիւն հայտարարեց Սան-Յասինտոյի ավերին. Սամվել Հոլտոնի՝ Սանտա-Աննայի զորքերի վրա տարած հաղթանակից հետո: Վերջապէս մի յերկիր, վորը հոժարակամ միացաւ Ամերիկայան Միացյալ Նահանգներին:

— Վորովհետև վախենում եր մեկսիկացիներին, — պատասխանեց Ֆլորիդան:

Վախենա՛լ: Այն ուրից, վոր այս ծանր բանն արտասանվեց, դրութիւնն անտանելի դարձաւ: Սպասվում եր, վոր Բալտիմորի փողոցներում յերկու կողմերը միմյանց պետք է կոտորէին: Հարկ յեղաւ հսկողութիւն հաստատել պատգամափորներին վրա:

Նախագահ Բարրիկենը գլուխը կորցրեց: Ամեն որ ստացվում էին բնորոշիվ գեղուցադրեր, փաստաթղթեր, նույնիսկ սպաննալից նամակներ. ի՞նչ դիրք պետք եր բռնել: Հողի կազմութիւն, հաղորդակցութիւն հեշտութիւն, փոխադրութիւն արագութիւն տեսակետից յերկու նահանգներն ել համահավասար էին: Ինչ վերաբերում եր քաղաքական նկատառումներին, դրանք Բարրիկենի կարծիքով գործի մեջ դեր չպետք է խաղային:

Այս վարանումն ու անվճռականութիւնը արդեն շատ յերկար էին տեւել: Բարրիկենը վորոշեց վերջ տալ այդ դրութիւնն այդ նպատակով նա հավաքեց պաշտոնակիցներին և նրանց ուսուցարկեց մի շատ խելոք վորոշում:

— Ֆլորիդայի և Տեխասի միջև տեղի ունեցող վեճերը նկատի առնելով, ակներեւ է, վոր միևնույն վեճերը պիտի ծագեն այն նահանգի քաղաքների միջև, վոր մենք ընտրելու յենք: Թշնամութիւնը նահանգներից կանցնի քաղաքներին: Տեխաս նահանգում կան պահանջված պայմաններին համապատասխանող տասնմեկ քաղաքներ, վորոնք պիտի մրցեն ստանալու համար ձեռնարկի պատիւը, և մեզ համար պիտի ստեղծեն նոր դժուարութիւններ, մինչդեռ Ֆլորիդան միայն մի քաղաք ունի, այն է՝ Տամպա-Տաունը: Ընտրենք ուրեմն Ֆլորիդան:

Այս վորոշման հրապարակումը սաստիկ զայրացրեց Տեխասի պատգամավորներին: Աննկարագրելի կատաղութիւն մեջ նրանք թնդանոթային ակումբի անդամները գլխին թափեցին ա-

նեծքներ և նախատինքներ: Բալտիմորի իշխանութիւնը մի բան եր մնում անելու և նա այդպէս ել արաւ: Հատուկ մի գնացք պատվիրեցին, տեխասցիներին կամա թե ակամա նատրեցիրն նրա մեջ և ժամը յերեսուն մղոն արագութեամբ քաղաքից քշեցին:

Բայց ինչքան ել արագ կատարվեց այդ մեկնումը, նրանք ժամանակ ունեցան մի վերջին սպանական հեղնանք ուղղել հակառակորդներին:

Ակնարկելով Ֆլորիդայի նեղ լինելը — յերկու ծովերի մեջ սեղմված մի նեղ թերակղզի — նրանք ասացին, վոր Ֆլորիդան թնդանոթի կրակոցից առաջացած ցնցումին չի դիմանա և ոգը կցնդի:

«Լալ, թող ցնդի», — պատասխանեցին Ֆլորիդացիները, հին դարերին արժանի լակոնական վոճով:

## ԳԼՈՒԽ XI

### ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ

Աստղագիտական, տեխնիկական և աշխարհագրական դժուարութիւնները լուծվելուց հետո հերթը հասաւ դրամական միջոցների հարցին: Ձեռնարկի իրագործման համար անհրաժեշտ եր ահագին գումար: Վոչ մի մասնավոր անձ, նույնիսկ վոչ մի պետութիւն չեր կարող տրամադրել անհրաժեշտ միլիոնները:

Նախագահ Բարրիկենը վորոշեց, չնայած վոր ձեռնարկը ամերիկյան եր, դարձնել այն համաշխարհային նշանակութիւն ունեցող մի գործ և դիմել բոլոր պետութիւններին, խնդրելով նրանց Ֆինանսական օժակցութիւնը: Ամբողջ յերկրագնդի իրավունքն ու պարտականութիւնն եր միաժամանակ միջամտել Յերկրի արբանյակի գործերին: Դրա համար այդ նպատակով բացված հանգանակութիւնը տարածվեց Բալտիմորից ամբողջ աշխարհով մեկ urbi et orbi:

Այս հանգանակութիւնն սպասվածից ավելի հաջողութիւն ունեցաւ, չնայած վոր հանգանակութիւնը կատարվում եր վորպէս անվերադարձ մի նախատվութիւն և վոչ թե վորպէս վո-

խառութիւն: Գործողութիւնը բացարձակապէս անչափանդէր  
էր, բառի բովանդակ նշանակութեամբ և յեկամտի վոչ մի ակն-  
կալութիւն չկար: Պարզվեց, վոր Բարբիկենի հաղորդման ազ-  
դեցութիւնը Միացյալ Նահանգների սահմաններից դէնն էր ան-  
ցել: Ատրանտյան և Խաղաղ ովկիանոսները անցնելով  
մուտք էր դործել միաժամանակ Ասիա, Յելլոսպա, Ալբրիկա և  
Ալխարալիա: Միացյալ Նահանգների աստղագիտական դիտա-  
բանները հարաբերութեան մեջ էլին մտել ոտար յերկրների գե-  
տարանների հետ: Նրանցից վոմանք, ինչպէս Փարիզի, Պետեր-  
բուրգի, Բեռլինի, Արտոնայի, Ստոկհոլմի, Լիսաբոնի, Վարչա-  
վայի, Համբուրգի, Բուդայի, Բոյոնիայի, Մարտայի, Բենարի-  
սի, Մադրասի, Պեկինի գիտարաններն իրենց շնորհալորանքս  
հայտնել էլին Թնդանոթային ակումբին, ուրիշները խոհեմորին  
սպասում էլին փորձի արդիւնքներին:

Իսկ Գրինուիչի գիտարանը, Անգլիայի մյուս քսաներկու  
աստղագիտական հիմնարկների համաձայնութեամբ, շատ վո-  
րոշակի բացասական զիբը բոնեց, համարձակորեն ժխտելով  
գործի հաջողութիւնը և կապիտան Նիկոլի թերիանների կողմն  
սնցալ: Յեւ մինչդեռ գանազան գիտական հիմնարկներ խոստա-  
նում էլին պատգամափորներ ուղարկել Տամպա քաղաքը, Գրին-  
վիչի գիտարանի վարչութիւնը նիտ գումարելով, կոպիտ կեր-  
պով անտեսեց Բարբիկենի առաջարկը: Այդ պարզապէս անգլիա-  
կան նախանձ էր, ուրիշ վոչինչ:

Համենայն դեպս Բարբիկենի ձեռնարկը համակրանք գտավ  
գիտական աշխարհում և այնտեղից անցավ լայն շրջաններին,  
վորոնք ընդհանրապէս հետաքրքրվում էլին այդ հարցով: Ամե-  
նակարեւորն արդեն այդ էր, վորովհետեւ դրանք էլին, վոր պիտի  
հավաքելին կարեւոր մի գումար:

Նախագահ Բարբիկենը հոկտեմբերի 8-ին մի խանդավառ  
հայտարարութիւն բաց թողեց, վորով կոչ էր անում «Յերկ-  
րագնդի բոլոր բարձրագիւմ մարդկանց»: Այդ կոչը թարգման-  
վելով բոլոր լեզուներով՝ մեծ հաջողութիւն ունեցավ:

Հանգանակութիւններ բացվեցին Միացյալ Նահանգների  
բոլոր գլխավոր քաղաքներում, ապա նույնը կատարվեց յերկու-  
ցամարտասերի գանազան յերկրներում:

Նախագահ Բարբիկենի կոչից յերեք ուր հետո Միացյալ Նա-

հանգների տարբեր քաղաքներում հավաքվել էր չորս միլիոն  
դոլլար: Այդպիսի մի կանխավճարով Թնդանոթային ակումբը  
արդեն կարող էր գործի անցնել:

Մի քանի ուր հետո հեռագրերն Ամերիկային հայտնեցին,  
վոր ոտար յերկրների հանգանակութիւնները ընթանում էլին  
մեծ հաջողութեամբ: Մի շարք յերկրներ աչքի ընկան իրենց  
առատաձեռնութեամբ, ուրիշներն ալելի դժվար էլին բաց անում  
բակի բերանը: Բնավորութեան խնդիր էր: Հանգանակութիւ-  
նից հրաժարվեցին միայն յերկու յերկրներ, — Իսպանիան և  
Անգլիան:

Իսպանիան հազիվ կարողացավ հարյուր տասը տեալ (22 ուր-  
լի) հավաքել, այն պատճառով, վոր այդ ժամանակ այդ յերկիրը  
դրազված էր յերկաթուղիների շինարարութեամբ:

Մնում էր Անգլիան: Հայտնի յե, թե ինչպիսի արհամարհան-  
քով և հակակրանքով այս յերկիրն ընդունեց Բարբիկենի առա-  
ջարկը: Այս հարցում բոլոր անգլիացիները համերաշխ գուրս  
յեկան. նրանք հայտարարեցին, թե Թնդանոթային ակումբի  
ձեռնարկը հակառակ էր «չմիջամտելու սկզբունքին» և մի Փար-  
սինգ<sup>1)</sup> չտվին:

Թնդանոթային ակումբը դրան կարեւորութիւն չտվեց, և  
գործը շարունակեց: Այսպիսով Թնդանոթային ակումբի տրա-  
մադրութեան տակ հավաքվեց հետեյալ խոշոր գումարը:

Միացյալ Նահանգներում հանգանակված 4.000.000 դոլլար:  
Արտասահմանում » 1.446.675 դոլլար:  
ԳՈՒՄԱՐԸ 5.446.675 դոլլար:

Թող վոչ վոք շղարմանա այս գումարի խոշորութեան պրա:  
Թնդանոթի ձուլման, փորման, նրա հիմքի, վորմնադրական  
աշխատանքների, բանլորների տեղափոխման, համարյա ան-  
մարդարնակ մի յերկրում նրանց համար բնակարաններ կառու-  
ցելու, հողների և այլ շէնքերի կառուցման, արհեստանոցների  
սարքավորման, վառողի, արկի և այլ ծախսերի համար, ըստ  
նախահաշիվների մոտավորապէս այլքան գումար անհրաժեշտ  
էր: Քաղաքացիական պատերազմի ժամանակ Թնդանոթի մի  
հարվածը յերբեմն արժեք մեկ հազար դոլլար: Նախագահ Բար-

1) Անգլիական ամենամանր դրամ:

րիկենի արձակելիք հարվածը, վորը արտասովոր եր հրետանու պատմութեան մեջ, կորոզ եր Հինգ հագար անգամ տվելի ար-  
ժենալ:

Հոկտեմբերի 20-ին մի պայմանագիր կնքվեց Նյու-Յորքի  
զինագործարաններէց մեկի՝ Գոլդսպրինգի հետ, վորը պատե-  
ղազմի ժամանակ լավագոյն թնդանութիւններն եր տվել:

Պայմանավորվող յերկու կողմերի մեջ համաձայնութիւն  
կայացաւ, վոր Գոլդսպրինգ գործարանը հանձն եր առնում  
հարավային Ֆլորիդայի Տամպա-Տաուն քաղաքը փոխադրել կո-  
չումբիազի համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումը  
Աշխատանքը պետք ե ավարտվեր ամենաուշը մինչև հաջորդ  
տարվա հոկտեմբերի 15-ը. հակառակ դեպքում Գոլդսպրինգ  
գործարանը պարտավորվում եր վորպես տուգանք վճարել որա-  
կան հարյուր դոլլար, մինչև վոր Լուսինը նորից նույն զինքի  
չրա գտնվեր, այսինքն տասնութ տարի տասն մեկ որ հետո.  
Բանվորներ հավաքագրելը, նրանց վարձատրութիւնը և անհրա-  
ժեշտ մատակարարումը հանձն եր առնում Գոլդսպրինգ գոր-  
ծարանը:

Այս պայմանագիրը յերկու որինակ գրվելով՝ ստորագրվեց  
Թնդանութային ակումբի նախագահ Բարրիկենի և Գոլդսպրինգ  
գործարանի ղերեկտոր Զ. Մերչիդոնի կողմից, վորոնք փոխա-  
ղարձարար հաստատեցին պայմանագիրը:

## ԳԼՈՒԽ XII

### ՍՏՈՆՍԶԻԼԼ

Այն որից, յերբ Թնդանութային ակումբի անդամները մեր-  
ժեցին Տեխասի գլխումը, Ամերիկայում, վորտեղ ամեն վաք  
կարգաւ գիտե, յուրաքանչյուրն իր պարտքը համարեց ուսում-  
նասիրել Ֆլորիդայի աշխարհագրութիւնը: Այդ նահանգի մա-  
ւին հրատարակած բոլոր գրքերն ու ձեռնարկները խսկույն ըս-  
պառակեցին. կարիք յեղաւ նոր հրատարակութիւններ տպագրել:  
Ըստենալած հետաքրքրութիւն եր առաջացել:

Բարրիկենը սակայն ընթերցանութիւնից ավելի կարևոր  
գործ ունեւր կատարելու, նա ուզում եր իր աչքով տեսնել և վո-

քոչել կոչումբիազի ձուլման տեղը: Ուստի առանց մի րոպե  
կորցնելու, նա ուժեղ մի հեռագրիտակ կառուցելու համար ան-  
հրաժեշտ գումարը դրեց կեմբրիջի դիտարանի տրամադրո-  
թյան տակ և Ալբանի քաղաքի Բրեդվիլ և Ընկերութեան պատվեր տվեց  
Թնդանութի համար ալյումինից մի արկ պատրաստել:

Ապա նա Բալտիմորից մեկնեց Մասսոնի, մայր Ելֆիստո-  
նի և Գոլդսպրինգ գործարանի ղերեկտորի ընկերակցութեամբ:

Հաջորդ որը չորս ընկերները Նոր Որլեան հասան և անմի-  
ջապէս նստեցին «Տամպիկո» շոգենավը, վոր կառավարութիւնը  
դրել եր նրանց տրամադրութեան տակ: Շոգենավը ճանապարհ  
ընկաւ և ավերը հետզհետե չքացան տեսողութիւնից:

Մովային ճամբորդութիւնը յերկար չտևեց. յերկու որ  
հետո «Տամպիկո» նավը ութ հարյուր կիլոմետր ճամբա կտրե-  
լով հասաւ Ֆլորիդայի ծովափը: Ճանապարհորդներն իրենց  
առաջ տեսան մի ցածր և տափակ հողամաս, ըստ յերևութիւն  
բավական անբերրի: Անցնելով վոստրեներով և խեցգետինն-  
րով առատ մի շարք ծովախորշերից՝ «Տամպիկոն» մտաւ Եսպե-  
րիտո-Մանտո ծովածոցը:

Այդ ծովածոցը բաժանվում ե յերկու թեւերի— Տամպա և  
Հելիսորո նավակայանները, վորոնց մուտքից ներս անցաւ շո-  
գենավը: Մի քիչ առաջանալուց հետո յերևացին Բրուկ բերդի  
ծովեղերյա մարտիոցները և Տամպա-Տաուն քաղաքը, վոր ծու-  
լորեն պռակած եր Իլիսորո գետի գետաբերանում կաղմված  
բնական նավահանգստի խորքում:

Այդտեղ «Տամպիկոն» խարխիսի գցեց հոկտեմբերի 22-ին յե-  
րեկոյան ժամը 7-ին: Չորս ուղեվորներն խսկույն ցամաք դուրս  
յեկան:

Բարրիկենի սիրտը սկսեց ուժեղ բարախել, յերբ վոտքը կո-  
խեց Ֆլորիդայի հողը վրա: Նրան թվում եր, թե նա հողը շոչա-  
փում ե վոտքով, ինչպէս անում ե յերբեմն ճարտարապետը,  
յերբ ուզում ե մի տան ամրութիւնը ստուգել: Զ. Տ. Մաստոնը  
հողն եր քերում իր ճանկի ծայրով:

— Բարրիկեններ, — սասց Բարրիկենը, — կորցնելու ժամա-  
նակ չունենք, վաղվանից ձի պետք ե նստենք յերկրին ծանոթա-  
նալու համար:

Յերբ Բարրիկենը ցամաք եր իջնում, Տամպա քաղաքի յե-

րեք հազար բնակիչները նրան գիծավորեցին, մեծարելու համար Թնդանոթային ակումբի նախագահին, վոր իրենց եր տվել նախապատվութունը: Մեծ ովացիաներով ընդունեցին նրան. բայց Բարբիկենը ամեն տեսակի ցույցերից խուսափեց, քաշվեց «Յրանկլին» հյուրանոցը և վոչ վոքի չընդունեց: Հոչակավոր մարդու դերը, ինչպես յերևում է, նրան չեր սազում:

Հաջորդ օրը հոկտեմբերի 23-ին, իսպանական վոքրիկ, սակայն առույգ և կրակոտ ձիեր սպասում էյին հյուրանոցի բուսածուտների տակ: Բայց չորսի փոխարեն հիսուն հատ էյին յեկել իրենց հեծյալների հետ: Բարբիկենը զուրս յեկավ յերեք ընկերների հետ և նախ շատ դարձացավ, տեսնելով այգբան բազմաթիվ ձիավորներ. նա նկատեց նաև, վոր յուրաքանչյուր ձիավոր ուսին դցած ուներ մի կարճ հրացան և թամբին կապած մի գուլգ աարձանակ: Այս սարմական պատրաստության մասին նրան բացատրութուն տվեց մի յերխտասարդ Փլորիդացի:

— Երջակայքում սեմինոյներ կան:

— Ի՞նչ սեմինոյներ:

— Վայրենիներ, վորոնք չըջում են արտոավայրերում. մենք խոհեմութուն համարեցինք ձեզ ընկերակցել:

— Պա՛հ, — արտասանեց Ջ. Տ. Մաստոնը, ձիու վրա ցատկելով:

— Համենայն դեպս, — սուսց Փլորիդացին, — այսպես ավելի ապահով է:

— Պարոններ, — պատասխանեց Բարբիկենը, — չնորհակալութուն ձեր ուշադրության համար, իսկ այժմ հառա՛ջ:

Փոքրիկ խումբն իսկույն շարժվեց և կորավ փոշու ամպի մեջ: Առավոտյան ժամի 5-ն եր, արեվն արդեն փայլում եր և ջերմաչափը ցույց եր տալիս 28 աստիճան, բայց ծովային գովքամին մեղմացնում եր սաստիկ շոգը:

Ուղեվորները Տամպա քաղաքից հեռանալով՝ ուղղվեցին դեպի հարավ և ծովեզերքի յերկայնքով առաջացան Ալիֆիա դետակին հասնելու համար: Այս փոքրիկ դետը թախվում է Սլիսբորո ծովածոցը, Տամպա քաղաքից տասնութ կիլոմետր ցած: Բարբիկենը և իր խումբը դետակի աջ ափով բարձրացան դեպի Արևելք: Եռտով ծովածոցը չբացավ մի հողաբլրի հեռևում, միայն Փլորիդյան դաշտավայրն եր տարածվում աչքի առաջ:

Փլորիդան բաժանվում է յերկու մասի — մեկը՝ հյուսիսային, ավելի բազմամարդ և պակաս ամայի: սրա մայրաքաղաքն է Տալահասեն և միակ խոշոր նավահանգիստն է Պենսակոլան, վորտեղ գտնվում է Միացյալ Նահանգների ծովային արսե-նալների ամենազլխավորներից մեկը: Մյուս մասը, հարավայինը, սեղմված Ատլանտյան ովկիանոսի և Մեկսիկայի ծոցի մեջ, մի նեղ թերակղզի յե՝ անվերջ յենթակա գոլֆլարոմի տաք հոսանքին:

Փլորիդայի տարածութունն է յերեսուն ութ միլիոն յերեսուներեք հազար յերկու հարյուր վաթսուն յոթ ակր<sup>1)</sup>: Ահա այս տարածության մեջ է, վոր Թնդանոթային ակումբի ձև-նարկի համար մի հարմար տեղ պեաք եր փնտռել, 28-րդ գուգահեռականից այն կողմը: Այդ նպատակով Բարբիկենը ուշադրությամբ գնում եր հողի մակերեկութի արտաքին կազմը և նրա հատկութունները:

Փլորիդան նշանակում է «Ծաղիկների յերկիր»: Սկզբում թվում եր, թե նա իր շոր և արեվակեզ ավերով շատ քիչ է արժանի այդ անվան: Բայց ծովեզերքից մի քանի մղոն դեպի յերկրի խորքը բնությունը քիչ-քիչ փոխվեց և ցույց տվեց, վոր իրոք արժանի յեր այդ անվան: Դաշտը կտրում, անցնում էյին բուսուներ, դետակներ, տեղ-տեղ յերևում էյին լճակներ: Ուղեվորին թվում եր, թե Հոլլանդիայում կամ Գլխանայում է ձանադարհորդում:

Դաշտավայրը հեղհետե բարձրացավ և յերեացին մշակված դաշտեր, վորտեղ բուսումն էյին հյուսիսի և հարավի բոլոր տեսակի բույսերը: Վերջապես յերեացին անանասի, բրնձի, ծխախոտի, բամբակի, շաքարեզկզնի ընդարձակ դաշտերը:

Բարբիկենը շատ գոհ եր, վոր յերկիրը հեղհետե բարձրանում եր և յերբ Ջ. Տ. Մաստոնը հարցրեց նրա կարծիքը այդ մասին, նա պատասխանեց:

— Հարգելի՛ բարեկամս, մեզ համար շատ կարևոր է կոլումբիադը ձուլել բարձր տեղում:

— Լուսնին ավելի մո՞տ լինելու համար, — հարցրեց Թնդանոթային ակումբի քարտուղարը:

1) Սկզբ նավասար է 0,4047 հեկտարի Ծանթ. թարգմ:

— Վո՛չ, — պատասխանեց Բարբրիկենը ծիծաղելով, — Ի՞նչ նշանակութիւն ունի մի լանի մետր ավելի կամ պակաս: Վո՛չ Բարձր հողամասի վրա մեր աշխատանքներն ավելի հեշտ կընթանան, հողը փորելիս ստիպված չենք լինի պայքարել ջրի դեմ և այդպիսով կազատվենք խողովակներ անցկացնելու յերկար ու թանձր նստող աշխատանքից. սա շատ կարևոր է, վորովհետև պետք է փորենք մոտ յերեք հարյուր մետր խորութեամբ մի հոր թնդանոթի համար:

— Դուք իրավացի յեք, — ասաց ինժեներ Մերչլիգոնը, — փորման ժամանակ ինչքան կարելի յե պետք է խուսափել ջրերից, բայց յեթե ստորերկրյա աղբյուրների պատահենք, վնաս չունի, ջրհան մեքենաներով դուրս կհանենք ջուրը, կամ նրա ճանապարհը կփոխենք:

— Սակայն, — ասաց Բարբրիկենը, — յեթե մեզ հաջողվի գտնել բարձր և չոր տեղ, դրանով մենք կխուսափենք ստորերկրյա ջրերի դեմ կովելուց, աշխատանքն ավելի արագ և ավելի հաջող կընթանա: Ուրեմն անհրաժեշտ է մեր խրամատը բաց անել ծովի մակերեւոյթից մի քանի հարյուր մետր բարձր հողամասի վրա:

— Դուք իրավացի յեք, Բարբրիկեն, — պատասխանեց ինժեները, — յեթե չեմ սխալվում, շուտով մի հարմար տեղ կգտնենք:

— Ա՛հ, ինչպէս կցանկանայի լսել ջրունդի առաջին հարվածը, — բացականչեց Բարբրիկենը:

— Իսկ յես՝ վերջինը, — բացականչեց Ջ. Տ. Մատտոնը:

— Այդ կլինի շուտով, — պատասխանեց ինժեները, — հավաստեցնում եմ ձեզ, վոր Գորբասպրինգ ընկերութիւնը ուշացման համար տուգանք չի վճարի:

— Յերգվում եմ, վոր իրավացի յեք, — հարեց Ջ. Տ. Մատտոնը, — որական հարյուր դոլլար, մինչև վոր Լուսինը դարձյալ նույն դիրքն ընդունի Յերկրի նկատմամբ, այսինքն տասնութ տարի և տասնմեկ որ, գիտե՞ք վոր այդ անում է վեց հարյուր հիսունութ հազար հարյուր դոլլար:

— Վո՛չ, չգիտենք, — պատասխանեց ինժեները, — և իմանալու ել կարիքը չի լինի:

Առավոտյան ժամը տասին փոքրիկ խումբը քսան կելումետրի չափ առաջ էր դնացել: Մշակված դաշտերին սկսել էր հաջորդել

անտառային շրջանը, վորտեղ աճում էին ծառերի դանաղան տեսակներ, արևադարձային վարթամութեամբ: Այդ խիտ, դրեթե անանցանելի անտառում աճում էին նունենիներ, նարնջենիներ, թղենիներ, ձիթենիներ, ծիրանի, բանանի ծառեր, խաղողի վորթեր, այդ բոլորը միմյանց հետ մրցում էին գույներով և բուրմուռներով: Նրանց անուշաբույր սավերի տակ յերդում է թռչկոտում էին գույնզգույն հազարավոր թռչուններ: Մատտոնն ու մայրը հիանում էին բնութեան այս ճոխ և սքանչելի շեղեցիկութեամբ: Սակայն նախազահ Բարբրիկենը այդ հրաշալիքներին քիչ էր ազդվում և շտապում էր առաջ գնալ: Այդ արգավանդ և վարթամ յերկիրը հենց իր պողպատե խողովակներով և փարթամ յերկիրը հենց իր պողպատե խողովակներով չէր դալիս, նա դուրս էր, վոր իր վոտների տակ այդ արգավանդ հողի ներքեում ջուր կա, իդուր չորութեան նշաններ էր փնտրում:

Սակայն խումբը շարունակ առաջանում էր. նրանք ստիպված էին բազմաթիվ դետերի հունից անցնել, վոչ առանց վտանգի, վորովհետև նրանց մեջ կային 15-ից 18 վոտնաչափ յերկարութեամբ կայմաններ<sup>1)</sup>: Ջ. Տ. Մատտոնը արիարար նրանց սպառնաց իր ճանկով, սակայն նրա այդ շարժումից վախեցան միայն պելիկանները, հալալուսները և այլ վայրի թռչունները, իսկ ահագին կարմրաթեւերը ապշած նրան էին նայում:

Վերջապես խոնավ յերկրներին այս բնակիչներն ել չբացան: Անտառները ավելի նոսրացան և ծառերը ավելի վոքրացան: Ընդարձակ դաշտերի մեջ յերևում էին մեկուսացած պուրակներ, վորոնց մեջ փախչում և թաղնվում էին վախեցած այծյամների յերամներ:

— Վերջապես, — բացականչեց Բարբրիկենը կանգնելով ասպանդակների վրա, — ահավասիկ յեղեմիներին շրջանը:

— Ինչպէս նաև վայրենիների, — պատասխանեց մայրը:

Իսկապես հորիզոնի վրա յերևացին մի քանի սեմինոլներ, վորոնք արագավազ ձիեր նստած, այս ու այն կողմն էին արշավում. նրանք ճոճում էին իրենց յերկար նիզակները կամ

<sup>1)</sup> Գոկորդիլոսի մի տեսակ (Մանոթ. թարգմ.):

ողում հրացաններ արձակում, սակայն նրանք բավականացան այդ սոլառնական ցույցերով, առանց Բարբրիկենին և ընկերներին անհանդատացնելու: Այդ միջոցին խումբը գտնվում էր մի քարքարոտ բարձր հարթավայրում— մի քանի ակր տարածությամբ, ընկած արևմտի կիզիչ ճառագայթների տակ: Մա մի ընդարձակ բարձրավանդակ էր. Թնդանութային ակումբի անդամներին թըվաց, վոր այդ բարձրությունն ուներ բոլոր հարմարությունները կոլումբիադի կառուցման համար:

— Կանդեցե՛ք, — ասաց Բարբրիկենը: — Այստեղին ի՞նչ անուն են տալիս ձեր յերկրում:

— Ստոնսհիլ<sup>1)</sup> և կոչվում, — ասաց Փլորիդացիները մեկը: Բարբրիկենը առանց մի խոսք արտասանելու ձեռք իջավ, վերցրեց գործիքները և սկսեց տեղի դիրքը վերոշել ծայրահեղ ճշտությամբ. փոքրիկ խումբը նրա շուրջը հավաքված, խոր լուռություն էր պահում:

Այդ ժամանակ արևն անցնում էր միջորեականից: Կեսոր էր: Բարբրիկենը մի քանի բույս հետո արագորեն գրանցեց գիտողությունների արդյունքը և ասաց.

— Այս վայրը գտնվում է ծովի մակերևույթից վեց հարյուր մետր բարձր, լայնության 27°7' և արևմտյան յերկարության 57°71, ) վրա: Իր քարքարոտ և չոր կազմով այս վայրը ինձ թվում է վերին աստիճանի նպատակավոր մեր փորձի համար, ուրեմն այստեղ է, վոր պիտի կառուցվեն մեր պահեստները, արհեստանոցները, հնոցները, բանվորների տնակները. այստեղից, այո, այստեղից է, — կրկնեց նախագահը վտորով խփելով Ստոնսհիլի գագաթին, — վոր մեր արկը պիտի թռչի դեպի Լուսին, տիեզերական տարածության միջով:

1) Քարքարոտ

2) Վաշինգտոնի միջորեականոց: Տարբերությունը Փարիզի միջորեականի հետ անում է 79022: Ուրեմն այդ յերկարությունը Փրանսիական չափով 83025 է:

ԿՈՒՆՍՏԱՆԻ ԶՈՐԸ

Նույն օրը յերեկոյան Բարբրիկենն ու ընկերները վերադարձան Տամպա քաղաքը: Ինժեներ Մերչլիոնը «Տամպիկո» շոգենավով մեկնեց Նոր-Ուրլեան՝ բանվորներ վարձելու և անհրաժեշտ իրերի մեծ մասը բերելու համար: Թնդանութային ակումբը անդամները մնացին Տամպա քաղաքում կազմակերպելու համար առաջին հերթի աշխատանքները տեղացի բանվորների ոգնությամբ:

Հոկտեմբերի 31-ի առավոտյան ժամը 10-ին այդ բազմությունը դաժ իջավ Տամպա քաղաքի նավամատուցը: Հասկանալի չէ, թե ինչ շարժում ստեղծվեց այդ փոքր քաղաքում, վորի բնակչությունը մեկ օրում համարյա կրկնապատկվում էր: Պետք է ասել, վոր Տամպա-Տաոնը մեծապես ոգնվեց Թնդանութային ակումբի այս նախաձեռնությունից, վոր թե բանվորների թվի աճման շնորհիվ, վորոնք իսկույն փոխադրվեցին Ստոնսհիլ, այլ շնորհիվ հետաքրքիրների այն բազմության, վորոնք աշխարհի բոլոր կողմերից դեպի Փլորիդյան թերակղզին էլին շտապում:

Առաջին օրերը դամաք հանվեցին շոգենավերի բերած գործիքները, մեքենաները, սննդեղենը, ինչպես նաև շարժական սների մասերը: Միևնույն ժամանակ Բարբրիկենը Ստոնսհիլը Տամպա քաղաքի հետ միացնող 15 մղոն յերկարության յերկաթուղագծի առաջին ձողերն էր դնում:

Հայտնի չէ, թե ինչպես են կառուցվում ամերիկյան յերկաթուղիները: Նրանք չեն վախենում վոր հանկարծական շրջապտույտներից և վոր զատվալներից, արհամարհելով պաշտպանողական պատնեղները և տեխնիկական բարդ սարքավորումները. նրանց գնացքները քմահաճորեն իջնում են ձորերը, բարձրանում բլուրները, սլանում զիզադներով՝ առանց ուշգրնելու ուղիղ գծին: Դրա համար էլ ամերիկյան յերկաթուղիները եժան են նստում և արագ կառուցվում. դրա փոխարեն ավելի հաճախ են գծից դուրս թռչում:


Տամպա Տաունից դեպի Ստոնհիլլ յերկաթուղադիծը հա-  
ուուցվեց ամենակարճ ժամանակում և շատ եփան:

Բարրիկենը վողեւորում, աշխատանքին հաղորդում էր իր  
չունչը: Գործնական միտքը հազար ու մի հնարք էր ստեղծում:  
Նրա համար չկար վոչ մի արգելք, վոչ մի դժվարութիւն, վոչ մի  
խոչընդոտ. նա և՛ հանքափոր էր, և՛ վորմնադիր, և՛ մեքենա-  
գործ, նույնքան վարպետ, վորքան թնդանոթաձիգ. նա ուներ  
ամեն մի հարցի պատասխանը և բոլոր խնդիրների լուծումը:  
Անընդհատ թղթակցում էր թնդանոթային ակումբի կամ Գորդ-  
սպրինգի հետ. գիշեր ու ցերեկ կրակները վառած, կազմ ու  
պատրաստ, «Տամպիկոն» նավահանդստում նպատակ էր նրա  
հրամաններին:

Բարրիկենը նոյեմբերի 1-ին, բանվորների առաջին խմբի  
հետ մեկնեց Տամպա քաղաքից և հաջորդ որմնանից շարժական  
տների մի քաղաք բարձրացավ Ստոնհիլլի շուրջը: Քաղաքը  
չըջատատեցին ցցապատնէչներով: Սկսվեց շարժում և յեռ ու  
գեռ, ինչպես Միացյալ Նահանգների խոշոր քաղաքներից մե-  
կում: Կյանքը յենթարկվեց վորոչ գիտցիւլինայի և աշխատանքը  
կազմակերպվեց սահմանված կանոնների համաձայն:

Խնամքով կատարված պեղումները հնարավորութիւն տը-  
վին ծանոթանալու հողի բնույթի հետ. փորման շործողու-  
թիւնը սկսվեց նոյեմբերի 4-ին: Այդ որը Բարրիկենը հավաքեց  
գլխավոր վարպետներին և ասաց.

— Ձեզ բոլորիդ հայտնի յե, բարեկամներ, թե ինչու հա-  
մար եմ ձեզ հավաքել Ֆլորիդայի այս վայրենի մասում: Մեր  
խնդիրն է ձուլել մի թնդանոթ յերեք մետր ներքին տրամա-  
զծով, պատերը յերկու մետր հաստութեամբ: Այդ թնդանոթը  
պետք է չըջատատել քարե շարվածքով մոտ յոթ մետր հաստու-  
թեամբ: Ուրեմն անհրաժեշտ է փորել մի հոր քսան մետր լայ-  
նութեամբ և յերեք հարյուր մետր խորութեամբ: Այս աշխա-  
տանքը պետք է վերջանա ութ ամսում: Հազար բանվորի համար  
դա դժվար աշխատանք չէ, յեթե կատարվի լայն տարածութեան  
վրա: Իսկ դուք պետք է աշխատեք համեմատաբար նեղ տարա-  
ծութեան վրա, համենայն դեպս այդ աշխատանքը պետք է կա-  
տարվի, և կկատարվի: Յես վստահ եմ ձեր արիւթեան և  
յեռանդի վրա:



Հողափորումը շոգեմե քեաներով

Առավոտյան ժամը Տին քլունդի առաջին հարվածը տրվեց Ֆլորիդայի հողին և այդ բուսկից սկսած այդ անխոնջ գործիքը մի պահ անդործ չմնաց: Բանվորները միմյանց փոխարինում էին որական չորս անգամ:

Նոյեմբերի 4-ին հիտուն բանվորներ պատնեչով շրջապատված հողամասի կենտրոնում, այսինքն՝ Ստոնսհիլլի գաղաթին քան մետք լայնությամբ մի կլոր փոս փորեցին: Քլունդը նախ զիպով մի քանի սանտիմետր հաստությամբ մի սեփահողի, փորը շատ հեշտությամբ փորվեց: Այդ հողին հաջորդեց յերկու վոտնաչափ խորությամբ մանր ավազ, փոր զգուշությամբ զուրս հանվեց՝ ներքին կաղապարի կառուցման համար զործածելու նպատակով: Ավազից հետո յերևաց բավական թանձր ու սպիտակ կավե շերտը, փորի հաստությունը կլիներ մոտավորապես չորս վոտնաչափ:

Այնուհետև քլունդը սկսեց դիպչել քարահանքի ամուր շերտին, փորը առաջացել էր քարացած խեցիներից: Դա մի քարաժայռ էր, փոչ միայն ամուր, այլև բոլորովին չոր: Բանվորները արդեն փորել էին յերկու մետրից ավելի խորությամբ մի փոսայժմ հողալին աշխատանքներին հաջորդեցին քարային աշխատանքները:

Այդ խոռոչի խորքում կառուցվեց կաղնու ամուր փայտից մի ողակ, այնքան ամրապինդ, փոր կարող էր դիմադրել բոլոր փորձություններին: Այս ողակի ներքին բացվածքի տրամագիծը հավասար էր կոլումբիադի արտաքին տրամագծին: Այս ամուր ողակի վրա յեր, փոր փորմնադիրները շարեցին առաջին քարաշարը. քարերի արանքը լցրին այնպիսի մի ցեմենտով, փորը չի փակնում ջրից և քարերը պնդացնում է անխորտակելի կերպով: Բանվորները քարերը շարում էին՝ սկսելով ողակի արտաքին շրջանակից և գնում դեպի կենտրոնը: Այդպիսով ստացվեց յոթ մետր լայնությամբ մի հոր:

Յերբ այս աշխատանքը վերջացավ, հողափորները նորից քլունդն ու բրիչը վերցրին և սկսեցին քարաժայռը քանդել ողակի ներքևից, միաժամանակ աստիճանաբար նրա տակ դնելով չափազանց ուժեղ հենակներ, ամեն անգամ յերբ բացվածքը յերկու վոտնաչափ խորանում էր, հենակները հեռոցհեռ հանվում էին: Շրջանակը հեռոցհեռ իջնում էր ցած, իր հետ տա-

նելով նաև քարային զանգվածը, փորի վերևի շերտի վրա անընդհատ աշխատում էին փորմնադիրները, չմոտանալով քարաշարի մեջ բաց թողնել անցքեր՝ ձուլման ժամանակ դադարին յեւթ տարու համար:

Այս տեսակ աշխատանքը բանվորներից պահանջում էր ծայրահեղ հմտություն և լարված ուշադրություն: Նրանցից փոմանք շրջանակի տակը փորելու ժամանակ պոկվող քարի կտորանքներից ծանր և նույնիսկ մահացու վերքեր ստացան, սակայն յեռանդը վառ մի բույն շատեց փոչ ցերեկը, փոչ դիշերը—ցերեկը արևի ճառագայթների տակ, փորներ ամառվա ամիսներին կրակ էին թափում այդ խանձված դաշտերի վրա. դիշերն աշխատում էին ելկտորական սպիտակ յույսի տակ: Ժայռերին հարվածող քլունդների սղմուկը, ականների պայթյունը, մեքենաների դղրուցը, ողի մեջ ցրվող ծխի ամպերը Ստոնսհիլլի շուքը ահալոր մի տեսարան էին ստեղծում, փորը սարսափ էր ազդում փոչ միայն բիզոնների հոտերին, այլև վայրի հնդիկ-սեմինտներին:

Աշխատանքն առավ էր գնում կանոնավոր կերպով: Ծոզեշարժ վերամբարձ մեքենաները արագացնում էին հողի փորման գործը, անսպասելի արդեյքների համարյա չհանդիպեցին, յեթե չհաշվենք նախատեսված դժվարությունները, փորնք հեշտությամբ հաղթահարվում էին:

Առաջին ամիսը լրացավ, հորի խորությունը հասավ այդքան ժամանակի համար նախատեսված խորության, այն է՝ յերեսուն յոթ մետրի: Դեկտեմբերին այդ խորությունը կրկնապատկվեց, իսկ հունվարին յեռապատկվեց: Փետրվար ամսին բանվորները սահաբամ յեղան պայքարել հողի խորքից ժայթքող ստորերկրյա ջրի դեմ: Պետք յեղավ գործածել հսկա ջրհաններ և ճնշված ողի դորժիքներ՝ ջուրը գուրս հանելու և ջրի ակունքները փակելու համար, այնպես, ինչպես փակում են ջրի անցքերը շոգենավի վրա: Վերջապես ջրի հոսանքը հաղթահարվեց: Միայն հողի փխրության հետևանքով փայտե ողակը մի քիչ թեթվեց և մասնակի տեղաշարժ առաջացավ: Կարելի չե յերեվակայել սոսկալի ցնցումը, փոր կատարվեց, փորովհետև ողակի հետ միասին ցնցվեց և տեղից շարժվեց հսկայական քարաշեն պատը, փորի բարձրությունը հասնում էր արդեն ավելի քան հարյուր մետրի: Այս դեպքը խից մի քանի բանվորների կյանք:



## ՔՆԴԱՆՈՒԹԻ ԶՈՒՆՈՒՄԸ

Յերեք չարաթիւս մեջ հաղիւմ հնարավոր յեղալ կրկին ամբացնել քարե շարվածքը և շրջանակի քարե պատվարները կրկին նախկին կանոնավոր վիճակին հասցնել: Շնորհիւ ինժեներ Մերչլիզոնի հմտութեան և գործածվող մեքենաների հզորութեան՝ քարաշէն պատը, վորին մեծ վտանգ էր սպառնում, նորից իր բնական ամուր դիրքն ստացալ, և փորման աշխատանքը շարունակվեց:

Դրանից հետո վոչ մի արկած այլևս չխանդարեց գործողութեան ընթացքը և հունիսի 10-ին, Բարբիկենի նշած ժամկետից քսան ուր առաջ, հորն ամբողջովին քարե պատյան հազած, հասնում էր 300 մետր խորութեան:

Նախագահ Բարբիկենը և Թնդանոթային ակումբի անգամները ջերմագին շնորհավորեցին ինժեներ Մերչլիզոնին, այդ հսկա աշխատանքը չտեսնված արագութեամբ ավարտելու համար:

Այս ութ ամիսների ընթացքում Բարբիկենը մի բազմ իսկ չհեռացալ Ստոնհիլլից. փորման աշխատանքներին մոտիկից հետեւելով՝ նա միաժամանակ անընդհատ հող էր տանում բանվորների բարեկեցութեան և առողջութեան վրա. նա բարեբախտ յեղալ, վոր կարողացալ խուսափել այն համաճարակներից, վորոնք սովորական են և այնքան աղետաբեր յերկրագնդի այն գոտիներում, վորոնք յենթակա յեն տրոպիկական վաստաողջ ազդեցութեան:

Ճիշտ է, մի քանի բանվորներ զոհ գնացին այդ վտանգալից աշխատանքին, բայց նման դեպքերում դրանից խուսափել անհնար է:

Ամերիկացիները նման դժբախտ դեպքերն աննշան են համարում: Սակայն Բարբիկենը հակառակ տեսակետ ուներ: Նա աշխատում էր խուսափել դրանցից: Դրա համար էլ հորի փորման ժամանակ պատահած դժբախտ դեպքերի տուժող չանցալ իրենց նախազուգական միջոցներով պարծեցող յեվրոպական յերկրներում նման աշխատանքների ժամանակ պատահած դժբախտ դեպքերի միջին տուժոսից: Այդ յերկրներում յոթանասուն հինգ հազար ուղւրու արժեքի աշխատանքներին ընկնում է մեկ մարդկային կյանք:

Փորման աշխատանքներին զուգընթաց, կոլումբիադի ձուլման նախապատրաստական աշխատանքներն ընթանում էին մեծ թափով: Ստոնհիլլ յեկող մի ոտարական խիստ կղարմանար իր առաջ բացվող տեսարանից:

Հորից մոտ կես կիլոմետր հեռու շրջանաձեւ բարձրացել էին հազար յերկու հարյուր ձուլող հնոցներ, յուրաքանչյուրը յերկու մետր լայնութեան, մեկը մյուսից բաժանված համարյա նույնքան տարածութեամբ: Այս հազար յերկու հարյուր հնոցների շրջանադիւր հասնում էր մոտ չորս կիլոմետրի: Բոլորն էլ կառուցված էին միևնույն ձևով, ունեյին բարձր քառանկյունի ծխնելու յղներ և արտակարգ տալավորութեուն էյին թողնում: Ջ. Տ. Մաստոնը սքանչանում էր այդ կառուցվածքի ճարտարապետական գեղեցկութեան վրա, վոր իրեն հիշեցնում էր Վաշինգտոնի նշանավոր շինութեունները: Նրա համար ավելի գեղեցիկ բան չկար, նույնիսկ Հունաստանում, «թեև այդ յերկրում յերբեք չէր յեղել», — ասում էր նա:

Ընթերցողը կհիշի, վոր յերրորդ նիստում Կոմիտեն վարաչեց կոլումբիադի կառուցման համար գործածել շուգուն և հատկապես մոխրագույն չուգուն: Այս մետաղը ավելի տուժուն է, ավելի շուտ կոմվող, հեշտութեամբ է ձուլվում Կաղապարների մեջ. իսկ յեթե հալեցվի ածխի վրա, կստացվի լավագոյն տեսակի մետաղ՝ թնդանոթների, շոգեշարժ մեքենաների գլանների, ջրային մամուլների համար և այլն: Բայց չուգունը յեթե մի անգամ է ձուլված, բավականաչափ միաձույլ չի լինում և միայն յերկրորդ ձուլումից հետո, հողային վերջին մնացորդներից ազատվելով, բոլորովին գտվում է:

Այսպես, Տամպա քաղաքն ուղարկվելուց առաջ յերկաթահանքը Գորլսպրինգի գործարանների հնոցներում ձուլվում էր ածխի և բարձր աստիճանի շիկացած կայծքարի հետ խառը, հողի ազդեցութեան տակ ածխածնով ներծծվում և վերածվում էր չուգունի: Առաջին գործողութեունից հետո մետաղն ուղարկվում էր Ստոնհիլլ: Սակայն անհրաժեշտ էր փոխադրել վաթ-


ունն հազար տոնն մետաղ, վորը յերկաթուղով փոխադրվելու  
գեղջուճ չափազանց թանգ կլինեն և նյութի արժեքը կիրկնա-  
պատկելի: Ավելի նպատակահարմար եր նյութ-Յորքում շոգե-  
նավեր վարձել և ձողաձել չուգունը նրանով փոխադրել: Այդ  
նպատակի համար պետք յեղավ վարձել յուրաքանչյուրը հա-  
զար տոննանոց վաթսուն ութ շոգենավ:

Այս ամբողջ նախատորմը մայիսի 3-ին նյութ-Յորքից մեկնե-  
լով ամերիկյան ծովեղերով՝ անցավ Բահամայի Նրանցքը,  
մտավ Յուրիզյան հրվանդանը և նույն ամսի 10-ին հասավ Տամ-  
պա քաղաքի նախահանգիստը:

Շոգենավերի բեռը դատարկվեց Ստոնհիլի յերկաթու-  
ղազծի վագոնների վրա, իսկ հունիսին այդ հսկայական քանա-  
կությամբ մետաղը հաղիվ տեղ հասավ:

Հասկանալի չէ, վոր հազար յերկու հարյուր հնոցները  
չտա չեյին այդ վաթսուն հազար տոնն չուգունը միանգամից  
հալեցնելու համար: Հնոցներից յուրաքանչյուրը կարող եր վերց-  
նել հարյուր տասնչորս հազար ֆունտ մետաղ: Նրանք կառուց-  
ված էյին Ռոդմենի թղանոթը ձուլող հնոցների որինակով,  
ունեյին տրապեզի ձել և համեմատաբար ցածր էյին: Կրակա-  
րանը և ծխնելուցը գտնվում էյին հնոցի յերկու ծայրին, այն-  
պես վոր հնոցը տաքանում եր հավասարապես ամբողջ տարա-  
ծության վրա: Այս հնոցները կառուցված էյին հրակայուն աղ-  
բուսից, ունեյին հանքածուխը վառելու մի կասկարա և մի  
պատվանդան, վորի վրա դրվում էյին չուգունի ձողերը: Այդ  
պատվանդանը թեքված եր քսանհինգ աստիճան անկյունով և  
այդպիսով հարձ մետաղը հոսում եր ընդունման ավազանի  
մեջ, այդպիսից ել հազար յերկու հարյուր քարե խողովակների  
միջոցով գնում եր դեպի կենտրոնական հորը:

Քարային և փորման աշխատանքների ավարտման հաջորդ-  
որը Բարբիկենը ձեռնարկեց ներքին կաղապարի կառուցմանը:  
Հորի կենտրոնում և նրա առանցքի ուղղությամբ պետք եր կա-  
ռուցել յերեք հարյուր մետր բարձրությամբ և յերեք մետր  
լայնությամբ մի դլան—ցիլինդր, վորը ճշտությամբ պետք է  
բուներ թղանոթի փողամեջին հատկացված տարածությունը:  
Այդ դլանը պատրաստված եր կավահողի, ավազի, չոր խոտի և  
հարդի խառնուրդից: Կաղապարի և քարե պատերի միջև յեղած



Հազար յերկու հարյուր հնոցներ ժայթում էյին ծխի յեվ բոցի  
հեղեղներ

բաց տարածութիւնը պիտի լցվեր հալած մետաղով, վորը պիտի կազմէր թնդանոթի հողի պատերը յերկու մետր հաստութեամբ:

Գլանը հավասարակշռութեան մեջ պահելու համար պետք յեղավ յերկաթե ողակներով ամրացնել և տեղ-տեղ ել քարե պատերի մեջ ամրացած ձողերով պնդացնել: Թնդանոթի ձուլումից հետո այդ յերկաթե ողակները և ձողերը պիտի մնային մետաղե զանգվածի մեջ, մի բան, վոր վոչ մի վատ հեռանալէր ունենա:

Թնդանոթի ձուլման կաղապարի՝ աշխատանքները սկսվեցին քարային աշխատանքների ավարտման հաջորդ որը: Հուլիսի 3-ին այդ աշխատանքները հաջող կերպով վերջացան: Այժմ մնում էր թնդանոթի ձուլման աշխատանքը, վորը պիտի սկսվէր հետևյալ որը: Այդ առթիւ վորոշվեց ձուլման տոնակատարութիւն սարգել:

— Շատ գեղեցիկ տոն է լինելու, — սասց Մաստոնը Բարբիկենին:

— Այո, բայց կողմնակի մարդիկ չպետք է դան այդ տոնին, — պատասխանեց Բարբիկենը:

— Ի՞նչպէս, մի՞թէ այդ որը շրջափակի դռները բաց չպիտի լինեն բոլորի առաջ, — սասց դարձացած Մաստոնը:

— Այո, Մաստոն: Կոլումբիադի ձուլումը շատ դժուար և նուրբ գործողութիւն է, նույնիսկ վտանգավոր. այնքէ լաւ է, վոր դռնիակ կատարվի: Թնդանոթի արձակման ժամանակ հրապարակային տոն սարգել կարելի չէ, բայց մինչև այդ՝ վոչ:

Նախագահն իրավունք ուներ. ձուլման գործողութիւնը կարող էր առաջացնել անսպասելի վտանգներ, իսկ հո՞՞՞՞րոգմութիւնը կարող էր բարդացնել դրութիւնը, անհրաժեշտ էր պահել շարժումների ազատութիւն: Այդ պատճառով էլ վոչ վոք չընդունվեց շրջափակի մեջ, բացառութեամբ Թնդանոթային ապակումբի կողմից Տամպա-Տաուն յեկած պատգամավորութեան: Այնտեղ էին Բիլսթրին, Թոմ Հընտըրը, գնդապետ Բլոնտրերին, մայոր Ելֆիատոնը, գեներալ Մորդանը և բոլոր նրանք, վորոնց համար կոլումբիադի ձուլումն իսկապես անձնական մի գործ չէր դարձել: Նրանց առաջնորդող Մաստոնը, թնդանոթային ապակումբի հարգելի քարտուղարը, վոչ մի մանրամասնու-

թիւն բաց չթողեց, նրանց տարավ ամեն տեղ՝ պահեստները, արհեստանոցները, մեքենաների բաժինը, ստիպեց, վոր նրանք այցելին բոլոր հազար յերկու հարյուր հնոցները՝ մեկը մյուսի հետեից. հազար յերկու հարյուրերորդին՝ նրանք արդեն բազմապէս հոգնել էին և ծանձրացել:

Ձուլումը պիտի կատարվէր ուղիղ կեսորին: Նախորդ որը բոլոր հնոցները արդեն լցվել էին չուգունի կտորներով, վորոնք դարձված էին միմյանց վրա խաչաձև, վորպէսզի տաք որը նրանց արանքից ազատ անցներ: Առաջնորդանից հազար յերկու հարյուր ծխնելուղներ դուրս էին ժայթքում ծխի և բոցի հեղեղներ և գետինը ցնցվում էր խուլ դղրդոցով: Ինչ քանակութեամբ մետաղ պիտի ձուլվէր, նույն քանակութեամբ էլ հանքածուխ պիտի վառվէր: Ուրեմն վաթսուն ութ հազար տոնն ամուխ: Կարելի չէր յերեակայել, թէ ինչ հսկայական քանակութեամբ սև ծուխ ամպի նման պիտի ծածկէր շրջապէրը:

Շատ չանցած՝ շոգն անտանելի դարձավ հնոցների շուրջը. հսկայական ողափոխ մեքենաներն անվերջ թարմ ոգ էին տալիս և թթվածնով հաղեցնում այդ շիկացած քուրաները:

Ձուլման հաջողութիւնը կախված էր գործողութեան արագութիւնից: Թնդանոթի մի հարված աղդանչան պիտի լինէր, վորպէսզի յուրաքանչյուր հնոց իսկույն ազատ ճամբա տար հալած մետաղին և արագ դատարկվէր:

Այս բոլոր պատրաստութիւններից հետո բանվորներն ու իրենց վարպետները անհամբեր սպասում էին աղղանչանին և ինչ խոսք, վոր հորված էին: Շրջափակի մեջ վոչ վոք չկար, քացի ձուլիչ բանվորներից, վորոնք պատրաստ կանգնել էին հալոցի հոսման խողովակի մոտ:

Բարբիկենը և ընկերակիցները մոտակա մի բլրի վրա կանգնած հեռնում էին գործողութեանը: Նրանց առաջ մի թնդանոթ պատրաստ սպասում էր կրակելուն, հենց վոր ինժեները նշան տար:

Կես որից մի քանի րոպէ առաջ հալած մետաղի առաջին կաթիլները սկսեցին հոսել, ընդունման ավազանները զիչ-զիչ լցվեցին: Յերբ ամբողջ մետաղը բոլորովին հարվեց, մի քանի

բոպե նրան հանդիստ թողին, վորպեսզի կողմնակի նշույթերից  
զավի:

Կես ուրը հնչեց. հանկարծ պայթեց թնդանոթի հարվածը,  
վորը դեղին բոց արձակեց ուղի մեջ: Միանգամից հազար հեր-  
կու հարյուր անցքեր բացվեցին և հազար յերկու հարյուր կրա-  
կե ոճեր սողացին դեպի կենտրոնական հորը, դալարվելով հրա-  
վառ ողակներով: Հասնելով այնտեղ, նրանք ահեղ շառաչյունով  
դահավիժեցին յերեք հարյուր մետր խորության մեջ: Տեսարա-  
նը իսկապես վոր հոյակապ էր և ցնցող:

Հողը դողում էր, յերբ հալած մետաղի կոհակները ծխի  
քուլաներ արձակելով թափվում էին անդնդախոր փոսը. շիկա-  
ցած մետաղը գոլորշիացնում էր կաղապարի ներքին խոնավու-  
թյունը և տաք գոլորշին սոսկալի արագությամբ դուրս ելալով  
քում քարե պատերի ողահան բացվածքից: Այդ թանձր ամպերը  
խառնվելով հնոցների ծխին՝ յեղնում էյին: դեպի գեներթ մինչև  
մի կիլոմետր բարձրությամբ:

Հորիզոնից այն կողմը թափառող հնդիկներին կարող էր  
թվալ, վոր Ֆլորիդայում մի նոր հրաբուխ է ժայթքում:

Սակայն այդ վոչ հրաբուխ էր, վոչ մրրիկ, վոչ ամպրոպ,  
վոչ տարերքի պայքար, վոչ էլ այն դարհուրելի յերևույթ-  
ներից մեկը, վոր բնությունն ընդունակ է առաջացնել: Վաչ-  
մարդն էր, վոր առաջացրել էր այդ կարմրավուն գոլորշին,  
հրաբխի արժանի այդ հսկայական բոցերը, այդ ահավոր  
ղղրղյունները՝ նման յերկրաչարժի ցնցումներին, ուրագաններին  
և փոթորիկների հետ մրցող այդ մոնչյունները. մարդն էր,  
վոր իր ձեռքով բացված անդունդի մեջ դահավիժ թափում էր  
հալած մետաղի մի ամբողջ Նիագարա:

ԿՈԼՈՒՄԲՒՍԻԱԳԸ

Ձուլման գործողությունը հաջողվե՞լ էր արդյոք:

Այդ մասին կարելի չէր միայն յենթադրություններ անել:  
Սակայն ամեն հավանականություն հաջողության՝ կողմն էր,  
վորովհետև կաղապարն ընդունել էր իր մեջ հնոցներում հալ-  
ված ամբողջ մետաղը: Համենայն դեպս յերկար ժամանակ  
անհնար էր ուղղակի ստուգում կատարել:

Յեվ իրոք, յերբ մայր Ռոդամենը ձուլեց հարյուր վաթ-  
սուն հազար Ֆնտանոց թնդանոթը, տասնհինգ որ պետք յեղավ  
սպասել, վորպեսզի սառչի: Իսկ ի՞նչքան ժամանակ էր հար-  
կավոր, վորպեսզի գոլորշու ամպերով ծածկված և բարձր աս-  
տիճանի ջերմությամբ շրջապատված հսկայական կտրում-  
բիաղը կարելի լիներ մոտիկից դիտել: Դժվար էր վորոշել:

Թնդանոթային ահումբի անդամների համբերությունը այս  
յերկար ժամանակամիջոցում խիստ փորձության յենթարկվեց:  
Սակայն ուրիշ ճար չկար: Ջ. Տ. Մաստոնը քիչ էր մնում անձ-  
նագոհությունից մղված վողջ-վողջ խորովել: Ձուլումից  
տասնհինգ որ անց, դեռևս ծխի մի ահագին սյուն յերկինք էր  
բարձրանում և Ստոնսհիլլի դադաթի շուրջը յերկու հարյուր  
մետր շառավիղով, հողը դեռևս այրում էր մարդկանց վտառերը:

Որերն անցնում էյին, շաբաթները միմյանց էյին հաջոր-  
դում: Վոչ մի միջոց չկար սառեցնելու հսկա դլանը: Մոտենալն  
իսկ անհնար էր. պետք էր սպասել. Թնդանոթային ահումբի  
անդամներն անհամբերությունից չզիտեյին ինչ անել:

— Արդեն ոգոստոսի 10-ն է, — ասաց մի առավուտ Ջ. Տ.  
Մաստոնը:— Մինչև դեկտեմբերի 1-ը հաղիվ չորս ամիս է յնա-  
ցել, իսկ մեզ դեռևս մնում է անել ահագին գործ, — հանել ներ-  
քին կաղապարը, հղկել թնդանոթի փողամեջը, լցնել վառողով:  
Պատրաստ կլինե՞ք արդյոք ժամանակին: Դեռ ևս թնդանոթին  
մոտենալ անգամ չենք կարող և ինչպես յերևում է, չի էլ սա-  
ռելու յերբեք: Ի՞նչ դառը հուսախաբուցյուն կլինի:

Իզուր աշխատում էյին հանգստացնել անհամբեր քարտու-  
ղարին: Բարբիկենը վոչ մի խոսք չէր ասում: Բայց նրա լու-

Թյունը ծածկում էր ներքին վրդովմունքը: Կովի վարժված մի մարդու համար չափազանց ծանր էր կանգ առնել այնպիսի մի արդելքի առաջ, վորին միայն ժամանակը կարող է հաղթահարել— ժամանակը, վորը նման դեպքերում վտանգավոր թշնամի յե— և կախված լինել թշնամու կամքից:

Սակայն ամենորյա դիտողությունները հողի դրության մեջ վորոշ փոփոխություն հայտարեցին: Ոգոստոսի 15-ին քարձացող գոլորշիների թանձրությունը զգալի չափով պակասեց: Մի քանի օր հետո գետնից միայն թեթև գոլորշի յեր քարձարանում—քարե զազաղի մեջ արգելափակված հրեշի վերջին շունչը: Քիչ-քիչ գետնի ցեղումները նվազեցին և տաք հողի ողակը փոքրացավ: Դիտողներից ամենահամարձակները սկսեցին մոտենալ հորին, առաջին օրը չորս մետր, հետևյալ օրը մի քիչ ավելի, իսկ ոգոստոսի 22-ին Բարբեկենը, ընկերները և ինժեները կարողացան կանգնել չուգունի ծայրի վրա, վորը հափասարվում էր Ստոնսհիլլի գագաթին:

— Վերջապես, — բացականչեց Թնդանոթային ակումբի նախագահը, թեթև շունչ քաշելով:

Աշխատանքը վերսկսվեց նույն օրն իսկ: Անմիջապես ձեռնարկվեց ներքին կադավարը հանելու գործին, վորպեսզի հնարավոր լիներ Թնդանոթի փողը մաքրել: Քյունդը, մուրճը, ծակիչ գործիքները աշխատում էին անընդհատ: Կավահողն ու ավազահողը ջերմության աղդեցության տակ չափազանց կարծրացել էին, սակայն մեքենաների ոգնությամբ հաջողվեց կադավարի պատերի շփումից դեռ ևս չափազանց տաք այդ խառնուրդը քանդել: Կարծրացած հողի կտորները շոգեշարժ սայլերի միջոցով վերև հանվեցին: Բարբեկենը կարողացավ բարձրացնել բանվորների յեռանդը. նա համոզում էր նրանց, քաջարում, հաճախ գոլարների ոգնության դիմում, պարզեվատրելով լավագույն աշխատողներին. այդ բոլորի շնորհիվ ներքին կադավարի մաքրման հսկայական աշխատանքը ավարտվեց սեպտեմբերի 3-ին:

Իսկույն սկսվեց փողամիջի հղկման գործողությունը: Անմիջապես հաստատվեցին գայլիկոնի մեքենաներն ու հսկա հղկիչներ, վորոնց սուր քերիչները հարթում էին չուգունի անհարթությունները: Մի քանի շաբաթ հետո վիթխարի խողովակի

ներքին մասը դարձել էր բոլորովին դլանած և թնդանոթի փողը մաքուր հղկված էր:

Վերջապես, սեպտեմբերի 22-ին, Բարբեկենի ղեկուցումից դեռ ևս մի տարի չանցած, վիթխարի հրանոթը պատրաստ էր: Մնում էր միայն սպասել Լուսնին և ամեն վոք վստահ էր, վոր նա ճշտապահ կլինի և ժամադրությունից չի ուշանա:

Չ. Տ. Մաստոնի ուրախությանը չափ ու սահման չկար. Քիչ էր մնացե՞լ, վոր նա ընկներ ահռելի փողի մեջ, յերբ կռանալով Թնդանոթի բերանին՝ ուզում էր դիտել ներքը. յեթե չլիներ Բլոմսբերիի աջ բազուկը, վորը այդ պատվարժան զնդապետը բարբախտաբար պահպանել էր պատերազմի ժամանակ, Թնդանոթային ակումբի քարտուղար պիտի կորչեր անդնդախոր կոլումբիադում:

Թնդանոթն ուրեմն լիովին պատրաստ էր, այլևս կասկած չկար, վոր ձուլումը կատարվել է միանգամայն հաջող: Հոկտեմբերի 6-ին կապիտան Նիկոլը Բարբեկենի հետ կնքած դրազի առաջին կետը կատարեց և Թնդանոթային ակումբի նախագահը իր հաշվեդրքի մուտքի բաժնում արձանագրեց յերկու հազար գոլլարի գումարը: Կարելի յեր յերեվակայել կապիտանի բարկության չափը. ասում էյին, վոր նա նույնիսկ գայրույթից հիվանդացել է: Սակայն դեռևս մնում էին դրազի յերեք պայմանները, յերեք հազար, չորս հազար և հինգ հազար գոլլարանոց. յեթե Նիկոլը նրանցից գոնե յերկուսը շահեր, գործերը յեթե վոչ շատ լավ, համենայն դեպս, վատ չէյին լինի:

Սակայն դրամն այնքան կարևոր չէր նրա համար. հակառակորդի հաղթանակը, այնպիսի մի Թնդանոթի ձուլումը, վորի առաջ չպիտի դիմանային տասնյակ մետր հաստությամբ մետաղե դրահներ, այդ էր, վոր նրան սոսկալի հարված էր տալիս:

Սեպտեմբերի 23-ից սկսած, Ստոնսհիլլի շրջափակը լայնորեն բացվեց հասարակության առաջ. հեշտ և պատկերացնել, թե ինչպիսի խուռն բազմություն էր դիմում այնտեղ:

Միացյալ Նահանգների չորս կողմից անթիվ հետաքրքիրներ շտապում էին դեպի Ֆլորիդա: Այդ մի տարվա ընթացքում Տամպա քաղաքն այնքան մեծացել էր, վոր այդ միջոցին արգեն հարյուր հիսուն հազար բնակիչ ուներ: Նոր թաղամասեր, նոր հրապարակներ, բազմաթիվ նոր տներ էյին գոյացել առաջ-

վա ամայի ծովափի վրա, Ֆլորիդայի ջերմ արևի տակ: Ընկե-  
րություններ եյին կազմվել կառուցելու համար դպրոցներ,  
յեկեղեցիներ, մասնավոր բնակելի շենքեր ու մի տարուց պակաս  
ժամանակամիջոցում քաղաքի բռնած տարածությունը տասնա-  
պատկվել էր:

Հայտնի յե, վոր յանկիրներն առևտրական են ծնվում: Ուր  
վոր բախտը նրանց նետում է, բեյեռային յերկրներից սկսած  
մինչև արևադարձային յերկրները, նրանց գործաւնյա բնավո-  
րությունը ի հայտ է գալիս: Այդ պատճառով էլ, պարզապէս  
հետաքրքրության համար Թնդանոթային աղումքի աշխատանք-  
ները դիտելու նպատակով Ֆլորիդա յեկած մարդկանցից շատե-  
րը հենց վոր Տամպա հասան, սկսեցին դրապիւլ առևտրական  
գործերով: Նյութեղենների և բանվորների փոխադրության հա-  
մար վարձված բազմաթիւ նավերը նավահանգստին անորինակ  
աշխուժություն եյին տվել: Ծուռով յերևացին ամեն տեսակի  
փոքր և մեծ շոգենավեր, առագաստանավեր, բեռնավորված  
մթերքով և գանազան ապրանքներով: Քաղաքում հիմնվեցին  
բազմաթիւ առևտրական տներ և միջնորդների գրասենյակներ,  
«Նավային լրատու» թերթն ամեն որ հաղորդում էր Տամպայի  
նավահանգիստը ժամանած նոր նավերի մասին:

Աշխուժացավ վոչ միայն Տամպա քաղաքը, այլև Ֆլորիդայի  
գգալի մասը: Յամաքային հաղորդակցության ճանապարհները  
քաղաքը կապեցին չրջակայքի հետ: Մի նոր յերկաթուղազիծ  
Տամպա քաղաքը միացրեց յերկաթուղային<sup>1)</sup> ցանցին: Այսպիսով  
Բարբիկենի ձեռնարկի շնորհիւ, վորն դադարիւրը ծագել էր նրա  
ուղեղում մի գեղեցիկ որ, ինչպէս նաև ամերիկյան հզոր տեխ-  
նիկայի ոգնությամբ, գավառական հետ ընկած Տամպա քաղաքը  
դարձավ խոշոր կենտրոն: Նրան անվանեցին «Լուսնի քաղաք»,  
վորը խավարեցրեց Ֆլորիդայի պաշտոնական մայրաքաղաքը<sup>2)</sup>:  
Տեղի ունեցավ «այդ մայրաքաղաքի լիակատար խավարումը,  
վորը տեսանելի յեր աշխարհի բոլոր կետերից»:

Այս բոլորից հետո շատ հասկանալի յե, թե ինչու համար  
այնքան մեծ լեր մրցումը Տեխասի և Ֆլորիդայի միջև և ինչու

համար տեխասցիները այնքան վրդովվեցին, յերբ Ֆլորիդային  
նախապատվություն արվեց և իրենք զրկվեցին ապագայի մեծ  
հույսերից: Իրենց կանխատեսությամբ նրանք գուշակել էյին,  
թե ինչեր կարող էր շահել մի յերկիր Բարբիկենի շնորհիւ:  
Յերբ վորոշվեց թնդանոթը ձուլել Ֆլորիդայում, Տեխասն այդ-  
պիսով կորցրեց մի խոշոր առևտրական կենտրոն, յերկաթու-  
ղիներ և բնակչության մեծ աճում: Այս բոլոր առավելություն-  
ներն այժմ պատկանում էյին Ֆլորիդայն խեղճ ու կրակ թե-  
րակողուն, վորը հրվանդանի նման պառկած էր Մեքսիկյան ծո-  
վածոցի և Ատլանտյան ովկիանոսի ալիքների միջև: Ահա թե  
ինչու Տեխասում Բարբիկենի անունն ատելի յե դարձել նույն-  
քան, ինչքան Տեխասի նախկին կեղեքող և թշնամի գեներալ  
Սանտա-Աննայի անունը:

Սակայն Տամպա քաղաքի նոր բնակչութունը, չնայած իր  
առևտրական և արդյունաբերական տեղադրին գործունեյու-  
թյանը, չմոռացավ հետևել Թնդանոթային աղումքի աշխատանք-  
ների ընթացքին. ընդհակառակը, ձեռնարկի ամենափոքր մասն-  
րամանությունները, քրունդի ամենաթեթև հարվածն իսկ նրան  
հետաքրքրում էյին: Քաղաքի և Ստոնհիլի միջև տեղի յեթ  
ուներնում անվերջ յերթեվեկություն, կարելի յեր ասել՝ մի ուխ-  
տադնացություն:

Արդեն կարելի յեր նախատեսել, վոր փորձի կատարման որը  
հանդիսատեսների թիվը միլիոնների պիտի հասնեո, վորովհետև  
այժմվանից արդեն աշխարհի բոլոր կողմերից գալիս հավաքվում  
էյին այդ նեղլիկ թերակղզու վրա: Յեւրոպան Ամերիկա յեր  
գաղթում:

Սակայն պետք է ասել, վոր մինչև այդ որը բազմաթիւ  
յեկվորների հետաքրքրությունը կիսով չափ էր միայն բա-  
վարարված: Ծատերն էյին ցանկանում դիտել ձուլման գործո-  
ղությունը, բայց միայն նրա ծուխը տեսան: Այդ ի հարկե քիչ  
էր նրանց անհաղ աչքերի համար, սակայն Բարբիկենը վոչ վոքի  
չթողեց ներկա լինել այդ գործողությանը, մի բան, վոր նախա-  
դահի դեմ առաջացրեց բողոք, տրտունջներ դժգոհություն.  
սկսեցին նրան անվանարկել, անվանել ինքնիշխան, ու նրա վար-  
մունքը «վոչ ամերիկյան»: Համարյա խռովություն ծագեց  
Ստոնհիլի ցանկապատերի առաջ: Բարբիկենն ի հարկե ան-  
դրդվելի մնաց իր վորոշման մեջ:

1) Ֆլորիդայի մայրաքաղաքն է Տալահասի քաղաքը: Ծան. խմբ.

Բայց յերբ կոլումբիազի կառուցումը բոլորովին վերջացավ, ալլես իմաստ չուներ դռները փակել, նույնիսկ մեծ անխոհեմուլթյուն կլիներ հասարակական կարծիքն արհամարհել: Ուստի Բարբիկենը դռները լայն բաց արեց բոլորի առաջ, սակայն վորպես գործնական մտքի տեր մարդ, նա վորոշեց ոգտվել հասարակության հետաքրքրությունից:

Ի հարկե քիչ բան չէր դիտել հսկայական կոլումբիազը, սակայն իջնել նրա խորքը— ահա թե ինչն էր ամերիկացիների համար յերջանկության դադաթնակետը: Չկար մի հետաքրքրվող, չէր չչցանկանար դիտել այդ մետաղե անդունդի խորքը: Շուգեշարժ վերամբարձից կախված փոխադրիչների միջոցով այցելուները հնարավորություն ունեցան իջնել մինչև հատակը և գոհացնել իրենց հետաքրքրությունը: Չտեսնված բան էր. կանայք, յերեխաներ, ծերունիներ հերթի կանգնած՝ բոլորն էլ պարոք ելին համարում ծանոթանալ հսկայական թնդանոթի բոլոր դադանիքներին: Իջնելու արժեքը նշանակվեց հինգ դոլլար յուրաքանչյուրի համար և, չնայած այդ բարձր գնին, յերկու ամիս շարունակ, մինչև փակման օրը, թնդանոթային ակումբը այցելուների մուտքի արժեքից գանձեց մոտավորապես հինգ հարյուր հազար դոլլար:

Ավելորդ է ասել, վոր կոլումբիազի առաջին այցելուները յեղան թնդանոթային ակումբի անդամները. մի պատիվ, վորին իսկապես արժանի յեր այդ հռչակագիր անունը: Այդ հանդիսավորությունը կատարվեց սեպտեմբերի 25-ին: Առաջին պատվավոր սայլակը կոլումբիազի խորքն իջեցրեց նախագահ Բարբիկենին, Ջ. Տ. Մաստոնին, մայր Ելֆիստոնին, գեներալ Մորգանին, գնդապետ Բլոմսբերին, ինժեներ Մերչիգոնին և ակումբի մյուս հայտնի անդամներին, ընդամենը տասը հոգի: Դեռևս շատ տաք էր մետաղյա այդ յերկար խողովակի խորքում: Ողը խեղդող էր միքիչ, բայց ի՛նչ հրճվանք, ի՛նչ վոզելվորություն: Տասը հոգու համար մի սեղան էր պատրաստվել այն քարահատակի վրա, վորին հենվել էր կոլումբիազը. սեղանը լուսավորված էր ելեկտրական լույսով: Բազմատեսակ համեղ կերակուրներ, կարծես յերկնքից իջած, միմյանց ելին հաջորդում. յերեք հարյուր մետր խորության մեջ սարքված



Կենացներ ելին առաջարկվում իրար հետսկից

այս շքեղ խնճուղիքին վողեորութունն եր տալիս Փրանսիական ընտիր գինին:

Խնջուղը չարագանց աշխույժ և նույնիսկ աղմկալից յեղավ. կենացներ առաջարկեցին ի պատիւ յերկրագնդի, նրա արքանյակի, Միացյալ Նահանգների, Լուսնի, անլանելով նրան խարոյաջ գեղեցկուհի Ֆերե, Դիանա աստվածուհի, Գիշերային լուսատու, «յերկնքի խաղաղ սուրհանդակ»: Բոլոր այդ «ուռաները», ուժեղանալով հսկայական մետաղե խողովակի հնչյունահան ալիքներով, վորոտաձայն բարձրանում էին վերև և Ստոնսհիլլի շուրջը հավաքված բազմութունը սրտանց ձայնակցում եր վիթխարի կոյոււմբիազի խորքում ուրախացող սեղանակիցներին:

Ջ. Տ. Մաստոնը ինքը իրեն կորցրել էր. դժվար եր վորոշել, թե նա ավելի շատ գոռո՞ւմ եր, թե ձեռները շարժում, ավելի խմո՞ւմ եր, թե ուտում: Համենայն դեպս՝ նա իր տեղը չեր փոխի մի ամբողջ պետութեան հետ, յեթե նույնիսկ այդ բոսկիին թնդանոթը լցնէին և կրակէին, նրա կտորները չպրակելով միջոլորակային տարածութեան մեջ:

ԳԼՈՒԽ XVI

Մ Ի Շ Ե Ռ Ա Գ Ի Ր

Թնդանոթային ակումբի ձեռնարկած գլխավոր աշխատանքները կարելի յեր վերջացած համարել և սակայն դեռ ևս յերկու ամիս եր մնում, մինչև վոր ուղեւորն արձակվեր դեպի Լուսին: Այդ յերկու ամիսը բոլորի համար տարիների չափ յերկար եր թվում: Մինչ այդ, գործի ամենափոքր մանրամասնութուններն իսկ հաղորդվում էին թերթերում և ընթերցողի կողմից ազահորեն կրանվում: Սակայն այժմ յերկյուղ կար, վոր հասարակութեան հետաքրքրութունը մեծ չափով կարող եր նվազել և շատերը վախենում էին, վոր կզրկվեն թնդանոթի մասին ամեն ոք հաղորդվող նորութուններից:

Սակայն այդպես չեղավ: Արտասովոր, անսպասելի, անհավատալի և անհավանական մի դեպք յեկավ կրկին հուզելու հա-

սարակութեան մտքերը և արթնացնելու ամբողջ աշխարհի հետաքրքրութունը:

Մի ոք, սեպտեմբերի 30-ին, յերեկոյան ժամը 3-ից քառասուն բոսկե անց, Վալենցիայի (Իրլանդիա), Նյու-Պատուդլենդի և Ամերիկայի ցամաքամասի միջև հաստատված ընդծովյա հեռագրաթելի միջոցով հաղորդված մի հեռագիր հասավ Բարբիկենին:

Նախագահը հեռագիրը բաց անելով կարդաց. ինչքան ել վոր այդ մարդը իչխում եր ինքն իր վրա, նրա շրթունքները դժգունեցին, աչքերը սղտորվեցին հեռագրի քսան բառերի ընթերցումից:

Ահա պատճենն այդ հեռագրի, վորն այժմ գտնվում է Թնդանոթային ակումբի արխիվում.

«Ֆրանսիա—Փարիզ  
Սեպտեմբերի 30-ին, առաւոտ ժ. 4-ին  
Բարբիկենին, Տամպա—Ֆլորիդա  
Միացյալ Նահանգներ

Գնդաձեւ ուղեւոր փոխարինեցեք գլխաւոր-կոնսուլ արկով: Երթնով կթռչեմ: Մեկնում եմ «Ատլանտա» շոգենավով:  
Միչել Արդան»

ԳԼՈՒԽ XVII

„ԱՏԼԱՆՏԱ“-ՅԻ ՈՒՂԵՎՈՐԸ

Յեթե այս շանթահարիչ լուրը, փոխանակ հեռագրական բարերի վրայով սուբալու, պարզապես փոստի փակ ծրարով յեկած լիներ, յեթե Ֆրանսիայի, Իրլանդիայի, Նյու-Պատուդլենդի և Ամերիկայի հեռագրական պաշտոնյաներին հայտնի չլիներ այդ հեռագրի բովանդակութունը, Բարբիկենը մի բոսկե անգամ չէր վարանի: Նա կլուեր այդ մասին՝ իր գործը չվարկաբեկելու համար: Այս հեռագրի տակ կարող եր մի խաբէյութուն թաղնված լինել, մանավանդ վոր հեռագրողը Փրանսիացի յեր: Ո՞վ կհավատար, վոր մի մարդ կարող եր այնքան հանդուգն լինել այդպիսի մի միտք հղանալու համար, —այսինքն՝ նստել արկի մեջ և



Թուչել դեպի Լուսին: Յեթե նույնիսկ այդպիսի մարդը գոյութիւն ուներ, մի՞թե խելագարի մեկը չեր, վորին պետք է վազել գժանոցում և վոչ թե արկի մեջ:

Սակայն հեռադիրն արդեն շատերին ծանոթ էր, քանի վոր հեռագրական պաշտոնյաներն այնքան էլ դադանապահ չէին: Կարելի չէր վստահ լինել, վոր Միչել Արզանի առաջարկն այժմ արդեն չըջում է Միացյալ Նահանգների բոլոր նահանգները, հետևապէս Բարրիկէնը չէր կարող լուել: Նա խելույն հավաքեց Թնդանոթային ակումբի՝ Տամպա քաղաքում գտնվող բոլոր անդամներին և առանց իր կարծիքը հայտնելու, առանց քննելու, թե այդ հեռագիրն ինչքան արժանի յե վստահութեան ստանաբարութեամբ կարգաց հեռագրի կարճ բովանդակութեանը:

- Անհնար է:
- Անհավատալի յե:
- Պարզապէս կատակ է:
- Մեզ ծաղրում են:
- Ծիծաղելի յե:
- Անմիտ բան է:

Մի խոսքով, այն բոլոր բառերը, վորոնք արտահայտում են կասկած, թերահավատութիւն, հիմարութիւն, խելագարութիւն, մեղադրանք— լավեցին ամեն կողմից: Վոմանք ժպտում էին, մյուսները ծիծաղում, ուսերը թոթվում, շատերն ուղղակի զբոսում, ամեն մեկը նայած իր բնավորութեան:

Միայն Ջ. Տ. Մաստոնն էր, վոր այլ կերպ վարվեց. նա մի նշանավոր խոսք ասաց.

- Բայց դա մի միտք է, սքանչելի միտք:
- Այո, ճշմարիտ է, — պատասխանեց մայրը, — բայց յեթե յերբեմն ներելի յե այդպիսի մտքեր հղանալ, այն պայմանով միայն, վոր նույնիսկ չպետք է մտածել նրանց իրագործման մասին:

— Իսկ ինչո՞ւ վոչ, — պատասխանեց Թնդանոթային ակումբի տաքարյուն քարտուղարը, վորը պատրաստ էր վիճարանելու: Սակայն չուղեցին նրան ավելի առաջ մղել:

Բայց Միչել Արզանի անունն արդեն բերնից-բերան էր անցնում Տամպա քաղաքում: Յեկվորները, տեղացիներն իրար յերես էյին նայում, հարց ու փորձ անում, ծաղրում, վոչ թե այդ

յեկվորպացուն— մի առասպելական և մտացածին էյակ— այլ Ջ. Տ. Մաստոնն, վորը հավատացել էր այդ Փանտաստիկ մարդու գոյութեանը: Յերբ Բարրիկէնն առաջարկեց մի ումբ արձակել դեպի Լուսին, ամեն մարդ ընդունեց, վոր այդ առաջարկը բնական, գործադրելի և թնդանոթածագութեան արվեստին վերաբերող մի գործ էր: Ինչ վերաբերում է այն բանին, վոր մի բանական մարդ առաջարկեր նստել ումբի մեջ և կատարել այդ արտակարգ, զարմանալի ճամբորդութեանը, այդ արդեն Փանտաստիկ առաջարկ էր, կատակ, նույնիսկ ցնդարանութիւն:

Ծաղրանքը և հանաքները շարունակվեցին մինչև յերեկո առանց դադարելու և կարելի չէր պնդել, վոր ամբողջ Միացյալ Նահանգները բռնվեցին մի խենթ ծիծաղով, մի բան, վոր սովորական չէ այն յերկրի համար, վորտեղ նույնիսկ անհնարին ձեռնարկները հեշտութեամբ գտնում են համակիրներ, գովաբանողներ, կողմնակիցներ:

Սակայն Միչել Արզանի առաջարկն, ինչպէս ամեն մի նոր դադափար, շատերի միտքը խուլել էր: Մարդիկ սկսեցին մտածել այդ տարրինակ գեպը մասին: Ինչքան դադափարներ է ծրագրեր, վորոնք նախապէս անիրագործելի յեն համարված, հետագայում իրականութիւն են դարձել: Ինչո՞ւ ուրեմն այդ ճամբորդութեանն էլ մի որ իրականութիւն չի կարող դառնալ: Բայց մյուս կողմից մարդիկ չէին կասկածում, վոր այդ ձեկվով իր անձը վտանգի յենթարկել ցանկացող մարդը մի խելագար է պարզապէս, քանի վոր չէր կարելի լուրջ վերաբերմունքով նենալ դեպի այդ առաջարկը. ավելի լավ կաներ, յեթե լուր, ն թե նման անհեթեթ բարբառանքներով ալեկոծեր մի ամբողջ յերկիր:

Բայց դեռ ևս հարց էր, թե այդ անձնավորութեանն իսկապէս գոյութիւն ունե՞ր, թե վոչ: Այդ անունը «Միչել Արզան» անձանոթ չէր Ամերիկայում: Այդ մի յեկվորպացու անուն էր, վորը հայտնի յեր իր հանդուգն գործերով: Բացի այդ, Ատլանտյանի խորքերից յեկած այդ հեռագիրը, շոգենավի անունը, վորով ճամբորդում էր այդ Փրանսիացին, մոտ ապագայում հասնելու լուրը, բոլոր այս պարագաները նրա առաջարկին տալիս էյին վորոշ հավանականութիւն: Ծատ չանցած, առանձին անհասաներ հավաքվեցին, խմբերը միացան հետաքրքրութեանից

մղված և կազմվեց մի հոծ բազմութիւն, վորն ուղղվեց դեպի Թնդանութային ակումբի նախագահի բնակարանը:

Բարբիկենը մինչ այդ դեռևս վոչ մի կարծիք չէր հայտնում: Նա անտարբեր եր մնացել դեպի Ջ. Տ. Մաստոնի կարծիքը, առանց հավանութիւն տալու կամ ժխտելու: Մի կողմ էր քաշվել և վորոշել էր սպասել դեպքերի ընթացքին. սակայն նա հաշվի չէր առել հասարակութեան անհամբուրութիւնը. դրա համար էլ նրան դուր չէկալ Տամպայի բնակչութեան՝ իր տան պատահանների տակ հավաքվելը: Շատ չանցած, բողոքները և սղաղակները ստիպեցին նրան դուրս գալ: Պարզ եր, վոր հոչա-կալոր մարդու պարտականութիւնների հետ միասին նա յեն-թարկվում էր նաև դրա բոլոր ղեկավարութիւններին:

Վերջապես նա յերեկաց տիրեց լուսթիւն. քաղաքացիներից մեկը խոսք վերցնելով, պարզապես հետևյալ հարցը տվեց նրան. — «Հեռագրի մեջ հիշված Միշել Արդան անունով մարդն արդեն մեկնե՞լ է Ամերիկա, թե վոչ»:

— Պարոններ, — պատասխանեց Բարբիկենը, — յես էլ ձեզանից ավելի բան չգիտեմ:

— Պետք է գիտենալ, — բացականչեցին անհամբուր ձայներ:

— Ժամանակը մեզ կիմացնի, — պատասխանեց նախագահը սառնութեամբ:

— Ժամանակն իրավունք չունի մի ամբողջ յերկիր անորոշութեան մեջ պահելու, — շարունակեց առաջին ճառախօսը:

— Փոխեցի՞ք ումբի ձեզն աշխատես, ինչպես առաջարկում է հեռագիրը:

— Դեռ վոչ, — պատասխանեց Բարբիկենը, — սակայն դուք իրավացի յեք, պետք է իմանալ մանրամասնութիւնները. այն հեռագրատունը, վոր այս բոլոր հուզումների պատճառ յեղավ, այժմ թող լրացնի իր տեղեկութիւնները:

— Դեպի հեռագրատուն, դեպի հեռագրատուն, — բացականչեց բազմութիւնը:

Բարբիկենը ցած իջավ և խուռն բազութիւնն առաջն անցած՝ դիմեց դեպի հեռագրատուն:

Մի քանի րոպեից հետո մի հեռագիր ուղարկվեց Լիվերպուլի նավային միջնորդների ընկերութեան ավագին: Այդ հեռագրով պահանջվում էր հետևյալ հարցերի պատասխանը.

«Ի՞նչ նալ է «Ատլանտա»-ն:

Յե՞րբ է մեկնել Յելրոպայից:

Այդ շոգենավի վրա կա՞ Միշել Արդան անունով մի Փրանսիացի»:

Յերկու ժամ հետո Բարբիկենը ստացավ տեղեկութիւններ այնպիսի ճշտութեամբ, վորոնք այլևս վոչ մի կասկած չէին թողնում:

«Ատլանտա» շոգենավը Լիվերպուլից մեկնել է հոկտեմբերի 2-ին Տամպա քաղաքի ուղղութեամբ. շոգենավի վրա գտնվում է մի Փրանսիացի, վորն ուղեւորների գրքում արձանագրվել է Միշել Արդան անունով:

Առաջին հեռագրի այս ձևով հաստատվելուց Բարբիկենի աչքերը հանկարծ բոցալաւվեցին, նրա բունցքը ուժեղ կերպով սեղմվեց և զայրույթից շշնջաց:

— Ուրեմն ճիշտ է, ուրեմն հնարավոր է. այդ Փրանսիացին պոյութիւն ունի և տասնհինգ որ հետո այստեղ պիտի լինի: Իայց այդ մարդը խելագար է, ցնցված ուղեղով... Յերբեք չեմ համաձայնի...

Իայց և այնպես նույն յերեկո նա Բրեդվիլ և Ընկ. գործարանին մի նամակ գրեց, խնդրելով, վոր ումբի ձուլումը հետաձգեն մինչև նոր կարգադրութիւն:

Այժմ ի՛նչպես նկարագրել այն հուզումը, վոր տիրեց ամբողջ Ամերիկային, թե ինչպես Բարբիկենի գեղուցման ազդեցութիւնը տասնապատիկ դերազանցվեց, թե ինչ գրեցին Միացյալ Նահանգների թերթերը, ինչպես ընդունեցին այդ լուրը, և ինչ յեղանակներով յերգեցին հին աշխարհից հասնող այդ հերոսին. ի՛նչպես նկարագրել այն տենդային վոզևորութիւնը, վորով համակվեց ամեն մարդ, հաշվելով ժամերը, րոպեները, վայրկյանները, ի՛նչպես գաղափար տալ, նույնիսկ ամենաթեթև կերպով, բոլոր ուղեղները տանջող այդ սեվեռուն գաղափարի մասին, ի՛նչպես ցույց տալ այն բոլոր փոփոխութիւնները, իրարանցումը, վոր առաջ յեկան մարդկանց կյանքում, ի՛նչպես աշխատանքը կանգ առավ, առևտուրը դադարեց, մեկնելու պատրաստ շոգենավերը մնացին խարխած նավահանդատում «Ատլանտա»-յի ժամանումին ներկա գտնվելու համար, ի՛նչպես գնացքները գալիս ելին լեփ-լեցուն և վերադառնում դատարկ, ի՛նչպես Եսպիրիտո-Սանտո ծովածոցն էլին

մտնում բոլոր տեսակի շոգենավեր, դրոսանավեր, առաջատա-  
նավեր, ինչպես հաշվել այն հազարավոր հետաքրքիրներին, վո-  
րոնք տասնհինգ որվա ընթացքում քառասյակեցին Տամպա  
քաղաքի բնակչությունը և ստիպեցին ապրել քաղաքից դուրս  
վրանների տակ, ճամբարում գտնվող բանակի նման: Նկարագրել  
այս ամենը վեր ե մարդկային ուժից և այն ձեռնարկել անհնար  
ե առանց հանդուժման:

Հոկտեմբերի 20-ին, առավոտյան ժամի իննին, Բահամայի  
Ջրանցքի սեմաֆորներն ազդանշանեցին, վոր հորիզոնի վրա  
յերևում ե թանձր ծուխ: Յերկու ժամ հետո մի մեծ շոգենավ  
այդ սեմաֆորների հետ ազդանշաններ փոխանակեց: Իսկույն  
«Ատլանտա»-յի անունը հաղորդվեց Տամպա քաղաքին:

Ժամի չորսին անգլիական շոգենավը մտնում եր Եոպլերիտո-  
Սանտո ծովածոցը, ժամի հնգին շոգեսլինդ անցնում եր Հիլիո-  
բորո նավակայանը, ժամի վեցին խարխսկ եր ձգում Տամպայի  
նավահանգստում:

Դեռևս շոգենավի խարխսլը ծովի հասակին չեք դիպել,  
յերբ «Ատլանտան» շրջապատվեց հինգ հարյուր մակուկներով,  
վորոնք բառի բուն իմաստով հարձակման յենթարկեցին նրան:  
Բարբիկենը առաջինն ինքը բարձրացավ շոգենավի վրա և իզուր  
ջանալով իրեն զսպել, հուզված ձայնով բացականչեց.

— Միշե Արդան:

— Ներկա՛, — բացականչեց նավի վերին տախտակամածի  
վրա կանգնած մի մարդ:

Բարբիկենը թևերը խաչածեղծ, հարցաքննող հայացքով  
ուշադիր նայում եր «Ատլանտա»-յի ուղեվորին:

Դա քառասուն յերկու տարեկան, բարձրահասակ, բայց ար-  
դեն մի քիչ կուցած մարդ եր, նման այն կարիատիղներին, վո-  
րոնք իրենց ուսերի վրա պատշգամբներ են կրում: Նրա խոչոր  
դուլիսը ծածկված եր կրակի գույնի առատ մազերով, վոր նա  
ցնցում եր առյուծի բաշի պես: Կարճ յերեսը քունքերի մոտ  
լայնացած, կառվի նմանող ցից բեխերով, այտերի վրա դեղ-  
նադույն աղվամազերով, կլոր, մի քիչ մոլորուն, կարճատես աչ-  
քերը նրա դեմքին տալիս էյին ինչ վոր գիշատիչ կառվային  
արտահայտություն: Սակայն քթի հանդուզն գլծը, շրթունքնե-  
րի բարի արտահայտությունը, բարձր ճակատը, կնճիռներու՛

ակոսված, խոսքան չմնացած դաշտի նման, վկայում էյին նրա  
լավագույն հատկությունների մասին: Վերջապես խիտ գար-  
գացած իրանը, ամուր և ուղիղ հենված յերկար սրունքների  
վրա, դրեղ լծակների նմանող ուժեղ մկանտո թևերը, վճռական  
բայվածքը իրավունք էյին տալիս ասելու, վոր այդ պնդակազմ  
յեվրոսացին «ավելի շուտ կուրված եր, քան թե ձուլված», ինչ-  
պես կասեյին մեծաղաղործները:

«Ատլանտա»-յի ուղեվորի արտաքին կերպարանքի նկարա-  
դրությունը վերջացնելու համար պետք ե նշել նրա լայնարձակ  
հագուստը. նրա անդրավարտիկն ու վերարկուն այնքան լայն  
էյին կարված, վոր Միշե Արդանը ինքն իրեն անվանում եր  
«կտորի մահ»: փողկապը թույլ, շապկի ոճիքը բաց— վորի տա-  
կից յերևում եր նրա կորովի պարանոցը— շարունակ չկոճկված  
թեւնոցները, վորոնց միջից յերկարում էյին տենդոտ մատներով  
ձեռքերը: Զգում էյիր, վոր նույնիսկ ամենասաստիկ ցրտի և  
փտանդի ժամանակ այդ մարդը յերբեք չի դողում:

Շոգենավի տախտակամածի վրա, բազմության մեջ, մարդը  
գնում— դալիս եր առանց մի բոպե կանգ առնելու, «խարխսլների  
վրա քարշ գալով», ինչպես ասում էյին նավաստիները. նա աչ-  
խուժորեն շարժում եր ձեռները, ամենքի հետ խոսում «դու»-ով  
և ջղայնությամբ կրճում յեղունգները: Վերջապես դա մի տա-  
րորինակ էյակ եր, վորի նմանը բնությունը ստեղծում և զմա-  
հաճ մի բոպեյում և հետո ել իսկույն կաղապարը կտորում:

Միշե Արդանի անձնավորությունն ուսումնասիրողի հա-  
մար հետազոտության մի ընդարձակ դաշտ եր ներկայացնում:  
Այդ դարձանալի մարդն ապրում եր ծայրահեղությունների բնա-  
զավառում, ամեն ինչ չափազանցելու տրամադրություններ, իրերը  
նրա աչքի ցանցի վրա նկարվում էյին անսովոր չափերով:  
Նա ամեն ինչ մեծացած եր տեսնում, բացի դժվարություններից  
և մարդկանցից:

Մի խոսքով՝ նա հարուստ բնավորության տեր եր: Բնազդով  
արվեստագետ, սրամիտ, նուրբ բանալիճող, վորը կրակում եր  
դիպուկ խոսքերով: Վիճարանությունների ժամանակ քիչ եր  
մտածում տրամարանություն մասին, թշնամի յեր ճոռոմարա-  
նություն, բայց ուներ իրեն հատուկ հարվածները, վորոնք խը-

վում էյին ուղիղ կրծքին. նա սիրում էր ժանիքներով պաշտպանել ամենազգվար, գրեթե անհույս դրույթները:

Ուրիշ տարրերնակություններն հետ միասին, նա ինքն իրեն հայտարարում էր «վսեմ տգետ», ինչպես Շեքսպիրը, և վորոշել էր արհամարհել զխանականներին: Մի խոսքով խակական մի գնչու, վոր թափառում և հրաշալիքների աշխարհում, արկածասեր, բայց վոչ արկածախնդիր:

Նա միշտ պատրաստ էր կյանքը զոհելու գործի հաջողության համար, շարունակ նետվում էր ամենազգվար և վտանգավոր ձեռնարկությունների մեջ, պատրաստ էր այրելու իր նավերը, միշտ յենթարկվում էր իր կողերը ջարդելու վտանգին, սակայն միշտ էլ վտառի յեր կանգնում, ինչպես այն խաղալիքը, վորը յեթե շուռ տաս, էլի կկանգնի:

Մի խոսքով նրա նշանաբանն էր՝ «ամեն զնով հասնել նպատակին»: Անհնար բաներն իրագործելու տենչը նրա բնավորության գլխավոր գիծն էր:

Բայց այս ձեռներեց մարդն ուներ նաև պակասություններով սխիլ չի անում, նա վոչինչ չի շահում. Արդանը հաճախ սխիլ էր անում, բայց նյութապես վոչինչ չէր շահում: Նա դրամը վատնում էր անհաշիվ, խիստ անշահախնդիր էր և նույնքան բարեսիրտ, վորքան տաքարյուն և հանդուգն, պատրաստ ոգնելու ամենքին, նույնսիկ ծախելու ինքնիրեն վորպես ստրուկ՝ մի ստրուկի ազատելու համար: Վեհանձն էր և անհիշաչար:

Փրանսիայում և Յեվրոպայում ամեն մարդ ճանաչում էր այդ վայրուն և անհանդիստ մարդուն: Նա շարունակ ստիպում էր, վոր իր մասին խոսեն և գրեն թերթերում: Ապակե տան մեջ ապրողի նման, նրա կյանքի բոլոր զաղանիքները ծանոթ էյին ամբողջ աշխարհին: Բարեկամների հետ միասին նա ուներ նաև թշնամիների հրաշալի մի ժողովածու այն մարդկանցից, վորոնց նա վիրավորել, անխնա դուրել էր, իր նպատակին հասնելու համար. բազմության մեջ ճամբա բանալու նպատակով:

Սակայն ընդհանրապես նրան սիրում էյին. նրա հետ վարվում էյին ինչպես յերես առած տղայի հետ: Հաշտվում էյին նրա սարորինակությունների հետ: Ամեն մարդ հետաքրքրվում էր

նրա խիզախ ձեռնարկներով և նրանց հետևում մտատանջ հայացքով: Ամենքն էլ գլխոյին, թե ինչ աստիճանի անխոհեմ և հանդուգն էր նա: Յերբ մի վորևե բարեկամ ցանկանու՞ էր նրան հետ կասեցնել մի վտանգավոր գործից, մոտակա աղետ գուշակելով, «անտան իր սեփական ծառերով միայն կայրվի», պատասխանում էր նա սիրալիբ ժպիտով, առանց իամանալու, վոր արաբական ամենադեղեցիկ առածներից մեկն էր հիշում:

Այդպես էր «Ատլանտա»-յի ուղեվորը. միշտ աշխույժ, միշտ յեռանդուն, միշտ հուզված, վոչ թե Ամերիկայում ձեռնարկելիք գործի պատճառով, — այդ մասին չէր էլ մտածում, — այլ իր տենդային խոռոչվածքի շնորհիվ:

Դժվար էր պատկերացնել յերկու անհատներ, վորոնք ավելի հակադիր լինեյին իրար, քան Փրանսիացի Միշել Արդանը և ամերիկացի Բարրիկենը, յերկուսն էլ սակայն ձեռներեց, խիզախ և հանդուգն յուրաքանչյուրն իր ձևով:

Բարրիկենը յերկար չկարողացավ դիպել յեկվորին, վորը վորպես ախոյան յեկել էր իրեն յերկրորդ պլանի վրա քշելու համար: Արդանին վողջունող ուռաներն ընդհատեցին նրա պիտոլությունը: Բոլորը ցանկանում էյին անձամբ սեղմել Արդանի ձեռքը: Սանդալաությունն այնպիսի մեծ չափերի հասավ, վոր Արդանը հպարավոր ձեռքերը սեղմելուց հետո քիչ էր մնացել կորցնել իր տասը մատները: Նա՞ բարվոք համարեց քաշվել իր նավախուցը:

Բարրիկենն անխոս հետևեց նրան:

— Դո՞ւք եք Բարրիկենը, — նրան հարցրեց Միշել Արդանը, յերբ մենակ մնացին, այնպիսի տոնով, վոր կարծես քսան տարվա բարեկամներ լինեյին:

— Այո՛, — պատասխանեց թնդանոթային ակումբի նախագահը:

— Լավ ուրեմն, բարև ձեզ, Բարրիկեն: Ի՞նչպես են գործերը, շատ լավ, ուրախ եմ, ուրախ եմ:

— Ուրեմն այդպես, — ասաց Բարրիկենը առանց վորևե նախաբանի, — դուք վորոշել եք թուշե՞լ:

— Անպայման:

— Վոչինչ ձեզ չի՞ կասեցնի:

— Վոչինչ: Իսկ դուք ձեր ուումբի ձեվը փոխե՞լ եք այնպես, ինչպես առաջարկված էր իմ հեռագրում:

— Սպասում եյի ձեր հասնելուն: Բայց, — նորից հարցրեց Բարբիկենը մի բոպե հետո, — լավ մտածե՞լ եք...

— Մտածե՛լ, Ժամանակ կա՞ր, վոր մտածեյի: Իմ առաջ առիթ ե ներկայացել դնալ և մի պտույտ կատարել Լուսնի վրա, ոգավում եմ այդ առիթից. ուրիշ վոչինչ: Ինձ թվում ե, թե յերկար մտածելու կարիք չկա:

Բարբիկենը հայացքը չեր հեռացնում այդ մարդուց, վորն այդ ուղևորության մասին խոսում եր այնքան թեթեվորեն, անհոգությամբ և հանդարտ սրտով:

— Բայց դոնե, — ասաց նախագահը, — վորևե մի ծրագիր, գործադրության միջոցներ ունե՞ք:

— Հրաշալի՛, սիրելի՛ Բարբիկեն: Բայց ներեցեք, վոր ձեզ մի դիտողություն անեմ. յես սիրում եմ պատմությունը միանգամից անել բոլորին, վորպեսզի այլևս դրա խոսքը չլինի. այդպիսով կրկնություններից կազատվեմ: Ուրեմն, յեթե համաձայն եք, հավաքեցեք ձեր բարեկամներին, պաշտոնակիցներին, ամբողջ քաղաքը, ամբողջ Փլորիդան, ամբողջ Ամերիկան, յեթե ուզում եք, վաղը յես պատրաստ կլինեմ հայտնել իմ միջոցները և պատասխանել բոլոր տեսակի առարկություններին: Հանգիստ յեղեք, յես ամուր եմ իմ դիրքի վրա: Համաձայն ե՞ք:

— Համաձայն եմ, — պատասխանեց Բարբիկենը:

Նախագահը լսցիկից դուրս յեկավ և հավաքված բազմությունը հայտնեց Միշել Արդանի առաջարկը: Այդ խոսքերն ընդունվեցին ուրախ բացականչություններով և ծափահարություններով: Այդպիսով բոլոր դժվարությունները վերանում եյին: Հաջորդ օրն ամեն մարդ յեվրոպացի հերոսին կարող եր դիտել այնքան, վորքան կցանկանար: Սահայն յեղան վորոչ համառ հանդիսատեսներ, վորոնք չցանկացան հեռանալ «Ատլանտա»-յից և գիշերեցին շոգենավի վրա: Նրանց մեջ եր նաև Ջ. Տ. Մաստոնը, վոր իր ճանկը շոգենավի տախտակամածի ճաղերին այնպես եր ամբարցրել, վոր պոկելու համար պետք եր հատուկ գործիք բերել:

— Այդ մարդը հերոս ե, իսկական հերոս, — բացականչում եր նա, — ու մենք այդ յեվրոպացու առաջ վախկոտներ ենք միայն:

Իսկ Բարբիկենը բոլոր ներկաներին հեռանալու կոչ անելուց



Միշել Արդանը բարձրացավ ամբիոնի վրա

հետո վերադարձավ Արդանի խցիկն և այնտեղից դուրս չեկավ,  
մինչև վոր նավի զանգը հնչեց կես դիչեր:

Յեւ այդ ժամանակ իրենց ժողովրդականությամբ մրցակից  
յերկու ախոյանները Չերմագին սեղմեցին իրար ձեռք, և Մի-  
չել Արդանը Թնդանոթային ակումբի նախագահի հետ սկսեց  
խոսել «դու»-ով:

ԳԼՈՒԽ XVIII

ՄԻՏԻՆԳԸ

Հաջորդ օրը, անհամբեր հասարակության կարծիքով, արևել  
չատ ուշ ծաղեց: Ատում էլին, վոր այդ ծուլությունն աններե-  
լի յե մի լուսատուի համար, վորն այդպիսի մի տոն պիտի  
լուսավորեր: Բարբիկենը վախենալով, վոր Միչել Արդանին ան-  
տեղի հարցեր կտան, ցանկանում էր ունկնդիրներին թիվը սահ-  
մանափակել միայն իր պաշտոնակիցներին ներկայությամբ: Սա-  
կայն այդ այնքան դժվար էր, ինչքան Նիագարայի ջրվեժի ա-  
ռաջ թումբ կանգնեցնելը, ուստի նա այդ մտքից հրաժարվեց:  
Նախ Բարբիկենը մտածեց ժողով գումարել Տամպա քաղաքի  
նորակառույց բորսայի շենքում, բայց այդ դահլիճը, չնայած  
իր ընդարձակության, անբավարար նկատվեց այդպիսի մի բազ-  
մամարդ ժողովի համար:

Այդ պատճառով էլ քաղաքից դուրս մի ընդարձակ դաշտ  
ընտրեցին: Ունկնդիրներին արևի ճառագայթներից պաշտպանե-  
լու համար հաստատեցին մի հսկայական վրան, վորի կառույց-  
ման համար գործածվեցին նախահանդատում կանգնած նավերի  
առագաստները, կայմերը, ձողերը և այլ անհրաժեշտ պարա-  
զաները: Շատ չանցած, արևից նյութած մարդադետնի վրա տա-  
լածվեց մի ընդարձակ կտավի ծածկոց, վորի տակ պատասպար-  
վեցին յերեք հարյուր հազար մարդ: այդ բազմությունը մի  
քանի ժամ քաջարար դիմացավ սաստիկ տոթին, սպասելով  
Փրանսիացու գալուն: Հանդիսատեսների մի յերրորդ մասը  
միայն կարողանում էր լավ տեսնել և լսել ճառախոսին, մի

յերրորդ մասը վատ էր տեսնում և չէր լսում, իսկ վերջին մասը  
վոչ տեսնում էր, վոչ էլ լսում, սակայն ծափահարելու մեջ  
մյուսներից հետ չէր մնում:

Ժամի յերեքին յերկուց Միչել Արդանը Թնդանոթային ա-  
կումբի գլխավոր անդամների հետ: Նա աջ թևը տվել էր նա-  
խագահ Բարբիկենին, իսկ ձախը՝ Ջ. Տ. Մաստոնին, վորի գեմքը  
չողում էր կեսօրյա արևից ավելի պայծառ: Արդանը բարձրա-  
ցավ ամբիոնի վրա, վորի բարձունքից նրա հայացքը տարած-  
վում էր սև գլխարկների մի ովկիանոսի վրա: Նա շատ հանդիսա-  
ր էր, առանց բռնազբոսիկ ձևերի, կարծես իր տանը լիներ, ու-  
րախ, պարզ և սիրալիք: Վողջույնի ուռաներին նա պատաս-  
խանեց շնորհալի վողջույնով, ապա ձեռքի շարժումով լուսթյուն  
խնդրեց և շատ մաքուր անդլիերենով սկսեց խոսել:

— Չնայած վոր սաստիկ տոթ է, յես ձեր ժամանակը պիտի  
խլեմ մի քանի բացատրություններ տալու համար այն գործի  
մասին, վորը ձեզ հետաքրքրում է: Յես վոչ հոետոր եմ, վոչ  
էլ գիտնական, և բոլորովին դիտավորություն չունե՞լի խոսել  
հասարակության առաջ, սակայն իմ բարեկամ Բարբիկենն ինձ  
ստաց, թե այդ բանը ձեզ հաճույք կպատճառի, դրա համար էլ  
յես հանձն առա: Ուրեմն լսեցեք ինձ ձեր վեց հարյուր հազար ա-  
կանջներով և ներողամիտ յեղեք հոետորի սխալների համար:

Այս պարզ նախաբանը շատ դուր յեկավ ներկաներին, վո-  
րոնք իրենց դոհուսակությունը հայտնեցին հավանության յեր-  
կարատե բացահանչություններով:

— Դուք կարող եք հայտնել ձեր հավանությունը կամ  
դժգոհությունը. դա հասկանալի յե. այս կետը ճշտելուց հե-  
տո սկսում եմ: Բայց նախ չմոռանաք, վոք գործ ունեք մի ան-  
դիտակ մարդու հետ, վորի տգիտությունն այնքան հեռու յե  
գնում, վոր նույնիսկ չի ճանաչում դժվարությունները: Դրա  
համար էլ ինձ թվաց, թե շատ պարզ, բնական, հեշտ գործ է  
նստել արկի մեջ և թռչել դեպի Լուսին: Այդ ճամբորդությու-  
նը վաղ թե ուշ կատարվելու յե. ինչ վերաբերում է ուղեվո-  
րության միջոցներին, դրանք հետևում են առաջադիմության  
որենքին: Մարդն սկսեց նախ չորեքթաթ ման դալ, հետո մի դե-  
ղեցիկ օր յերկու վոտով, ապա սայլով, ավելի ուշ կառքով,  
դիլիթանով, հետո յերկաթուղով: Ուրեմն Թնդանոթի արկն

եւ ապագայի կառնն և. ճիշտն ասած՝ մոլորակներն արկեր են, վոր բնութիւնն արձակել է անհունութեան մեջ: Բայց դանձանք մեր սայլակին: Ձեզանից վոմանք կարծում են, թե թնդանութի արկի արագութիւնը չափազանց մեծ է: Վոչ. աստղերի շարժման արագութիւնը շատ ավելի մեծ է և Յերկիրն եւ արեւ չուրջը պատվելիս մեզ տանում է յերեք անգամ ավելի մեծ արագութեամբ: Ահա վասիկ մի քանի ուրինակներ. միայն խնդրու՛մ եմ թույլ տաք վորպէս յերկարութեան չափ գործածել Փրանսիական մոդոնը<sup>1)</sup>, վորովհետև ամերիկյան չափերին յես ծանոթ չեմ և վախենում եմ սխալվել հաշիվների մեջ:

Խնդիրը պարզ թվաց և հասարակութեան կողմից վոչ մի առարկութիւն չեղաւ: Հոգտորը շարունակեց իր ճառը.

— Ահա վասիկ, պարոններ, գանազան մոլորակների արագութիւնը: Ստիպված եմ խոստովանել, վոր հակառակ իմ տգիտութեան, աստղագիտական այս փոքրիկ գիտելիքներն ինձ շատ լավ Հայտնի յեն, բայց յերկու բոպէ հետո դուք ել ինձ չափ դիտուն կլինեք այդ հարցում: Իմացեք ուրեմն, վոր Նեպտունը մի ժամում անցնում է հինգ հազար մոդոն, Ուրանոսը՝ յոթ հազար, Մատուրնը՝ ութ հազար ութ հարյուր հիսուն ութ, Յուպիտերը՝ տասնմեկ հազար վեց հարյուր յոթանասուն հինգ, Մարսը՝ քսան յերկու հազար յերկու հարյուր, Յերկիրը՝ քսան յոթ հազար հինգ հարյուր, Վեներան՝ յերեսուն յերկու հազար հարյուր քինսուն, Մերկուրը՝ հիսուն յերկու հազար հինգ հարյուր քսան. մի շարք գիտավորներ անցնում են մի ժամում մեկ միլիոն չորս հարյուր հազար մոդոն: Նրանց հետ համեմատած, մենք իսկական չույլ դանդաղաշարժներ ենք. մեր արկի արագութիւնը հազիվ քինը հազար քինը հարյուր մոդոն է լինելու և գնալով պակասելու յես: Ձեզ հարց եմ տալիս, ի՞նչ կա այստեղ սքանչանալու: Մի՞թե ակնհայտ չէ, վոր մի որ այս արագութիւնը պիտի գեւազանցի ավելի մեծ արագութեամբ, լույսի և երկտրականութեան շնորհիւ:

Վոչ վոր չմտածեց կասկածի տակ դնել Միչէլ Արդանի այս Հայտարարութիւնը:

— Սիրելի՛ ունկնդիրներ, — շարունակեց Արդանը, — յեթե

հավատանք մի քանի սահմանափակ մտածողների, — այսպէս պետք է վորակել նրանց — մարդկութիւնը փակված է կախարհական շրջանակի մեջ, վորտեղից դուրս գալ չի կարող և դատապարտված է հավիտյան աղբիւր այս յերկրագնդի վրա, հնարավորութիւն չունենալով թռչելու մոլորակների աշխարհը: Վո՛չ, այդպէս չէ: Հնարավոր է թռչել դեպի Լուսին, դեպի մոլորակները, դեպի աստղերը, այնպէս, ինչպէս վոր ուղեվորվում ենք Լիվերպուլից Նյու-Յորք, հեշտ, արագ, ապահով: Միջմոլորակային ովկիանոսը մենք պիտի անցնենք այնպէս, ինչպէս անցնում ենք Յերկիրի ովկիանոսները: Տարածութիւնը հարաբերական հասկացողութիւն է, վերջիվերջո՛ դերոյի պիտի հավասարվի:

Հասարակութիւնը՝ չնայած վոր համակրում էր Փրանսիացի հերոսին, միքիչ շվարեց այս հանդուգն թևորիայի առաջ: Միչէլ Արդանը այդ նկատեց:

— Ինձ թվում է, թե դուք չհամոզվեցիք, իմ պատվական հյուրընկալներս, — ասաց նա մի քաղցր ժպիտով: — Լավ, յեկեք քննարկենք այս հարցը: Գիտե՞ք, թե ինչքան ժամանակ է հարկավոր, վորպէսզի արագընթաց գնացքը հասնի Լուսնին: Յերեք հարյուր որ, վոչ ավելի: Ընդամենը ութսուն վեց հազար չորս հարյուր տասը մոդոն տարածութիւնն ի՞նչ բան է վոր: Նույնիսկ աշխարհի շրջագծի ինն անգամի չափ չկա: Մի՞թե չկան նավաստիներ, վորոնք իրենց կյանքում դրանից ավելի ճանապարհ են կտրել: Մտածեցեք, վոր յես միայն իննսուն յոթ ժամվա ճանապարհ պիտի կտրեմ: Ա՛հ, մի՞թե կարծում էք, վոր Լուսինը Յերկիրից շատ է հեռու և շատ խորը պետք է մտածել այդ արկածախնդրութեան ձեռնարկելուց առա՛ջ: Հասա՛ր ի՞նչ կասեցիք. յեթե խնդիրը դեպի Նեպտուն թռչելը լիներ, վոր արեւից հեռու յես հազար հարյուր քսուսուն յոթ միլիոն մոդոն: Ահա մի ճամբորդութիւն, վոր շատ քչերը պիտի կարողանային կատարել. յեթե նույնիսկ մի կիլոմետրը քսանհինգ անտ արժեհար: Բարոն Ռոտշիլդն անգամ իր մեկ միլիարդով չպիտի կարողանար տոմսակի արժեքը վճարել և հարյուր քսուսուն յոթ միլիոն դոլլար պակասի պատճառով կես ճանապարհին պիտի մնար:

Համոզելու այս սթարգ ձեզը ժողովին շատ դուր յեկաւ:

1) Փրանսիական մոդոնը (լիո) հավասար է 4 կիլոմետրի:

Յերևում էր, վոր Միշել Արզանը տիրապետում էր իր նյութին և ամբողջ հողով հավատում էր ասածներին: Նա զգում էր, վոր ունկնդիրները մեծ հետաքրքրություն բերեցին լսում, դրա համար ել շարունակեց հիանալի վստահությունը:

— Բայց Նեպտունից մինչև արև յեղած տարածությունը վոչինչ է, համեմատած աստղերի հեռավորության հետ, վորը չափելու համար անհրաժեշտ է այնպիսի թվեր բերել, վորոնցից ամենավորջն իննը թվանշան ունի, միլիարդն ընդունելով վորպես միավոր: Ներողություն եմ խնդրում, վոր այս հարցի վրա այսքան կանգ եմ առնում, բայց դա շատ կարևոր նշանակություն ունի: Լսեցե՞ք և հետո դատեցե՞ք: Ալֆա աստղը տասը բիլիոն<sup>1)</sup> մղոն հեռավորության վրա յե, Սիրիուսը՝ քսան բիլիոն մղոն: մյուս աստղերը հազարավոր, միլիոնավոր ու միլիարդավոր միլիարդ հեռավորություն ունեն: Արժե՞ք սրանից հետո խոսել մոլորակների արևից ունեցած հեռավորության մասին, կարելի՞ յե ասել, թե այդ հեռավորությունը գոյություն ունի: Սխալ է, թյուրիմացություն: Գիտե՞ք, թե ինչ է իմ կարծիքն այն աշխարհի մասին, վոր սկսվում է լուսավալ Արևից և վերջանում Նեպտունով: Ուզո՞ւմ եք իմանալ իմ թեորիան: Շատ պարզ մի թեորիա յե: Իմ կարծիքով՝ արեգակնային աշխարհը մի հաստատուն և միատարր մարմին է. նրա կազմի մեջ մտնող մոլորակները մոտենում են միմյանց, համարյա դիպում, իրար շփվում. նրանց միջև յեղած տարածությունը նույնն է, ինչ վոր ամենակարծր մետաղների, արծաթի, յերկաթի, վոսիլու կամ պլատինի մասնիկները միմյանցից բաժանող տարածությունը: Ուրեմն յես իրավունք ունեմ պնդելու և կրկնում եմ այնպիսի մի վճռականություն, վոր բոլորիդ ել պիտի համոզի. «տարածությունը դատարկ խոսք է, տարածությունը գոյություն չունի»:

— Շատ ձիշտ է, բռա՛վո, ուու՛, — բացականչեցին միահայն բոլոր ներկաները, երկտրականացած հետոքի շարժում Գերից, շեշտից, նրա համարձակ մաքրից:

— Ձիշտ է, — մյուսներից ավելի ուժեղ բացականչեց Ջ. Տ. Կաստոնը, — տարածությունը գոյություն չունի:

1) Մեկ բիլիոնը հավասար է միլիոն անգամ միլիոնի, այսինքն՝ 2,000,000,000,000-ի Ծան. թարգմ.:

Նա այնքան էր վողեվորվել, վոր հավասարակշռությունը կորցրեց և քիչ էր մնացել ամբիոնից վայր ընկներ: Սակայն ինքն իրեն պահեց և խուսափեց անկումից, վորը նրան շատ կոպիտ կերպով պիտի ցույց տար, վոր տարածությունը դատարկ խոսք չէր:

Հետոքը շարունակեց իր ճառը:

— Բարեկամներ՛, կարծում եմ, վոր այս հարցը այժմ լուծված է: Յեթե ինձ չհաջողվեց ձեզ բոլորիդ համոզել, ուրեմն իմ ապացույցներն ու փաստարկումները թույլ էյին և դրա համար պետք է մեղադրել իմ տեսական գիտելիքների անբավարարությունը: Ինչ վոր ել լինի, կրկնում եմ, Յերկրից մինչեվ իր արբանյակը յեղած հեռավորությունը շատ աննշան է և արժանի չէ, վոր լուրջ մարդիկ նրանով դրազվեն: Կարծում եմ, վոր չափազանցած չեմ լինի, յեթե ասեմ, վոր մոտ ապագայում Թնդանոթի ուսմբերից դնացքներ պիտի կառուցվեն, այսինքն ուումբ-վագոններ, վորոնց միջոցով հանգիստ ուզե-վորություն պիտի կատարվի Յերկրից դեպի Լուսին: Վոչ ընդհարման, վոչ ցնցման, վոչ ել գծից դուրս գալու յերկյուղ չի լինելու, դնացքներն ուղիղ գծով տեղ կհասնեն, շատ արագ, «մեղվի թռիչքով», ինչպես ասում են: Քսան տարի չանցած, Յերկրի բնակչության կեսը Լուսինն այցելած կլինի:

— Կեցցե՛ք, կեցցե՛ք Միշել Արզանը, — բացականչեցին ներկաները, նույնիսկ ամենից քիչ համոզվողները:

— Կեցցե՛ք Բարբիկներ, — սրտասխանեց համեստորեն հե-տոքը:

Ձեռնարկի հեղինակի հանդեպ յերախտագիտական այս խոսքն ընդունվեց միահամուն ծափահարություններով:

— Այժմ, բարեկամներ, — շարունակեց Միշել Արզանը, — յեթե հարցեր ունեք ինձ տալու, անշուշտ ինձ նման մի խեղճ մարդու պիտի շփոթեցնեք, սակայն յես կաշխատեմ ձեզ պատասխանել:

Մինչ այդ Թնդանոթային ակումբի նախագահը գոհ էր վիճարանության ընթացից, Արզանը խոսում էր վերացական, տեսական հարցերի շուրջը և իր վառ յերեվակայությունը իխտիսիսյուն էր: Պետք էր ուրեմն թույլ չնալ, վոր Արզանը չոչա-



Վեր գործնական հարցեր, վորոնցից նա անկասկած ավելի զժվար դուրս կգար: Բարբիկենը շտապեց խոսք վերցնել և իր նոր բարեկամին հարցրեց, թե նրա կարծիքով Լուսինն ու մորորակները բնակիչ ունեն թե վոչ:

— Մի մեծ և զժվար խնդիր և այդ, վոր դնում ես իմ առաջ, արժանապատիվ նախագահ, — պատասխանեց հոկտորը ժպտալով: — Սակայն, յեթե չեմ սխալվում, մեծ ժողով տեր մարդիկ, ինչպես Պլուտարքոսը, Սվեդենբորգը, Բերնարդեն դը Սեն Պիերը և ուրիշ շատերն այդ հարցին հաստատական պատասխան են տվել: Կանգնելով բնական փրկիստիայության տեսակետի վրա՝ յես ել նրանց համամիտ եմ: Կարելի՞ յե մտածել, վոր աշխարհները կամ մորորակները բնակիչ չունենան: Յես պատասխանում եմ՝ «վոչ» — յես պնդում եմ, վոր յեթե աշխարհները բնակելի յեն, ուրեմն կամ բնակիչ ունեն, կամ աւնեցել են, կամ պիտի ունենան:

— Շատ ճիշտ է, — պատասխանեցին հասարակության առաջին շարքերում յեղովները, վորոնց կարծիքն օրենք եր վերջինների համար:

— Ավելի տրամաբանորեն և ճշտությամբ պատասխանել հնարավոր չէ, — ասաց Թնդանոթային ակումբի նախագահը: — Հարցն ուրեմն հետեյալումն է. «աշխարհները բնակելի՞ յեն արդոյք» — Յես կարծում եմ, վոր այո՛:

— Իսկ յես վստահ եմ, վոր այդպես է, — պատասխանեց Միշել Արդանը:

— Սակայն, — հակաճառեց ներկաներից մեկը, — աշխարհների բնակելիության դեմ փաստեր կան: Համենայն դեպս անհրաժեշտ է ընդունել, վոր մորորակների մեծամասնության մեջ բոլորովին տարբեր պայմաններ են, քան մեր յերկրի վրա: Կարելի յե ասել, վոր Արևից շատ հեռու գտնվող մորորակների վրա կենդանի արարածները ցրտից կսառչեյին, իսկ մոտիկ գտնվողների վրա այնպիսի տաքություն է, վոր մարդկանց նման եյակները վողջ-վողջ կայրվեյին:

— Յավում եմ, վոր անձնապես ծանոթ չեմ պատվարժան հակաճառողին, սակայն պատասխանելով նրան՝ կասեմ, վոր նրա առարկությունը արժեքավոր է: Բայց ինչ թվում է, վոր հաջողությամբ կարելի յե հերքել նրա յեզրակացությունները,

այնպես, ինչպես հերքվեցին աշխարհների բնակելիության մասին յեղած առարկությունները: Ամենից առաջ, յեթե հեռավոր, ցուրտ, սառուցյալ մորորակների վրա ներքին ջերմությունն ավելի առատ է արտադրվելու, քան յերկրի վրա, ապա նրանց մակերեսի ջերմությունը բավական կլինի մեր կազմվածքն ունեցող եյակների համար. ճիշտ նմանապես Արևի մոտ գտնվող մորորակները բարձր ջերմությունը կարող է չափավորվել, մեղմանալ մորորակի սեփական տաքության նվազ լարումով — այսպիսով առաջ է գալիս հավասարակշռություն: Շատ հաջակավոր քիստոններ ապացուցել են, վոր բնությունը Յերկրի վրա կենդանիների այնպիսի օրինակներ և տալիս, վորոնք ապրում են շատ տարբեր պայմաններում, օրինակ՝ ձկները ճիշտ են մյուս կենդանիների համար մահացու պայմաններում, յերկկենցաղները յերկու ձեզի կյանք ունեն, վորը զժվար է բացատրել. ծովերի մի շարք բնակիչներ ապրում են մեծ խորություններում առանց ճզմվելու, կրում են հիսուն կամ վաթսուն մթնոլորտային ճնշում. ջրային զանազան միջատներ անտարբեր են դեպի ջերմաստիճանը և ապրում են միաժամանակ թե յեռացող համաքային ջրի և թե բեկեռային ովկիանոսի սառուցյալ դաշտերում: Վերջապես պետք է գիտենալ, վոր բնությունն իր կյանքի պայմանների մեջ այնպիսի մի այլազանություն ունի, վորը մինչև ամենագորության է հասնում: Յեթե յես քիմիկոս լինեյի, պիտի առեյի, վոր անոթիաները (ոդաքարերը), վորոնք Յերկրից դուրս կազմված մարմիններ են, պարունակում են ածխածնի անվիճելի հետքեր: Արդոյք այդ ածխածինը «կազմակերպված» մարմինների, այսինքն ավելի ընդունակ եյակների մնացորդը չէ՞: Բայց յես վոչ քիմիկոս եմ, վոչ բնագետ, վոչ ել ֆիզիկոս, և դրա համար ել բնության օրենքներից բան չեմ հասկանում, չգիտեմ նաև թե մյուս աշխարհները բնակելի՞ յեն, թե վոչ: Յեզ վորովհետև չգիտեմ, դրա համար ել ուզում եմ թուշել դնալ և իմանալ:

Միշել Արդանի հակառակորդն ունե՞ր արդոյք ուրիշ առարկություններ, զժվար է ասել, վորովհետև բազմության մոլեկին աղաղակների մեջ վոչ մի կարծիք լսել հնարավոր չեր: Յերբ լությունը կրկին տիրապետեց նույնիսկ ամենահեռավոր շարքերում, հաղթական հոետորը բավարարվեց հետևյալ դիտողություններն ավելացնելով.

— Դուք անշուշտ հասկանում եք, պատվարժան բարեկամներ, վոր այսպիսի մի կարևոր հարցի մասին շատ հարեվանցիորեն միայն կարողացա խոսել. յես չեմ յեկել այստեղ հրատարակային դասախոսություններ կարդալու և այս ընդարձակ նյութի վրա դիտական դիտարոտացիա պաշտպանելու: Աշխարհների բնակելիության ի նպաստ դեռ ևս շատ փաստեր կան: Յեռ նրանք մի կողմ եմ թողնում: Թույլ ամբողջ միայն մի կետի վրա կանգ առնել: Այն մարդկանց, վորոնք պնդում են, թե մոլորակները անբնակելի յեն, պետք է պատասխանել— դուք իրավունք կունենայիք, յեթե ապացուցվեր, վոր Յերկիրը զոյություն ունեցող աշխարհների լավագույնն է, սակայն այսպես չէ, հակառակ Վոյտերի կարծիքին: Յերկիրը միայն մի արբանյակ ունի, մինչդեռ Յուպիտերը, Ուրանոսը, Սատուրնը, Նեպտունը իրենց շուրջը մի քանի արբանյակներ ունեն. սա մի առավելություն է, վորը չի կարելի անտես անել: Սակայն այն, ինչ վոր մեր յերկրագունդն առանձնապես աննպաստ դրոյթյան մեջ է դնում— դա նրա առանցքի թեքումն է որբիտի վրա: Դրանից է առաջանում ցերեկների ու գիշերների անհավասարությունը և յեղանակներն աննպաստ տարբերությունը: Մեր դժբախտ գնդի վրա շատ տաք կամ շատ ցուրտ է անում. ձմեռը մարդ ստոչում է, ամսան այրվում: Յերկիրը զանազան տեսակի հարբուխներն, թռքերի բորբոքման և այլ ցավերի մոլորակն է, մինչդեռ Յուպիտերի վրա, որինակ, վորի առանցքը շատ քիչ է թեքված, բնակիչները կարող են վայելել անփոփոխ յեղանակներ. այստեղ մշտնջենական դարձան, ձմռան, աշնան և ամրան գոտիներ կան. յուրաքանչյուր բնակիչ կարող է ընտրել իրեն հաճելի կլիման և ումբողջ կյանքի ընթացքում խուսափել յեղանակի փոփոխումներից: Դուք համաձայն եք, կարծում եմ, վոր դա Յուպիտերի՝ մեր յերկրի նկատմամբ ունեցած առավելությունն է, առանց խոսելու նրա յերկարատևի տարիների մասին, վորոնցից յուրաքանչյուրը տևում է տասներկու տարի: Բացի այդ, ինձ համար պարզ է, վոր, շնորհիվ այդ առավելությունների և կյանքի այս հրաշալի պայմանների, այդ բախտավոր «յերկիր» բնակիչներն ամբողջ գարդացած կյանքներ են, վոր դիտնականներն այստեղ ամբողջ գիտուն են, արվեստագետները՝ ամբողջ արվեստագետ և նույնիսկ չարերը

նվազ չար և լավերը լավագույն են: Ավա՛ղ, ի՞նչ է պակասում մեր յերկրադնդին՝ այդ կատարելության հասնելու համար: Շատ քիչ բան— պտույտի մի առանցք, վորն ամբողջ քիչ թեքված լինի իր որբիտի վրա:

— Դե ուրեմն,— բացականչեց ուժեղ մի ձայն,— միացնենք մեր ուժերը, մեքենայներ հնարենք և ուղղենք Յերկրի առանցքը:

Բուռն ծափահարություններով ընդունվեց այս առաջարկը, վորի հեղինակն էր— և ուրիշը լինել չեր կարող— Ջ. Տ. Մաստոնը: Հավանական է, վոր կրակոտ քարտուղարն իր ճարտարագիտական հակումից դրդված արեց այս հանդուգն առաջարկը: Սակայն պետք է ասել— և այս ճամարտությունն է— շատերն իրենց բացականչություններով հավանություն հայտնեցին և անհասկած, յեթե Արքիմեդի պահանջած հենակետն ունենային, ամերիկացիներն աշխարհը բարձրացնելու և նրա առանցքն ուղղելու համար մի լծակ կպատրաստեյին:

Համենայն դեպս, այս «գերազանցորեն դործնական» առաջարկը հսկայական հաջողություն ունեցավ և մտքերի փոխանակությունը դադարեց մի ամբողջ քառորդ ժամ. յերկար, շատ յերկար ժամանակ դեռևս Ամերիկայի Միացյալ Նահանգներում խոսվում էր Թնդանութային ակումբի մշտնջենական քարտուղարի այնքան խրոխտ առաջարկի մասին:

## ԳԼՈՒԽ XIX

### ՀԱՐՁԱԿՈՒՄ ՅԵՎ ՀԱԿԱԶԱՐՎԱԾ

Այս միջադեպով թվում էր, վոր մտքերի փոխանակությունը վերջացել էր: Սակայն յերբ հուզումը հանդարտվեց, լավեցին հետևյալ խիստ և բարձրագույն խոսքերը.

— Հիմա, վոր հոկտոբրն այնքան մեծ տեղ տվեց իր Փանտազիային, բարի չի՞ լինելու արդյոք անցնել իսկական նյութին, ավելի քիչ թեորիայով դբաղվել և իր ուղեվորության գործնական խնդիրները մասին խոսել:

Բոլորի հայացքն ուղղվեց դեպի այդպես խոսող անձնավորութիւնը: Դա մի նիհար մարդ էր, չոր, կորովի դեմքով ամերիկյան ձեւի՝ կղակի տակ թափ մորուքով: Ժողովի ընթացքում հասարակութեան մեջ սեղի ունեցած դանադան շարժումների շնորհիվ՝ նա հետզհետեւ առաջացել և հասել էր առաջին շարքին: Այդտեղ թեւերը խաչածեւ, խիզախ և վառ հայացքը նա սեւեռեւ էր միտինգի հերոսի վրա: Իր հարցումն անելուց հետո նա լռեց և թվում էր, թէ չէր ազդվում իրեն ուղղված հաղարարիչ հայացքներից, վոչ եւ իր խոսքերի առաջացրած դժգոհութեան տրտուհիներից: Պատասխանն ուշանում էր, նա կրկնեց իր հարցը միևնույն հստակ և կորուկ շեշտով, հետո ավելացրեց.

— Մենք յեկել ենք այստեղ զբաղվելու Լուսնով և վոչ թէ Յերկրով:

— Դուք իրավացի յեք պարոն, — պատասխանեց Միչել Արդանը, — վիճաբանութիւնն իր նյութից չեղվեց: Վերադառնանք Լուսնին:

— Պարոն, — շարունակեց անձանոթը, — դուք յենթադրում եյիք, վոր մեր Յերկրի արբանյակի վրա բնակիչ կա: Լա՛վ. բայց յեթ լուսնաբնակներ կան, այդ մարդիկ անշուշտ ապրում են առանց շնչելու, վորովհետեւ — ձեր ոգտի համար ձեզ նախազգուշացնում եմ, — Լուսնի վրա տղի ամենափոքր մասնիկ իսկ չկա:

Այս հայտարարութեան վրա Արդանն իր առյուծի բաշը ցնցեց: Նա զգաց, վոր հարցի հիմնական կետի շուրջը պայքարը սկսվում էր այդ մարդու հետ: Իր հերթին նա իր խիստ հայացքը ուղղեց անձանոթին ու ասաց.

— Ի՞նչ, Լուսնի վրա ող չկա՞: Իսկ ո՞վ է այդ կարծիքի հեղինակը, թույլ ավեք հարցնել:

— Գիտնականները:

— Ճի՞շտ:

— Ճիշտ:

— Պարոն, — շարունակեց Միչելը, — կատակը մի կողմ, յես խորապես հարգում եմ այն գիտնականներին, վորոնք դիտեն, բայց արհամարհում եմ այն գիտնականներին, վորոնք չդիտեն:

— Ճանաչո՞ւմ եք այնպիսի գիտնականների, վորոնք պատկանում են վերջին կատեգորիային:

— Անպայման: Ֆրանսիայում մեկը կա, վոր պնդում է, թէ «մաթեմատիկորեն» թուշունը չի կարող թուշել, իսկ մի ուրիշը, վորի թեորիաները ապացուցում են, վոր ձուկը չի ստեղծված ջրի մեջ ապրելու համար:

— Հարցը այնպիսիների մասին չէ, պարոն, ու իմ ասածը հաստատելու համար կարող եմ հիշատակել այնպիսի անուններ, վորոնց դուք չեք կարող ժխտել:

— Այդ դեպքում, պարոն, դուք չափազանց նեղը պիտի լծեք մի խեղճ տղետի, վորը սակայն շատ է ցանկանում սովորել:

— Ինչո՞ւ ուրեմն դուք խոսում եք գիտական հարցերի մասին, յեթե նրանց չեք ուսումնասիրել, — հարցրեց անձանոթը բավական կոպիտ կերպով:

— Ինչու համա՞ր, — պատասխանեց Արդանը, — այն պատճառով, վոր քաջ մարդը նա յե, ով վասնդի կասկած չունի: Յես վոչինչ չգիտեմ, ճիշտ է, բայց հենց իմ այդ թուլութիւնն է, վոր իմ ուժն է դառնում:

— Ձեր թուլութիւնը մինչև խելագարութիւնն է հասնում, — բացականչեց անձանոթը գրգռված:

— Ե՛հ, ավելի լավ, — պատասխանեց Ֆրանսիացին, — յեթե իմ խենթութիւնն ինձ մինչև Լուսնի հասցնի:

Բարբիկենը և իր ընկերները հայացքով ուսում էյին այդ ինքնակոչին, վորն այդքան համարձակ կերպով հանդես էր գալիս Արդանի դեմ: Վոչ վոք նրան չէր ճանաչում: Նախագահը մի փոքր շփոթված էր յերևում. նա սկսել էր տարակուսել իր նոր բարեկամի վրա և նայում էր նրան վորոշ անհանգստութեամբ: Հասարակութիւնը նույնպես ուշադիր հետևում և լրջորեն անհանդիստ էր, վորովհետեւ այդ պայքարի հետևանքը կարող էր լինել այն, վոր ժողովի ուշադրութիւնը կհրավիրվեր ուղեվորութեան վտանգների և նույնիսկ անհնարինութեան վրա:

— Պարոն, — ասաց Միչել Արդանի հակառակորդը, — Լուսնի շուրջը մթնոլորտ չլինելու փաստերը բազմաթիվ ու անվիճելի յեն: Յես նույնիսկ կարող եմ ասել, վոր յեթե այդ մթնոլորտը գոյութիւն ունեցել է յերբևիցե, դա վաղուց չբացել է: Սա՛կայն յես ուզում եմ բերել մի քանի անհերքելի փաստեր:

— Բերեք ձեր փաստարկումները, — ասաց Միչել Արդանը չափազանց սիրալիր, — բերեք ինչքան ուզում եք:

— Ձեզ հայտնի չե,—ասաց անծանոթը,—վոր յերբ Լուսնի ճառագայթներն անցնում են ալիսի միջավայրով, ինչպես ողն է, նրանք ուղիղ գծից շեղվում են, կամ, ուրիշ խոսքով, բեկման են յենթարկվում: Դուք պետք է խմանաք նաև, վոր Լուսինը, գտնվելով Յերկրի և աստղերի միջև, ժամանակավորապես «ծածկում է» շատ աստղեր: Այդպիսի «խավարումից» առաջ արդեբրի ճառագայթները խիստ մոտենում են Լուսնի սկայառակին և շփվում նրա հետ, բայց, չնայած դրան, նրանք բնավ չեն շեղվում իրենց ուղղությունից, ամենևին չեն բեկվում: Իսկ այդ աստղացույց է, վոր Լուսնի վրա ող չկա, նրա շուրջը մթնոլորտ չկա:

Ամենքի հայացքն ուղղվեց Փրանսիացուն: Յեթե հակառակորդի ասածը ճշտվեր, հետևանքը շատ խիստ կլիներ:

— Ուրեմն,— պատասխանեց Միշել Արդանը,— այդ ձեր ամենաուժեղ, գուցե և միակ փաստն է. մի դիտնական թերևս գեղարանար ձեզ պատասխանել, իսկ յես ձեզ կասեմ, վոր այս փաստը բացարձակապես վոչ մի արժեք չունի, վորովհետև դա յենթադրում է Լուսնի անկյունավոր տրամագիծը կատարելապես վորոշված, ինչ վոր ճիշտ է: Բայց թողնենք այդ, ասացեք խնդրեմ, սիրելի պարոն, դուք ընդունո՞ւմ եք հրաբուխների գոյությունը Լուսնի վրա:

— Հանգած հրաբուխներ, այո, բայց գործող հրաբուխներ, վոչ:

— Թույլ տվեք ինձ հավատալ, առանց տրամաբանության սահմաններից դուրս գալու, վոր այդ հրաբուխները մի վորոշ ժամանակաշրջանում յեղել են բորբոքման մեջ:

— Այդ ճիշտ է, բայց վորովհետև նրանք իրենցից կարող եյին արտադրել այրման անհրաժեշտ թթվածինը, հետևապես նրանց բորբոքումը չի կարող ապացուցել Լուսնի մթնոլորտի գոյությունը:

— Գնանք առաջ,— պատասխանեց Միշել Արդանը,— մի կողմ թողնենք կողմնակի փաստերը և անցնենք ուղղակի դիտություններին: Բայց նախադրուշացնում եմ ձեզ, վոր հիշատակելու յեմ մի շարք անուններ:

— Խնդրեմ:

— Ահավասիկ: 1715 թվին Լուվրի և Հալլեյ աստղադեաները դիտելով մայիսի 3-ի խավարումը՝ տարրինակ փայլատա-

կումներ նշմարեցին: Այս տրագ և հաճախ կրկնվող լուսնի փայլերը նրանք վերագրեցին Լուսնի մթնոլորտում տեղի ունեցած փոթորիկներին:

— 1715 թվին,— առարկեց անծանոթը,— Լուվրի և Հալլեյ աստղադեաները լուսնային յերևույթների տեղ ընդունեցին այնպիսի յերևույթներ, վորոնք իրականում տեղի եյին ունեցել յերկրային մթնոլորտի վերին խավերում և առաջ եյին յեկել բոլորներից և մետեորներից: Ահա թե ինչ պատասխանեցին դիտնականներն այն ժամանակ Լուվրի և Հալլեյի այս հաղորդումներին, և յես կրկնում եմ նույնը:

— Լա՛վ, այդ էլ անցնենք,— պատասխանեց Արդանն առանց այդ առարկությունից շփոթվելու:— Իսկ Հերշելը չե՞ր, վոր 1787 թվին Լուսնի մակերևութի վրա նշմարեց բաղմամբիվ լուսավոր կետեր:

— Շատ ճիշտ է, բայց առանց այդ լուսավոր կետերի ծագումը բացատրելու: Հերշելը այդ յերևույթներից չեզրակացրեց Լուսնի մթնոլորտի գոյությունը:

— Տեղին է ձեր պատասխանը,— առաց Միշել Արդանը դրվատելով հակառակորդին.— տեսնում յեմ, վոր լուսնագիտություն մեջ շատ ուժեղ էք:

— Շատ ուժեղ, և ավելացնեմ, վոր ամենահմուտ դիտողները, նրանք, ովքեր ամենքից ավելի մանրամասն հետազոտել են Լուսինը, Բերը և Մեդլերը, համաձիտ են, վոր Լուսնի վրա ող չկա:

Հասարակության մեջ շարժում սկսվեց. տարրինակ մարդու փաստարկումներն ըստ յերևութին, սկսել եյին ազդել շատերի վրա:

— Առաջ դնանք,— շարունակեց Միշել Արդանը կատարյալ հանդարտությամբ,— և հասնենք մի կարևոր խնդրի: Ցրանսիացի մի հմուտ աստղադետ՝ Լուսեդան 1860 թվին հուլիսի 18-ի խավարումը դիտելով նկատեց, վոր արեղակնային մահիկի յեղջյուրները (ծայրերը) կլորացած ու ծայրատված եյին: Իսկ այդ յերևույթը կարող եր տեղի ունենալ միայն արևի ճառագայթների՝ Լուսնի մթնոլորտի մեջ բեկրեկման յենթարկվելու հետևանքով, ուրիշ հնարավոր բացատրություն չկար:

— Բայց այդ իրողութիւնն ստո՞ւյզ է, — հարցրեց անծանօթը աշխուժութեամբ:

— Բացարձակապէս ստույզ:

Մի նոր շարժում սկսվեց հասարակութեան մեջ, բայց այս անգամ Միշել Արդանի, իր սիրելի հերոսի կողմը:

Հակառակորդը լռում էր. Արդանը շարունակեց և առանց վերջին հաջողութեան հպարտանալու՝ պարզապէս ասաց.

— Տեսնո՞ւմ եք ուրեմն, վոր այդպէս վճակահանորեն չի կարելի ժխտել Լուսնի վրա մթնոլորտի գոյութիւնը. այդ մթնոլորտը գուցէ խիտ է, շատ նոսր է, բայց այսօր դիտութիւնն ընդհանրապէս ընդունում է նրա գոյութիւնը:

— Բայց վոչ լեռների վրա, թույլ ավելք նկատել, — պատասխանեց անծանօթը, վոր չէր ուզում անձնատուր լինել:

— Վոչ, բայց ձորերի մեջ կա. մի քանի հարյուր մետր բարձրութեամբ գուցէ:

— Համենայն դեպս լավ կլինեք զգուշութեան բոլոր միջոցները ձեռք առնել, վորովհետեւ այդ ողջ խիտ նվազ պիտի լինի:

— Ա՛հ, սիրելի պարոն, մի մարդու բավարարելու համար միշտ ել կճարվի. բացի այդ, մի անգամ վոր տեղ հասնեմ, կաշխատեմ խնայողութեան անել և շնչել միմիայն ծայրահեղ դեպքերում:

Միծաղի մի հսկա պողոթնում վորոտաց խորհրդավոր անծանօթի ահանջներին, նա իր խրոխտ հայացքն ուղղեց հասարակութեան:

— Ուրեմն, — շարունակեց Միշել Արդանն անհող դեմքով, — քանի վոր մենք համաձայն ենք վորոչ չափով մթնոլորտի գոյութեան մասին, մենք պետք է ընդունենք նաև վորոչ քանակութեամբ ջրի գոյութիւնը: Այս հանգամանքն է հարկէ ինձ համար խիտ ուրախալի յէ: Բացի այդ, սիրելի ընդդիմախոս, թույլ ավելք ինձ մի դիտողութեան ևս անել ձեզ: Մենք Լուսնի սկալառակի միայն մի կողմն ենք ճանաչում և յեթէ մեր կողմը դարձած յերեսի վրա քիչ ող կա, հնարավոր է, վոր ավելի շատ կա մյուս յերեսի վրա:

— Ինչի՞ց էք յենթադրում:

— Վորովհետեւ Լուսնը Յերկրի ձգողական ուժի ազդեցութեան տակ ձվի ձեւ է ստացել, վորին մենք փոքր ծայրէջ

ենք տեսնում: Այդտեղից է բխում այն յեզրակացութիւնը, վոր, ըստ Հանդենի հաշիվների, Լուսնի ծանրութեան կենարոնը մյուս կիսագնդի վրա յէ: Իսկ այստեղից բղխում է այն յեզրակացութիւնը, վոր Լուսնի ողի և ջրի գլխավոր զանգվածը քաշվել է Յերկրի արբանյակի մյուս յերեսի վրա:

— Չուտ յերեակայութեան, — բացականչեց անծանօթը:

— Վոչ, մաքուր թեորիա, վորը հիմնվում է մեխանիկայի օրենքների վրա և ինձ թվում է, թէ դժվար է այդ հերքել: Ուրեմն յես դիմում եմ այս ժողովին և քլեարկութեան եմ դնում այն հարցը, թէ կյանքն, ինչպէս վոր կա Յերկրի վրա, կարո՞ղ է գոյութիւն ունենալ Լուսնի վրա:

Յերեք հարյուր հազար ունկնդիրներ միանգամից ծափահարեցին այս առաջարկը: Միշել Արդանի ընդդիմախոսը դեռևս ուզում էր խոսել, սակայն այլևս լսող չկար: Աղաղակն ու սպառնալիքները կարկտի նման թափվում էին նրա գլխին:

— Բավական է, բավական է, — ասում էին վոմանք:

— Դուրս արեք այդ ինքնակոչին, — կրկնում էին ուրիշները:

— Դո՛ւրս, դո՛ւրս, — բացականչում էր գրգռված բազմութիւնը:

Սակայն նա՝ անհողողը, կառչած ամբիոնին, տեղիցը չէր շարժվում և սպասում էր, վոր փոթորիկն անցնի, վորը խոշոր չափերի կհասնեք, յեթէ Միշել Արդանը ձեռքով չհանգստացներ: Նրա վեհանձն ընալորութիւնը թույլ չէր տալիս հակառակորդին թողնել այդպիսի ծանր դրութեան մեջ:

— Գուցէ ուզում էք ելի մի քանի խոսք ասել, — դիմեց նրան քաղցր ձայնով:

— Այո, հարյուր, հազար խոսք, — պատասխանեց անծանօթը զայրացած, — բայց ավելի շուտ վոչ, միայն մեկ խոսք: Այդպիսի մտադրութեան մեջ համառելու համար մարդ պետք է վոր...

— Անխուհե՛մ լինի... — արագ ընդհատեց Արդանը, — Ի՞նչպէս կարող էք ինձ այդպէս անվանել, քանի վոր յես Բարբիկե՛նից խնդրել եմ գլանա-կոնաձեւ մի արկ պատրաստել, վոր պեսցի ճանապարհին սկյուռի նման պտույտ չգամ:

— Բայց թշվառ մարդ, կրակելու ժամանակ թնդանոթի ցնցումը ձեզ կտոր-կտոր կանխի:

— Սիրելի՛ ընդդիմախոս, դուք մատը դրիք խակալան և միակ դժվարութեան վրա. սակայն յես ամերիկացիների հնարագետ հանձարի վրա շատ լավ դադափար ունեմ և վատահ եմ, վոր նրանք այդ դժվարութեանն ել կհարթեն:

— Իսկ այն մեծ ջերմութեանը, վորն առաջանալու յես հակայական արագութեամբ թռչող արկի շփումից ողի շերտերի հետ:

— Ո՛հ, արկի սլատերը հաստ են, և յես մի անխթարթում կանցնեմ մթնուրդը:

— Իսկ ուտելի՞ք, ջո՞ւր:

— Յես հաշվել եմ, վոր կարող եմ հետս վերցնել մի տար-վա համար, մինչդեռ իմ ճամբորդութեանը չորս սր ե տեւելու:

— Իսկ ճանապարհին շնչելու ո՞ր:

— Գլխիս միջոցներով ձեռք կրերեմ:

— Իսկ ձեր անկումը Լուսնի վրա՞, յեթե յերբեք հասնեք նրան:

— Այդ անկումը Յերկրի վրայի անկումից վեց անգամ նվազ ուժեղ կլինի, վորովհետեւ Լուսնի մակերէնթիւ վրա ծանրութեանը, այսինքն՝ ձգողութեան ուժը վեց անգամ պակաս ե:

— Բայց այդքանն ել բավական ե ձեզ ապակու նման ջարդ ու փշուր անելու համար:

— Յես կարող եմ իմ անկումը դանդաղեցնել հրթիռների ող-նութեամբ, վոր յես բաց կթողնեմ հարկ յեղած ժամանակ:

— Բայց վեջապես յենթադրենք, թե բոլոր դժվարութեան-ները լուծված են, բոլոր արդելքները հարթված, հաջողութեան բոլոր շանտերն ի նպաստ ձեզ են, յենթադրենք, թե դուք վողջ առողջ հասաք Լուսնին, իսկ ի՞նչպես պիտի վերադառնաք:

— Չպիտի վերադառնամ:

Լսելով այս պատասխանը, վորն իր սլարդութեամբ ևս ալելի շեշտում եր Արդանի հերոսութեանը, ամբողջ հասարակութեանը կարծես համբարցավ: Այդ լուսնեանը ցնծութեան աղաղակներից ավելի պերճախոս եր: Անծանոթն առիթից ողտվեց մի վերջին անգամ բողբոջելու համար:

— Դուք ձեզ կսպասեք անխուսափելիորեն, — բացականչեց նա, — և ձեր մահը կլինի խելագարի մահ, դիտութեան համար միանգամայն անողուտ:

— Շարունակեցիք, իմ վեհանձն անծանոթ, վորովհետեւ իսկապես դուք հաճելի դուշակութեաններ եք անում:

— Ա՛հ, դուք արդեն չափն անցնում եք, — բացականչեց Մի-չել Արդանի ընդդիմախոսը, — չդիտեմ թե ինչու համար եմ շարունակում մի վիճարանութեան, վորը վոչ մի լրջութեան չունի: Հանգիստ շարունակեցիք ձեր խելագար ձեռնարկը: Մեղավորը դուք չեք:

— Ա՛հ, դուք անհանդիստ մի՛ լինեք:

— Այո՛, մի ուրիշն ե, վոր պատասխանատու պիտի լինի ձեր գործերի համար:

— Իսկ ո՞վ ե այդ ուրիշը, խնդրեմ ասեք, — հարցրեց Միչել Արդանը հրամայական շեշտով:

— Այն տգետը, վոր այդ անհնարին և միաժամանակ ծիծաղելի փորձը կազմակերպել ե:

Հարձակումն ուղղակի յեր: Բարբիկենն անծանոթի միջամտութեանից վրդովված՝ մեծ ջանքեր եր անում ինքն իրեն զսպելու համար, սակայն տեսնելով, վոր իրեն անձն այնքան կուպիտ կերպով նախատվեց, հանկարծ վեր ցատկեց, ուզում եր նետվել իր դեմ կանգնած խիղախ հակառակորդի վրա, բայց այդ բողբոջին նրան բաժանեցին անծանոթից:

Հարյուր կորովի բազուկներ միանգամայն բարձրացրին ամբիոնը և թնդանոթային ակումբի նախագահը Միչել Արդանի հետ միասին վայելեց ցնծազին պատիւներ: Բեռը ծանր եր, սակայն տանողներն անընդհատ փոխվում եյին: Ամենքը վեհում, պայքարում, կռվում եյին իրենց ուսերի և թևերի ոգնութեանն այդ հաղթական յերթին տալու համար:

Սակայն անծանոթը չողտվեց այդ իրարանցումից և իր տեղեցը չհեռացավ: Բայց յեթե ուղեր ել, հնարավոր չեր այդ հոծ քաղցրութեան միջից դուրս դալ: Համենայն դեպս՝ նա կանգնած եր առաջին շարքում, թևերը խաչաձեղված և աչքերով ուտում եր նախագահ Բարբիկենին:

Այս վերջինն ել նրան աչքից չեր հեռացնում. յերկու հակա-

ուակորդները հայացքները չափում էյին իրար մահացու թշնամիները սրերը պես:

Բաղմուծյան խանդավառ աղաղակները շարունակվեցին այդ հաղթական յերթի ամբողջ ընթացքում: Միշեւ Արզանն ակնհայտ հաճույքով անձնատուր եր յեղեւ այդ ցույցերին: Նրա դեմքը պայծառ շողում եր: Յերբեմն ամբիոնը ալեկոծության յենթարկված նալի նման տատանվում եր: Սակայն միտինգի յերկու հերոսները փորձված նախատիները նման տեղից չէյին շարժվում, և նրանց նալը առանց ավարիայի հասալ Տամպա քաղաքի նախահանգիստը: Միշեւ Արզանին բարեբախտաբար հաջողվեց ազատվել իր հուժկու հիացողների զրկից: Նա անխառ հասալ «Պրանկլին» հյուրանոցը, փակվեց սենյակում և իսկույն մտալ անկողին, մինչդեռ հարյուր հազարանոց բանակը հսկում եր լուսամուտների տակ:

Այդ ժամանակ մի կարծ, բայց լուրջ և վճռական միջադեպ տեղի ունեցալ խորհրդավոր անձանոթի և Թնդանոթային ալկոմբի նախազահի միջև: Բարբրիկենը հենց վոր ազատվեց բաղմուծյունից, ուղիղ դնաց դեպի հակառակորդը:

— Յեկե՛ք, — ասաց նա կարող չեչտով:

Անձանոթը նրան հետևեց. քիչ անց, յերկուսով մենակ մնացին նախամտուլցի վրա:

Այստեղ յերկու թշնամիներն իրար դեռ ևս անձանոթ, մեկմեկու նայեցին:

— Ո՞վ եք դուք — հարցրեց Բարբրիկենը:

— Կապիտան Նիկոլը:

— Այդպես ել կարծում էյի: Մինչև այսոր դիպվածը ձեզ իմ ճանապարհի վրա չեք բերել:

— Յես ինքս յեկել եմ ձեզ հանդիպելու:

— Դուք ինձ անպատվեցիք:

— Հրապարակով:

— Յեվ այդ անպատվության համար դուք պիտի հատուցեք:

— Իսկույն:

— Վոչ: Յես ուզում եմ, վոր ամեն ինչ մնա մեր մեջ գաղանի: Տամպայից յերեք մղոն հեռավորության վրա մի անտառ կա, Սկրեսնոյի անտառը: Ծանոթ ե՞ ձեզ:

— Գիտեմ:

— Բարի յեղեք վաղն առավոտ ժամի 5-ին այդ անտառը մտնել մի կողմից...

— Այո՛, յեթե նույն ժամին դուք ել մտնեք մյուս կողմից:

— Չմոռանաք ձեզ հետ վերցնել ձեր հրացանը, — ասաց Բարբրիկենը:

— Ինչպես և դուք ձերը, — պատասխանեց Նիկոլը:

Այս սառն արտասանված խոսքերից հետո Թնդանոթային ալկոմբի նախազահը և կապիտանը բաժանվեցին: Բարբրիկենը բարձրացալ իր բնակարանը, բայց փոխանակ մի քանի ժամ հանգստանալու, դիչերն անցկացրեց մտածելով, թե ինչպես կարելի յե լուծել միտինգում Միշեւ Արզանի կողմից զրված դժվար խնդիրը — թուլացնել այն հարվածը, վորը ստանալու յե արկը Թնդանոթից դուրս ժայթքելիս:

## ԳԼՈՒԽ XX

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԻ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԻՏԵ ՀԱՐԹԵԼ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն ժամանակ, յերբ Թնդանոթային ալկոմբի նախազահը և կապիտան Նիկոլը մենամարտի պայմանների մասին էյին խորհուրդում — սոսկալի ու վայրենի մի մենամարտ, վորի ընթացքում յուրաքանչյուր հակառակորդ վորսում ե մյուսին, հետապնդում և սպանում ինչպես վայրի գաղանի — Միշեւ Արզանը հաղթանակի հողնությունից հետո հանգստանում եր: Ասենք, հանգստանալ բառն այնքան ել ճիշտ արտահայտություն չե, վորովհետև ամերիկյան անկողինները կոշտության կողմից կարող են մրցել մարմարե կամ գրանիտե սեղանների հետ:

Դրա համար, չնայած իր հողնությանը, Արզանը բավական վատ եր քնած, անվերջ շուռումուռ եր դալիս սալանների տեղ ծառայող յերեսորբիչների մեջ. նա յերազում եր արկի մեջ ավելի հանգիստ անկողին սարքել. հանկարծ սաստիկ մի աղմուկ նրան դուրս բերեց յերազներից: Դուռը դղրդում եր ուժեղ հարվածներից, կարծես խիում էյին յերկաթե գործիքով: Աղաղակները խառնվում էյին այդ վազաժամ աղմուկին:

— Բա՛ց, — բղավում է յին, — բա՛ց շուտով:

Արդանը բնավ տրամադելի չէր կատարելու այդքան աղմուկալի մի պահանջ, սակայն նա վեր կացավ և բաց արեց ճիշտ այն պահին, յերբ դուռը քիչ եր մնացել ջարդվեր համառ այցելուի հարվածներէն: Ռուսքի նման ներս թռավ Թնդանութային ակումբի քարտուղարը՝ Մաստոնը:

— Յերեկ յերեկոյան, — բացականչեց Մաստոնը շնչասպառ, — միտինդի ժամանակ մեր նախագահը հրապարակով նախատվեց: Այդ պատճառով նա մենամարտի հրավիրեց իր հակառակորդին, վորը դուրս յեկավ կապիտան Նիկոլը: Մենամարտը տեղի պիտի ունենա այս առավոտ Սկրեսնոյի անտառում: Յես ամեն ինչ լսեցի Բարբիկենից: Յեթե նա սպանվի, մեր դործը կորած է, պետք է ուրեմն արգելել այդ մենամարտը: Ամբողջ աշխարհում միայն մի մարդ կա, վորը կարող է արգելել Բարբիկենին մենամարտելու — այդ մարդը Միշել Արդանն է:

Մինչդեռ Ջ. Տ. Մաստոնը խոսում էր, Միշել Արդանը նրան չընդհատելով՝ շտապ հագավ իր լայն անդրալարտիկը, և յերկուրոպե հետո յերկու բարեկամները արագ վազում էին դեպի քաղաքի արվարձանները:

Այս շտապ ուղեվորութայն ժամանակ Մաստոնն Արդանին իրազեկ դարձրեց դրութայն մասին: Պատմեց Բարբիկենի և Նիկոլի միջև յեղած թշնամութայն իսկական պատճառների մասին, ինչպես եր ծագել այդ հին հակառակությունը, թե ինչպես մինչև այժմ շնորհիվ յերկու կողմի բարեկամների ձեռք առած միջոցների, նախագահն ու կապիտանը յերբեք դեմ առ դեմ չէ յին յեկել. նա ավելացրեց, վոր թշնամությունն անձնական սլատճառ չուներ, այլ հետևանք եր միայն մետաղե զրահի և թնդանութի արկի մրցման և, վերջապես, վոր միտինդի միջադեպը միայն մի առիթ էր, վորին սպասում եր յերկար ժամանակ Նիկոլը՝ հին հաշիվները մաքրելու համար:

Վոչ մի բան այնքան սարսափելի չէ, ինչքան Ամերիկայում տեղի ունեցող անհատական մենամարտերը, վորոնց ընթացքում յերկու հակառակորդները փնտռում և հետևում են իրար թիբերի և մացառների մեջ, միմյանց վրա հարձակվում վայրի դադանների նման: Ամերիկայն մենամարտի մեջ հաջողություն ունենալու համար պահանջվում է ունենալ հնդիկների բնածին սքանա-

չելի հատկությունը, նրանց սրատեսությունը, նենդ խորամանկությունը, հեռքեր զգալու և թշնամուն հայտարերելու բնադրը: Մի վրիպում, մի հապաղում, մի սխալ քայլ կարող է մահարեք լինել մեկնումեկի համար: Այդ մենամարտերի ժամանակ յանկիները շատ անգամ շներին հետներն են տանում, և ժամերով վորսորդներն ու շները միմյանց են հալածում:

— Ի՞նչ տեսակ մարդիկ եք դուք, — բացականչեց Միշել Արդանը, յերբ Մաստոնն այնքան յեռանդով նկարագրեց այս բոլորը:

— Մենք այսպես ենք, — պատասխանեց Մաստոնը համեստորեն, — բայց շտապենք:

Սակայն Միշել Արդանը և Մաստոնը ինչքան ել արագ վազեցին ցողից դեռևս թաց դաշտերով, անցնելով բրնձի արտերն ու առուները, ընտրելով ամենից կարճ ճանապարհները, ժամը հինգ ու կեսից առաջ չկարողացան հասնել Սկրեսնոյի անտառը: Բարբիկենը կես ժամից է վեր այնտեղ պետք է լիներ:

Մի փայտահատ կացնով տապալած ծառերի փայտից տրցակներ եր կապում: Ջ. Տ. Մաստոնը վազեց նրա մոտ և բացականչեց.

— Անտառը մտնող հրացանով մի մարդ չե՞ս տեսել, Բարբիկենը, նախագահը... Իմ լավաղույն բարեկամը:

Թնդանութային ակումբի հարգելի քարտուղարը միմտորեն կարծում եր, վոր նախագահին ճանաչում եր ամբողջ աշխարհը: Սակայն փայտահատը, թվում եր, թե վոչինչ չհասկացավ:

— Մի վորսորդ, — բացատրեց Արդանը:

— Մի վորսորդ, այո, տեսել եմ, — պատասխանեց փայտահատը:

— Ե՞տ ժամանակ է:

— Մոտավորապես մի ժամ կլինի:

— Ուշացանք, — բացականչեց Մաստոնը:

— Իսկ հրացանի ձայներ չե՞ք լսել, — հարցրեց Միշել Արդանը:

— Վոչ:

— Վոչ մի ձա՞յն:

— Վոչ մի հատ: Այդ վորսորդը կարդին վորսորդի նման չէր:

— Ի՞նչ անել, — հարցրեց Մաստոնը:



— Մտնել անտառը, մեզ չուղղված գնդակից խփվելու վտանգն աչքի առաջ ունենալով:

— Ա՛հ,— բացականչեց Մաստոնն անկեղծ շեշտով,— ավելի կնախընտրեմ տասը գնդակ ընդունել իմ գլխում, քան թե մեկը Բարբիկենի գլխի մեջ:

— Ուրեմն առաջ շարժվենք,— ասաց Արդանը իր ընկերոջ ձեռքը սեղմելով:

Մի քանի րոպե հետո յերկու բարեկամներն անհայտացան պուրակի մեջ, վորը մի խիտ թափուտ եր՝ կազմված նոճիներից, կաղնիներից, ձիթենիներից, հնդկարմավենիներից և մագնոլիաններից:

Այս տնրեր տեսակի ծառերի ճյուղերը միմյանց հետ այնպես ելին հյուսված, վոր անհնար եր նրանց միջից հեռուն տեսնել: Միշեւ Արդանը և Մաստոնը առաջանում էլին կողք-կողքի, յուր թյամբ անցնելով բարձր խոտերի միջով, ճամբա բանալով ուժեղ փաթաթվող պատուտակների արանքից, հայացքը թափանցելով մացառների ու թանձրախիտ տերեւների մթության մեջ կորած ճյուղերում, ամեն մի քայլափոխին սպասելով հրացանի վտանգավոր պայթյունին: Վոչ մի հետք չէր յերևում, վորը ցույց տար Բարբիկենի այդ կողմով անցնելը: Նրանք գնում էլին կուրորեն, հազիվ տեսանելի շավիղներով, վորոնց վրայից մի հնդիկ կարող եր քայլ առ քայլ հետևել հակառակորդին:

— Ամեն ինչ վերջացած կլինի,— ասաց Մաստոնը հուսահատված:— Բարբիկենի նման մի մարդ անկասկած վոչ խորամանկութուն բանեցրած կլինի, վոչ թակարդ լարած, վոչ ել հնարքներ գործ դրած: Նա չափազանց անկեղծ, չափազանց քաջասիրտ ե: Նա ուղղակի վտանգի առաջ ե քայլել և անպայման փայտահատից բավականաչափ հեռացած լինելով՝ վերջինս հրացանի ձայնը չի լսել:

— Բայց մենք,— պատասխանեց Միշեւ Արդանը,— անտառ մտնելուց հետո մենք խոմ լսած կլինե՞լինք...

— Իսկ յեթե շատ ուշ ենք հասե՛լ,— բացականչեց Չ. Տ. Մաստոնը հուսահատ շեշտով:

Միշեւ Արդանը չկարողացավ պատասխանել. Մաստոնը և նա նորից առաջացան: Մեկ-մեկ կանչերով ձայն էլին տալիս, Բարբիկենի կամ Նիկոլի անունը տալով, սակայն հակառակորդներից

վոչ մեկը չէր պատասխանում այդ կանչերին: Աղմուկից զարթնած ուրախ թռչունների յերամները թաղնվում էլին ճյուղերի մեջ և մի քանի վախեցած այծյամներ խուճապով փախչում էլին մացառների միջից:

Հետախուզությունը մի ժամ ևս տևեց: Անտառի մեծ մասը խուզարկված եր, սակայն մենամարտիկների ներկայությունը ցույց տվող վոչ մի նշան չէր յերևում: Գուցե փայտահատը սխալ տեղեկություն եր տվել, և Արդանն արդեն պատրաստվում եր հրաժարվել շարունակելու անողուտ հետադոտությունը, յերբ հանկարծ մի շարժումով Մաստոնը նրան կանգնեցրեց:

— Լուրթյո՛ւն,— ասաց,— մարդ կա այնտեղ:

— Մարդ կա՞,— պատասխանեց Միշեւ Արդանը:

— Այո, մեկը կա, վոր անշարժ ե թվում: Հրացանը ձեռքին չէ: Ի՞նչ ե անում:

— Բայց չե՞ս ճանաչում նրան,— հարցրեց Միշեւ Արդանը, վորի կարճատեսությունը խանդարում եր տեսնել այսպիսի դեպքերում:

— Այո՛, այո՛, այս կողմն ե դառնում,— պատասխանեց Մաստոնը:

— Ո՞վ ե...

— Կապիտան Նիկոլը:

— Նիկո՛լ,— բացականչեց Միշեւ Արդանը, սրտի ուժեղ բաբախում զգալով:

— Նիկոլը անդե՛ն: Ուրեմն հակառակորդից այլևս վախենալու բան չունե՞ր:

— Գնանք նրա մոտ,— ասաց Միշեւ Արդանը,— և իմանանք թե բանն ինչումն ե:

Բայց հազիվ հիսուն քայլ էլին արել, յերբ կանդ առան՝ ավելի ուշադրությամբ կապիտանին դիտելու համար: Կարծում էլին, թե արյան ծարավի և վրեժով լցված մի մարդ պիտի գտնեն, բայց նրանք նրան տեսնելով ասլած մնացին:

Յերկու հսկա կակաչենիների միջև մի խիտ ցանց եր կապված, իսկ ցանցի մեջ տեղը մի փոքր թռչուն, թևերից բռնված, թպրտում եր վողբաղին ճիչեր արձակելով: Այդ անելանելի վոսայնը լարող թռչնորսը վոչ թե մի մարդ եր, այլ այդ յերկրին հատուկ մի թունամոր սարգ, աղամնու ձվի մեծությամբ, **Էջուք**

Թաթերով. զգվելի միջատն իր վորսի վրա հարձակվելու ժամանակ ստիպված եր յեղել համբան փոխել և կակաչենու հեռավոր ճյուղերի վրա ապաստանել, վորովհետև մի ահավոր թշնամի ել նրան եր սպառնում:

Կապիտան Նիկոլն եր այդ թշնամին, վորը հրացանը գետին դրած, իր դրուժյան վտանգավորութիւնը մոռանալով՝ զբաղված եր զգուշութեամբ ահարկու սարդի թակարդի մեջ ընկած զոհին ազատելով: Յերբ ազատեց, բաց թողեց փոքրիկ թռչունին, վորը ցնծութեամբ թևերը թափահարելով անհայտացավ:

Նիկոլը զմայլած դիտում եր նրա ճախրելը ճյուղերի միջից, յերբ լսեց հուզված ձայնով արտասանված հետևյալ բառերը:

— Դուք լավ մարդ եք:

Նա հետ դարձավ և իր առաջ տեսավ Միշել Արդանին, վորը կրկնում եր:

— Ինչպես նաև՝ ազնիվ մի մարդ:

— Միշել Արդան, — բացականչեց կապիտանը: — Ինչո՞ւ յեք յեկել այստեղ, սարո՞ն:

— Ձեր ձեռքը սեղմելու Նիկոլ և արգելելու ձեզ սպանել Բարբիկենին կամ նրանից սպանվելու:

— Բարբիկենի՞նը, — բացականչեց կապիտանը, — յես յերկու ժամից ի վեր փնտռում եմ նրան առանց գտնելու: Ո՞ւր ե պահվել:

— Նիկոլ, — ասաց Արդանը, — ձեր վարմունքը քաղաքավարի չէ. միշտ պետք ե հարգել հակառակորդին: Հանդիստ յեղեք, յեթե Բարբիկենը վողջ ե, մենք կգտնեք նրան և ավելի հեշտութեամբ, վորովհետև յեթե նա ել ձեզ նման չարչարվող թռչուններ ազատելով չէ զբաղված, անշուշտ ձեզ ե փնտռում: Բայց յերբ նրան կգտնենք, Միշել Արդանի խոսքը վկա, մենամարտի խոսք ել չի լինելու:

— Նախագահ Բարբիկենի և իմ մեջ, — պատասխանեց Նիկոլը լուրջ դեմք ստանալով, — այնպիսի մի թշնամութիւն կա, վոր մեզանից մեկի մահը...

— Լավ, լավ, — ասաց Միշել Արդանը, — ձեզ նման քաջ մարդիկ կարող են միմյանց ստել, սակայն դիտեն նաև հարգել: Դուք չպետք ե մենամարտեք:

— Պիտի մենամարտեմ, պարո՞ն:

— Վո՞չ:

— Կապիտան, — ասաց Մաստոնը հուզված, — յես նախահաճի բարեկամն եմ, յեթե ուզում եք անպայման մեկին սպանել, գնդակն ինձ ուղղեցեք, դա միևնույն բանն ե:

— Պարո՞ն, — ասաց Նիկոլը հրացանը ջղաձգորեն ձեռքի մեջ սեղմելով, — այդ կատակները...

— Մեր բարեկամ Մաստոնը չի կատակում, — սրտասխանեց Միշել Արդանը, — յես նրան հասկանում եմ, յե ինչու համար ուզում եր իր սիրած մարդու համար զոհվել: Բայց վոչ նա, վոչ ել Բարբիկենը զոհ չեն լինելու կապիտան Նիկոլի գնդակներին, այն պատճառով, վոր յերկու հակառակորդներին այնպիսի հրապուրիչ առաջարկ եմ անելու, վոր նրանք սիրով պետք ե ընդունեն:

— Ի՞նչ առաջարկ, — հարցրեց Նիկոլը բացահայտ թերահավատութեամբ:

— Համբերութիւն, — պատասխանեց Արդանը, — իմ առաջարկը Բարբիկենի ներկայութեամբ միայն կանեմ:

— Փնտենք ուրեմն նրան, — բացականչեց կապիտանը:

Իսկույն յերեքով ձամբա ընկան: Կապիտանը հրացանը դատարկելուց հետո ուսին դրեց և դանդաղորեն առաջ անցավ առանց մի բառ արտասանելու:

Կես ժամվա հետախուզութիւնն ցայարդույուն անցավ: Ջ. Տ. Մաստոնը աղետալի նախազգացումներով եր բռնված. նա ուշադրութեամբ կապիտանին եր նայում, մտածելով, յե մի դուրեք Նիկոլը իր վրեժն արդեն լուծել եր և դժբախտ Բարբիկենն այժմ գնդակահար յեղած անշուշտ ընկած եր մի արյունաթաթախ թիփ տակ: Թվում եր, յե Միշել Արդանը միևնույն կատակածն ուներ և յերկուսով հարցաքննող հայացքները ուղղել եյին կապիտան Նիկոլին, յերբ հանկարծ Մաստոնը կանգ առավ:

Քսան քայլ հեռավորութեան վրա հսկա ծառի ընին հենված, կիսով չափ խոտերով ծածկված մի անշարժ մարդ եր յերևում:

— Նա յե, — ասաց Մաստոնը:

Բարբիկենը չեր շարժվում: Արդանն ուշադրութեամբ նայեց կապիտանին, բայց նա անդրդվելի յեր: Արդանը մի քայլ արեց և բղավեց:

— Բարբիկենի՞ն, Բարբիկենի՞ն:

Վոչ մի պատասխան: Արդանը վազեց իր բարեկամի մոտ,

բայց այն բոլորին յերբ նա ուզում էր նրա թիւը բռնել, հանկարծ կանգ առաւ զարմացական մի ճիչ արձակելով:

Բարբիկենը մատիտը ձեռքին ֆորմուլաներ և յերկրաչափական ձևեր էր գծում ծոցատեսրում, իսկ դատարիկ հրացանն ընկել էր գետին:

Տարված իր աշխատանքներով, դիտնականն էլ իբ հերթին մենամարտն ու վոխը մոռացած, վոչինչ չէր տեսել, վոչինչ չէր լսել: Բայց յերբ Միշել Արդանը նրա ձեռքը բռնեց, նա վճռաբխ յելավ և զարմանքով նրան նայեց:

— Ա՛հ, — բացականչեց նա վերջապես, — դու այստե՛ղ ես: Գտել եմ բարեկամս, գտել եմ:

— Ի՞նչ ես գտել:

— Միջոցը:

— Ի՞նչ միջոց:

— Թնդանոթի արձակման ժամանակ առաջացած ցնցումը վոչնչացնելու միջոցը:

— Իրա՞վ, — հարցրեց Միշելը, աչքի տակով կապիտանին նայելով:

— Այո՛, ջուրը, պարզապես ջուրը, վորը զսպանակի պես կներգործի... Ա՛հ, Մաստոն, — բացականչեց Բարբիկենը, — դուք ե՞րբ այստեղ եք...

— Նույն ինքը, — պատասխանեց Միշել Արդանը, — թույլ տվեք, վոր ձեզ ներկայացնեմ նաև հարգելի կապիտան Նիկոլին:

— Նիկոլ՛ը, — բացականչեց Բարբիկենը մի վայրկյանում վոտքի կանգնելով, — ներողութուն կապիտան, յեռ մոռացել եյի... Բայց պատրաստ եմ...

Միշել Արդանն իսկույն միջամտեց, առանց թույլ տալու, վոր յերկու հակառակորդները վեճի բռնվեն:

— Իսկապես, — ասաց Արդանը, — բախտավորութունն է, վոր ձեզ նման պատվական մարդիկ ավելի շուտ իրար չպատահեցին: Յերբ մարդիկ մոռանում են իրենց ատելութունը մեխանիկայի խնդիրներով կամ սարդի գոհերը ազատելու գործով զբաղվելու համար, այդ ցույց է տալիս, վոր այդ ատելութունն այնքան էլ լուրջ բան չէ:

Միշել Արդանը նախադա՛հին պատմեց կապիտանի տառամու-թյունը:

— Այժմ ձեզ հարց եմ տալիս, — ասաց նա վերջացնելով, — մի՞թե ձեզ նման պատվական մարդիկ ստեղծված են միմյանց դուրս ջարդելու համար:

Այս միջին զվարճալի դրության մեջ այնպիսի մի անսպասելի բան կար, վոր Բարբիկենն ու Նիկոլը չէին կարողանում վորոշել, թե ինչ դերք պիտի բռնեն մեկ-մեկու հանդեպ: Միշել Արդանը հասկացավ այդ և վորոշեց շտապեցնել հաշտութունը:

— Իմ լավ բարեկամներս, — ասաց նա շրթունքների վրա խաղացնելով իր լավագույն ժպիտը, — ձեր մեջ տեղի ունեցածը միշտ էլ թյուրիմացութունն է յեղել, ուրիշ վոչինչ: Լա՛վ ուրեմն, ապացուցելու համար, վոր ձեր մեջ ամեն ինչ վերջացել է և քանի վոր դուք էլ մահից չվախեցող մարդիկ եք, անկեղծորեն ընդունեցեք ձեզ անելիք առաջարկս:

— Խոսեցե՛ք, — ասաց Նիկոլը:

— Բարբիկեն բարեկամս կարծում է, թե թնդանոթի արկը ուղղակի թոչնույն յե դեպի Լուսին:

— Այո, իհարկե, — պատասխանեց նախադա՛հը:

— Իսկ Նիկոլ բարեկամս համոզված է, վոր արկն ընկնելու յե Յերկրի վրա:

— Վստահ եմ, — բացականչեց կապիտանը:

— Լավ, — շարունակեց Միշել Արդանը, — յես ձեզ համաձայնեցնելու հավանութունը չունեմ, բայց պարզապես ասում եմ — յեկեք դնանք ինձ հետ և տեսեք, թե ճանապարհի՞ն կմնանք, թե վոչ:

— Ի՞նչ — գոչեց Ջ. Տ. Մաստոնն ապշած:

Յրկու հակառակորդներն այս անակնկալ առաջարկի վրա միմյանց նայեցին, ուշադրութամբ գննելով իրար: Բարբիկենը սպասում էր կապիտանի պատասխանին: Նիկոլը՝ Բարբիկենի խոսքերին:

— Դե՛, ի՞նչ կասեք, — շարունակեց Միշել Արդանն ամենագրավիչ շեշտով, — հիմա մանավանդ, վոր ցնցման վտանգն անցել է...

— Համաձայն եմ, — բացականչեց Բարբիկենը:

Բայց ինչքան էլ, վոր Բարբիկենն արագ էր արտասանել այս խոսքը, կապիտան Նիկոլն էլ նրա հետ կրկնեց միևնույն բառը:

— Ու՛րա՛, բո՛ւ՛վո, կեցցե՛, — բացականչեց Միշել Արդանը,

ձեռքը յերկու հակառակորդներին մեկնելով:— Յեւ քանի վոր  
գործն այսպէս հարթվեց, բարեկամներս, թույլ տվեք, վոր  
Փրանսիական սովորութեան համաձայն հրավիրեմ ձեզ: Գնանք  
նախաճաշելու:

ԳԼՈՒԽ XXI

### ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ

Նույն օրն ամբողջ Ամերիկան հեռագրով միաժամանակ տե-  
ղեկացաւ կապիտան Նիկոլի և նախագահ Բարրիկենի մենամարտի  
ու նրա տարրինակ վերջավորութեան մասին: Այդ գործի մեջ  
ասպետական Փրանսիացու կատարած դերը, դժվարութիւնը  
հարթող նրա առաջարկը, յերկու հակառակորդներն հաշտու-  
թիւնը, Լուսինը նվաճելու ծրագիրը, վորի համար Փրանսիայի  
և Միացյալ Նահանգների ներկայացուցիչները միատեղ պիտի  
գործեյին, — այս բոլորն ե՛լ ավելի բարձրացրին Միչել Արդանի  
ժողովրդականութիւնը:

Հայտնի յե, թե ամերիկացիներն ինչպիսի վոզեորութեամբ  
համակրում են մի վորևէ անձնավորութեան: Մի յերկրում, ուր  
ամենից լուրջ պաշտոնյաներն իսկ մի վորևէ պարուհու կառքին  
են լծվում և հաղթական յերթ կատարում, կարելի յե յերե-  
վակայել, թե ինչպիսի վոզեորութիւն առաջացրեց հանդուգն  
Փրանսիացին: Յեթե նրա կտուքի ձիերը չարձակեցին, ապա ան-  
շուշտ այն պատճառով, վոր նա այդպիսիները չուներ, բայց  
հարգանքի և հիացման մնացած բոլոր տեսակի ապացույցները  
նա ստացաւ առատորեն: Չկար մի քաղաքացի, վոր սրտով նրա  
հետ չլիներ:

Այդ օրից սկսած Միչել Արդանը վոչ մի բոպե հանդիստ  
չուներ: Միացյալ Նահանգների բոլոր անկյուններից յեկած  
պատգամավորութիւններն անդադար ու անվերջ այցելում էին  
նրան. իսկ ինքն ստիպված եր նրանց ընդունել կամա թե ակամա:  
Սեղմած ձեռքերի, ընդունած մարդկանց հաշիվ չկար:

Վերջիվերջո նա սաստիկ հոգնեց, անթիվ բաժակաճառերի  
հետևանքով խզված ձայնը չըթունքներից դուրս եր դալիս հազիվ

լսելի շեշտով: Յերկրի բոլոր նահանգների և դավառների պատ-  
վին խմած բաժակների պատճառով քիչ եր մնացել աղիքների  
բորբոքումով հիվանդանար: Այս հաջողութիւնը մի ուրիշին ա-  
ռաջին օրից կհարբեցներ, բայց նա ինքն իրեն պահեց կի-  
սաթմբած, գլուխը տաք վիճակում, մնալով միշտ սրամիտ և  
դրամիչ:

Նրան այցելող բոլոր տեսակի պատգամավորութիւնների  
մեջ աչքի ընկաւ «Լուսնոտ»-ների պատվիրակութիւնը, վոր  
պարտք համարեց ներկայանալ Լուսնի ասպագա նվաճողին: Մի օր  
այդ խեղճ «լուսնոտ»-ներից մի քանիսը— վորոնց թիվը քիչ  
չե Ամերիկայում— նրա մոտ դալով, խնդրեցին նրա հետ վերա-  
դառնալ իրենց ծննդավայրը՝ Լուսինը: Նրանցից վոմանք պըն-  
դում էյին, վոր «լուսններն» գիտեն և ցանկանում էյին այդ  
լեզուն սովորեցնել Միչել Արդանին: Նա ել սիրահոժար լսում  
եր նրանց և նույնիսկ խոստացաւ կատարել նրանց հանձնարա-  
րութիւնները լուսնաբնակ բարեկամների համար:

— Տարրինակ խենթութիւն, — ասաց նա մի օր Բարրիկե-  
նին լուսնոտների պատվիրակութիւնը ճանապարհ գցելուց հե-  
տո: Դու հավատո՞ւմ ես հիվանդութիւնների վրա Լուսնի ունե-  
ցած ազդեցութեան:

— Վո՛չ, — պատասխանեց Թնդանոթային ակումբի նախագա-  
հը:

— Յես ել չեմ հավատում, սակայն պատմութեան մեջ հիշ-  
վում են զարմանալի փաստեր: Որինակ, բժիշկներից վոմանք  
ընկնալորութիւնը դատում են այն հիվանդութիւնների շարքը,  
վորոնք հետևում են Լուսնի փուլերին: Ջղային վորոչ հիվան-  
դութիւնները նույնպէս իրր թե նրա ազդեցութեան են յեն-  
թարկվում: Որինակ, բժիշկ Մեզը խոսում է մի յերեխայի մա-  
սին, վորը Չղաճութեան մեջ եր ընկնում, յերը Լուսինը լրանում  
եր: Բժիշկ Գալլը նկատել է, վոր թույլ մարդկանց մտադրու-  
թիւնը ուժեղանում է ամսական յերկու անգամ, Լուսնի ծագ-  
ման և լրիվ շրջանին: Վերջապէս, դեռ բազմաթիւ դիտողու-  
թիւններ կան նաև գլխի պտույտի, ժանտառակի, զնաչըջիկու-  
թեան մասին, վորոնք բոլորը, թվում է թե, ցույց են տալիս  
Լուսնի խորհրդավոր ազդեցութիւնը մարդկային հիվանդու-  
թիւնների վրա:

— Բայց ի՞նչպես, ի՞նչ է պատճառը, — հարցրեց Բարբիկենը: — Ինչո՞ւ համար, — պատասխանեց Արդանը, — չգիտեմ, միայն յես կարող եմ կրկնել այն պատասխանը, վոր տրվել է Արագոն Պլուտարքոսից տասիննը դար հետո — «գուցե նրա համար, վոր ճշմարիտ չէ»:

Միշել Արդանը չկարողացավ խուսափել նշանավոր մարդ լինելու հետ կապված մի շարք անախորժություններից: Ուրիշների հաջողությունները շահագործող մարդիկ ցանկացան նրան ևս ոգտագործել: Կրկեսների հայտնի անտրեպրենյոր Բարնոմը մեկ միլիոն առաջարկեց նրան՝ Միացյալ Նահանգների քաղաքները չըջելու և նրան ցուցադրելու համար վորպես արտակարգ մի յերեւոյթ: Միշել Արդանը նրան փղապան անվանեց և վռնդեց:

Մահայն յեթե նա մերժեց հասարակության հետաքրքրությունն այդ ձևով բավարարել, բայց և այնպես նրա լուսանկարներն ամբողջ աշխարհ շրջեցին և այլոսների մեջ պատվավոր տեղ գրավեցին: Արդանին նկարեցին բոլոր չափերով — բնական մեծությունից սկսած մինչև դրոշմանիչի մանրանկար չափով: Սմեն մարդ կարող եր ձեռք բերել իր հերոսին բոլոր յերեվակայելի դիրքերով — ամբողջ մարմնով, իրանով, կանդնած, ամբողջ դեմքով, պրոֆիլ, յերեք քառորդ դեմքով, թեկուզ և կոնակից: Մեկ ու կես միլիոնից ավելի նկարներ հրատարակ հանվեցին. նա կարող եր առիթից ոգտովել և լավ փող շահել, սակայն բոլորովին ել չոգտովեց: Յեթե միայն իր մաղերի ամեն մեկը ծախեր մեկ դոլլարով, մեծ հարստության տեր կդառնար:

Ճիշտն ասած, այդ ժողովրդականությունը նրան անհաճելի չեր. ընդհակառակը: Նա իրեն դթել եր հասարակության տրամագրության տակ և թղթակցում եր ամբողջ աշխարհի հետ: Սմեն տեղ կրկնում եյին նրա սրախոսությունները և տարածում, մանավանդ այնպիսիները, վոր նա չեր ասել, բայց ըստ սովորության նրան եյին վերադրում, վորովհետև այդ կողմից նա առատ պաշար ուներ:

Յերբ նա կարողացավ փոքր Ինչ ազատվել հրատարակային մեծարանքներից, բարեկամների հետ դնաց կոլումբիադը դիտելու: Նա շատ բան եր նրան պարտական: Մանավանդ այժմ, նա թնդանոթաձգության արվեստի մեջ շատ առաջ եր գնացել այն որից, յերբ սկսել եր շփվել Բարբիկենի, Մաստոնի և մյուսների

հետ: Նրա ամենամեծ հաճույքն եր շարունակ կրկնել այդ քաջ ոմբաձիգներին, թե նրանք համակրելի և դիտնական մարդասպաններ են միայն, և չեր դադարում այդ մասին սրախոսելուց: Կոլումբիադը տեսնելով նա սքանչացավ և մինչև հատակը իջավ այդ վիթխարի թնդանոթի, վորը մի քանի որից նրան պիտի թոցներ մինչև Լուսին:

— Գոնե, — ասում եր Արդանը, — այս թնդանոթը վոչ վոքեչի վնասելու, մի բան, վոր բավական զարմանալի յե մի թնդանոթի համար: Սա նման չե այն թնդանոթներին, վորոնք միայն քանդում, հրդեհում, խորտակում, սպանում են:

Այստեղ պեաք ե հիշել մի դեպք Ջ. Տ. Մաստոնի վերաբերյալ: Յերբ Թնդանոթային ակումբի քարտուղարը լսեց, վոր Բարբիկենն ու Նիկոլը ընդունեցին Միշել Արդանի առաջարկը, վորոչեց միանալ նրանց և «չորսով խաղալ»: Մի ոք նա խնդրեց իրեն ել մասնակից դարձնել ուղեվորության: Բարբիկենը ցավելով, վոր ստիպված եր մերժել, նրան հասկացրեց, վոր ումբը չեր կարող այդքան մեծ թվով ուղեվորներ տանել: Ջ. Տ. Մաստոնը ճարահատած դիմեց Միշել Արդանին, վորը նույնպես աշխատեց համոզել նրան, վոր հետ կենա այդ մտադրությունից:

— Գիտե՞ս ինչ, բարեկամս, — ասաց Արդանը, — իմ խոսքերը վատ մտքով չընդունես, բայց շիտակը խոսնելով — խոսքը մեր մեջ մնա — դու Լուսնին ներկայանալու համար դեռևս շատ անկատար ես:

— Անկատար, — բացականչեց խրոխտ հաշմանդամը:

— Այո՛, իմ քաջ բարեկամս: Յերեվակայիւր վոր այնտեղ Լուսնի վրա հանդիպեցինք բնակիչներին: Ի՞նչ կմտածեն նրանք քո մասին: Ուզում ես, վոր մենք այդպիսի տխուր դադափա՞ր տանք նրանց մեր յերկրի անցուդարձի մասին. քեզ տեսնելով նրանք կիմանան, թե ինչ բան է պատերազմը, նրա տխուր հետեվանքները, նրանք կտեսնեն, վոր Յերկրի մարդիկ իրենց ժամանակի յավազույն մասը գործ են ածում միմյանց գլուխը, վորոն ու ձեռքը ջարդելով, իրար կտորելով, այն ել այնպիսի մի յերկրի վրա, վորտեղ կարող են ապրել ու սնվել հարյուր միլիարդ մարդ, մինչդեռ այժմ միայն հազար յերկու հարյուր միլիոն մարդ է ապրում: Վո՛չ, սիրելի բարեկամ, քո պատճառով մեզ Լուսնից կվռնդեն:

— Իսկ յեթե դուք այնտեղ հասնեք կտոր-կտոր յեղած, դուք էլ ինձ նման «անկատար» կլինեք:

— Ճիշտ է, — պատասխանեց Միշել Արդանը, — բայց մենք կտոր-կտոր չենք լինի:

Յեւ իրոք Արդանը հիմք ուներ այդ ասելու:

Թնդանոթի մասին ավելի վստահ լինելու նպատակով հոկտեմբերի 18-ին մի նախնական փորձ կատարվեց, վորը շատ լավ արդյունք տվեց և մեծ հույսեր ներշնչեց: Բարբիկենը ցանկանալով ստուգել ուսման արձակման ժամանակ առաջանալիք ցնցման ազդեցությունը, Պենսակոլայի ղեկավարներից բերել տվեց յերեսուն յերկու մատնաչափ (75 սանտիմետր) մի հրանոթ: Նրան տեղավորեցին Հիլսբորոյի նավակայանի քարափի վրա, վորպեսզի արկն ընկնի ծովը և այդպիսով անկման թափը մեղմանա: Խնդիրը ուսման արձակման ժամանակ առաջանալիք ցնցման ուժը փորձեցն էր և վոչ թե հասնելու կետին բաղխման ուժը փորձելը: Այս հետաքրքիր փորձի համար մեծ խնամքով պատրաստվեց մի դատարկ ուսման: Ռուսները ներսի կողմից կրկնակի կերպով պատեցին պատեցին պողպատե զսպանակներով ամրացած մի պատյանով: Այդպիսով ուսմանը ներսից փափկացած, խսկական մի բնի ձև ստացավ:

— Ախտոս, վոր չի կարելի մեջը նստել, — ասում էր Ջ. Տ. Մաստոնը, — ցավելով, վոր հասակը թույլ չեր տալիս այդ արկածախնդրությունն անելու:

Այս գեղեցիկ ուսման մեջ, վոր փակվում էր մի պտուտակավոր խուլով, նախ դրին մի կատու, ապա մի սկյուռ, վորը պատկանում էր Թնդանոթային ակումբի մշտական քարտուղարին և վորին նա այնքան սիրում էր: Բայց ուզում էին իմանալ թե այդ կենդանին, վոր գլխի պտուկտների սովոր չեր, ինչպես պիտի տաներ այս փորձնական ճամբորդությունը:

Հրանոթը լցրին հարյուր վաթսուն Ֆունտ վառոդով և ուսմանը դնելով իր տեղը կրակեցին:

Իսկույն ուսմանը արագություն բարձրացավ, վեհորեն գծեց իր կոնադիժը, հասավ մոտավորապես հազար վոտնաչափ բարձրություն և գեղեցիկ մի կորագծով ընկավ ծովի ալիքների մեջ:

Առանց մի բոպե կորցնելու, մի մակույկ սլացավ ուսման ընկած տեղը, ճարպիկ սուզվողներ նետվեցին ջուրը, ուսման

ըլթակները պարանով կապեցին և բարձրացրին մակույկի մեջ: Հազիվ հինգ բոպե էր անցել կենդանիներին ուսման մեջ բանտարկելու և նրանց ազատ արձակելու մեջ:

Արդանը, Բարբիկենը, Մաստոնը, Նիկոլը մակույկի վրա էլին և գործողությունը հետևում էին շատ մեծ հետաքրքրությունով: Հազիվ էր բացվել ուսման բերանը, յերբ կատուն դուրս թռավ մի քիչ շփոված, բայց կայտառ և առանց ողբային ուղեվորությունից վերադարձողի տեսք ունենալու: Մակայն սկյուռը չկար: Շատ փնտռեցին, բայց վոչ մի հետք: Պետք յեղավ ճամբորդության հետ հաշտվել — կատուն կերել էր ճամբու ընկերովը:

Ջ. Տ. Մաստոնը չափազանց տխրեց խեղձ սկյուռի կորստյան համար, բայց հետո միխթարվեց, նկատի ունենալով, վոր սկյուռը զոհվել էր գիտություն համար:

Համենայն դեպս՝ այս փորձից հետո բոլոր տատանումները և վախերը չբացան: Բացի այդ, Բարբիկենի նախադժով ուսմանը դեռևս պետք է կատարելագործվեր և հակահարվածի ազդեցությունը համարյա վոչնչանար: Մնում էր միայն մեկնել:

Յերկու որ հետո Միշել Արդանը Միացյալ Նահանգների նախագահից մի գրություն ստացավ, մի պատիվ, վոր նրան խիստ ուրախացրեց: Կառավարությունը նրան շնորհում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացու կոչումը:

ԳԼՈՒԽ XXII

ՎԱԳՈՆ-ՌՈՒՄԲԸ

Կոլումբիադի ավարտումից հետո հանրային հետաքրքրությունն իսկույն ուղղվեց դեպի արկը, այդ նոր փոխադրական միջոցը, վորը սահմանված էր յերեք հանդուգն արկածախնդիրներին փոխադրելու դեպի Լուսին: Վոչ վոք չեր մոռացել, վոր սեպտեմբերի 30-ի հեռագրով Միշել Արդանը խնդրել էր փոփոխություն մտցնել Կոմիտեյի անդամների նախագծի մեջ:

Սկզբում նախագահ Բարբիկենը մտածում էր, թե ուսման ձևին այնքան էլ կարևոր չէ, վորովհետև մի քանի բոպե մթնո-

լորտի մեջ սուրալուց հետո, նա իր ընթացքը պիտի շարունակեր դատարկութեան մեջ: Այդ պատճառով եւ կոմիտեն ընդունել երկ կլոր ձեւը, վորպէսզի ուժը կարողանա հեշտութեամբ ինքն իրեն պտտել: Բայց այժմ, յերբ արկը ծառայելու յեր մարդ վոխադրելու գործին, հարցը փոխվում եր: Միչեւ Արդանը ցանկութուն չուներ սկյուռի նման պտտվել, այլ ուզում եր ճանապարհորդել զլուսը բարձր, վոտքերը ցածր, նույնքան արժանապատվութեամբ, ինչքան ողապարիկի մակույկի մեջ, ավելի առաջ, ի հարկէ, բայց առանց անգուրեկան գլխկոնձինք տալու:

Այդ նպատակով նոր նախագծեր ուղարկվեցին Ալբանիի Բերդվիլ գործարանին, հանձնարարելով պատվերը կատարել խիտ շտապ: Այդպէս ձեւափոխված ուժը ձուլեց նոյնմբերի 2-ին և իսկույն Ստոնսհիլլ ուղարկվեց յերկաթուղով: Նոյնմբերի 10-ին ուժը տեղ հասավ անվնաս: Միչեւ Արդանը, Բարբիկենը և Նիկոլը մեծ անհամբերութեամբ սպասում էին այդ «վազոն-ուժը»-ին, վորի մեջ պիտի նստեցին մի նոր աշխարհ գտնելու համար:

Պետք ե տեսլ, վոր այդ նոր արկը մետաղէ մի սքանչելի կառուցվածք եր, վորը պատիվ եր բերում ամերիկայն արդյունարեւական հանճարին: Առաջին անգամն եր, վոր ալյումինի այդքան մեծ քանակութուն եր ձեռք բերվում, ինչ վոր իսկապէս հրաշալի հաջողութուն կարելի յեր համարել: Այդ գեղեցիկ ուժը վայլում եր արեւի տակ: Իր կոնստրուկտիվ նա նմանում եր հաստապատ աշտարակներին, վորոնցով միջնադարյան ճարտարապետները զարդարում էին դղյակները և բերդերը անկյունները: Պակասում էին միայն պատերի անցքերը և հողմացույցը:

— Կարելի յե սպասել, — ասաց Արդանը, — վոր միջից դուրս կգա սպառազեն մի մարդ կարճ հրացանով և սողապատ զրահով: Իսկ մենք ուժը մեջ կապրենք Փետդալական իշխանների նման, և յեթե մի քիչ հրետանի ունեցանք, կարող ենք դիմադրել լուսնարնակ ամբողջ մի բանակի, յեթե այդպիսին գոյութուն ունի իւրանի վրա:

— Ուրեմն հավան՞ում եք ոճրակառքին, — հարցրեց Բարբիկենն իր բարեկամին:

— Այո՛, այո՛, անկասկա՛ծ, — պատասխանեց Միչեւ Արդանը, վոր ուժը դիտում եր արվեստագետի հայացքով: — Յավալի յե միայն, վոր ձեւն ավելի նուրբ և գաղաթն ավելի սիրուն չէ: Կարելի յեր նրա ծայրին դնել մետաղէ քանդակներ, որինակ՝ մի վիշապ-առյուծ կամ կրակից դուրս յելած թեվատարած ու յերախը բաց արած մի սալամանդր...

— Ինչի՞ յե պետք, — ասաց Բարբիկենը, վորի գործնական միտքը այնքան ել զգայուն չէր արվեստի գեղեցիկութուններին:

— Ինչի յե պետք, Բարբիկեն բարեկամս, ավա՛ղ, քանի վոր հարցնում ես, վախենում եմ, վոր յերբեք չհասկանաս:

— Համենայն դեպս ասա, սիրելի բարեկամ:

— Իմ կարծիքով, ամեն մի գործի մեջ պետք է մի քիչ գեղարվեստ դնել, այդպէս ավելի լավ ե: Ծանոթ ես մի հնդկական պիեսի, վոր կոչվում ե «Մանկական սայլակը»:

— Անունն իսկ չեմ լսել, — պատասխանեց Բարբիկենը:

— Չարմանալի չէ, — ասաց Միչեւ Արդանը: — Իմացիր ուրեմն, վոր այդ պիեսի մեջ մի գող կա, վորը մի տան պատը ծակելիս մտածում ե, թե ինչ ձեւով բաց անի, քնարի՞, թռչունի՞, ծաղկի՞, թե սափորի: Ասա ինձ, Բարբիկեն բարեկամս, յեթե այդ ժամանակ դու դատարանի անդամ լինեցիր, մի՞թե կդատապարտեցիր այդ գողին:

— Առանց տատանվելու, — պատասխանեց թնդանութային ակումբի նախագահը, — այն ել հանցանքը ծանրացնող հանգամանքներով:

— Իսկ յես նրան անպարտ կարձակեցի, Բարբիկեն բարեկամս: Ահա թե ինչու համար դու յերբեք ինձ չես հասկանա:

— Չեմ ել հիորձի հասկանալ, իմ քաջ արվեստագետ:

— Բայց, — շարունակեց Միչեւ Արդանը, — յեթե մեր վազոն-ուժը արտաքինը գեղեցիկ չէ, գոնե յես կարո՞ղ եմ նրան կահավորել իմ ուղածի նման և յերկրազնդի դեսպաններին վայել կերպով:

— Այդ տեսակետից, սիրելի Միչեւ, — պատասխանեց Բարբիկենը, — արա քո Փանտաղիայի համաձայն, քեզ թողնում ենք բոլորովին ազատ:

Բայց նախքան դուրեկանին անցնելը, թնդանութային ակումբի նախագահը մտածել եր ողտակարի մասին և հակահար-

վածի ազդեցութիւնը նվազեցնելու համար նրա հնարած միջոցները կատարվեցին շատ ճշտութեամբ:

Բարբիկենն իրավամբ ասել էր, վոր վոչ մի զսպանակ չէր կարող բաղխումը մեղմացնել, և Սկրեսնոյի անտառի մեջ կատարած հայտնի զրոսանքի ժամանակ նրան հաջողվել էր այս մեծ դժվարութիւնը լուծել հնարամիտ կերպով: Այդ կարևոր գործը կատարելու համար նա ղիմել էր ջրի ոգնութեան: Ահա թէ ինչպէս:

Ռումըը պիտի լցվեր մի մետր խորութիւն ունեցող ջրի զանգվածով, ջրի մակերևութի վրա պիտի ծվար բոլորովին անթափանց փայտեց շինված մի սկալառակ: Այս խիստահան լաստի վրա յեր, վոր պիտի տեղավորվէին ուղեվորները: Ջրի զանգվածը մի քանի մասերի յե բաժանվում հորեպոնական միջնորմներով (պատերով), վորոնք հետզհետե պիտի շարդվէին կրակելու ժամանակ առաջացած հարվածից: Այդպիսով, ջրի յուրաքանչյուր շերտը, ներքեից սկսված դեպի վերև, դատարկող խողովակների միջոցով հոսելով դեպի ուումըի վերևի մասը՝ զսպանակի դեր պիտի կատարեր, իսկ սկալառակն իր մեջ ունենալով շատ հզոր մի արդեւակ, ներքեի հատակին կարող էր ղիպէլ միայն միջնորմների հաջորդական խորտակումով: Կասկած չկա, վոր ուղեվորները դեռևս բավական ուժեղ ցնցում պիտի գգային ջրի զանգվածի բոլորովին դուրս հոսելուց հետո, սակայն առաջին բաղխումը համարյա բոլորովին մեղմանում էր այս ամենահզոր զսպանակի միջոցով:

Ճիշտ է, վոր հիսուն չորս քառակուսի վոտնաչափ մակերևութի վրա, յերեք վոտնաչափ խորութեամբ ջուրը պիտի ունենար մոտավորապես տասնմեկ հազար հինգ հարյուր Փոնտ ծանրութիւն, սակայն կոլումբիադի մեջ հաղթված դաղերի ընդլայնումը կկարողանար— Բարբիկենի կարծիքով— հաղթահարել ծանրութեան այդ անումը. բացի այդ, բաղխումն ամբողջ ջրի զանգվածը դուրս պիտի չպրտեր մի վայրկյանից պակաս ժամանակամիջոցում և ուումըն այդպիսով իսկույն իր նորմալ ծանրութիւնը պիտի վերստանար:

Ահա թէ ինչ էր մտածել Թնդանոթային ակումբի նախագահը և ինչ ձևով էր ցանկանում լուծել հակահարվածի լուրջ խնդիրը: Գրեզվի գործարանի ինժեներները շատ լավ հասկացան գործի

էյութիւնը և հրաշալի կերպով իրագործեցին Բարբիկենի նախագիծը:

Ռումըի վերևի պատերը ծածկված էին կաշվե հաստ շերտով, վորն իր հերթին հաստաթաղած էր լայնազույն պողպատեց պատրաստված պարուբաձեվ զսպանակների վրա, վորոնք ժամացույցի զսպանակների առաձգականութիւնն ունէին: Ջրի խողովակները ծածկվել էին այդ կաշվե շերտի տակ և բոլորովին չէին յերևում:

Ռումըը գրեց իննը վոտնաչափ լայնութիւն և տասներկու վոտնաչափ բարձրութիւն ուներ: Նորմալ ծանրութիւնը պահպանելու համար պատերի հաստութիւնը մի քիչ պակասեցվել էր իսկ ներքեի մասը ավելի հաստացվել, վորովհետև այդ մասն էր, վոր կրելու յեր պիրոքսիլինի բռնկումից առաջացած դպերի ամբողջ ուժը: Ընդհանրապես այդպես են պատրաստվում բոլոր տեսակի պայթուցիկ և դլանա-կոնաձև ուումըրը, վորոնց հատակը միշտ ավելի պինդ է:

Այս մետաղե աշտարակի մեջ կարելի յեր մտնել ուումըի կոնաձեվ մասի պատի մեջ բացված մի նեղ անցքից, վորը նման էր շոգենալի ողանցքներին: Այդ անցքը շատ ամուր կերպով վակվում էր ալյումինի տախտակով, ներսից ամբացված ուժեղ պտուտակներով: Ուղեվորներն այդպիսով կարող էին այդ շարժական բանտից դուրս գալ, հենց վոր հասնէին Լուսին:

Սակայն խնդիրը միայն Լուսինն հասնելը չէր, պետք էր նաև դիտել ճանապարհին: Դրանից էլ հեշտ բան չկար: Այդ նպատակով կաշվի շերտի տակ դետեղված էին չորս հատ շատ հաստ վոսղաձեվ ապակե լուսամուտներ, վորոնցից յերկուսը բացված էին ուումըի շրջանակաձեվ պատերի մեջ, յերրորդը ներքեի մասում, իսկ չորրորդը կոնաձեվ ղլխի մեջ: Այդպիսով բոլոր ուղեվորները միաժամանակ կարող էին դիտել Յերկիրը, վորից հեռանում էին, Լուսինը, վորին մոտենում էին և աստղազարդ Յերկնքի ընդարձակ տարածութիւնը: Այս ապակե փոքրիկ պատուհանները մեկնումի պահին առաջացած բաղխումի դեմ պաշտպանվում էին ուժեղ ամբացված տախտակներով, վորոնց հետո հեշտութեամբ կարելի յեր դուրս գցել, քանզելով ներքեի պտուտակները: Այդպիսով ուումըի ներքին ողը դուրս գնալ չէր կարող և միևնույն ժամանակ հնարավոր կլինէր դիտել դուրսը:



Այս ամբողջ մեխանիզմը սքանչելիորեն սարքավորված, շատ հեշտութեամբ աշխատում էր շնորհիվ ինժեներներին համառութեամբ:

Ռումբի ներքոն շատ լավ ամրացած ամանները հատկացված էին յերեք ուղեվորներին անհրաժեշտ ջուրը և ուտելիքը պահելու համար. կարելի չէր նույնիսկ ունենալ կրակ և լույս ոգային գազի միջոցով, վորը սեղմված վիճակում պահվում էր մի հատուկ անոթի մեջ, մի քանի մթնոլորտ ճնշման տակ: Բավական էր բաց անել ծորակը և վեց որ ոգային գազը պիտի լուսավորեր և տաքացներ այդ հանդստավետ կառքը: Ինչպես տեսանք, կյանքի և բարեկեցութեան համար վոչինչ չէր պակասում: Բացի այդ, շնորհիվ Միշել Արդանի ճաշակի, դեղարվեստական իրերը ոգտակարի վրա ավելացրին նաև դեղեցիկն ու հաճելին և նա անկասկած ունեւրը մի իսկական արվեստագետի սրահի կվերածեր, յեթե տեղը փոքր չլիներ: Սակայն սխալ կլիներ կարծել, թե յերեք ուղեվորները պիտի նեղվեյին այդ մետաղե աշտարակի մեջ: Նրա ծավալը հիսունչորս քառակուսի վոտանաչափ էր, մոտավորապես վեց վոտանաչափ բարձրութեամբ, այդպիսով ունեւրի ուղեվորները բավականաչափ ազատ շարժումներ կարող էին անել: Դրանից ավելի հանդիստ լինել չէր կարելի նույնիսկ Միացյալ Նահանգներին գնացքների առաջին կարգի լավագույն վագոններում:

Մանդի և լույսի հարցը լուծվելուց հետո՝ մնում էր լուծել մի այլ հարց: Պարզ էր, վոր արկի մեջ յեղած ողբ չորս որ չէր բավարարի ուղեվորների շնչառութեան համար. յուրաքանչյուր մարդ մի ժամում սպառում է մոտավորապես հարյուր լիտր ողբի մեջ պարունակված թթվածին: Բարբիկենը, իր ընկերները և այն յերկու շները, վորոնց նրանք մտադիր էին տանել, քսան չորս ժամում պիտի սպառեյին յերկու հազար չորս հարյուր լիտր թթվածին, կամ մոտավորապես յերեքական կիլոգրամ:

Անհրաժեշտ էր ուրեմն նորոգել ունեւրի ողբ: Ինչպես: Շատ պարզ միջոցով, այն է Ռեզեյի և Ռենյոյի հնարած ձեկով, վորը հիշել էր Միշել Արդանը միտինգում:

Հայտնի չէ, վոր ողբ կազմված է գլխավորապես քսան մեկ մաս թթվածնից և յոթանասունինը մաս ազոտից: Բայց ինչ և կատարվում շնչառութեան միջոցին: Մի շատ պարզ յերեք վոլյութ: Մարդը ծծում է ողբի թթվածինը, վոր կյանքը պահելու

գլխավոր աղբակն է և արտաշնչում է ազոտը: Արտաշնչված ողբ կորցնում է մոտավորապես թթվածնի հինգ տոկոսը և նրա փոխարեն պարունակում է նույն քանակութեամբ ածխածին գազ, վորն առաջացել է մարդու մարմնի մեջ՝ թթվածնի աղբեցութեամբ արյան նյութերի այրումով: Ուրեմն փակ միջավայրի մեջ, մի վորոչ ժամանակ անց, ողբի ամբողջ թթվածինը փոխարինվում է ածխածինով, վորը թունավոր գազ է:

Հարցն ուրեմն հետևյալումն է— նկատի ունենալով, վոր ազոտի քանակն անփոփոխ է, անհրաժեշտ էր. 1) վերապատրաստել սպառված թթվածինը, 2) վոչնչացնել արտաշնչված ածխածինը: Այդ ել շատ հեշտ էր անել քլորաթթվային կալիի և ուտիչ բորակի ոգնութեամբ:

Քլորաթթվային կալին պիտակ աղ է, վորի ջերմաստիճանը յեթե բարձրացնենք չորս հարյուր աստիճանից բարձր, վերածվում է քլորային կալիոնի և պարունակած թթվածինն ամբողջութեամբ դուրս է գալիս: Այսպիսով յոթ կիլոգրամ քլորաթթվային կալին տալիս է յերեք կիլոգրամ թթվածին, այսինքն՝ քսան չորս ժամ մեր ուղեվորներին բավարարելու չափ: Ահա թե ինչպե՞ս կարելի չէր թթվածին պատրաստել:

Գալով ուտիչ բորակին, դա մի նյութ է, վորը ազահութեամբ ծծում է ողբի մեջ յեղած ածխածինը և բավական է նրան ցնցել, վորպեսզի նա ածխածինը ծծի և արտադրի ածխաբորակային աղ, այսինքն հայտնի սողան: Սա էլ ածխածին վոչնչացնելու համար:

Այս յերկու միջոցները միացնելով, կասկած չկար, վոր ունեւրի ապահանջված ողբ պիտի մաքրվեր: Այդ փորձն արել էին մեծ հաջողութեամբ Ռեզեն և Ռենյոն: Բայց պետք է ասել, վոր փորձը մինչև այդ կատարվել էր կենդանիների վրա: Փորձի գիտական ճշտութունը, վորքան էլ ստույգ լիներ, դեռևս հարցնի չէր, թե ինչ ազդեցութուն կարող էր գործել մարդկանց վրա:

Այդպիսի դիտողութուն յեղավ այն նիստում, վորտեղ քննվեց այս լուրջ հարցը: Միշել Արդանը չէր ուզում կասկածի յենթարկել այդ արհեստական ողբի միջոցով ապրելու հնարավորութունը և նա առաջարկեց փորձը կատարել իր վրա, մեկնելուց առաջ:

Սակայն Ջ. Տ. Մաստոնը մեծ համառութեամբ պահանջեց փորձին յենթարկվելու պատիվը իրեն վերապահել:

— Գանի վոր յես չեմ մեկնում, — ասաց այդ քաջ Թնդանոթաձիւղը, — դոնե Թուշլ տվե՞ք՝ մի քանի որ սպրեմ ուումբի մեջ:

Շատ դժվար պիտի լիներ մերժել նրան, այդ պատճառով էլ նրա խնդիրն ընդունվեց: Բաժնական քանակութեամբ քլորաթթվային կալի և ուտիչ բորակ դրվեց նրա տրամադրութեան տակ, ինչպես նաև ութ որվա համար ուտելիք: Բարեկամների ձեռքը սեղմելով, նոյեմբերի 12-ին, առաջնայան ժամի 6-ին, հատկապես պատվիրելով, վոր ամսի 20-ից առաջ իր կամավոր բանտի դուռը բաց չանեն, նա սահեց ուումբի մեջ, վորի խուփը պինդ փակվեց:

Ինչ կատարվեց այդ ութ որվա մեջ: Անհնար էր խմանալ, վորովհետև ուումբի պատերի հաստութեամբ չէր թողնում ներսից վոչ մի աղմուկ լսել:

Նոյեմբերի 20-ին, ուղիղ ժամը 6-ին, խուփը բաց արին: Չ. Տ. Մաստոնի բարեկամները միջիչ անհանդիստ էլին նրա մասին, բայց խնդրեցին հանգստացան, յերբ լսեցին մի ուրախ ձայն, վոր աղմկալի ուռա յեր բղավում:


Քիչ հետո Թնդանոթային ահուժի քարտուղարը յերեկաց կոնաձեվի ծայրին, հաղթական կեցվածքով: Նա ավելի յեր դերացել:

### ԳԼՈՒԽ XXIII

### ԱՊԱՌԱԺՈՏ ԼԵՌՆԵՐԻ ՇԵՌԱԳԻՏԱԿԸ

Նախընթաց տարվա հոկտեմբերի 20-ին, դրամական նվերատվութեան արդյունքները պարզելուց հետո, Թնդանոթային ահուժի նախագահը Կեմբրիջի դիտարանին ուղարկել էր համապատասխան մի դումար՝ մի հսկայական հեռադիտակ կառուցելու համար: Այդ դործիքը, լինելով դա պարզ դիտակ, թե տեխնիկոպ, այնքան դորեզ պիտի լիներ, վոր Լուսնի մակերեվոլթի վրա տեսանելի դարձներ յերեք մետրից ավելի լայնութեամբ ունեցող վորևե տարիկա:

Մեծ տարբերութեամբ կա դիտակի և տեխնիկոպի մեջ և արժե այդ մասին խոսել այստեղ: Դիտակը կազմված է մի խողո-



Կոնաձե ուումբի կատարից նայում էր Մաստոնը

վակից, վորի վերևի ծայրում կա ունուցիկ վոսպածեմ մի ապակի և կոչվում է որչեկտիվ. ներքևի ծայրում կա մի յերկրորդ վոսպածեմ ապակի, վորը կոչվում է ոկյուլյար, այսինքն «աչքի ապակի»: Լուսավոր առարկայից արձակված ճառագայթներն անցնում են առաջին ապակուց և բեկբեկումով՝ դիտվայր նկարված մի պատկեր են կազմում նրա կիզակետում<sup>1)</sup>: Այդ նկարն է, վոր դիտում են ոկյուլյարից. դա նրան մեծացնում է խոշորացույցի նման: Դիտակի խողովակն այսպիսով կազմված է մի որչեկտիվից և մի ոկյուլյարից խողովակի յուրաքանչյուր ծայրում:

Ընդհակառակը, տեղեկուպի խողովակը բաց է վերևի ծայրից: Լուսավոր առարկայի արձակված ճառագայթներն այդ բաց ծայրից ներս են մտնում և դիպչում մետաղե դոզավոր հայելուն: Այդտեղից արտացոլելով՝ ճառագայթները հանդիպում են մի փոքր հայելու, վորը նրանց ուղարկում է ոկյուլյարին, վորը մեծացնում է ստացված նկարը:

Այդպիսով դիտակի մեջ բեկումն է, վոր կատարում է գլխավոր դերը, իսկ տեղեկուպի մեջ՝ ցոլացումը: Այդ որոտնառով էլ դիտակները կոչվում են նաև բեկբեկող իսկ տեղեկուպները՝ ցոլացնող: Ոպտիկական գործիքների պատրաստման ամբողջ դժվարութունը կայանում է որչեկտիվների պատրաստության մեջ, անկախ նրանից, թե նրանք ի՞նչ ձևի յեն—վոսպածե ապակիով, թե մետաղե հայելիով:

Սակայն այն ժամանակ, յերբ Թնդանոթային ահումբը ձեռնարկեց իր մեծ փորձին, այդ գործիքներն արդեն հասել էին բարձր կատարելագործման և սքանչելի արդյունք էլին տալիս: Այլևս անցել էր այն ժամանակ, յերբ Գալիլեյն աստղերը դիտում էր իր խեղճ դիտակով, վորը միայն յոթ անգամ էր մեծացնում: Տասնվեցերորդ դարից սկսած ոպտիկական գործիքները լայնացան և մեծացան մեծ չափերով և այդպիսով հնարավոր յեղավ արտոյային տարածութունները դիտել մինչ այդ անծանոթ հեռավորությամբ: Այդ ժամանակաշրջանում գործող հեռադիտակներից պետք է հիշատակել Պուլկովոյի (Ռուսաստան)

1) Կիզակետն այն կետն է, վորտեղ միանում են լուսավոր ճառագայթները բեկբեկումից հետո:

ոեֆրակտոր տեղեկուպը, վորի որչեկտիվը տասնհինգ մասնաչափ էր (յերեսունութ սանտիմետր)<sup>1)</sup>, Փրանսիացի Լրերուրի հեռադիտակը՝ առաջինին հավասար որչեկտիվով, և, վերջապես, Կեմբրիջի դիտարանի ոեֆրակտորը, վորի որչեկտիվը ուներ տասնինը մասնաչափ տրամագիծ (քառասուն ութ սանտիմետր):

Տեղեկուպներից՝ իրենց մեծությամբ և հզորությամբ հայտնի էլին յերկուսը: Առաջինը, վոր կառուցել էր Հերշելը, ուներ յերեսուն վեց վոտնաչափ յերկարություն և չորս ու կես վոտնաչափ լայնությամբ մի հայելի. այդ տեղեկուպը մեծացնում էր վեց հազար անգամ: Յերկրորդը պատկանում էր լորդ Ռոսին և դրված էր Իրլանդիայի Բիրկատտլ քաղաքի պարկում: Նրա խողովակի յերկարությունը հասնում էր քառասուն ութ վոտնաչափի, իսկ հայելու լայնությունը վեց վոտնաչափի (մեկ մետր ինսուն յեքեք սանտիմետր). նա մեծացնում էր վեց հազար չորս հարյուր անգամ: Այդ տեղեկուպը քսան ութ հազար Փունս ծանրություն ուներ, նրան շարժելու անհրաժեշտ մեքենաները տեղավորելու համար պետք յեղավ կառուցել քարաշեն մի հսկա շինություն:

Բայց ինչպես տեսնում ենք, հակառակ այս արտակարգ չափերի, առարկաների խոշորացումը վեց հազար անգամից քայելի չէր, մինչդեռ այդպիսի խոշորացումով Լուսինը միայն մինչև վաթսուն կելլոմետրի վրա հնարավոր էր մոտեցնել—այդպիսով կարելի յեր տեսնել միայն քսան մետր տրամագիծ ունեցող իրերը, բացառությամբ շատ յերկար առարկաների:

Իսկ այժմ խնդիրը վերաբերում էր յերեք մետր լայնություն և հինգ մետր յերկարություն ունեցող մի արկի. անհրաժեշտ էր ուրեմն Լուսինը մոտեցնել անվազն մինչև հինգ մղոն,

1) Այդ դիտակն արժեր ութսուն հազար ուրբլի:

Այստեղ խոսքը վերաբերում է Պուլկովոյի (Լենինգրադ) դիտարանի հին ոեֆրակտորին (արտացոլիչ), վորը կառուցվել էր 1848 թ.: Իր ժամանակի ճամար դա ոպտիկական տեխնիկայի խոշորագույն նվաճումն էր: 15 դույմանոց այդ ոեֆրակտորն այժմս էլ գործածության մեջ է, թեև դիտարանն ունի ներկայումս շատ ավելի ուժեղ մի գործիք յերեսուն դույմանոց որչեկտիվով, վորը սարքավորված է այս վեպի գրվելուց քսան տարի հետո: Մ. խմբ.

ուրեմն հեռադիտակով — առարկաները մեծացնել քառասուն ութ հազար անգամ :

Այս եր Կեմբրիջի դիտարանի առջև դրված խնդիրը: Փինանսական դժվարութիւնները չկային, մնում եր միայն գործնական դժվարութիւնները հաղթահարել:

Նախ և առաջ պետք է ընտրութիւն անել տեխնոլոգի և դիտակի մեջ: Դիտակները, համեմատած տեխնոլոգիների հետ, ունեյին իրենց առավելութիւնները: Հավասար որջեկտիվներով նրանք ավելի շատ էյին մեծացնում, վորովհետե վոսպածեվ ապակին թափանցող լուսավոր ճառագայթները ավելի նվազ կորուստ էյին ունենում, քան տեխնոլոգի մետաղե հայելու վրա ցորացումով: Սակայն վոսպածեվ ապակուն միայն միջակ հաստութիւն կարելի յեր տալ, վորովհետե չափազանց հաստ ապակին անթափանց է լուսավոր ճառագայթների համար: Բացի այդ, մեծ վոսպագակիները կառուցումը շատ դժվար էր և յերկար տարիների դործ:

Դրա համար էլ վորոշվեց գործածել տեխնոլոգը, վորի կառուցումն ավելի հեշտ է և արագ, բացի այդ՝ ավելի մեծ խոշորացում է ստացվում: Սակայն նկատի ունենալով, վոր լուսավոր ճառագայթները մթնոլորտից անցնելով իրենց գորութիւն մեծ մասը կորցնում են, Թնդանութային աղումըը վորոշեց տեխնոլոգը դնել Միացյալ Նահանգների ամենարարձր լեռներից մեկի վրա, ինչ վոր պիտի նվազեցներ ոգի շերտերի թանձրութիւնը:

Տեխնոլոգի մեջ, ինչպես տեսանք, ոկյուլյարը, այսինքն՝ դիտողի անջին դրված խոշորացուցը, մեծացնում է իրը, իսկ առարկաների պատկերի մեծութիւնը կախված է որջեկտիվի չափից: Քառասուն ութ հազար անգամ մեծացնելու համար անհրաժեշտ էր տեխնոլոգի որջեկտիվը շատ ավելի մեծ տրամագծով կառուցել, քան Հերշելի և լորդ Բրոսի որջեկտիվները: Այդտեղ էր դժվարութիւնը, վորովհետե այս մետաղե հայելիների ձուլումը չափազանց նուրբ դործ էր:

Բարերախտարար մի քանի տարի առաջ Ֆրանսիական Ինստիտուտի դիտնականներից մեկը՝ Լեոն Ծուկոն մի միջոց էր հնարել, վորի շնորհիվ որջեկտիվների հղկումը շատ հեշտ և ա-

րագ էր լինում. նա փոխարինում էր մետաղե հայելին արծաթապատ հայելիով, վորը ստանալու համար պետք էր ձուլել անհրաժեշտ մեծութիւնը արակին և ապա նրան մետաղացնել արծաթե մի աղով: Հրաշալի արդյունքներ լուրջ այս միջոցն ընդունվեց որջեկտիվը կառուցելու համար:

Այս վորոշումներն ընդունելուց հետո աշխատանքը սկսվեց: Կեմբրիջի դիտարանի արած հաշիվների համաձայն՝ նոր ցորացուցիչի խողովակի յերկարութիւնը պիտի լիներ ութսուն հինգ մետր, իսկ հայելու տրամագիծը հինգ մետր: Ինչքան էլ վիթխարի լիներ այդ գործիքը չեր կարելի համեմատել տասը հազար վոսնաչափ յերկարութիւնը այն տեխնոլոգին (յերեք ու կես կիլոմետր), վոր Հոնկ աստղադետն առաջարկում էր կառուցել մի քանի տարի առաջ: Համենայն դեպս այդպիսի մի գործիքի կառուցումը ներկայացնում էր մեծ դժվարութիւններ:

Ինչ վերաբերում է այն բարձունքին, վորի վրա պիտի դրվեր տեխնոլոգը, այդ հարցը շատ արագ լուծվեց, վորովհետե Միացյալ Նահանգներում բարձր լեռները բազմաթիվ էին:

Այս ընդարձակ յերկրի լեռնային սիստեմը յերկու միջակ բարձրութիւն լեռնաշղթաներ միայն ունի, վորոնց միջից հոսում է այն հրաշալի Միսսիսիպին, վորին ամերիկացիները «գետերի թագավոր» պիտի անվանեյին, յեթէ վորեւիցե թագավորութիւն ընդունեյին:

Արեւելքում Ապալախի լեռնաշղթան է, վորի ամենաբարձր գագաթը — Նյու-Հեմպշայրի մեջ — հաղիվ հինգ հազար վոսնաչափ բարձրութիւն ունի:

Արեւմուտքում, ընդհակառակն, Ապալաժոտ կոչված լեռներն են, ընդարձակ մի լեռնաշղթա, վոր սկսվում է Մազելանի նեղուցից, ձգվում է Հարավային Ամերիկայի ծովափի յերկայնքով, կրելով Անդ կամ Կորդիլեր անունը, անցնում է Պանամայի պարանոցը և Հյուսիսային Ամերիկայի միջով անցնելով հասնում է մինչև Հյուսիսային Բեվեռային ծովի ափերը:


Այս լեռները շատ բարձր էն և Ալպերն ու Հիմալայան իրենց բարձունքից արհամարհանքով կնայեն նրանց: Այդ լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը հասնում է տասը հազար յոթ հարյուր վոսնաչափ (յերեք կիլոմետրից ավելի), մենչդեռ Մոնթբլանն ունի տասնչորս հազար չորս հարյուր յերեսուն ինը վոս-

նաչափ (մոտ հինգ կիլոմետր), իսկ Հիմարայան լեռների Գաու-  
րիդանկար և Եվերեստ դագաթները քսանմեկ հազար յոթ հար-  
յուր յոթանասուն մեկ մոտնաչափ (9 կիլոմետր) բարձր են ծո-  
վի մակերևույթից:

Իայց վորովհետև Թնդանոթային ակումբի ցանկությունն  
էր, վոր տեխնիպը կոլումբիադի նման Միացյալ Նահանգների  
հողի վրա գտնվի, պետք յեղալ բավարարվել Ապառափոտ լեռ-  
ներով և ամբողջ անհրաժեշտ մատերիալն ուղարկվեց Միտուրիի  
նահանգի Լոնդոն-պիկ դագաթը:

Գրիչն ու խոսքը չեն կարող նկարագրել այն դժվարություն-  
ները, վորոնց հաղթահարեցին ամերիկացի ինժեներները: Այդ  
մի իսկական մեծագործություն էր: Հսկա մեծությամբ ջարեր,  
դարբնված մետաղի ծանր կտորներ, չափազանց մեծ կշիռ ունե-  
ցող խողովակներ, գլանների լայն մասեր, յերեսուն հազար  
Փունտ կշռող որչեկտիվ պետք էր բարձրացնել մշտական ճյու-  
նի սահմաններից բարձր, տասը հազար մոտնաչափ բարձրու-  
թյունից այն կողմը, անցնելով ամայի դաշտեր, անթափանց  
անտառներ, զարհուրելի դահավեժներ և հեղեղատներ՝ բնակելի  
կենտրոններից հեռու, վայրենի շրջաններում: Աշխատանքը  
սկսելուց մոտավորապես մի տարի հետո, սեպտեմբերի վերջին  
որերին, հսկա ունիվերսալ (արտացոլիչը) դեպի յերկինք էր  
ուղղել իր ութսուն հինգ մետրանոց խողովակը, վորը կախված  
էր յերկաթե մի վիթխարի վերելակից: Հրաշալի մեխանիզմի  
չնորհիվ կարելի յեր տեխնիպը շարժել ամեն ուղղությամբ,  
ուղղել յերկնքի բոլոր կետերին և ստողերին հետևել մի հորիզո-  
նից մյուսը, տարածության մեջ նրանց անցած ճանապարհի  
ընթացքում:

Տեխնիպի վրա ծախսվել էր չորս հարյուր հազար դոլլա-  
րից ավելի: Առաջին անգամ յերբ այն ուղղեցին դեպի Լուսին,  
դիտողները մի տեսակ հեռաբերբությամբ և տաղնապով խառն  
հուզում գգացին: Ի՞նչ պիտի տեսնեյին տեխնիպի արակու-  
վրա, վոր մեծացնում էր քառասուն հինգ հազար անգամ: Բնակ-  
չություն, յուսնարնակ կենդանիների խմբե՞ր, քաղաքնե՞ր, լճե՞ր,  
ովկիանոսնե՞ր: Վո՛չ, միայն այն, ինչ վոր գիտությունը մինչ  
այդ գիտեր— Լուսնի սկավառակի վրա մեծ ճշտությամբ հաս-  
տատվեց նրա հրաբխային կազմությունը:



Թնդանոթային ակումբի տեխնիպը

ՎԵՐՁԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերի 22-ն եր: Հանդիսավոր մեկնումը պետք է տեղի ունենար տասն ուր հետո: Միայն մի գործադուլթյուն եր մնում հաջողութեամբ կատարել: նուրբ, վտանգավոր մի գործողութեան, վոր ծայրահեղ դուռնութեան եր պահանջում և վորի հաջողութեան դեպքում կապիտան Նիկոլը կորցնում եր դրազի յերբորդէ կետը: Այդ գործողութեանն եր կոլումբիադը լցնել չորս հարյուր հազար Փունտ պիրոկսիլինով: Նիկոլի կարծիքով, — թերևս շատ իրավացի, — այդքան մեծ քանակութեամբ պիրոկսիլինի գործածութեանը լուրջ վտանգներ կարող եր առաջացնել, այնուամենայնիվ դերազանցապես պայթուցիկ այդ նյութը արկի ճնշման տակ ինքն իրեն կրունկվեր:

Վտանգն ե՛լ ավելի յեր ծանրանում, նկատի ունենալով ամերիկացիներին անհողութեանը և անգողութեանը. այդպես եր յեղել պատերազմի ժամանակ, յերբ նրանք ուումբերին կրակ ելին տալիս սիգարը բերանը դրած: Սակայն Բարբիկենն դժբաղ էր: Նա ընտրեց լավագույն բանվորներին, աշխատեցրեց իր հսկողութեան տակ և մի բոպե աչքից չհեռացրեց: Զգուշութեան ու խոհեմութեան շնորհիվ նա կարողացավ այդ վտանգավոր գործողութեան հաջողութեանը ապահովել:

Նախ և առաջ նա կարգադրեց ամբողջ պիրոկսիլինը միանգամից Ստոնսհիլլի շրջափակի մեջ չբերել, այլ մաւ-մաս, փակ արկղների մեջ: Չորս հարյուր հազար Փունտ պիրոկսիլինը բաժանվել եր հինգ հարյուր Ֆնտանոց հակերի մեջ, վորով ստացվեց ութ հարյուր մեծ փամփուռա, խնամքով պատրաստված Պենսակոյայի հրանյութերի վարպետների կողմից: Յուրաքանչյուր արկղի մեջ կային այդպիսի տասը փամփուռաներ: Նրանք միմյանց հետևից հասնում ելին Տամպայի յերկաթուղով. այդպիսով Ստոնսհիլլի շրջափակի մեջ միանգամից հինգ հազար Փունտ (մոտ յերկու տոնն) պիրոկսիլինից ավելի յեր լինում: Հենց վար արկղը տեղ եր հասնում, իսկույն դատարկվում եր վտարորդի բանվորների ձեռքով. յուրաքանչյուր փամփուռա դուռնորեն տեղափոխվում եր կոլումբիադի անցքի մեջ և իջեց-

վում նրա հատակը մարդկային ուժով շարժման մեջ, դրված վերամբարձներով:

Բոլոր տեսակի շոգեշարժ մեքենաները հեռացվել էլին, մինչև յերկու կիլոմետրի վրա ամենափոքր կրակներն անգամ հանգցրել: Նույնիսկ արևի ճառագայթներից դուռնաալու համար, — չնայած վոր նոյեմբեր ամիսն եր, — մեծ մասամբ աշխատում էլին դիչերը, ելեկտրական սառը լույսով, վորը Ռումկորֆի գործիքի միջոցով լուսավորում եր մինչև կոլումբիադի հատակը: Այնտեղ փամփուռաները կանոնավոր ձևով դարսվում էլին և իրար հետ միացվում մետաղե լարով, վորի միջոցով ելեկտրական կայծը միաժամանակ պիտի փոխանցվեր յուրաքանչյուր փամփուռաի կենտրոնը:

Կոլումբիադի կրակոցը կարելի յեր կատարել ելեկտրական սարքավորման միջոցով: Այդ բոլոր թեկերը շրջապատված էլին չեզոքացնող մի նյութով և դալիս միանում էլին մի նեղ բացվածքի մեջ, վորը բացվել եր ուումբին հատկացված տեղի մոտ, այնտեղից անցնում էլին չուզունե հաստ պատից այդ նպատակով պատրաստված քարաշեն ողահանի միջով և հասնում մինչև դետին: Ստոնսհիլլի դադաթը հասնելուց հետո, պողպատի թեկը սյուսերի վրա ամբարցվելով զնում եր մոտ յերեք կիլոմետր, սալա ընդհատիչ գործիքով անցնելով միանում եր Բունդենի ելեմենտներից կազմված հզոր մի մարտկոցի: Այդպիսով բավական եր մասը դնել գործիքի կոճակին, վորպեսզի հոսանքը վայրկենապես կրակ տար չորս հարյուր հազար Փունտ պիրոկսիլինին:

Նոյեմբերի 28-ին ութ հարյուր փամփուռաները տեղավորվել էլին կոլումբիադի խորըը: Գործողութեան այս մասը հաջողութեամբ վերջացավ: Բայց ինչքան անհանդստութեան, մտատանջութեան և հոգսեր եր կրել Բարբիկենը: Չնայած վոր Ստոնսհիլլի մուտքը կողմնակի մարդկանց համար խտիվ արգելված եր, ամեն ուր բազմաթիվ հետաքրքիրներ բարձրանում էլին ցցապատանեշների վրա, իսկ վտանք անգողութեանը մինչև խելազարութեան էլին հասցնում, ծխելով բռնկվող պիրոկսիլինի փամփուռաների մոտ: Բարբիկենը զայրանում եր, իսկ Զ. Տ. Մաստոնը ամեն կերպ նրան ոգնում եր, զչում եր այդ ինքնակոչ հյուրերին և համարում այցելուների այս ու այն կողմը դցած

սիգարները դեռևս վառ մնացորդները: Մանր աշխատանք էր այդ, վորովհետև յերեք հարյուր հազար մարդ խոնվում էին ցցապատանէնների շուրջը: Միշէլ Արդանը նույնպես առաջարկել էր իր ծառայութիւնը՝ ուղեկցել արկղներին մինչև կոլումբիադի անցքը, սակայն նրան էլ բռնեցին մի ահազին սիգար բերանին, մինչդեռ նա քշում էր ուրիշ ծխողների, վառ որինակ ծառայելով նրանց: Բարբիկենը հասկացավ, վոր չէր կարելի վստահել այդ անուղղելի ծխողին և ստիպվեց հատկապես նրա վրա հսկողութիւն անել:

Վերջապես, ամեն ինչ բարեհաջող անցավ, վորինչ չըսայթեց և կոլումբիադը հաջողութեամբ լցվեց: Կապիտան Նիկոլի յերրորդ դրացը խիստ վտանգի տակ էր: Մնում էր օռումբը դնել կոլումբիադի մեջ և տեղավորել հրարամբակի վառողի հաստ շերտի վրա:

Բայց այդ վերջին գործողութեան անցնելուց առաջ, ուղեվորութեան համար անհրաժեշտ իրերը դարսվեցին վազոն-ոռումբի մեջ: Բավական չափ էին այդ իրերը, և յեթէ թողնէին, Միշէլ Արդանը նրանցով կլցներ ամբողջ վազոն-ոռումբը: Կարելի չէ յերեակայել, թէ ինչեր էր ուղում տանել Լուսին այդ պատվական Փրանսիացին: Անողուտ իրերի մի ամբողջ հավաքածու: Սակայն Բարբիկենի միջամտութեամբ վերցրին միայն անհրաժեշտ իրերը:

Բազմաթիվ ջերմաչափեր, բարոմետրներ և դիտակներ դարսվեցին գործիքների արկղի մեջ:

Ուղեվորները ցանկանում էին Լուսինը դիտել ճամբորդութեան ընթացքում և այդ նոր աշխարհի գննութիւնը հեշտացնելու համար վերցրել էին Բերի ու Մեդլերի հրաշայի քարտեզը՝ Mappa Selenographica<sup>1)</sup>, վորը ասված էր չորս թերթերի վրա և իրավամբ համարվում էր ուսումնասիրութեան ու համբերութեան մի իսկական գլուխ գործոց: Նրա վրա կատարյալ հեշտութեամբ յերևում էին Յերկրի կողմը դարձած Լուսնի յերեսի ամենախոշոր մանրամասնութիւնները— լեռներ, ձորեր, լեռնահովիտներ, հանդած հրաբուխներ, դանազան շերտավորումներ նկարվել էին ճշգրիտ չափերով, անսխալ դիրքով, անուաներով, սկսած Գոերֆիլ և Լայբնից լեռներից, վորոնց բարձր դաշաթնե-

1) Լուսնադրական քարտեզ:

րը բարձրանում էին սկալաուակի արևելյան մասում, մինչև «Մառուցյալ լիճը», վորը տարածվում էր Լուսնի հյուսիսային բևեռի շրջանում:

Այդ մի թանգադին փաստաթուղթ էր ուղեվորների համար, վորոնք Լուսինը կարող էին ուսումնասիրել այնտեղ վտաք կոխելուց առաջ:

Նրանք իրենց հետ տանում էին նաև յերեք կարճ ու յերեք վորսի հրացաններ, սովորական և պայթուցիկ փամփուռներով, ինչպես նաև մեծ քանակութեամբ վառող ու կապար:

— Չգիտեք, թէ ինչ կարող ե պատահել,— ասում էր Միշէլ Արդանը:— Մարդիկ կամ անասուններ դուրս դժգոհ լինեն մեր այցելութիւնից. պետք է ուրեմն նախազուշական միջոցներ ձեռք առնել:

Բացի այդ, անձնական պաշտպանութեան միջոցների հետ միասին նրանք վերցրին նաև քլունգներ, բահեր, բրիչներ, ձեռքի սղոցներ և այլ անհրաժեշտ գործիքներ, ինչպես նաև բոլոր տեսակի յեղանակների համար հազուստներ՝ սկսած բեկեռային շրջանների ցրտերից մինչև տրոպիկական տաքերը:

Միշէլ Արդանը ցանկանում էր վերցնել նաև մի քանի կենդանիներ, բայց վոչ բոլոր տեսակներից՝ զույգեր, վորովհետև կարիք չէր տեսնում Լուսնի վրա բազմացնել ոճեր. վաղերը, կոկորդիլոսներ և այլ վնասակար անասուններ:

— Վոչ,— ասում էր նա Բարբիկենին,— բայց մի քանի ընտանի կենդանիներ, ինչպես՝ յեզը կամ կովը, եչն ու ձին տեսարանը կզեղեցկացնեն և մեզ էլ սգտակար կլինեն:

— Համաձայն եմ, սիրելի Արդան,— պատասխանեց Թնդանութային ակումբի նախազահը,— բայց մեր վազոն-ոռումբը Նոյի տապանը չէ, վոչ նրա մեծութիւնը, վոչ էլ նրա նպատակն ունի. ուրեմն մնանք հնարավոր սահմանների մեջ:

Վերջապես յերկար վիճարանութիւնից հետո վորոշվեց տանել Նիկոլի հրաշայի վորսի շունը և մի հուժկու գամփո: Անհրաժեշտ իրերի կարգը դրվեցին ամենապետական բույսերի սերմերով լցված արկղներ: Յեթէ թողնէին Միշէլ Արդանին, նա կվերցնէր նաև մի քանի պարկ հող, այդ սերմերից այնտեղ ցանելու համար: Համենայն դեպս, նա վերցրեց տասնի չափ գանդան տեսակի տունկեր, վորոնց խնամքով փաթաթեց հարզի մեջ և դրեց վազոն-ոռումբի մի անկյունը:

Մնում էր սննդի կարևոր հարցը, վորովհետև պետք էր նախատեսել Լուսնի վրա բուսականության և կենդանիների կատարյալ բացակայությունը: Բարբիկենի ջանքերով հաջողվեց մի տարվա համար ուտելիք վերցնել: Բայց վոչ վոքի չզարմացնելու համար պետք է ավելացնել, վոր այդ ուտելիքներն էլին մսի և բանջարեղենի պահածոներ՝ հիդրավլիկ մամուլի միջոցով չափազանց սեղմված և խտացած վիճակում և պարունակում էլին մեծ քանակությամբ սննդաբար նյութեր: Թեև սննդի տեսակը բազմաթիվ չէր, բայց այդպիսի մի ուղեվորության ժամանակ խտապահանջ չպետք է լինել: Վերցրին նաև յերկու հարյուր լիտրի չափ ողի և ջուր՝ յերկու ամսվա համար միայն, այն պատճառով, վոր աստղագետների վերջին ուսումնասիրություններից յերևում էր, վոր Լուսնի վրա պետք է լիներ վորոչ քանակությամբ ջուր: Գալով ուտելիքին, անմիա բան էր կարծել, թե Յերկրի բնակիչները Լուսնի վրա չեն կարող սնունդ ձարել: Միչեւ Արդանն այդ մասին բոլորովին չէր կասկածում: «Յեթե յես կարծեյի, վոր Լուսնի վրա ուտելու բան չկա, յերբեք չեյի ընա այնտեղ»,— ասում էր նա:

— Բացի այդ,— ասաց նա մի ուր բարեկամներին,— մենք յերկրի ընկերներից բոլորովին չպետք է կտրվենք, նրանք մեզ չեն մոռանա:


— Ի հարկե վոչ,— պատասխանեց Ջ. Տ. Մաստոնը:

— Ի՞նչ էք ուզում ասել,— հարցրեց Նիկոլը:

— Շատ պարզ է,— պատասխանեց Արդանը: Չե՞ վոր կոլումբիազը միշտ մնալու յե իր տեղում: Ուրեմն ամեն անգամ, յերբ Լուսինը գենիթի վրա յե, այսինքն՝ մոտավորապես տարեկան մեկ անգամ, հնարավոր չե՞ նախտպես պայմանավորված որը Յերկրից մեզ ուղարկել ուտելիքով լիք ուտաբեր:

— Կեցցե՛, կեցցե՛,— բացականչեց Ջ. Տ. Մաստոնը,— շատ լավ էք մտածել: Անկասկած, սիրելի բարեկամներ, մենք ձեզ չենք մոռանա:

— Վստահ ենք: Այդպիսով, ինչպես տեսնում էք, մենք շարունակ Յերկրաբնակից կանոնավոր տեղեկություններ կստանանք, իսկ ինչ վերաբերում է մեզ, շատ անճարակ մարդ կլինենք, յեթե Յերկրի մեր լավ բարեկամների հետ հաղորդակցելու մեջ չզանենք:



Արկ-վազոնը բոլորովին պատրաստ էր



Այս խոսքերն այնպիսի վստահութիւնն եյին ներշնչում, վոր Միշեյ Արդանը իր վճռականութեամբ և խրոխտ ինքնավստահութեամբ կարող եր ամբողջ Թնդանութեային ակումբի կազմը իր հետ տանել: Նրա խոսքերը թվում եյին այնքան սրարդ, այնքան տարրական, հեշտ իրադրծելի, վոր հաջողութիւնն ասպահովված եր համարվում: Պետք եր շատ փոքրագութեամբ կառչած լինել այս փողոցում յերկրադնդին, չհետեւելու համար յերեք ու պիւրներին դեպի Լուսին կատարելիք նրանց արշայանքում:

Իրեղենները դարսելուց հետո ներս թողին այն ջուրը, վոր ծառայելու յեր վորպես դսպանակ, և լցրին ուռմբի հատակի և վազոնի ժամանակավոր փայտե հատակի միջև յեղած տարածութեան մեջ: Հետո ողային լուսավորելէ գազը լցրին ընդունարաններին մեջ, իսկ քլորային կալի ու ուտիչ բոքսի վերցրին այնպիսի քանակութեամբ, վոր բավական լիներ յերկու ամսվա համար, նկատի ունենալով անակնկալ դեպքերը. ինչպես հայտնի յե, այդ նյութերը ծառայելու եյին թթվածին պատրաստելու և ամխաթթուն վոչնչացնելու համար: Մաքուր ող ստանալու համար կառուցված եր ինքնաշարժ սրամխտ մի սարքովորում, վոր շատ տեղ չեր բռնում: Այսպիսով վազոն-ուռմբը բոլորովին պատրաստ եր, մնում եր միայն նրան իջեցնել կոլումբիադի մեջ: Իսկ մի շատ դժվար և վստահավոր գործողութիւնն եր:

Հսկա ուռմբը հասցրին մինչև Ստոնհիլլի բարձունքը: Այնտեղ հզոր վերամբարձն եր, այն վերցրին և կախված պահեցին կոլումբիադի բերանի վրա:

Սրտահույզ մի բոպե յեր այդ: Յեթե հանկարծ շղթաները կտրվէյին այդ հսկայական ծանրութեան տակ, այն ժամանակ պոկված ուռմբը կգահալիժեր մինչև Թնդանութի հատակը և կրոնկեցներ պիւրոկսիլինը:

Բարեբախտաբար վոչինչ չպատահեց և մի քանի ժամ հետո վազոն-ուռմբը գզուշութեամբ իջեցվեց Թնդանութի փողի մեջ և նստեց պիւրոկսիլինի շերտի վրա: Ռուսքի առաջացրած ճնշումը միայն մի քիչ ավելի պնդացրեց կոլումբիադի լեցքը, ուրիշ վոչինչ:

— Գրագն կորցրի, — ասաց կապիտան Նիկոլը, նախագահ Բարբիկենին հանձնելով յերեք հազար դոլլարի գումարը:

Բարբիկենը չեր ուզում վերցնել այդ գումարը իր սրտից:

ընկերոջից, բայց ստիպվեց դիջել Նիկոլի պնդումներին, վորը ցանկանում եր Յերկրից հեռանալուց առաջ կատարել իր բոլոր պարտավորութիւնները:

— Այժմ, — ասաց Միշեյ Արդանը, — միայն մի բան եմ ցանկանում ձեզ, հարգելի կապիտան:

— Ի՞նչ, — հարցրեց Նիկոլը:

— Այն, վոր դուք կորցնեք մնացած յերկու դրադներն ել: Այդպիսով, մենք վստահ կլինենք, վոր ճանապարհին չենք մնա:

ԳԼՈՒԽ XXV

Կ Ր Ա՛ Կ

Գեկտեմբերի առաջին օրն եր. ճակատադրական մի օր, վորտիվհետե յեթե այդ օրը յերեկոյան ժամը տասն անց քառասուն վեց բոպե քառասուն վայրկյանին Թնդանութի կրակոցը տեղի չունենար, տասնութ տարուց ավելի պետք եր սպասել, վորպեսզի Լուսինը նույն դիրքի վրա դանկեր, այսինքն մերձակետի և գենիթի վրա:

Յեղանակը հրաշալի յեր: Չնայած վոր ձմեռը մոտենում եր, արեւը պայծառ փայլում եր և լուսախալ ճառագայթներով վողողում այն Յերկիրը, վորի յերեք բնակիչները պատրաստվում եյին հեռանալ՝ մի նոր աշխարհ նվաճելու համար:

Քանի՞-քանի մարդիկ չկարողացան հանդիստ քնել այնքան անհամբերութեամբ սպասված այդ օրվա նախորդ դիչերը: Ինչքան՞ կրծքեր ճնշվեցին սպասման ծանր բեռի տակ: Բոլոր սրտերը բաբախում եյին հուզումից, բացառութեամբ Միշեյ Արդանի: Այս անդրդիվելի մարդը գնում-գալիս եր սովորական յեռանդով, և մտահոգութեան վոչ մի նշան ցույց չեր տալիս: Նա քնել եր շատ հանգիստ, ինչպես քաջ զորավարը՝ ճակատամարտից առաջ՝ Թնդանութի սայլի վրա:

Վաղ առավոտից մի հոծ բազմութիւնն խոնկել եր Ստոնհիլլի շուրջը տարածված ընդարձակ մարդագետիկներին վրա: Յուրաքանչյուր ասանհինդ բոպեն մեկ անգամ Տամպայի դնացքը հետաքրքրներին նոր խմբեր եր բերում: Յեկվորների թիվն առասպելական չափերի հասավ և, ըստ «Տամպա-Տաուն Որսեր-

վեր» թերթի տվյալները, այս հիշատակելի ուրը հինգ միլիոն հանդիսատեսներ վտաք կոխեցին Ֆլորդիայի հողի վրա:

Մի ամսից ի վեր այդ բազմութեան մեծ մասը վրանների տակ ապրում էր Ստոնհիլլի շուրջը: Այդ սրվանից մի նոր քաղաքի հիմքը դրվեց, վորը հետագայում կոչվեց Արդան'ս-Տաուն: Դաշտի վրա բարձրացել էյին բարակներ, հյուղեր, խրճիթներ, վրաններ, և այդ ժամանակավոր բնակարանները պատասպարում էյին մի այնպիսի բազմութուն, վոր Յեվրոպայի ամենամեծ քաղաքների նախանձն անգամ կարող էր շարժել:

Յերկրագնդի բոլոր ժողովուրդներից կային այնտեղ և բոլոր լեզուներով միաժամանակ խոսում էյին: Թվում էր, թե բիբլիական ժամանակների Բաբելոնի աշտարակի խառնաշփոթութունն էր: Սմերիկյան հասարակութեան բոլոր դասակարգերը միմյանց էյին խառնվել այնտեղ. բանկիրներ, հողագործներ, նավաստիներ, առևտրականներ, գործարանատերեր, միջնորդներ, բամբակ մշակողներ, նավատերեր, պաշտոնյաներ— բոլորն ապրում էյին կողք-կողքի, հրհրում իրար անհող և ազատ: Լուիզիանիայի կրեոլները (գաղթածինները) յեղբայրացել էյին Ինդիանայի Ֆերմերների հետ: Կենտուքի և Տենեսիի ջենտլմենները, վայելչաձեր և հարտ վերդինացիները վիճում էյին Մեծ լճի չրջանի կիսավայրենի վորսորդների և Յինցինատի անասնալվաճառների հետ: Սպիտակ լայնեզր գլխարկներով կամ կլասիկ պանամայով, հագած կապույտ կոտրից անդրավարտիկ և վայլչազեղ բլուզ, գունազեղ կոշիկներով, բառխտի արտասովոր դույնի շապիկներով, վորոնց վրա, ինչպես և թեևոյների, փողկապների, տասը մատների, նույնիսկ ականջների վրա շողջողացնում էյին մատանիների, գնդասեղների աղամանդների, չղթաների, օղերի մի ամբողջ հավաքածու, վորի բարձր արժեքը հավասար էր նրանց վատ ճաշակին: Կանայք, յերեսաներ, ծառաներ, վոչ նվազ ճոխ հազուստներով՝ ընկերանում, հետևում, չրջապատում էյին ամուսիններին, ծնողներին, տերերին, վորոնք նմանում էյին բազմանգամ ընտանիքով չրջապատված ցեղապետների:

Ճաշի ժամանակ պետք էր տեսնել, թե ինչպես այդ բազմութունը ընկնում էր Հարավային նահանգների սիրած ճաշի վրա և կլանում այնպիսի ախորժակով, վորը կարող էր սպառել Ֆլորիդայի աննդապաշարը: Այդ ճաշը կազմված էր այնպիսի տե-

սակներից, վորանք կողմեցնեն յեվրոպական ստամոքսները, ինչպես, օրինակ՝ տապակած գորտ, կապլի խորոված և մի շարք ամերիկյան ձկներ ու կենդանիներ:

Սակայն խմիչքների ի՛նչպիսի տեսակներ ողնութեան էյին դալիս այդ դժվարամարս աննդին: Ի՛նչպիսի հրապուրող բացականչութուններ էյին հնչում գինետներում կամ կաֆեներում, վորոնց դարակները զարդարված էյին բազմատեսակ բաժակներով, շշերով, ջրամաններով, սափորներով, ինչպես նաև շաքար ծեծող փոքրիկ սանդերով և ծղոտներով:

— Վերցրե՛ք ողի, անանուխի ըմպելի՛ք,— բացականչում էր վաճառողներից մեկը:

— Վերցրե՛ք բորգոյի գինուց պատրաստված սանգառե՛), — բզախում էր մի ուրիշը:

— Ջի՛ն-սլիմգ՝)— Բրեկդի-սմեշ՝):

— Կոկտեյլ՝):

— Ո՞վ է ուզում խմել վերջին մողայի խակական անանուխի ըմպելի՛ք,— կանչում էյին այդ ճարպիկ առևտրականները ձեռնածուի նման արագաշարժ, մի բաժակից մյուսն անցկացնելով լիմոնը, շաքարը, կանաչ անանուխը, ծեծված սառույցը, ջուրը, կոնյակն ու անանասը, վորոնք այդ զովացուցիչ ըմպելիքի բաղադրիչ մասերն են:

Այսպիսով, գրգռիչ ուտելիքների ազդեցութեան տակ այրվող կոկորդներին ուղղված այս կոչերն ողի մեջ միմյանց խառնվելով՝ խլացուցիչ մի ժխոր էյին բարձրացնում: Սակայն այդ ուրը, դեկամբերի առաջին ուրը, այդ աղաղակները հազվադեպ էյին: Վաճառողներն իզուր պիտի կոկորդները պատույնին գնորդներին հրապուրելու համար: Վոչ վոք էեր մտածում ուտելու կամ խմելու մասին, յերեկոյան ժամի չորսին շա՛քարը դեռևս սովորական նախաճաշը չէյին արել: Մի ավելի բնորոշ յերևույթ էր այն, վոր ամերիկացիների սերը դեպի թղթխաղը և այլ խաղերը հաղթահարված էր հուզումից և հետաքրքրութունից: Բախտախաղի, գնդակխաղի փայտերն ընկած էյին դետնի վրա, զարբերը քնում էյին իրենց բաժակներում, ռոպետը<sup>5)</sup> անշարժ էր, «փխտի»<sup>6)</sup>, «քսան մեկի»<sup>7)</sup>, «կարմիր ու սեվի»<sup>8)</sup> կարտե-

1) 2) 3) 4) Ամերիկյան խմիչքներ: Ծ. Թ.:

5) 6) 7) 8) Պաղերի գանազան տեսակներ: Ծ. Թ.

ըը մտում էյին չբացված: Պարզ յերևում էր, վոր որվա դեպքը ամեն ինչ կլանում և այլ զվարճությունների տեղ չէր թողնում:

Մինչև յերեկո մեծ աղետներին նախորդող մի խուլ և անաղ- մուկ հուզում էր տիրում այս մտատանջ բազմության մեջ, մի դաժան ցավ, աննկարագրելի տաղնապ սեղմում մարդկանց սրտերը: Ամեն մարդ ցանկանում էր, վոր շուտով վերջանա այն, ինչ լինելու յէ:

Մակայն ժամի յոթի մոտ այս ծանր լուսթյունը հանկարծ փա- րատվեց: Լուսինը բարձրանում էր հորիզոնի վրա: Միլիոնավոր վողջույնի բացականչություններով ընդունվեց նրա յերեկվալը: Լուսինը ճշտապահ էր յեղել ժամադրությանը: Բացականչու- թյունները մինչև յերեկինքը հասան. ամեն կողմից լսվում էյին ծափահարություններ, մինչդեռ Լուսինը հանդարտ սահում էր հրաշալի յերկնականարի վրա և ժպտում աչք բազմությանը իր փայտաշող ճառագայթներով:

Այդ ժամանակ յերևացին յերեք անվեհեր ուղեվորները: Աղաղակներն է՛լ ավելի ուժեղացան: Միացյալ Նահանգների աղ- դային հիմնը միաժամանակ դուրս թռավ բոլոր հե՛վացող կրճե- րից: Հսկայական բազմությունը հնչեցրեց «Յանկի դուր» յերգը, վորը վորոտալի փոթորկի նման բարձրացավ մինչև մթնոլորտի վերջին սահմանները: Ապա, այդ անդիմադրելի թափից հետո, հիմնը լռեց, վերջին հնչյունները քիչ-քիչ մարեցին, աղմուկը դադարեց և մի խուլ շուկ տարածվեց խորապես հուզված այդ ամբոխի վրա:

Այդ միջոցին Փրանսիացին և յերկու ամերիկացիները ներ- մտան այն շրջափակից, վորի շուրջը խոնվել էր հսկա բազմու- թյունը: Նրանց շրջապատել էյին Թնդանոթային ախուճի ան- դամները, Յեվրոպայի դիտարաններից յեկած պատգամավորու- թյունները: Բարբիկենը՝ ստոնասիրտ ու հանդիսո՛ վերջին կար- դադրություններն էր անում: Նիկոլը, չթունքները սեղմած, ձեռները կռնակին դրած՝ քայլում էր հաստատ ու չափված քայ- լերով: Միշել Արդանը՝ ինչպես միշտ՝ համարձակ, իսկական ճամբորդի նման հաղնված, վոտքին կաշվե դետրեր, վորոտրդա- կան պայուսակը կողքից կախած, շաղանակադույն թավոյա լայնարձակ գզեստով, սիգարը բերանին, ճամբի վրա կանգնած- ների ձեռքն էր սեղմում մեծ բազմականությամբ: Անսպառ յե-

անդով և զվարթությամբ լի՝ նա ծիծաղում, սրախոտում էր ամենքի հետ, մինչև վերջին րոպեն մնալով իսկական Փրանսիա- ցի կամ, ավելին— իսկական փարիզցի:

Ժամի տասը հնչեց, ժամանակն էր ուժերի մեջը տեղավոր- վելու: Ռումբի մեջ իջնելը, կախարչի պտուտակների ամբա- ցումը, կոլումբիադի բերանի վրա կախված վերամբարձների և վերերակների հեռացումը բազմական ժամանակ էյին խելու:

Բարբիկենն իր խրոնոմետրը ուղղեց մեկ տասնորդական վայրկյանի ճշտությամբ ինժեներ Մերչիսոնի խրոնոմետրի վրա, վերջինս պետք է կրակ տար վառողին ելեկտրական կայծի միջոցով: Այդպիսով ուժերի մեջ փակված ուղեվորները հնա- րավորություն ունեյին հետեւելու անդրդվելի սլաքին, վորն ի- րենց ցույց պիտի տար մեկնման ճշգրիտ ժամանակը:

Հասավ հրաժեշտի րոպեն: Տեսարանը խիստ սրաշարժ էր: Հսկայական իր տեսողատ զվարթության՝ Միշել Արդանը հուզվեց: Ջ.Տ. Մաստոնն իր ցամաքած թարթիչները տակ արցունքի մի հին կաթիլ դատով, վորը նա յերեկի պահել էր այդ որվա հա- մար: Յեւ նա արցունքի այդ կաթիլը թափեց իր սիրելի և աննման նախադասի ճակատի վրա:

— Յեւ ե՛լ չդա՛մ ձեղ հետ, — շնջաց նա, — դեռ ժամա- նակ կա:

— Անհնար է, սիրելիս, — պատասխանեց Բարբիկենը:

Մի քանի րոպե հետո յերեք ուղեկիցները տեղավորվել էյին ուժերի մեջ և ներսից դռնակը պտուտակներով պինդ փակել: Կոլումբիադի փողն արդեն բոլորովին ազատ էր և ուղղվել էր վեր դեպի յերկինք:

Նիկոլը, Բարբիկենը և Միշել Արդանը վերջնականապես փակված էյին մետաղե վազոնի մեջ:

Ո՞վ կարող էր նկարագրել այն ընդհանուր հուզմունքը, վորը զազաթնակետին էր հասել:

Լուսինը սահում էր ջինջ ու պայծառ յերկնականարի վրա, իր ճանապարհին հանդցնելով աստղերի առկայծող լույսերը. այդ ժամանակ նա անցնում էր Յերկվորյակների համաստեղությունը և համարյա գտնվում էր հորիզոնի ու դենիթի կես ճանապարհին: Ամեն մեկի համար պարզ էր, վոր նշանը պետք էր բռնել նպա- տակից մի քիչ հեռու, դեպի առաջ, ինչպես վորոտրդը նշան է

բունում թուշող թուշունին վոչ թե ուզգակի, այլ առաջ:  
Տիրում եր ահաւոր լուսթյուն: Յերկրի վրա վոչ մի քամու  
շունչ, մարդկանց շրթունքներում վոչ մի բառ, սիրտը չէր հա-  
մարձակվում բարբախել, բոլոր հայացքները կտումբիադի բաց-  
ված յերախին եյին հառած:

Մերչխոնը նայում եր միայն խրոնոմեարի սլաքներին: Հա-  
զիվ քառասուն վայրկյան եր մնացել մինչև կրակոցը և ամեն մի  
վայրկյան մի դար եր թվում:

Քսաներորդ վայրկյանին մի ընդհանուր սարսուռ համակեց  
բոլորին: Շատերի մտքով անցավ, վոր ուումբի մեջ փակված  
հանդուզն ուղեվորները նուշնպես վայրկյաններն եյին հաշվում:  
Այս ու այն տեղից ձայներ լսվեցին:

— Յերեսուն հինգ, յերեսուն վեց, յերեսուն յոթ, յերեսուն  
ութ, յերեսուն ինն, քառասո՛ւն: ԿՐՄԿ:


Մերչխոնը սեղմեց ելեկարական կոճակը և հոսանքը սլա-  
ցավ մինչև կոլումբիադի հատակը:

Լսվեց մի զարհուրելի, անլուր, արտասովոր պայթյուն, վո-  
րի մասին գնդափար չեն կտրող տալ վոչ ամոլբազի ուժեղ վո-  
րտը, վոչ հրարուխների սասանեցնող պոսթկումը: Կրակի մի  
հակայական խուրձ դուրս ժայթքեց հողի ընդերքից, ինչպես  
հրարուխի խառնարանից: Գետինը ցնցվեց, հողը բարձրացավ  
ինչպես յերկրաչարժի ժամանակ և հազիվ թե մի քանի հազի հան-  
դիսատեսներից մի ակնթարթում տեսած լինեյին ուումբը, վորը  
հաղթականորեն օրհնում եր վեր, ճեղքելով ողը:

## XXVI

### ԱՄՊՍՍԱԾ ՅԵՂԱՆԱԿ

Յերբ բոցավառ խուրձը բարձրացավ դեպի յերկինք և հա-  
սավ հակայական բարձրության, բոցերի փայլը լուսավորեց  
ամբողջ Ֆլորիդան և բավական ժամանակ այդ շրջանի մեծ մասի  
վրա դիչերը փոխվեց ցերեկի: Կրակի այս վիթխարի փունջը  
ծովի վրա յերևում եր մինչև հարյուր մղոն հեռավորությամբ,  
թե ծովախորչից և թե Ատլանտյանի կողմից. բազմութիւն նա-



Հողի բնդիբից վեր ժայթքեց բոցի հակայական մի խուրձ

վերի նավապետներ իրենց որադրի մեջ նշանակեցին այս վիթխարի մետեորի յերևալը:

Կոլումբիադի պայթյունի հետ տեղի ունեցավ մի խոհական յերկրաշարժ: Ճլորիդան ցնցվեց մինչև Յերկրի ընդերքը: Վառողից առաջացած դաղերը ջերմությունից ծախարվելով՝ հսկայական ուժով հետ մղեցին մթնոլորտի ստորին շերտերը, և այս արհեստական ուրագանը, փոթորիկների ուրագանից հարյուր անգամ ավելի ուժեղ, ողի միջից անցավ թարթառի նման:

Գիտողներից վոչ մեկը վտառի վրա կանգնած չէր մնացել, տղամարդիկ, կանայք, յերեխաներ, — բոլորն էլ փոթորկից տապալված հասկերի նման վայր ընկան: Տեղի ունեցավ մի աննկարագրելի շփոթ և իրարանցում, կային բազմաթիվ ծանր վիրավորներ, իսկ Ջ. Տ. Մասսանը, վոչ վոչնչից չվախենալով, ամենից առաջ էր անցել, մի քանի մետր հետ շարժվեց և դնդակի նման իր հայրենակիցների դիմի վրայով թռավ: Յերեք հարյուր հազար մարդ մի պահ խլացան և շմեցին:

Մթնոլորտի հոսանքը քսան մղոնի վրա մի ակնթարթում տապալեց խճիթները, հյուղակները քանդեց, ծառերն արմատախիչ արեց և մինչև Տամպա քչեց դնացրենքը և ձյան հյուսի նման այդ քաղաքի վրա ընկավ ու հարյուրի չափ տներ կործանեց: Նավահանգստի մի քանի նավեր միմյանց դիպչելով ընկղմվեցին: Իսկ ռեյդում կանգնած տասնյակ նավեր բամբակե թելի նման իրենց խարսխի շղթաները կտրելով ցամաք ընկան:

Բայց այս ավերումների շրջանակն էլ ավելի լայնացավ և տարածվեց Միացյալ Նահանգներից այն կողմը: Պայթյունի ազդեցությունն արևմտյան քամիներից քշվելով՝ զգացվեց ամերիկյան ծովեզերքից յերեք հարյուր մղոն հեռավորության Ատլանտյանի վրա: Դա մի կատաղի և անակնկալ փոթորիկ էր, վոչ չէր նախագուշակել վոչ մի դիտարան, անլուր ուժգնությամբ այդ մրրիկն ընկավ նավերի վրա, վորոնցից շատերը զարհուրելի հորձանապտույտի մեջ ընկնելով՝ չկարողացան առազատները հավաքել ու խորտակվեցին: Նրանցից էր Լիվերպուլի «Չայլդ-Հարլուդ» նավը, վորը մի ցավալի կորուստ էր և վորի համար անգլիացիները խիստ արտունջներ հայտնեցին:

Յեվ վերջապես, վորպեսզի լրացնենք բոլոր փաստերը, պետք է ավելացնել, վոր պայթյունից կես ժամ անց Սիեբո-Լեոնի և

Գորեյայի բնիկները լսեցին մի խուլ գոգոցուն. դա ճայտահան ալիքների վերջին տեղաշարժն էր, վորը Ճլորիդայից անցել էր մինչև Արևմտյան Աֆրիկա, կարելով Ատլանտյան ովկիանոսի ամբողջ լայնությունը:

Սակայն վերադառնանք Ճլորիդա: Շփոթության առաջին բույներն անցնելուց հետո վիրավորները, խլացածները, մի խուսքով ամբողջ ժողովուրդը սթափվեց — «կեցցե՛ Բարբիկենը, կեցցե՛ Ս. Պոլանը, կեցցե՛ Նիկոլը» աղաղակները մինչև յերկինքը բարձրացան: Մի քանի միլիոն մարդ դեպի յերկինք ուղղած տելեֆոններով, հեռադիտակներով և հասարակ դիտակներով դիտում էին տարածությունը, մոռանալով վերքերն ու հոգումները, հետաքրքրված միայն ուումբով: Սակայն զուր էլին բոլոր ջանքերը: Վոչինչ չէր յերևում: Պետք էր սպասել Լոնդոնի հեռագրերին: Կեմբրիջի դիտարանի դիրեկտոր Մ. Բեյ-Ֆաստը Ապոստոս լեռների իր դիրքումն էր: Վորպես փորձված և հմուտ աստղագետի՝ նրան էր հանձնվել արկի թռիչքը դիտելու գործը:

Բայց մի անսպասելի յերեվույթ, վորը սակայն կարելի չէր նախագուշակել, և վորի դեմ վոչինչ չէր կարելի անել, յեկավ արդելք լինելու աստղագիտական դիտողություններ կատարելու հնարավորությանը:

Յեղանակը, վոր մինչ այդ հրաշալի չէր, հանկարծ փոխվեց, մոռայված յերկինքն ամպերով ծածկվեց: Մի՛թե ուրիշ կերպ կարող էր լինել մթնոլորտային շերտերի այդքան ուժեղ տեղաշարժից և չորս հարյուր հազար ֆունտ պիրոկսիլինի բռնկումից առաջացած հսկա քանակությամբ դազերի և դոլորուց ցրումից հետո: Բնության ամբողջ կարգն էր խանգարվել: Այս յերեվույթը բոլորովին դարձանալի չէր, վորովհետև ծովային կոիլների ժամանակ հրեամուտ հարվածներից հետո շատ անգամ մթնոլորտի վիճակը փոփոխության և յենթարկվում:

Հաջորդ օրը, արևածագին, յերկինքը ծածկված էր թանձր ամպերով, ծանր ու անթափանց մի վարագույր էր իջել յերկինքի ու յերկրի միջև, վորը դժբախտաբար տարածվում էր Ապոստոս լեռների շրջանը:

Մի կատարյալ դժբախտություն էր այդ: Միացյալ Նահանգների բոլոր կողմերից բարձրացան բողոք-

ներ և տրտուներ: Մտկայն բնությունը մնաց անդրդիելի, քանի վոր մարդիկ իրենց պայթյունով վրդովել էյին մթնուլորտը, ուրեմն նրա հետեանքներն ել պարտավոր էյին կրել:

Առաջին որն ամեն մարդ ջանաց թափանցել ամպերի թանձր քողը, բայց վոչ վոքի այդ չհաջողվեց. բացի այդ, մարդիկ ինչպէս իրենց հայացքը դեպի յերկինքն էյին ուղղում. վորովհետեւ յերկրագնդի որական շարժման հետեանքով ումբն այժմ թրուջում եր հակառակ ուղղութեամբ, նկատի ունենալով, վոր ցերեկը յերկրագունդը շեղված է դեպի յերկինքի հակառակ կողմը:

Յերբ գիշերը յերկրի վրա իջավ, — անթափանց ու մութ մի գիշեր, — յերբ Լուսինը բարձրացավ հորիզոնի վրա, ամհասր յիստով նրան տեսնել, կարծես նա փախուսաւ եր տալիս այն հանդուգներից, վորոնք իբ վրա ումբ էյին արձակել, այդպիսով վոչ մի դիտողութեան հնարավոր չեղավ կատարել և Լուսնայիկի հետադրերն ել հաստատեցին այս ցավալի փաստը:

Մակայն յեթե վորձը հաջող եր անցել, ուղեւորները մեկնած լինելով դեկտեմբերի 1-ի յերեկոյան ժամի առաջ անց քառասուն վեց բուպե քառասուն վայրկյանին՝ տեղ ուղիտի հասնելին 4-ի կես գիշերին: Ուրեմն մինչև այդ ժամկետը կարելի չեր սպասել և համբերել առանց դանդաղելու:

Դեկտեմբերի 4-ին, յերեկոյան ժամի ութից մինչև կես գիշեր հնարավոր եր հեռանել ումբի ընթացքին, վոր ան կեսի նման պիտի յերեվար Լուսնի պայծառ սկավառակի վրա: Մակայն յերկինքն անողոք կերպով ծածկված մնաց. մի բան, վոր հասարակութեան գայրույթը դադարեցնակեալին հասցրեց: Սկսվեց հայհոյանքը Լուսնի հասցեյին, վոր չեր ուզում յերեվար: Մինչ այդ յեղած դավասանքներին հաջորդեցին անեծքները. ո՞վ մարդկային անհաստատութեան:

Չ. Տ. Մաստոնը հուսահատված մեկնեց Լոնդոնդի, ցանկանալով անձամբ դիտել: Նա չեր կատկածում, վոր էր բարեկամներն արդեն հասել էյին իրենց նպատակին: Վոչ մի տեղից լուր չկար, վոր ումբը հետ ընկած լիներ մի կողմ կամ ցամաքաժամի մի վորևէ կետի վրա, իսկ Մաստոնը մի բուպե իսկ չեր յենթադրում, վոր ումբը կարող եր ընկնել ուղիտանոսների մեջ, վորոնք յերեք քառորդով ծածկում էյին յերկրագունդը:

Ամսի հինգին նույն յեղանակը: Յեվրոպայի մեծ տեղեկուպներն, ինչպէս Հերշելի, Ռոսի, Չուկոյի և այլն — ամբողջապա

ուղղված էյին դեպի Լուսին, վորովհետև հրաշալի յեղանակ եր Յեվրոպայում, սակայն այդ գործիքների թուլութեան պատճառով հնարավոր չեր անհրաժեշտ դիտողութեանները կատարել:

Ամսի 6-ին նույն յեղանակը: Անհամբերութեամբ կրծում եր յերկրագնդի յերեք քառորդ մասը: Մարդիկ այնպիսի դրութեան հասան, վոր ամպերը ցրելու համար ամենաարտասուց միջոցներն ս. առջարկեցին:

Ամսի 7-ին յերկինքը կարծես մի քիչ վոխվեց: Սկսեցին հուսալ, բայց այդ հույսը յերկար չտեւեց, յերեկոյան թանձր ամպերը կրկին արգելք յեղան վորևէ դիտողութեան յենթարկելու ստողազարդ կամարը:

Հետզհետե գործն ավելի լուրջ կերպարանք ստացավ: Դեկտեմբերի տասնմեկին, առավոտյան ինը անց տասնմեկ բուպեյին Լուսինը պիտի մտներ իր վերջին քառորդի մեջ: Դրանից հետո պիտի սկսեր թեքվել և նույնիսկ, յեթե յեղանակը պարզվեր, դիտելու շանքերը շատ պիտի նվազեցին, վորովհետև հետզհետե Լուսնի սկավառակը պիտի փոքրանար, իսկ յոթ որ հետո Լուսինը պիտի նորեր, այսինքն՝ մայր պիտի մտներ և ծագեր արևի հետ, վորի ճառագայթները նրան անտեսանելի կդարձնեյին: Այդպիսով պետք եր սպասել մինչև հունվարի յերեքը, կետրվա ժամի տասներկուսն անց քառասուն չորս բուպեյին, նորից նրան լրիվ տեսնելու և դիտողութեանները վերսկսելու համար:

Թերթերը տպում էյին այս բոլոր տվյալները և ավելացնում հազար տեսակ մեկնարանութեաններ ու բացատրութեաններ, հասարակութեանից չթաղցնելով, վոր շատ մեծ համբերութեամբ պետք եր զինվել:

Ամսի 8-ին դարձյալ ամպամածութեան, ինչին արևը մի պահ յերեվաց, կարծես ամերիկացիներին ծաղրելու համար: Իսկույն սկսեցին նրան անարգել և կարծես այդպիսի ընդունելութեանից վրդովված՝ նա ծածկվեց ամպերի տակ:

Ամսի 10-ին վոչ մի փոփոխութեան: Չ. Տ. Մաստոնը քիչ եր մնում խելագարվել, սկսեցին յերկյուղ կրել, վոր այդ պատվական մարդու ուղեղը — վոր մինչ այդ այնքան լավ պահպանված եր դուռտայերջի արհեստական դանդի տակ — կխանդարվի:

Բայց ամսի 11-ին տրոպիկական յերկրներին հատուկ մի փոթորիկ բարձրացավ մթնուլորտում: Արեւելյան քամիները

ցրեցին՝ տարան վաղուց հավաքված ամպերը և յերեկոյան յերկրն զհամաստեղություններն մեջ վեհորեն բարձրացալ զերչեբային լուսատուն, բայց արդեն կիսատ սկավառակով:

ԳԼՈՒԽ XXVII

ՄԻ ՆՈՐ ԼՈՒՍԱՏՈՒ

Նույն զիշերն իսկ այնքան անհամբերությամբ սպասված, չուրը կայծակի նման պայթեց Միացյալ Նահանգներում, այնտեղից ովկիանոսն անցնելով, սուբալով զնաց յերկրագնդի հետազրաթեղերով: Ռումբը նկատվել էր Լոնդոն-պիկի վիթխարի հեռադիտակի շնորհիվ:

Ահավասիկ Կեմբրիջի դիտարանի դիրեկտորի հազորդման տեքստը, վորը պարունակում էր Թնդանոթային ակումբի մեծ փորձի դիտական յեղրակացությունը.

Լոնդոնպիկ, 12 դեկտեմբերի

«Կեմբրիջի դիտարանի վարչության անդամներին»

«Ստոնսհիլի կոլումբիադից արձակված ուումբը նկատեցին դիտարանի դիրեկտոր Բեյքստոն ու Ջ. Տ. Մաստոնը՝ դեկտեմբերի 12-ին, յերեկոյան ժամը ութը անց քառասուն յոթ րոպեյին, այն պահին, յերբ Լուսինը մտնում էր իր վերջին քառորդի մեջ:

Ռումբը չի հասել իր կետ նպատակին: Նա անցել է Լուսնի կողքից և այնքան մոտից, վոր Լուսնի ձգողական ուժը նրան քաշել է դեպի իրեն:

Դրանով ուումբի ուղղաձիգ շարժումը փոխվել է շրջանաձև շարժման, վորի հետևանքով նա սկսել է պտույտ դալ Լուսնի շուրջը և այդպիսով դարձել է նրա իսկական արբանյակը:

Այս նոր աստղի գոյության պայմանները դեռևս չեն վորոշված: Դեռևս հայտնի չէ վոր նրա շարժման, վոր էր Լուսնի շուրջը պտտվելու արագությունը: Նրա հեռավորությունը Լուսնի մակերևույթից յենթադրվում է մոտավորապես սասնութ հազար կիլոմետր:

Այժմ յերկու յենթադրություններ կարող են ծագել և փոփոխություն մտցնել ուումբի դրության մեջ: Կամ Լուսնի ձգողական ուժը կհաղթի և ուղևորները կհասնեն իրենց նպատակին. կամ մնալով ներկա անվտանգ դրության մեջ, ուումբը հավիտյան պիտի պտտվի Լուսնի շուրջը:

Հետագա դիտողությունները ցույց կտան, թե ինչ յեղև կունենա ուումբի շարժումը: Այժմ կարելի չէ ասել միայն, վոր Թնդանոթային ակումբի փորձն ունեցալ այն հետևանքը, վոր ավելացալ մի նոր լուսատու արեգակնային սխտեմի մեջ»:

Ջ. ԲԵԼՖՍՍ

Փորձի այս անսպասելի յեղևը ինչպիսի հարցեր էր առաջացնում: Դեռևս վո՛րքան զաղտնիքներ կային դիտության հետազոտողների համար: Յերեք մարդկանց քաջության և անձնազոհության շնորհիվ, ըստ յերեկոթին, անխմատ այդ ձեռնարկը—ինչպես դեպի Լուսնի մի ուումբ արձակելը—արդեն հսկայական արդյունք էր տվել, վորի հետևանքները անհաշիվ էյին: Ուղևորները յեթե նույնիսկ իրենց նպատակին չհասնեյին, նրանք այնուամենայնիվ դոնցիում էյին լուսնային աշխարհում և պտույտ էյին դալիս դիշերային լուսատուի շուրջը: Սուաջին անդամն էր վոր մարդկային աչքը պիտի կարողանար թափանցել Լուսնի բոլոր դաղտնիքները: Այդպիսով Նիկոլի, Բարբիկենի և Միշել Արզանի անուններն ընդմիշտ աստղադիտական տարեգրությունների մեջ հռչակվում էյին, վորովհետև այդ խիզախ հետախույզները մարդկային դիտելիքների շրջանակն ընդարձակելու տենչով տոգորված, հանդպեցին սրանալ տարածության մեջ, իրենց կյանքը նվիրելով ներկա ժամանակների ամենազարմանալի և նշանավոր ձեռնարկության հաջողությանը:

Համենայն դեպս Լոնդոնպիկի տեղեկագրի հրատարակումից հետո ամբողջ աշխարհը շքեց զարմանքից և սարսափեց: Մի թե հնարավոր չէր տգնության հասնել այդ յերեք հանդուգն մարդկանց: Անկասկած վոչ, վորովհետև նրանք մարդկությունից դուրս են յեկել, անցնելով Յերկրի սահմաններից այն կողմը: Նրանք ողով ապահովված էյին յերկու ամիս, մի տարվա համար անունդի պաշար ունեյին. բայց հետո... Սմենից անդառ մարդկանց սրտերն իսկ բարբախում էյին այս մտքից:

Մի մարդ միայն չէր ուղում ընդունել, վոր գրութունն անհույս է: Մի մարդ միայն հավատ ուներ. դա նրանց անձնվեք բարեկամ, նրանց նման հանդուգն ու քաջ Մաստոնն էր:

Նա վոչ մի բոպե նրանց իր աչքից չէր հեռացնում, Լոնդոնացի կայանը դարձել էր նրա բնակավայրը, նրա միակ աշխարհը, նրա միակ հորիզոնը՝ հսկա տեղեկուպի հայելին: Հենց վոր Լուսինը բարձրանում էր հորիզոնից, նա տեղեկուպն ուղղում էր նրան և վոչ մի բոպե հայացքը նրանից չէր հեռացնում և լարված հետևում նրա շարժմանը: Չարմանալի, ապշեցուցիչ համբերությամբ նա սպասում էր այն պահին, յերբ ոտմբը պիտի անցներ Լուսնի սկավառակի վրայով և իրավամբ այս պատվական մարդը մշտական հաղորդակցության մեջ էր իր յերեք բարեկամների հետ և նրանց կրկին տեսնելու հույսը յերբեք չէր կորցնում:

— Մենք պետք է կապ հաստատենք նրանց հետ, — ասում էր նա լսել ցանկացողներին, — հենց վոր պայմանները թույլ տան: Նրանցից լուր պետք է ստանանք և մեր լուրերը նրանց հաղորդենք: Յես նրանց լավ եմ ճանաչում, յերեքն ել հնարադետ մարդիկ են և իրենց հետ դեպի Լուսին են տարել արվեստի ու գիտության հնարավորությունները: Դրանցով ղինված՝ կարելի յեամեն ինչ անել և կտեսնեք մի օր, վոր նրանք վերջվեք յիսկապիտանն այդ դրությունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ժյուզ վեռն—Թերզիբաշյան	7
Թնդանոթային տիումբը	11
Նախագահ Բարբիկենի զեկուցումը	19
Բարբիկենի զեկուցման ազդեցությունը	28
Կեմբրիջի գիտաբանի պատասխանը	33
Ինչ վոր չէր կարելի չդիտենալ Միացյալ Նահանգներում	38
Մրկի դովքը	43
Թնդանոթի պատմությունը	55
Վառդի հարցը	62
Մեկ թշնամի՝ քսանհինգ միլիոն բարեկամին	68
Ճյուրիդա և Տեխաս	75
Աշխարհով մեկ	81
Ստոնհիլլ	84
Կոլումբիադի հարը	91
Թնդանոթի ձուլումը	97
Կոլումբիադը	103
Մի հեռագիր	110
«Ատլանտա»-յի ուղևորը	111
Միտինդը	122
Հարձակում և հակահարված	131
Թե ինչպես Փրանսիացին դիտե հարթել դժվարությունները	141
Միացյալ Նահանգների նոր քաղաքացին	150
Վազոն—ուտմբ	155
Ապառաժոտ լեռների հեռագրատակը	162
Վերջին պատրաստությունները	170
Կրակ	177
Ամպամած յեղանակ	182
Նոր բուսատու	188



Ճրանագրերից թարգմանեց՝ Ս. Տիրատուրյան

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան

Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տեր-Մինասյան



Գլավղիտի լրագրի՝ Ա.—4009, Հրատ. 4167

Պատվեր 72. Տիրաժ 5000.

Թուղթ 62×74. Տպագրական 12 մամուլ.

Մեկ մամուլում 34800 նշան.

Հանձնված է արտագրության 17 հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 10 մայիսի 1938 թ.

ՊԵՏՀՐԱՏԻ I ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

« Ազգային գրադարան



NL0390248

1992